ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

N 2 (104)
2004

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ

Գիտահանրամատչելի հանդես

Вестник архивов Армении

Научно-популярный журнал

Bulletin of Armenian Archives

Scientific practical magazine

2 (104)
2004

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ



ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ

1874թ. սեպտեմբերին, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ, Էջմիածնում բացվեց հոգևոր ճեմարան, որը հիմնադրի անունով կոչվեց Գևորգյան: Նույն թվականի հոկտեմբերի մեկին կառավարությունը որոշակի փոփոխություններով հաստատեց ճեմարանի կանոնադրությունը: Գևորգյան ճեմարանն Արևելյան Հայաստանում առաջին և միակ բարձրագույն հոգևոր ուսումնական հաստատությունն էր՝ բաղկացած երկու բաժնից՝ դասարանական, 6-ամյա ուսուցմամբ, միջնակարգ դպրոցի ծավալով և եռամյա, լսարանական, որը համապատասխանում էր հոգևոր բարձրագույն կրթության: Ճեմարան կարող էին ընդունվել հայոց բոլոր թեմերից, հիմնականում հոգևորականների զավակներ, ինչպես նաև 14-16 տարեկան չքավոր, սակայն ընդունակ հայ պատանիներ:

Ճեմարանն Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինության տակ էր, պահվում էր Մայր Աթոռի միջոցներով և նվիրատվություններով: Հասարակության աջակցությամբ ճեմարանը տարեցտարի բարգավաճեց և 1905-06թթ. ուսումնական տարում այն արդեն ուներ 310 աշակերտ, որոնցից 249-ը գիշերօթիկ սաներ (գիշերում էին ճեմարանում -Մ.Ա.) էին, իսկ 61-ը երթևեկ (նրանք, ովքեր ցերեկը հաճախում էին ճեմարան, իսկ գիշերում էին իրենց տանը -Մ.Ա.)[*]: Իսկ 1914թ., հասկանալի պատճառներով, ուսանողության թիվը կրճատվում է, հասնելով 227-ի (170 գիշերօթիկ և 57 երթևեկ)[**]:

Գևորգյան ճեմարանը պատրաստել է գիտելիքներով զինված, հայրենասեր, ազգին ծառայելու պատրաստակամ հոգևոր գործիչներ և հայոց դպրոցների ուսուցիչներ: Ճեմարանում են ուսանել Կոմիտասը, Կարա-Մուրզան, Վ.Սուրենյանցը, Ալ.Բակունցը, Լ.Շանթը, պետական գործիչներ Ավ.Ահարոնյանը, Ս.Թորոսյանը, Արտ.Աբեղյանը, Ա.Միկոյանը, Ասք.Մռավյանը, Աղ.Խանջյանը և ուրիշներ: Գևորգյան ճեմարանում են աշխատել և իրենց գիտական գործունեությունը ծավալել հայ մշակույթի մեծ երախտավորներ՝ Կ.Կոստանյանը, Գ.Տեր-Մկրտչյանը, Գ.Հովսեփյանը, Մ.Աբեղյանը, Հր.Աճառյանը և այլք, որոնց աշխատությունները նպաստեցին հայագիտության զարգացմանը:

Առաջին համաշխարհային պատերազմը և հետագա քաղաքական իրադարձությունները ստիպեցին առժամանակ փակել ճեմարանը: Այն փակվեց 1917-ին և վերաբացվեց 1945 թվականին Էջմիածնի հոգևոր ճեմարան վերանվանմամբ և գործում է առ այսօր: Ճեմարանի սաները ոչ միայն հայ առաքելական եկեղեցուն նվիրված, ազգի կրոնա-բարոյական դաստիարակությամբ զբաղվող բարեպաշտ հոգևորականներ են, այլև հայրենասեր քաղաքացիներ, որոնց հայապահպան գործունեությունը առավել քան զգալի ու անհրաժեշտ է սփյուռքում:

Փաստաթղթերն ընդգրկում են 1874-1917թթ., և հրապարակվում են առաջին անգամ: Հրապարակելիս պահպանվել են փաստաթղթերի լեզվական ու ոճական առանձնահատկությունները:

Մարո Ավետիսյան
ՀԱԱ գլխավոր արխիվագետ

[*] ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.15, գ.229, թ.4:
[**] Նույն տեղում, ֆ.Պ- 312, ց. 1, գ.214, թ.45:

N 1
ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՍԻՆՈԴԻՆ՝ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐԻՑ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՈՒՍԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

22 օգոստոսի 1874թ.
Թիֆլիս

Ըստ յանձնարարութեանց կոնսիստորիային Հայոց Նախիջեւանայ եւ Բեսարաբիոյ եւ բարեշնորհ Արեստակես վարդապետի Սեդրակեանց ի 10 եւ 16 օգոստոսի ամսոյս համարօք 722 եւ17 վիճակային կոնսիստորիայս Վրաստանի պատիւ ունի խոնարհաբար յայտնել Սինոդին', թէ նորոգ ընտրեալ ի վիճակէն Նախիջեւանայ եւ Բեսարաբիոյ յորդեգրութիւն նորաբաց ճեմարանի սրբոյ էջմիածնի՝ Յովհաննէսն Տէր Դաւթեանց, Միքայէլն Ախուախծատրեանց, Յովհաննէս Բօնակեանց, Յարութիւնն Շահինեանց եւ Մէլքոնն Արմահիրեանց եւ ի քաղաքէն Թիֆլիզոյ՝ Պօղոսն Սահակեանց, Հայրապետն Մելիք Ստեփաննոսեանց եւ Նիկողայոսն Շաքեանց, փոխանակ յառաջագոյն ընտրեալ Մեհրաբայ Մեհրաբեանց: Ի միասին ընդ այսմ ուղեւորեցան ի սուրբ էջմիածին ընդ ուղեկցու[թեամ]բ եւ հսկողութեամբ Յովսէփ քահանայի Մամուլեանց, որոց ճանապարհածախք լիովին վճարեալ է ատէն. յարգոյարար յարակցելով, թէ ծնողքն լիշեալ Մեհրաբայ Մեհրաբեանց ի պատճառս հիւանդու[թեան] վերջնոյս այլեւս չկամեցան առաքել զնա:

Անդամք՝ Մովսէս աւագ քահանայ [Սայաթնեանց]
Յովհաննէս աւագ քահանայ Արարատեանց
Կարապետ քահանայ Տեր-Սարգսեանց

ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.1, գ.6473, թ.9: Բնագիր: Ձեռագիր:

N 2
ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

[1874թ.]
Ս.Էջմիածին

1. Эчмиадзинская Армянская Духовная Академия есть высшее духовно-учебное учреждение, имеющее целью: доставлять общее и богословское образование для просвещенного служения армянской церкви и приготовлять преподавателей для духовно-учебных заведений армяно-григорианского исповедания.

2. Эчмиадзинская Академия находится под главным начальством Святейшего Патриарха Католикоса всех Армян.

3. Эчмиадзинская Академия содержится средствами Эчмиадзинского Патриаршего престола и добровольными в пользу ее приношениями.

4. Управление Эчмиадзинскою Академиею вверяется ректору, при содействии: 1 учебного совета и 2. хозяйственнего правления.

5. В Эчмиадзинской Академии, кроме ректора состоят: помощник его, преподаватели, воспитатели, секретарь, медик, библиотекарь и эконом.

Примечание: обязанности служащих в академии лиц, а также состав и предметы занятий учебного совета и хозяйственного правления определяются инструкцией светейшего Патриарха Католикоса.

6. В Эчмиадзинскую Академию принимаются, на основании установленных для сего начальством академии правил, лица армяно-григорианского исповедания без различия сословия и подданства, преимущественно из кончивших с успехом учение в состоящих при армянских церквах и монастырях учебных заведениях и в семинариях, по предварительном испытании, производимом в академии.

7. Эчмиадзинская Академия состоит из шести семинарских классов и трех высших академических с годичным курсом в каждом.

8. В Эчмиадзинской Академии преподавание производится на армян-ском языке.

9. В Эчмиадзинской Академии преподаются:

1) Пространный катихизис по догматам армянской церкви.
2) История армянской церкви.
3) Общая церковная история.
4) Священное писание и его толкование.
5) Богословие основное, догматическое, нравственное и сравнительное.
6) Богослужение и церковный календарь.
7) Пасторское богословие и гомелетика.
8) Жизнеописание святых, чтимых армянскою церковью.
9) Церковное право.
10) Педагогика.
11) Философия (логика и психология) и история философии.
12) Армянская история и география.
13) Всеобщая история и география.
14) История и география России.
15) Математика, физика и космография.
16) Естественная история.
17) Армянский язык и история литературы.
18) Русский язык.
19) Древние и новые языки: латинский, французский и немецкий.
20) Еврейский язык и библейская археология.
21) Черчение и рисование (преимущественно церковное).
22) Пение церковное.

Примечание: из новых языков воспитанники обучаются обязательно только одному.

10. Учебные предметы распределяются по классам советом академии. Из наук преподаваемых в академических классах, совет определяет одни обще-обязательными, а другие как специальные, по отделениям с утверждения святейщего Патриарха Католикоса. Русский язык, история и география России обязательны для воспитанников, состоящих в русском подданстве.

Секретарь Эчмиадз. Синода　　　　И.Иоаннисян

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.235, թ.21-22: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 3
ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ[2] ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ[3] ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հունիսի 1875թ.
Ս.Էջմիածին

Զի Հայրապետական կոնդակաւ մերով՝ զոր ի սմին իսկ աւուր տուաք գերապատիվ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազեան՝ անդամայ Սինոդիդ Համարաւս 187՝ կարգեցաք զնա տեսուչ նորակառույց ճեմարանի ս. Աթոռոյս տալով նմա զլիակատար իրաւունս տնօրինելոյ զկառավարութիւն ուսումնական, բարոյական եւ կառավարչական մասանցն միանգամայն, այնպէս, որպէս նորայն բազմամեայ փորձառութիւն ցուցանիցե առ անւայրաք յառաջագիմութիւն ճեմարանի, զորոց զշենութիւն յետ այգքանեաց բազմատեսակ նիւթական եւ բարոյական ձախորդութիւնից, քրտանց եւ վաստակոց՝ հուսկ ուրեմն յաջողեցաւ մեզ ի գլուխ հանել եւ այնպիսոց քաջահմուտ սան ազգասէր խնամոց առնել ապաստան:

Ընդումեն առաքիմք ի Սինոդդ եւ զպատճէն առժամանակեաց կանոնագրութիւն ճեմարանի համար տրամագրութեանց կայսերահաստատ հիմնական ծրագրին:

Գէորգ Դ կաթողիկոս ամենայն հայոց

ՀԱԱ, ֆ.Պ- 56, ց.1, գ.6473, թ.62: Բնագիր: Ձեռագիր:

N 4
ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ

23 նոյեմբերի 1876թ.
Ս.Էջմիածին

Ի 23 նոյեմբերի 1876 ամին ընդ նախագահութեամբ կարգապահի ճեմարանիս պ[արոն] Յ.Գալստեան, եւ յառաջարկութեան արգոյ ուսուցչոցն արժանապատիւ Կիւրղի վարդապետի Սրապեան, եւ պպ. Մ.Պալեան, Պ.Ճէպէճեան, Լ.Թիւսիկեան, Ն.Սիմէոնեան, Առաքելի Սագինեան եւ Մ.Քէրէսթէճեան ժողովեցաւ խորհրդարան ճեմարանիս, յորում նախ ընթերցաւ ագենագրութիւն նախընթաց ժողովոյն, զորմէ չեղեւ կարեւոր ինչ գիտողութիւն:

Ապա Պ.Ն.Սիմէոնեան խօսել կալաւ եւ ասէ. Որպէս յայտ է ժողովականացդ, սրաբազան վերատեսուչր հաւանեցաւ զի ճեմարանս տացէ բերել օրագիրս եւ լրագիրս յառաջիկայ 1877 ամի. արդ ժամանակ է խորհելոյ թէ զո՞ր օրագիրս եւ զո՞ր լրագիրս տացե բերել ճեմարանս. զի ամիս մի եւ եթ մնայ ցսկիզբն միւսոյ տարւոյ: Ի լրագիրս եւ յօրագիրս օգտակարագոյնք ճեմարանիս ինձ թուին. ի հրատարակելոցն ի ռուս լեզու՝ «Голос»[4], «Всемирная иллюстрация»[5] (զոր եւ յառաջն ընդունէր ճեմարանս), եւ «Учительское обозрение»: Իսկ ի հրատարակելոցն ի հայ լեզու՝ «Մշակ»[6] եւ «Մեղու Հայաստանի»[7]: Զի այնու տեղեկութիւնս ինչ առցուք եւ զազգային կենաց եւ զգործոց:

Պ.Մ.Պալեան. - «Մշակն» եւ «Մեղուն Հայաստանի» մի բերեցին. զի ոչ կարեմք ի ձեռս աշակերտաց տալ զլրագիրսդ:

Պ.Ն.Սիմէոնեան. - Եթէ գուցէ ի նոսա յօգուած ինչ այնպիսի զոր չիցէ մարթ տալ ընթեռնուլ աշակերտաց, մի տացուք, իսկ եթէ չիցե այնպիսի ինչ, ընդէ՞ր չտալ զլրագիրսդ ի ձեռս աշակերտաց:

Պ.Մ.Պալեան. - Երբէք չկարեմք տալ ի ձեռս աշակերտաց զլրագիրսդ, զի լի են հանապազ անպիտան հատուածովք, եւ ոճ բանիցն ինքնին անպիտան է եւ հեռի յոյժ յուղղախօսութենէ եւ ի հայկաբանութենէ զոր պարտիմք աւանդել համբակացն մեթոդ, հեռի պահելով զլսելիս նոցա ի խժգժական ասացուածոց եւ ցստարախորթ բառից լրագրացդ երկոցուն: Այլեւ ի բարոյականի մասին եւս պախարակելի յոյժ են լրագիրքդ, զի ի մէն մի ի թուահամարացն անձնական կիրք եւ անտեղի ատելութիւն տեսանի եւս եւ զպատկառելի եւ զսրբազան իրաց:

Պ.Ն.Սիմէոնեան. - Եթէ չկարիցեմք տալ զլրագիրսդ ի ձեռս աշակերտաց, սակայն եւ այնպէս տացուք բերել զայնս վասն ուսուցչաց: Զի ոչ զնոյն կարէք ասել եւ զուսուցչաց, որոց կարողութիւն դատողութեան ի վեր է քան զաշակերտաց, եւ կարին որոշել զչարն ի բարւոյ: Ուսուցիչք յետ ընթեռնլոյ զայնս, կարին զկարեւոր գիտելիսն պատմել աշակերտաց:

Եւ իբրեւ պ. Մկրտիչ Պալեան ոչ հաւանէր ասացելոցն պ. Ն.Սիմէոնեան, պ. Պ.Ճէպէճեան ասէ. «Անշուշտ կարեւոր է յոյժ եւ անհարժեշտ իսկ ուսուցչացս եւս եւ աշակերտաց ընթեռնուլ զազգային լրագիրս, զի տեղեկասցուք նորանոր անցից եւ գիպուածոց պատահելոց յազգի մերում, այլ քանզի պ. Մ.Պալեան չհաւանի ընդ լրագիրսդ «Մշակ» եւ «Մեղու Հայաստանի», խնդրեսցուք ի Վեհափառ Հայրապետէն զի բարեհաճեսցի հրամայել, տալ մեզ ընթեռնուլյազգային լրագրացն հրատարակելոց յօսմանեան աշխարհին զորս նա ինքն Վեհափառ Հայրապետն պատշաճ դատեսցէ:

Ապա ընդ երկար վիճեցին զխնդրոյս պպ. Մ. Պալեան, Պ. Ճէպէճեան եւ Ն. Սիմէոնեան: Հուսկ ուրեմն հաւանու[թեամ]բ ժողովականաց սահմանեցաւ.

Ա.Ճեմարանս տացե բերել վասն առաջիկայ 1877 ամի զհետագայ լրագիրս եւ օրագիրս ի հրատարակելոցն ի ռուս լեզու «Голос», «Всемирная иллэстрация» եւ «Учительское обозрение», իսկ ի հրատարակելոցն ի հայ լեզու վասն ուսուցչաց միայն «Մշակ» եւ «Մեղու Հայաստանի»: Բ.- Գրել առ սրբազան վերատեսուչն եւ խնդրել զի բերեհաճեսցի կարգադրել զարժանն զայսմանէ:

Յետ այնորիկ կարգապահ ճեմարանիս զեկոյց ժողովականաց զոր ինչ գրէ սրբազան վերատեսուչն վասն նստուցանելոյ զաշակերտս ի դասարանս եւ ոչ ի սերտանի, եւ այս են բանք սրբազան հօրն. «Բարւոք յոյժ արարեալ էք յապահովել զմանկտիդ ի ցրտութենէ սերտարանին. միայն թէ հարկաւ ոչ միայն կանթեղս պատշաճականս լաւելեք ի մէն միում ի դասարանացն, այլեւ դասապետաց պատուէր տայք անխախտ պահել յիւրաքանչիւրումն դասարանի զկանոն լռութեան, որ կարեւորագոյնն է պարապելոցն ի սերտողու[թեամ]բ»:

Ապա պ. Մ.Պալեան ի հարց ժողովականաց եթէ պա՞րտ եւ կարեւո՞ր իցե զատենադրութիւնս ժողովոց մերոց ընթեռնուլ ի լուր համօրէն աշակերտաց:

Առ այս խոււն պատասխանի արժանապատիւ Կիւրեղ վարդապետ, պ. Ն.Սիմէոնեան եւ այլք ընդ նոսա թէ՝ ոչ այլ զի կարգապահ ճեմարանիս ընթերցցի կամ յայտ արասցէ աշակերտաց յատենագրութեանց ժողովոց մերոց զայն ինչ եւեթ որ աշակերտաց կարեւոր է իմանալ:

Յետ այնորիկ պ. Պ.Ճէպէճեան յայտարար ժողովոյս զի աշակերտք չորեցունց եւս դասարանացն, ծանրաբեռնեալ յոյժ են ազդի գրութեամբք դասուց, որ սպառէ զմեծ մասն սերտողութեանն, այնպէս զի սակաւ ժամանակ մնայ աշակերտաց սերտելոյ զդասսն:

Եւ իբրեւ առարկեցին նմա ոմանք ի ժողովականաց թէ առ ի չգոյէ դասագրոց, ի ժամս սերտողութեան աշակերտք պարտին դրել ո՛չ միայն զպէսպէս կրթութիւնսն, զհրահանգս եւ զշարադրութիւնս, այլեւ զդասս իւրաքանչիւր ուսմանց, զեկեղեցական պատմութեան, զթուաբանութեան, զճարտասանութեան, զընական պատմութեան եւ [այլ]ն պ. Պ.Ճէպէճեան յաւել. «Պարտ է տալ բերել դասագիրս՝ եթէ գտցին, իսկ եթէ ոչ, խորհել պարտիմք, թէ որո՞վ հնարիւք արդիօք մարթ իցէ ազատ առնել կամ դէթ թեթեւացուցանել զաշակերտս ի դրելոյ զդասսն ի ժամս սերտողութեան»:

Արժանապատիւ Կիւրեղ վարդապետ պատասխանի ետ եւ ասէ թէ՝ յիրաւի այդ այդպէս է, ծանրաբեռնեալ են յոյժ աշակերտք, վասն որոյ ամենայն վարժապետք պարտին ի ժամու դասախօսութեանց տալ դրել աշակերտաց զդասսն իւրաքանչիւր, որպէս առնեմս վասն եկեղեցական պատմութեան:

Պ.Մ.Պալեան չեղեւ հաւան ընդ առաջարկութ[եան]դ, ասելով թէ՝ ի ժամու դասախոսութեան տալ դրել աշակերտաց զդաս իւրանց, կորուստ է ժամանակի, զի այնմ ժամու կարէ ուսուցիչն յայլ օգտակարագոյն կրթութիւն ինչ պարապել ընդ աշակերտսն: Իսկ զդրութիւն դասուցն թողուլ ի ժամս սերտողութեան, կամ եթէ անընդունելի իցէ այդ ժողովականացդ, յազատ ժամս աշակերտոց:

Առ այս բան նորա առարկեցին պպ. Պօղոս Ճէպէճեան եւ Ն. Սիմէոնեան թէ՝ առողջութիւն աշակերտաց պահանջէ չխորել ինչ յազատ ժամուց նոցա. զի սրբազան պարտք մեր են ստանձնելոյս զդաստիարակութիւն մանկտւոյդ ո՛չ միայն զմիտս զարդարել նոցա ազդի ազդի գիտութեամբք, այլեւ զմարմինս պահել ի կատարեալ առողջութեան: Իսկ այդ ամենայն ժողովականացս յայտ է թէ քանի վնասակար հետեւանս առնու ձգէ զհետ իւր (մանաւանդ վասն դեռաբոյս մանկանց եւ պատանեկաց), անշարժ եւ նստողական կեանք:

Արժանապատիւ Կիւրեղ վարդապետ ասէ. «Սակաւ են ժամք սերտողու[թեան] ի ճեմարանիս, եւ աշակերտք ոչ կարին ի կարճ ժամանակիդ ուսանել զդասն որպէս անկն է, յոյր սակս, եթէ չիցէ հնար ի ձեռս բերել դասագիրս, պարտ է հնարս խնդրել դիւրացուցանելոյ աշակերտաց զպատրաստութիւն դասուցն:

Պ.Պ.Ճէպէճեան ասէ. «Անպաքէն բարւոք է եւ օգտակար յոյժ զի ուսուցիչն ժամ մի ողջոյն պարապեսցի ի դասատուութեան, սակայն եւ այնպէս հնարս հնարել պարտ է զի մի ժամք սերտողութեանն ծախեսցին ի դրութիւն դասուցն: Եւ զայս ոչ այլազգ կարեմք առնել, եթէ ոչ՝ դէթ մասամբ իւիք, տալով դրել աշակերտաց զդասս իւրաքանչիւր ի ժամու դասախօսութեան»:

Ապա յետ երկար վիճաբանութեան, հաւանութեամբ մեծի մասին ժողովականացս սահմանեցաւ. «Քանզի ժամք սերտողութեան սակաւ են (ընդ ամենայն

ժամք երեք) ոչ միայն ի պատրաստել աւուր աւուր դասս հինգ կամ վեց, այլեւ ի դրել զոմանս ի դասուցդ, իւրաքանչիւր ոք յուսուցչաց ջան ի գործ դիցէ ի ժամու դասատուութեան տալ գրել աշակերտաց եթէ ոչ զբոլոր դասն՝ դէթ մասն ինչ անտի, այնպէս զի մի՛ տեւեսցէ դրութիւն դասուն առաւել քան զկես ժամու:

Կարգապահ ճեմարանիս Յ.Գալստեան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.6, թ.9-10: Բնագիր: Ձեռագիր:

N 5
ՍՏԵՓԱՆՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԻՆ ՃԵՄԱՐԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 հունիսի 1879թ.
Նախիջեւան

Նախիջեւան քաղաքը՝ թէեւ գտնվում է Կովկասեան աշխարհի ամենավերջին ծայրում եւ համարվում է նոցա ամենայետին քաղաքն, որի բնակիչք համարեայ ըստ մեծի մասին աղքատք եւ աննշմարելի են բազմամարդ պարսիկ մահմետականաց մէջ, բայց այնուամենայնիւ ուսումնասիրութեան փոյթը եւ ուսման յարգանքը ճանաչելում, պակաս չեն միւս քաղաքացիներից: Նոյնպէս անծանօթ չեն մեր այս փոքրաթիւ քաղաքացիները, Ձերդ Վեհափառութեան, որ անդադար աշնում էք մեզապիսի յետին եւ աղքատ քաղաքացւոց մէջ տարածելու գիտութեան եւ իմաստութեան լոյսը Վեհափառութեանդ հիմնած հռչակաւոր ճեմարանական ուսումնարանի միջոցաւ, որը պիտի խոստովանի ամենայն հայազգի ոք, երախտագէտ հոգով եւ օրհնաբանէ Ձեր անմահ յիշատ որդւոց որդի: Ինչպէս յիշեցի Ձերդ Վեհափառութեան բարի նպատակն է՝ ընդունել նոյն ճեմարանի որդեգրութեան այնպիսի տեղերից, ուր չկայ լուսավորութիւն եւ այնպիսի մարդկանց որդիք, որոնք չունին կարողութիւն իրենց սեփական ծախոք դաստիարակել տալ նոցա ըստ արժանոյն:

Վեհափառ տէր, ես իբրեւ բազմաթիւ եւ աղքատ գերդաստանի հայր եւ միեւնոյն ժամանակ տեսնելով Արշակ եւ Լեւոն անուն որդւոցս բնական ձգտումն դէպի ուսումն եւ համեստ բնաւորութիւնները, որոց առաջինը 14- ամաց եւ երկրորդ 12 ամաց, ծնողական պարտքը եւ զգացմունքը անդադար ինձ տանջում են հասուցանել նոցա մի կարոտեալ ուսման, որը պիտանացու լինէր թէ ազգին եւ թէ նոցա: Բայց այս իմ ծնողական մտատանջութեան կարծիս փարատեցաւ, նկատի ունենալով Ձեր սրբութեան ազգօգուտ նպատակները եւ ընդունելութիւնը աղքատ եւ անկարող ծնողաց որդւոցը որդեգրութեան ազգաշէն ճեմարանիդ մէջ ազգի պիտոյից համար: Ուստի Ձեր սրբութեան առատ շնորհից եւ հայրական խնամքից յետ չմնալու համար, այսու խոնարհ աղերսագրութեամբ դիմում եմ յուսով հասարակաց հօրդ եւ աղաչում հիշատակեալ որդւոցս Արշակայ եւ Լեւոնի, արժանի առնել որդեգրութեան սրբութեանդ, ընդունել տալով ի մեծի ճեմարանդ: Յայտնելով միանգամայն հիշատակեալ որդիքն իմ արդէն աւարտած են համարվում իրենց ուսումն տեղւոյս ծխական հոգեւոր դպրոցում եւ որպես յուսամ կարողք են նոքա այլեւս պատրաստել ճեմարանի կանոնադրութեանց պահանջի համաձայն, որոնք եւ ընդունելու ժամանակ իրենց հետ կներկայացնեն պատշաճական վկայաթղթերը:

Խոնարհ ծառայ Վեհափառութեան Ձերում՝ Ստեփանոս Ավետիքեանց

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.3, թ.14 եւ շրջերես: Բնագիր: Ձեռագիր:

N 6
ՄԿՐՏԻՉ Ա ՎԱՆԵՑԻ[8] ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ, ՀՈՒՍԻԿ, ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՇԵՂ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՆ ՍԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 հուլիսի 1896թ.
Վաղարշապատ

Վարչութեան Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյս ս.Էջմիածնի: Կամեցեալ մեր լնուլ հետզհետէ զմեծ կարօտութիւն ս.եկեղեցւոյս եւ ճեմարանիդ վասն եկեղեցական անձանց զարգացելոց ի հրահանգս բարձրագոյն ուսմանց, զորմէ յաճախակի բանք եղեն մեր ընդ անդամոց վարչութեանդ, տնօրինեցաք վասն սանուց ճեմարանիդ տ[եր] Կոմիտաս եւ տ[եր] Յուսիկ վարդապետաց դիմել ի համալսարանս արտասահմանի՝ ի կատարելագործութիւն ուսմանցն, որք եւ արդէն հասեալ կան ի տեղիսն: Իսկ այժմ տնօրինեմք եւ վասն երկուց այլոց սանուց ճեմարանիդ ի միաբանից Մայր Աթոռոյս, տ.Եզնիկ վարդապետի եւ Մուշեղ սարկավագի, զի եւ նոքա փութասցին դիմել ի կատարելագործութիւն ուսմանցն, առաջինն յարտասահման, իսկ երկրորդն ի ս.Պետէրբուրգ: Ջմերձաւոր վէրահասութիւն ընթացից ուսմանցն եւ մատակարարութեան ծախուց նոցա զորեցուն յանձն առնեմք վարչութեանդ ըստ յետագայից.

Ա. Ի պատճենից գրութեան Մարդասիրական ընկերութեան Հայոց որ ի Բագու ի 27 ապրիլի սոյն ամի թ.29 եւ յայտարարութեան մեծապատիւ պ.Քրիստափորի Գրիգորեան Թումայեանց յ31 մարտի այս ամի կցելոց ընդ սմին, վարչութիւնդ տեսցէ, զի առ մարդասիրական ընկերութեանն Բագուի պահի գումար քառասուն հազար ռուբլեաց (40.000 ռ.), տոկոսիք որոյ յատկացեալ են ի կողմանէ կտակարարացն ի պէտս ծախուց ընթացաւարտ սանուց ճեմարանի դեդերելոց ի բարձրագոյն ուսմունս: Մարդասիրական ընկերութիւնն պարտի յերկուս նուագս ի տարւոջ զ տոկոսիս դանձելիս ի 40000ն առաքել առ վարչութիւնդ՝ ի մատակարարութիւն ըստ հրահանգաց մերոց: Արդ, ի գումարէ այսոցիկ տոկոսեաց սահմանեմք տալ վարդապետացն Յուսկան եւ Եզնկայ ամ ըստ ամէ ռուբլիս մի հազար վեց հարիւր (1600), իւրաքանչիւրումն ռուբլիս ութ հարիւր (800), ցորչափ ժամանակս կացցեն մնասցին նոքա ի վարժս ուսմանցն, իսկ Եզնիկ վարդապետին տալ այժմէն իսկ վասն ծախուց ճանապարհի մի 150 ռուբլի, այլ եւ ի մնացորդաց տոկոսեացն յաւելուլ երիս հարիւր ռուբլիս ի վերայ թոշակի Կոմիտաս վարդապետին, որում բարերար հանդիսացեալ է բարեպաշտօն Մանթաշեան յատկացուցանելով մնա 6000 ռուբլի ի տարին:

Բ. Զ Մուշեղ սարկաւագն առաքեմք ի Պետէրբուրգ ի հաշիւ տոկոսեաց դրամագլխոյն կտակելոյ ի յիշատակ Գէորգայ Գրիգորեան Փրիդոնեանց՝ յորդւոց նորին, որոյ արժետոմսն (9000 ռուբլւոյ) գտանի ի գանձարանի Մայր Աթոռոյս, ուրանոր գանձեալ են տոկոսիք գումարին յերկուց ամաց հետէ եւ գանձին 450 ռուբլի ամ ըստ ամէ: Վարչութիւնդ ունի յիւրաքանչիւրում նուագի ի դէպս կարեւորութեան խնդրել եւ առնուլ զհարկաւոր գումարն ի Սինոդէ ս. Էջմիածնի, որում եւ տուեալ եմք հրահանգս վասն այսորիկ, եւ մատակարարել սարկավագին ցաւարտ լիուլի ընթացիցն համալսարանական ուսմանց, տալով միանուագ ի ծախս ճանապարհի ռուբլիս մի հարիւր (100) եւ ապա ի պետս այլեւայլ ծախուցն ի մայրաքաղաքին ռուբլիս 700 յերիս նուագս ի տարւոջ: Սարկաւագն պարտի ուսանել զիրաւաբանութիւն եւ առանձինն զեկեղեցական իրաւագիտութիւն:

Գ. Պարտս դնեմք վարչութեանդ անձանձիր փութով հոգ անել վասն զորեցուն դոցա, տալ իւրաքանչիւրում ումեքի նոցանէ պատշաճ հրահանգս յաղագս ուսանելի առարկայիցն եւ յերկուս նուագս ի տարւոջ համարս պահանջելով ի նոցանէ զընթացից ուսմանցն՝ զեկուցանել մեզ զայնմանէ ի գիտութիւն եւ ի տնօրէնութիւն:

Մկրտիչ Ա կաթողիկոս

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.41, թ.3-4: Բնագիր: Ձեռագիր:

N 7
ՍԻՆՈԴԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՐ.ՄԵՂՎԻՆՅԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՃԵՄԱՐԱՆԻՆ 25000ռ. ԿՏԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 օգոստոսի 1898թ.
Ս.Էջմիածին

Զեկուցումն ըստ կտակի հանգուցեալ Գրիգորի Մեղուինեանց Տփխիսեցվոյ պայմանք գործադրութեան տոկոսեաց կտակեալ ի նմանէ 25000 ռուբլի դրամագլխոյ, որպէս երեւի ի գործոյն տնտեսական մասին Սինոդիս թ. 56/97, են այսոքիկ նախ՝ ցորչափ ճեմարանն Սրբոյ Էջմիածնի ի գոյութեան իցէ, տոկոսիքն պարտին ի կիրարկանիլ միմիայն ի վերայ ուսումնական կրթական պիտոյից նորին ճեմարանի, իսկ ի դադարելն ի գոյութենէ ճեմարանին, թեմական դպրոցք կամ ծխական հոգեւոր ուսումնարանք հայոց, ըստ առաւել կարօտութեանց, պարտին օգտիլ ի տոկոսեացն՝ ի նոյն նպատակ, եւ կամ ըստ բարեհաճ կամաց ընտրութեան պետին եկեղեցւոյ հայոց ի կիրառցին ի վերայ ծախուց ուսումնառութեան հայ պատանեաց ի բարձրագոյն ուսումնարանսն Ռուսիոյ կամ արտասահմանի: Եւ երկրորդ՝ ի գործոյն հաշուարարական մասին Սինոդիս, որ միուսն այդր իսկ կտակի, տեսանի, զի տոկոսիք կտակեալ դրամագլխոյն լինին ի տարին ինն հարիւր երեսուն եւ ութ ռուբլի վաթսուն կոպէկ (938ռ. 60կ.): Հրամայեցին. Սինոդս գանձեալ ունելով արդէն կտակաւանդ գումարն քսան եւ հինգ հազար (25000) ռուբլեաց յանուն ճեմարանի Սրբոյ Էջմիածնի, կտակելոց ի հանգուցեալ Գրիգորէ Մէղուինեանց, առնէ զտնօրէնութեան իւր ըստ մտաց կտակարարին ըստ հետեւի լոյս՝ նախ պատուէր հրամանի տալ դանձապահի Սինոդիս ընկալնուլ յարքունի դրամատանէ (բանկ) յիւրաքանչիւր երիս ամիս զտոկոսիս յիշեալ 25000 ռուբլեաց կտակագումարին եւ տալ վարչութեան ճեմարանի Սրբոյ Էջմիածնի, ըստ օրինի ստորագրութեամբ եւ երկրորդ՝ որովհետեւ ըստ այսմ կտակի ի վերայ նախահաշուոյ Ճեմարանին յաւելեալ լինի ինն հարիւր երեսուն եւ ութ ռուբլի վաթսուն կոպ. գումարն, ուստի ի կազմելն զնախահաշիւ նորին Ճեմարանի վասն առաջիկայ 1899 ամի ունել ի նկատի եւ զայն գումար եւ ըստ այնմ կարգադրել: Իսկ վարչութեան Ճեմարանին պատուիրել հրամանագրութեամբ, զի ընկալեալ զտոկոսիս կտակաւանդ գումարին Մէղուինեանցի ի կիր արկցէ զայնս ըստ պարզ իմաստի 14-րդ յօդուածոյ կտակի հանգուցելոյն, եւ զգործադրութենէ դրամոցդ տեղեակ առնել զՍինոդս:

Անդամ Սինոդի՝ Աշոտ վարդապետ

ՀԱԱ ֆ.Պ- 312, ց.1, գ.960, թ.2 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 8
ՂԱԶԱՐՈՍ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 25 -ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

16 սեպտեմբերի 1899թ.
Սիմֆերոպոլ

Քաղաքակրթված եւ հզոր ազգերի երջանիկ զավակներն ազատ ու ապահով եւ նախանձելի վիճակի մեջ, ուսման եւ գիտության նորանոր զենքերով սպառազինված՝ հսկայաքայլ դիմում են դեպի առաջ: Նրանց հայտնի հանճարներն իբրեւ քաջ արվեստագետներ, ուսման, գիտության եւ արհեստների զանազան ճյուղերը զարգացնելով եւ մշակելով, հետզհետե կատարելագործեցին եւ ընդհանուր մարդկության համար մեծամեծ բարիքներ պատրաստեցին: Հայոց ազգն եւս լուսավորության եւ քաղաքակրթության կենդանարար պտուղների համն ու արժեքը իբրեւ գիտցող եւ յուրացնող տարր՝ անպատճառ արձակ ու համարձակ նա կարող էր լուսավորության, մտավորական առաջադիմության եւ քաղաքակրթության ասպարեզում նախընթաց կարապետ հանդիսանալ իւր դրացի

ազգերի մեջ: Բայց տարաբախտաբար, ամբողջ փոքր Ասիայում, միմիայն Հայոց ազգն ընդունած լինելով քրիստոնեական լույս հավատը, նրա գրացի մեծ եւ փոքր այլակրոն, մոլեռանդ եւ արյունարբու ազգեր, երկար դարերի ընթացքում Հայաստան աշխարհը անընդհատ կռիվների եւ արյունաշաղախ պատերազմների ասպարեզ գարձրին: Բազմաչարչար մեր հայ ազգն իւր քաղաքական անկախությունը կորցնելուց հետո, թողեց նա գրախտանման իւր հայրենի երկիրը, իւր արորն ու գութանը, իւր կիսակործան տաճարներն ու սրբավայրերը, իւր պանծալի նախնիքների անմոռանալի շիրիմները եւ պանդխտու[թյան] ցուպը ձեռքին՝ սկսեց գաղթել երկրե երկիր, հեռու եւ անծանոթ աշխարհներ, գեթ միայն ազատ շունչ քաշելու համար: Աշխարհիս չորս կողմը ցիրուցան եղած հայոց թշվառ ժողովրդի սիրտն ու հոգին ի մի կապող միակ աստվածակերտ օղակը եղել է եւ է Հայաստան: Բայց բազմաչարչար սուրբ է եկեղեցին իւր անձնվեր, բանիմաց եւ ընտիր հոգեւորականներով: Բայց տարաբախտաբար, տարագեպ եւ աննպաստ քաղաքական հանգամանքների շնորհիվ, հայոց եկեղեցին չուներ ժամանակիս պահանջներին համարավոր եւ կրթված յանպիսի հոգեւորականներ, որոնք կարողանային հայոց քարացած զգացմունքները հալեցնելով, սերմանել նրանց սրտերում մարգացյալ փրկչի երկնային եւ անմահ գաղափարները: Գաղափարներ՝ կրոնական եւ բարոյական, որոնք մարդոց քարացած եւ ամայի անապատ գարձած սրտերը սրբում, մաքրում եւ ազնվացնելով՝ աստվածեղեն անուշաբույր, սրբության խորան է գարձնում: Հավերժահիշատակ Գեւորգ Դ հոգելույս Հայրապետը՝ սրատես աչքերով գիտեց իւր սիրեցյալ հայ հոտի եւ մեր բազմաչարչար սուրբ եկեղեցու ամենաանհրաժեշտ կարիքները եւ պիտույքները: Եվ այս ամենահարկավոր կարիքներին լրումն տալու համար, ձեռնարկեց նա երկու զորավոր եւ ազգու միջոցներ գարծագրել: Այն է, նախ՝ հայոց բազմաչարչար սուրբ եկեղեցու համար նախապատրաստել ընտիր եւ բանիմաց հոգեւորականներ, որոնք կարողանային նրա (հայոց ս. եկեղեցու) նսեմացած փառքն ու շուքը զորացնել ու բարձրացնել եւ երկրորդ՝ հայ ժողովրդի սիրտն ու հոգին կրթող ու գաստիարակող ժրաջան եւ անձնվեր ուսուցիչներ պատրաստել: Այս վեհ նպատակին հասնելու համար մեծագործ Հայրապետը հատուկ հեռատեսությամբ, հղացավ մի հոգեւոր ճեմարան հիմնել, հայոց Արարատյան աշխարհի կենտրոնում՝ մեր հնագարյան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի ծոցում: Ճիշտ սրանից 25 տարի առաջ, 1894թ. Մայր Աթոռի արեւելյան կողմը, հայոց պատմական Մասիսի հանդեպ, մեր հոգեւոր ճեմարանի համար նախօրոք պատրաստված փառահեղ շինության մեջ, Գեւորգյան ճեմարանի բացման եւ օրհնության շքեղաշուք հանդեսը կատարվեցավ: Վեհ հիմնագիրը փառավոր հանդեսի գլուխն անցած՝ ուրախ ու զվարթ եւ ժպտալով նա խաչակնքում եւ օրհնում էր իւր հոգեւոր զավակներին, իսկ աջ եւ ձախ կողմից շար ի շար ընկած հոգեւորականությունն ու բազմաթիվ աշակերտներ պատշաճավոր շարականներ երգելով՝ համրաքայլ գիմում էին ճեմարանի հյուսիսային կողմը եւ խուռն բազմություն հետեւում էր հանդեսին: Ճեմարանի բացման հանդեսի օրը՝ նրա տեսուչը՝ մեր հայտնի հայագետ, բարեհիշատակ Գաբր[իել] արքեպ[իսկոպոս] Այվազյանց մի գրաբառ ճառ կարդաց: Ահա այն, օրից մինչեւ ցարդ՝ անցել է մի քառորդ գար եւ այսքան տարիների ընթացքում հայոց միակ բարձրագույն կրթարանը՝ շատ չար ու բարի օրեր է տեսել, շատ ահարկու մրրիկների եւ կործանիչ փոթորիկների է հանդիպել, բայց փառք եւ գոհություն Արարչին, որ մեծ քահանայապետի բազմաչարչար նահատակի եւ Հայաստան աշխարհի ու Գրիգոր Լուսավորչի սրբազան աջը՝ ամեն փորձանքներից եւ վտանգներից նրան ազատ է պահել ու պահպանել: Այսօր հայազգի ընտիր եւ բանիմաց զավակները երախտագիտական լի զգացմամբ օրհնելով վեհ հիմնագրի անմահ հիշատակը, համեստ կերպով տոնում է նրա հիմնարկած ուսման տաճարի գոյության 25-ամյա հոբելյանը: Մայր Աթոռի Գ[եւորգյան] ճեմարանի արգյունաշատ գոյության 25-ամյա տարեգարձի հիշատակը՝ իսկապես մեր կրոնական եւ բարոյական վերածնության քաղցր հիշատակն է: Ուրեմն՝ կեցցե՛ մեր Մայր Աթոռ, կեցցե՛ Վեհ[ափառ] Հայրիկ եւ Հայրապետություն հայոց, կեցցե՛ Հայն եւ Հայություն, կեցցե՛ Գեւորգյան հոգեւոր ճեմարան եւ ուսուցչական խումբը: Եվ ես նվաստս, որպես նախկին աշակերտ ս.Էջմիածնի ժառանգավորաց հոգեւոր գպրոցի, ի խորոց սրտե մաղթում եմ առ ամենաբարձրյալն Արարչին, որ մեր լուսավորության, կրոնական եւ բարոյական վերակենդանության այս միակ

լուսատու փարոսը, հաստատուն, անխախտ եւ անսասան պահե գարեգար եւ սերնդե սերունդ, ի պայծառություն մեր բազմաչարչար սուրբ եկեղեցվո եւ ի պարծանս մեր թշվառ հայ ազգի, այժմ եւ հավիտյանս, ամեն:

Ղազարոս քահանա Հովսեփյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.46, թ.82-83: Բնագիր: Ձեռագիր:

N 9
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆԻ[9] ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՃԵՄԱՐԱՆԻ 25-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՐՔԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25 սեպտեմբերի 1899թ.
Ս.Էջմիածին

Տկարությանս պատճառավ Երնջակա սուրբ Կարապետի վանքեն բացակա լինելով՝ անկարացա համակրանացս հավաստիքը նաեւ նյութականավ ցույց տալ գեպի ճեմարանը եւ նորա վարչությունը: Ուստի անձամբ փութացա մասնակից, խնդակից եւ ուրախակից լինել ճեմարանի քսանեւհինգ ամյա հոբելյանի նշանավոր հանդեսին եւ ի ցույց անկեղծ համակրանացս նվիրեմ հանուն ճեմարանի 50 օրինակ տպագիր եւ ձեռագիր կրոնական եւ պատմական գրքեր, ընդ որս եւ հանգուցյալ Գաբրիել Արքեպիսկոպոս Այվազյանի ձեռագիր գրած ճեմարանի պատմությունը:

Մեսրոբ արքեպիսկոպոս Սմբատյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.46, թ.88: Բնագիր: Ձեռագիր:

N 10
ՄԿՐՏԻՉ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ[10] ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 օգոստոսի 1905թ.
Վաղարշապատ

Հոգեշնորհ Տ.Գարեգին վարդապետի Յովսէփեան, տեսչի թեմական հոգեւոր գպրանոցի հայոց Երեւանայ, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական:

Դու, որ ի տղայ տիոց սնեալ եւ զարգացեալ ես ընդ յարկաւ հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյս եւ յետ բոլորելոյ զլիակատար գասընթացս նորին, ուղեւորեցար ի համալսարանս Գերմանիոյ առ ի կատարելագործել յուսմունս, զկնի վերագարձիդ անտի հաճութեամբ մերով կարգեցար ի մէնչ ի պաշտօն ուսուց-չութեան աստուածաբանական գիտութեանց ի ճեմարանիս, զոր եւ վարեցիր խղճի մտօք յընթացս քանի մի ամաց, գոհ կացուցանելով զմեզ եւ զաշակերտեալսն միանգամայն: Այլ սակայն հարկագրեալ մեր ի բերմանց հանգամանաց ժամանակի, թոյլ տուաք քեզ փոխագրիլ պաշտամամբ տեսչի ի թեմական հոգեւոր գպրանոցն հայոց Երեւանայ ըստ ընտրութեան պատուարժան հոգաբարձութեանն: Վարեալ քո զպաշտօն տեսչի այնր գպրանոցի զամս երիս, տեսաք զքեզ ժիր եւ եռանդուն, որ գհետ լինէիր բարեկարգութեան յանձն եղելոյ խնամոցդ հոգեւոր կրթարանին, ըստ ուսումնականին ասեմք եւ ըստ վարչականին:

Տեսեալ մեր զփորձառութիւն եւ զժրաջանութիւն քո եւ մանավանդ լուեալ մեր բազմիցս զգոհունակութիւն հոգաբարձութեանն զխոհեմ եւ աչալուրջ կառավարութենէդ, բարւոք համարեցաք կոչել զքեզ ի պաշտօն տեսչութեան հոգեւոր ճեմարանիս մերոյ ի բարոյական եւ յուսումնական յառաջադիմութիւն նորա: Պատուիրեմք քեզ շուտ ընդ փոյթ յանձնել զհաշիւս եւ զամենայն տեսչութեան գործս հոգաբարձութեան գպրանոցին Երեւանայ եւ փութալ ի Մայր Աթոռս առ ի ստանձնալ զնոր պաշտօնդ: Այլ եւ յանձն առնեմք քեզ կոչել զկարող անգամս միաբանութեան Մայր Աթոռոյ յուսուցչութիւն կամ յայլ պաշտօն,

նախապէս ստանալով առ այդ զհաճութիւն մեր:

Տէրն տէրանց, որ տուիչն է ամենայն բարութեանց եւ իմաստութեան, լցուսցէ զհոգի եւ զմիտ քո շնորհօք, առ ի անթերի լնուլ զիդեալսն ի վերայ քո զպարտիս:

Ողջ լեր զօրացեալ ի Տէր եւ օրհնեալ ի մենջ: Ամէն:

Մկրտիչ կաթողիկոս

ՀԱԱ, ֆ.Պ-312, ց.1, գ.173, թ.126 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 11
Ս.ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՇԽԱՆ ԱԲԱՄԵԼԻՔ ԼԱԶԱՐԵՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹՈՇԱԿԱՌՈՒ ՍԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

18 դեկտեմբերի 1909թ.
Ս.Պետերբուրգ

В ответ на отношение академии от 7 ноября с/г за N 418, совет настоящим сообщает, что к имеющимся уже 30 стипендиатам Академия может зачислить с 1-го января 1910 года еще десять стипендиатов.

Таким образом с указанного времени в Эчмиадзинской Духовной Академии будет всего сорок стипендиатов имени графа Ивана Лазаревича Лазарева, список коих, по примеру прошлых лет, совет просит представить своевременно.

Председатель князь Абамелик Лазарев

ՀԱԱ, ֆ.Պ-312, ց.1, գ.188, թ.89. Բնագիր: Մեքենագիր:

N 12
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԱՐԱՍՈՎԻ (ԹՈՐՈՍՅԱՆ) ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ 40000 Ռ. ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

31 հունվարի 1912թ.
Մոսկվա

Ի պատասխան թիվ 881, հունվար 16 թվակիր Ձեր ազնվական գրության, պատիվ ունեմ ծանուցանել, որ այսօր ս.Էջմիածնի սինոդի անունով փոխադրեցի քառասուն հազար ռուբլի (40000 ռ.) գումարը եւ փոխադրության տոմսը ուղարկեցի ամենապատիվ տ. տեղակալին: Հիշյալ գումարով պետք է կառուցվի ճեմարանին առընթեր բնական գիտությունների բաժանմունք, ինչպես արդեն Ձեզ հայտնի է (отделение естественных наук при Эчмиадзинской Духовной Академии) մեր չորս եղբարց հիշատակին (Ալեքսանդրի եւ Միքայելի ու հանգուցյալ Ղազարի եւ Գաբրիելի Թորոսյանց):

Անշուշտ այդ քառասուն հազար ռուբլին կդնեք ընթացիկ հաշվով դրամատանը եւ ներկա գարնան սկզբեն իսկ, ինչպես որ հայտնեցիք, գործը կսկսեք:

Միանգամայն լիահույս ենք, որ այդ գործը Ձեր անմիջական ղեկավարությամբ կսկսվի, կավարտվի եւ կկազմակերպվի:

Ձեր ձեռնարկելիք աշխատություններուն համար իմ, Միքայելին եւ հանգուցյալ եղբայրներուս ժառանգներուն կողմանե ընդունեցեք կանխավ ջերմ շնորհակալություններս:

Մնամ խորին հարգանաց հավաստիք

Ալեքսանդր Թորոսյան

Ծանոթություն. Ալեքսանդր Թորոսյանից ստացվեց 40 հազար ռուբլի գումարը եւ փետրվարի 11-ին դրվեց Թիֆլիզի առեւտրական բանկի երեւանյան բաժանմունքում ս.Սինոդի անունով հերեւյալ կերպով.

20 հազար ռուբլին մի տարով 5% -ով,

10 հազար ռուբլին վեց ամսով 4% -ով եւ

10 հազար ռուբլին ընթացիք հաշվով $3^{1}/_{2}$% -ով:

*Բնական գիտությանց բաժանմունքի շենքը ի հիշատակ Թորոսյան եղբարց սկսվելու է 1912թ. գարնանը:****

Բագրատ Վարդապետ

ՀԱԱ ֆ.Պ-312, ց.1, գ.978, թ.30 եւ շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 13
ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 հունվարի 1914թ.
Վաղարշապատ

Գերապատիւ նախագահի տ. Բագրատ եպիսկոպոսի եւ մեծարգոյ անդամոց մանկավարժական խորհրդոյ մասնագիտական բաժնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանի, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն եւ օրհնութիւն հայրապետական:

Քաջայայտ է Ձեզ, զի յ30 յուլիսի 1912 ամի թ. 698 մակագրութեամբ մերով հաստատեցաք զմշակեալ ի ժողովս Ձեր զծրագիր լսարանական բաժնի Հոգեւոր ճեմարանիդ, տրոհելով զբարձրագոյն բաժինն յերկուս մասնագիտութիւնս՝ յաստուածաբանական եւ ի հայագիտական բաժանմունս:

Գիտէք նոյնպէս, զի ի նմին իսկ 1912 ամի կոնդակաւ մերով յ8 մայիսի թ. 339 բացաւ եօթներորդ նոր դասարան դպրանոցական բաժնի ճեմարանիդ եւ ի 27 մայիսի 1912 ամի թ. 393 մակագրական կարգադրութեամբ մերով հաստատեցաք զդասաբաշխումն դպրանոցական բաժնի:

Զարդիս ի նկատ առեալ մեր զայս ամենայն հանգամանս, առաւել եւս անհրաժեշտ վարկանիմք կազմակերպել եւ վերածել զլսարանական բաժինն յիսկական բարձրագոյն դպրոց ըստ տրամադրութեան եւ թոյլտւութեան կայսերահաստատ կանոնաց 1874 ամի:

Առ այս ի նկատ առեալ մեր զյայտարարութիւն գերապատիւ նախագահիդ մանկավարժական խորհրդոյդ յ8 յուլիսի անցելոյ 1913 ամի, որով առաջի առնէ մեզ զգլխավոր հիմունս ապագայ կանոնադրութեան բարձրագոյն բաժնի, եւ հաճ եւ հաւան գտեալ մեր ընդ առաջարկեալ սկզբունս բարձրագոյն դպրոցի, այսու հայրապետական կոնդակաւ մերով պատուէր տամք Ձեզ նախ՝ մշակել զմանրամասն կանոնադրութիւն բարձրագոյն բաժնի ճեմարանիդ համաձայն գլխաւոր սկզբանց, յիշատակելոց ի յայտարարութեանդ, երկրորդ՝ եթէ մանկավարժական խորհուրդդ անհրաժեշտ եւ օգտակար համարիցէ վերաքննել զորեւէ խնդիր ի գլխավոր սկզբանց, ստանալ նախապէս զգրաւոր թոյլտւութիւն մեր, երրորդ՝ եթէ խորհուրդդ անհրաժեշտ համարիցէ հրաւիրել զփորձառու եւ զձեռնհաս անձինս վասն մշակելոյ զնախագիծ մանրամասն կանոնադրութեան, զէկուցանել մեզ եւ ստանալ ի մէնջ զթոյլտւութիւն եւ չորրորդ՝ առաջի աչաց ունելով զկանոնադրութիւնս Հոգեւոր ճեմարանիդ եւ բարձրագոյն դպրոցաց, զպայմանս եւ զհանգամանս Մայր

***1912թ. սեպտեմբերի 29-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից կատարվել է բնական գիտությունների համար կառուցվելիք շենքի հիմնաքարի օրհնությունը: «Արարատ» ամսագիր, 1912թ., հոկտեմբեր-նոյեմբեր, 883 էջ: Ենթադրվում է, որ պատերազմը խոչընդոտել է շենքի կառուցմանը -Մ.Ա.:

Աթոռոյս եւ ճեմարանիդ, նաեւ զպաՀանջս եւ զկարիս ազգային կենաց մերոց, ամենայն խոՀականութեամբ եւ Հեռատեսութեամբ մշակել եւ խմբագրել զնախագիծ մանրամասն կանոնադրութեան եւ փութով ներկայացուցանել մեզ ի տնօրէնութիւն:

Մաղթեմք ի Տեառնէ Ձեզ կար եւ զօրութիւն վասն յաջողութեամբ ի կատար ածելոյ զեղեալս ի վերայ Ձեր զպարտականութիւնս յօգուտ եւ ի բարգաւաճումն Հոգեւոր ճեմարանի Մայր Աթոռոյս:

Ողջ լէրուք, զօրացեալ ի Տէր եւ օրՀնեալ ի մէնջ, ամէն:

Գեորգ Ե կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.64, թ.1-2: Բնագիր: Ձեռագիր:

N 14
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 Հուլիսի 1915թ.
Ս.Էջմիածին

Ազգիս Վեհափառ Հայրապետը, տեսնելով տաճկաՀայ իր Հոտի սոսկալի վիճակը, ս.Էջմիածնում ապաստանած տասնյակ Հազարավոր փախստական գաղթականների, առանձնապես թշվառ կանանց ու մանուկների Հուսահատ դրությունը եւ վարակիչ ծանր Հիվանդությունները, բարեհաճեց կարգադրել, որ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանում այս ուսումնական տարին դասատվությունը սկսվի ոչ սեպտեմբերի 1-ից, այլ նոյեմբերի 1-ից:

Հայտնելով Հայրապետական սույն կարգադրության մասին, դիվանս Հանձնարարում է վարչությանդ անմիջապես տեղեկացնել բոլոր աշակերտներին, որպեսզի գան Էջմիածին նոյեմբերի 1-ին, քանի որ ննջարանը վերածված է Հիվանդանոցի, իսկ ճեմարանի շենքը ժամանակավորապես Հատկացրած է անտեր ու Հյուծված մանուկների ապաստարանի Համար:

Դիվանապետ՝ Բագրատ եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.214, թ.84, 84 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 15
ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՆԿԽՈՐՀԻՆ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՐՄՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 Հոկտեմբերի 1917թ.
Ս.Էջմիածին

Ճեմարանի աշակերտական ներկայացուցչական մարմինը ամսույս 24-ի եւ 26-ի նիստերում կայացրեց Հետեւյալ որոշումները.

1. Պաշտոնական աղոթքը եւ եկեղեցի գնալը վերացնել:

2. Վերջին եւ նախավերջին դասարանների աշակերտները ազատ ժամերին իրավունք ունեն դուրս գալու առանց վերակացուներին Հայտնելու, իսկ մյուս դասարանների աշակերտները թույլտվություն ստանալով ներկայացուցչական մարմնի ՀերթապաՀ անդամից՝ կարող են դուրս գնալ:

3. Մանկավարժական խորՀրդում աշակերտությունը ունենալու է 6 ներկայացուցիչ, որոնցից 3-ը վերջին երկու դասարաններից՝ վճռական ձայնով, իսկ մնացած 3-ը՝ խորՀրդակցական ձայնով, ստորին 3 դասարաններից:

4. Տնտեսական Հանձնաժողովում աշակերտությունը ունենալու է 2 վճռական ձայն:

5. Մատենադարանում ունենալ մի ներկայացուցիչ:

6 Աշակերտական կազմակերպությունները ճանաչել օրինավոր:

Այսու պարտք ենք Համարում Հայտնել, որ վերոՀիշյալ որոշումներից 1 եւ 2 գործադրության մեջ են մտնում Հանձնված օրից:

Ճեմարանի Աշ. ներկայացուցչական մարմնի նախագաՀ՝ Վարդան Դեմիրճյան
Քարտուղար՝ Ն.ԱՀարոնյան

ՀԱԱ, ֆ.Պ- 312, ց.1, գ.214, թ.159: Բնագիր: Ձեռագիր:

Ծանոթություններ

1. *Սինոդ - Հայ եկեղեցու բարձրագույն ատյան կաթողիկոսի նախագաՀությամբ: Հիմնվել է 1837թ. փետրվարի 22-ին, լուծարվել 1924-ին, տեղը զիջելով Գերագույն Հոգեւոր խորՀրդին:*
2. *Գեւորգ Գ Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան Գրիգոր Պետրոսի) 1813-1882թթ., եկեղեցական Հասարակական գործիչ, 1866-ից Ամենայն Հայոց կաթողիկոս, Հիմնադիրը «Գեւորգյան ճեմարանի», «Արարատ» ամսագրի, Էջմիածնի թանգարանի:*
3. *Գաբրիել Այվազովսկի (Այվազյան) Կոնստանդնի - 1812-1880թ.թ., մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, Հայ եկեղեցական գործիչ, «Բազմավեպ» ամսագրի Հիմնադիր եւ խմբագիր (1843-48թ.թ.), Փարիզի Հայկազյան վարժարանի Հիմնադիր, «Մասյաց աղավնի» ամսագրի խմբագիր եւ Հրատարակիչ:*
4. *Голос - քաղաքական-գրական ամենօրյա թերթ, լույս է տեսել Ս.Պետերբուրգում 1863-1883թ.թ.:*
5. *Всемирная иллюстрация- պատկերազարդ շաբաթաթերթ, Հիմնադիր Գերման Գոպպե, լույս է տեսել Ս.Պետերբուրգում 1869 թվականին:*
6. *Մշակ - Հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ, լույս է տեսել Թիֆլիսում 1872-1921թթ. Հիմնադիր ու խմբագիր Գր.Արծրունի: Խմբագիրներ են եղել նաեւ Ալ.Քալանթարը, Հ.Առաքելյանը, Լեոն, Տ.ՀախումյանԸ:*
7. *Մեղու Հայաստանի - քաղաքական-բանասիրական եւ առեւտրական լրագիր: Լույս է տեսել 1858-1861, 1863-1872թթ. Թիֆլիսում: Հրատարակիչ՝ Հ.Էնֆիաճյան, խմբագիր Սա.Մանգինյան:*
8. *Մկրտիչ Ա Վանեցի, Խրիմյան Հայրիկ (1820-1907թ.թ.) - Հասարակական-քաղաքական գործիչ, 1893-ից Ամենայն Հայոց կաթողիկոս, «Արծվիկ Տարոնի» շաբաթաթերթի Հիմնադիր, Բեռլինի կոնգրեսի Հայկական պատվիրակության նախագաՀ (1878թ.), Հեղինակ է արձակ եւ չափածո գործերի:*
9. *Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյան - 1833-1911թթ., Հոգեւոր գործիչ, Հայագետ, Հայտնաբերել եւ ուսումնասիրել է մեծ քանակությամբ բեւեռագիր եւ վիմագիր արձանագրություններ: 1892-ին ընտրվել է Ռուսական կայսերական Հնագիտական ընկերության անդամ:*
10. *Գարեգին Կարապետի Հովսեփյանց, Գարեգին Ա Հովսեփյան - (1867-1952թ.թ.), Հայ մշակութային գործիչ, մանկավարժ, Հայագետ, 1905-06թթ. եւ 1915-17թթ. Գեւորգյան ճեմարանի տեսուչ, 1943թ.-ից Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս:*

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻՍԻՈՆԵՐ ՋՈՐՋ ՔԱՇԻՆԳ ՆԵՓԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԲԻԹԼԻՍԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

1810թ. ԱՄՆ-ի Բոստոն քաղաքում հիմնվել է Արտաքին Առաքելությունների Համամիսիոներական Ամերիկյան Խորհուրդը, որը ցանկանում էր բողոքականություն տարածել ամբողջ աշխարհում: Վերջինս, 1820թ., իր առաջին քարոզիչներին է ուղարկել Օսմանյան կայսրություն՝ Լիբանան: Ելնելով Օսմանյան կայսրության իշխանությունների վերաբերմունքից, միսիոներներն իրենց գործունեությունը ծավալում էին կայսրության քրիստոնյա բնակչության, մասնավորապես՝ հայերի շրջանում: Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ.Պոլսում ամերիկացի միսիոներները հաստատվել են 1830թվականին: Կ.Պոլսը հանդիսանում էր կայսրության ամբողջ տարածքում գործող ամերիկյան միսիոներների կենտրոնը:

Բիթլիսի ամերիկյան միսիոներական կենտրոնը 1858թ. հիմնել են Ջորջ Քաշինգ Նեփը (Georg Cashing Knapp) և իր կինը՝ Ալզինա Չըրչիլ Նեփը: Հետագայում, Մերի և Շարլոթ Էլի քույրերի հետ համատեղ ջանքերով, նրանք 1868թ., Բիթլիսից ոչ հեռու, գեղատեսիլ մի վայրում, հիմնում են ամերիկյան «Մաունթ Հոլյոկ» սեմինարիայի (աղջիկների) մասնաճյուղը:

Ջ.Նեփերի երեխաները ծնվել և մեծացել են Բիթլիսում: Նրանցից ավագը՝ Ջորջ Փերկինս Նեփը ծնվել է 1863թ.: Երբ նա 14 տարեկան էր, հայրը նրան ուղարկեց Միացյալ Նահանգներ՝ սովորելու: Դպրոցն ավարտելուց հետո, 1887թ., նա ընդունվում է Հարթֆորդի աստվածաբանական սեմինարիան: 1890թ. ավարտելով ուսումը, Ջորջ Փերկինս Նեփը վերադառնում է Բիթլիս և հոր հետ միասին ձեռնամուխ է լինում միսիոներական գործունեությանը: Նա հիանալի տիրապետում էր ինչպես հայերենին, այնպես էլ թուրքերենին: 1896թ. Ջորջ Փ.Նեփին վտարեցին Թուրքիայից, մեղադրելով հայերին՝ իշխանությունների դեմ հրահրելու մեջ: 1899թ. նա վերադարձավ Արևմտյան Հայաստան՝ Խարբերդ, ուր հիմնեց որբանոց, վերականգնեց միսիոներությանը պատկանող շինությունները, և այլն: 1909թ. Նեփը կրկին վերադարձավ Բիթլիս: 1915թ. հունիս-հուլիս ամիսներին, Բիթլիսի հայ բնակչության ջարդերի ժամանակ, նա ամեն ջանք գործադրեց, որպեսզի վերջ դնի հայերի կոտորածներին: Սակայն, երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին անցանկալի վկային և, պահակախմբի ուղեկցությամբ, տարան Դիարբեքիր: Ըստ թուրքական պաշտոնական վարկածի, Ջորջ Փ.Նեփը մահացել է 1915թ. օգոստոսի 10-ին բծավոր տիֆից: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լ.Դեւիսի և բժիշկ Ատկինսոնի[1] համոզմամբ, միսիոների՝ տիֆից մահանալու վարկածը, չի համապատասխանում իրականությանը: Ջորջ Փ.Նեփը, ավելի քան 25 տարի ծառայելով որպես միսիոներ, իր կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդին:

Ստորև ներկայացնում ենք Բիթլիս քաղաքի հայերի ջարդը վկայող Ջորջ Փերկինս Նեփի 1895թ. հոկտեմբերի 25-ի զեկուցագիրը: Փաստաթուղթը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվի Հենրի Ֆենիս Լինչի[2] անձնական ֆոնդում (ֆ.411, ց.1, գ.226, թ.1-38): Փաստաթղթի թարգմանությունը անգլերենից հայերեն կատարվել է մեր կողմից, և այն հրապարակվում է առաջին անգամ:

Ստեփան Փայասլյան

ԲԻԹԼԻՍԻ ՋԱՐԴԵՐԸ

Ճակատագրի դաժան հեգնանք է թվում այն փաստը, որ եվրոպական երեք հզոր պետությունների (նկատի ունի Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը Ս.Փ.) կողմից Սասունի ջարդերի[3] երկարատև և մանրակրկիտ հետաքննությունից հետո, Բիթլիսի շրջանում ևս տեղի ունեցան ջարդեր, որոնք շրջանը անճանաչելի դարձրին՝ նույնիսկ թուրքական իշխանությունների համար: Թուրքերն այստեղ՝ մի քանի քաղաքներում, կազմակերպեցին հայերի նոր ջարդեր, որոնք իրենց դաժանությամբ ստվերեցին անգամ Սասունի ջարդերը:

Վերջին շրջանում Օսմանյան կայսրության հայաշատ վայրերում տեղի ունեցան հայերի ջարդեր, բայց ոչ մի շրջանում թուրքերն իրենց չմերկացրին այնքան տեսանելի, որքան՝ Բիթլիսում:

Բիթլիսի բնակչության թիվը հասնում էր 30-40 հազարի, որից երկու երրորդը մահմեդականներ են: Անհիշելի ժամանակներից մոլեռանդ մեծամասնությունը հայերին համարում էր իր օրինական զոհը և նրանց հետ վարվում ինչպես կամենար:

Քաղաքի կենտրոնում կար մի ամրոց, որը կառուցել էր Ալեքսանդր Մեծը: Սրանից արևելք գտնվում էր մի լայն տարածք, որտեղ տեղակայված էին Բիթլիսի նեղ շուկաները (նկատի ունի այն վայրը, որտեղ վաճառում էին բնամթերք Ս.Փ.): Սրանցից շատերը ծածկված էին ծանր տանիքներով և լուսավորվում էին դրանց անցքերից:

Չնայած Բիթլիսի հայերի երկչոտությանը և պաշտպանական հարցերում նրանց անկազմակերպվածությունը, Բիթլիսը, 1891թվականի աշնանից ի վեր, երբ Բիթլիսի նահանգապետ նշանակվեց Հասան Թահսի փաշան, 3-4 տարի փոթորկուն կենտրոն դարձավ:

Սասունի Տալվորիկ[4] գյուղը կասկածյալ հեղափոխականներից «ազատելու համար, Թահսի փաշան օգտագործեց քրդերին, սակայն, երբ այս փորձը ձախողվեց և քրդերը պարտություն կրեցին, նա «խաղաղություն» հաստատեց Սասունի տարածաշրջանում:

Ապստամբությունը ճնշելու համար սուլթանը պարգևատրեց Թահսի փաշային: Դիմելով սադրանքների բոլոր հնարավոր միջոցներին, վերջինս, 1893-1894թթ. ձմռանը, շարունակեց իր (հակահայկական) քաղաքականությունը: Այս ժամանակ հայերից խլեցին հին հրացանները, ինչպես նաև՝ ժամանակակից զենքերը (հայերը շատ քիչ ունեին դրանցից): Հետևաբար, քրիստոնյա համայնքը մնաց անպաշտպան: Անգամ այս դժվարին կացության մեջ, հայերը, դիմելով ողջամտության և հեռատեսության, համախմբվեցին, որպեսզի կարողանան դիմագրել այս հարձակումներին և ազատվել իրենց այն հավատակիցներից (քիչ քանակով հայ դավաճաններից), որոնք կառավարության ձեռքին հայերի դեմ լավագույն զենքն էին հանդիսանում:

Բիթլիսի հայերը ոչ միայն խուսափում էին իրենց գործունեությամբ իրենց դեմ հրահրել մահմեդականներին, այլև անգամ չպատժեցին իրենց դավաճաններին, ինչպես նրանց (դավաճանների Ս.Փ.) հետ վարվեցին այլ տեղեր, ինչպես օրինակ՝ Վանում: Հարկ չեմ համարում խոսել Սասունի ջարդերի (ինչպես նաև դրանց՝ Բիթլիսի հայերի համար ունեցած հետևանքների) ժամանակ Թահսի փաշայի խաղացած դերի մասին: Երբ նրան չհաջողվեց ստանալ հայերի աջակցությունը (օգնել ձերբակալելու «կասկածյալ հեղափոխականներին»), նա ձերբակալեց 15-20 հեղինակավոր հայերի և նրանց նկատմամբ դաժան վերաբերմունք ու տարբեր սպառնալիքներ կիրառելով, փորձեց ստիպել հայերին՝ իրենց վրա վերցնել Սասունի դիմադրության պատասխանատվությունը:

Թահսի փաշայի հուսահատ ջանքերը՝ որևէ բացատրություն տալու իր արածի համար, կանխվեց իր պաշտոնանկությամբ, որը տեղի ունեցավ եվրոպական հետաքննիչ հանձնաժողովի՝ Մուշ ժամանելուց հետո:

Հետաքննիչ հանձնաժողովի անդամներից մեկը՝ Օմեր բեյը, նշանակվեց նահանգապետի պաշտոնակատար և հանդես եկավ բարեփոխումների մեծ խոստումներով: Նա խոստացավ ազատ արձակել բանտարկված հեղինակավոր հայերին (այն 15-20 հոգուն), սակայն, բավականին զորեղ չգտնվեց դիմագրելու քաղաքի մահմեդական բնակչության առաջնորդներին (սրանք դեմ էին հայերի ազատմանը Ս.Փ.): Եվ այդ հեղինակավոր հայերը բանտում մնացին այնքան ժամանակ, քանի դեռ ազատ չէին արձակվել քաղաքական բոլոր բանտարկյալները:

Թահսին փաշայի բոլոր կողմնակիցները բացառությամբ մեկ-երկուսի, շարունակեցին զբաղեցնել պաշտոններ իշխանության մարմիններում: Ոչ մի ուշադրություն չդարձվեց նրանց դեմ հայերի ներկայացրած բողոքներին:

Բիթլիսի մահմեդականներին խիստ լարվածության մեջ էր պահում Մուշի հետաքննչական հանձնաժողովի երկարատև հետաքննությունը: Քանի որ բարենորոգումների ծրագիրը[5] գտնվում էր քննարկման գործընթացում, Օմեր բեյին հաջողվում էր զսպել մահմեդականներին, բայց նրանք շարունակ ասում էին

Հայերին, որ, եթե անգամ այդ ծրագրից ինչ-որ բան ստացվի, վերջիններս (Հայերը) կենդանի չեն մնա եւ այն չեն տեսնի: Նրանք (թուրքերը) ասում էին, որ Հողը արյամբ են վերցնում եւ առանց արյան չեն Հանձնի: Նրանք, անգամ, այնքան Հեռու գնացին, որ Հայտարարում էին, որ եթե անգամ Սուլթանը Հրաման տա դադարեցնելու ջարդերը, իրենք այն մինչեւ վերջ կշարունակեն:

Մահմեդականներին Հիմնականում զայրացնում էին Բիթլիսի Հայերի եւ միսիոներների ջանքերը, որոնք, անգլիական Հիմնադրամի օգնությամբ, փորձում էին իրենց ավերված տները վերադարձնել Հայ փախստականներին, որոնց՝ իրենց տները վերադառնալու Հույսը, չէր դադարում: Միսիոներների այս ջանքերն իրենց եւ Հայերի դեմ էր գրգռում մահմեդականներին:

Հոկտեմբերի սկզբից մեկ շաբաթ անց, Մուշից Բիթլիս եկավ Հաջի Դայեբը՝ մոլեռանդ մի մահմեդական եւ միանգամից սկսեց Հայերի դեմ Հրահրել մահմեդականներին: Նա Շեյխ Ամինի Հյուրն էր, որը նույն քաղաքականության ջատագովն էր: Հաջի Դայեբի գալուն պես, Բիթլիսի բոլոր մահմեդականները բացաՀայտորեն զինվեցին:

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ օրը, ամբոխը՝ լուրջ մտադրություն ունենալով Հարձակվել Հայերի վրա, Հավաքվել էր շուկաներին Հարող Օուլի Ջեյմ մզկիթի մոտ: Իշխանությունները լսել էին դրա մասին եւ ամբոխը ցրելու Համար մեծ ջանքեր թափեցին:

Շաբաթ առավոտյան (Հոկտեմբերի 19-ին -Ա.Փ.), թուրք կանայք Հասարակական բաղնիքում խոսում էին, որ թուրքերը պետք է կոտորեն քրիստոնյաներին եւ բաղնիքում գտնվող Հայ կանայք, առանց լողանալու, շտապում էին իրենց տները: Կիրակի օրը, Հոկտեմբերի 20-ին, Հայերից ոմանք տեղեկություններ ստացան, որ սուլթանը ընդունել է բարենորոգումների ծրագիրը:

Երեքշաբթի, Հոկտեմբերի 22-ին, թուրքերը լուրեր տարածեցին, որ Էրզրումում խառնաշփոթ է սկսվել, եւ Բիթլիսի Հայերը, այդ օրը, շուտ փակեցին իրենց խանութներն ու արՀեստանոցները:

Եվ այսպես, մոտ մեկ շաբաթ, թուրքերը Հայերի Հետ կռվելու առիթ էին փնտրում եւ փորձում էին նրանց Հանել Համասարակշռությունից: Միշտ, առանց որեւէ պատճառի, ծեծում էին մի Հայ գյուղացու՝ Հուսալով, որ Հայերը կպատասխանեն եւ կսկսվի տուրուդմփոցը, սակայն, Հայերը չէին արձագանքում:

Հինգշաբթի, առեւտրի կենտրոնից (ենթադրվում է, որ սա այն վայրն է, որտեղ աշխատում էին արՀեստավորները -Ա.Փ.) մի Հայ եկավ ինձ մոտ եւ ասաց, որ ճանապարՀին կռվի մեջ ներքաշելու նպատակով, մահմեդականները երեք անգամ Հարձակվել էին իր վրա, բայց ինքը չի պատասխանել նրանց:

Հայերը, շարունակելով մնալ տագնապած, շուտ էին փակում խանութները եւ աշխատում Հազվադեպ դուրս գալ փողոց:

Հինգշաբթի կեսօրին, Բիթլիսի առաջնորդը (առաքելական Հավատքի տեր Հայերի ղեկավարը), ու Հայ Համայնքի չորս ղեկավարներ գնում են Օմեր բեյի մոտ, նկարագրում քաղաքում տիրող իրավիճակը եւ անվտանգության երաշխիքներ խնդրում: Օմեր բեյը վստաՀեցնում է, որ անՀանգստանալու կարիք չկա եւ, որ ինքը պատասխանատու կլինի, եթե անգամ Հայերի Հավերից գոնե մեկը վնասվի: Իսկ վերջում նրանց ցույց է տալիս բարենորոգումների ծրագիրը, որը Հեռագրով ստացվել էր Կ.Պոլսից: Օմեր բեյի խոստումներից Հուսադրված եւ բարենորոգումների ծրագիրը տեսնելուց Հետո, պատվիրակները Հեռանում են նրա մոտից եւ վստաՀորեն Հանգստացնում քաղաքի Հայ բնակչությանը:

Ուրբաթ (Հոկտեմբերի 25-ին -Ա.Փ.) առավոտյան, Հայերը (բացառությամբ մի փոքր մասի) գնում են առեւտրի կենտրոն եւ բացում իրենց խանութներն ու արՀեստանոցները:

Բիթլիսում աշունը առեւտրի թեժ շրջան է, մարդիկ պատրաստվում են ձմռանը:

Ուրբաթ կեսօրին, որոշ մահմեդականներ զգուշացնում են իրենց Հայ ընկերներին, որպեսզի նրանք չմնան առեւտրի կենտրոնում: Այդ մահմեդականների թվում էր նաեւ իմ ծառան, որն, իր Հերթին, ինձ զգուշացրեց, որպեսզի ես տնից դուրս չգամ:

Երբ ամբողջ քաղաքում Հնչեց աղոթքի ժամը ազդարարող ձայնը, բոլոր մահմեդականները, բացառությամբ մի քանիսի, փակեցին իրենց խանութները եւ

զինված գնացին մզկիթները՝ աղոթելու: Սովորաբար, մահմեդականները չէին փակում իրենց խանութները, այլ խնդրում էին Հարեւան Հայերին՝ Հսկել դրանք մինչեւ իրենց վերադարձը: Ուրբաթ օրվա խանութների փակումը աննախադեպ էր եւ շատ տարօրինակ: Հայերը, նկատելով դա, խուճապի մատնվեցին եւ ոմանք նույնպես սկսեցին փակել իրենց խանութները: Մահմեդականները, նկատելով Հայերի կողմից խանութների փակումը, կշտամբեցին նրանց:

Խանութների երկար շարքում, որը Հայտնի էր Աթարանոց անվանումով, ամբողջ աղոթքի ժամանակ բաց էր միայն մի մահմեդականի խանութ: Դա՝ Հաջի Յասինի որդի Ասաֆի խանութն էր: Ասաֆը վիճում էր Ղարիբջան Բազոյան անունով մի Հայի Հետ եւ խանութը փակելու Համար կշտամբում նրան: Ղարիբջանը պատասխանում է, որ իրենք վախեցած են այն բանից, որ աղոթքի ժամանակ մահմեդականները փակել են իրենց խանութները: Եվ որ Հայերը չէին փակի իրենց խանութները, եթե մահմեդականները առաջինը չփակեին դրանք:

Իշխանությունները քաղաքում խաղաղություն պաՀպանող ջոկատների փոխարեն, ժանդարմների էին բերել առեւտրի կենտրոնի տարածք եւ նրանք պետք է խանգարեին Հայերին փակելու իրենց խանութները: Շատ զարմանալի էր այն Հանգամանքը, որ առեւտրի կենտրոնի տարածքն ավելի քան երկու շաբաթ Հսկող փոքրիկ ջոկատն այդ ուրբաթ իր տեղում չէր:

Երկու ժանդարմներ էին կանգնած Ասաֆի խանութի մոտ, երբ նրա Հարեւան Հայը սկսեց փակել իր խանութը: Հանկարծակի, ժանդարմներից մեկը, Հանելով սուրը, ուղղեց այն Հայի վրա: Վերջինս, առանց՝ փակելու իր խանութը եւ Հագնելու իր կոշիկները, փախավ, իսկ ժանդարմը Հետեւեց նրան: Շատ ժամանակ չէր անցել այդ դեպքից, երբ Օուլի Ջեյմ մզկիթում Հավաքված ամբոխը դուրս թափեց մզկիթից: Ասում են, թե մզկիթի մոտ կանգնած որոշ մահմեդականներ, որպես ազդանշան, սկսել են կրակել: Բայց շատ Հստակ էր, որ այդ կրակոցները Հնչել են Օուլի Ջեյմ մզկիթին շատ մոտ գտնվող Շեյխ Ամինի տնից: Այդ կրակոցները շարունակվում էին ամբողջ ջարդերի ընթացքում:

Մզկիթից դուրս թափված ամբոխը մինչեւ ատամները զինված էր տարբեր զենքերով, երկաթե կտորներով, գյուղատնտեսական տարբեր սուր գործիքներով, այրվող փայտերով: Ամբոխի մի մասը վազեց դեպի առեւտրի կենտրոն, իսկ մի մասը՝ շուկաներ: Բոլորը միաբերան գոռում էին. «Ալլահի եւ Մուհամեդի Հետեւորդներ կոտորեք անՀավատներին»: Առաջին արյունը թափվեց Հենց այդ տարածքում. առաջին պատաՀած Հային մահացու վիրավորեցին:

Եվ այսպիսով, Բիթլիսում սկսվեցին ջարդերը: Մահմեդականները, անկախ իրենց Հագուստից՝ քաղաքացիական, թե Համազգեստավոր, (նկատի ունի ոստիկաններին -Ա.Փ.) Հարձակվում եւ սպանում էին քրիստոնյաի՝ անկախ տարիքից: Մեկ-մեկ ձեռք չէին տալիս միայն նրանց, ովքեր կրում էին եվրոպական Հագուստներ կամ առանց չալմայի ֆեսեր:

Ոստիկանները Հիմնականում կրակում էին փախչող Հայերի վրա: Յուրաքանչյուր Հայ ստանում էր բազմաթիվ Հարվածներ եւ զոՀերի մարմիններն անճանաչելիորեն այլանդակվում էին:

Քաղաքում ջարդերի պաՀին, կար շուրջ 200 նորակոչիկ զինվոր, որոնք Հիմնականում զբաղված էին թալանով:

Ջարդերը սկսվելու պաՀից արդեն անցել էր մեկ ժամ, երբ զորքին Հրաման տրվեց զինվել (զորքը իբր պետք է դադարեցներ ջարդերը -Ա.Փ.): Ջնայած զորանոցից առեւտրի կենտրոն ընկած ճանապարՀը մեկ քառորդ մղոնից էլ պակաս էր, սակայն զինվորներն աներեւակայելի դանդաղկոտությամբ Հասան առեւտրի կենտրոն: Տեղ Հասնելուն պես, որոշ ժամանակ մնացին կանգնած, իսկ Հետո, բաժանվելով փոքր խմբերի, մասնակցեցին կոտորածին: Ականատեսներից մեկը տեսել էր, թե ինչպես է զինվորը սվինաՀարում մի երեխայի եւ առեւտրի կենտրոնի տանիքից գցում գետը: Զորքի եւ նամանավանդ ոստիկանության ու ժանդարմերիայի նման գործողություններն արտոնված էին իշխանությունների կողմից:

Ոստիկանի կողմից 6 կամ 7 անգամ գլխի եւ ուսի Հատվածում Հարվածներ ստացած երիտասարդ տղան ապաստանեց իմ տանը:

Ջարդերը սկսվելուց երեք ժամ Հետո, ջարդերի Հարձակման ազդանշանը տված շեփորի ձայնը կրկին Հնչեց, այս անգամ՝ ազդարարելով ջարդերի ավարտը:

Նրանք, ովքեր չհասկացան կամ չուզեցին հասկանալ շեփորի ազդանշանի նպատակը, նույն կատաղությամբ շարունակեցին իրենց վայրագությունները:

Ես չեմ կարող մոռանալ այն, որ կառավարական շինություններից բազմաթիվ կրակոցներ եղան Կարմրակ[6] եկեղեցու բակի ուղղությամբ, ուր ապաստանել էին բազմաթիվ հայեր:

Ջարդերի հետ համարյա միաժամանակ սկսվեց կողոպուտը: Բայց հիմնական կողոպուտը (հայերի ունեցվածքի **Ա.Փ.**) տեղի ունեցավ գիշերը և շարունակվեց մինչև առավոտ: Կողոպուտին մասնակցում էին բոլոր մահմեդականները՝ տղամարդիկ, կանայք և երեխաները: Իմ տնից երևում էր, թե ինչպես էին ժանդարմները շտապեցնում մարդկանց, որպեսզի նրանք իրենց ավարը տուն տանեն և նորից վերադառնան:

Մինչև ջարդերի սկսվելը, մահմեդական ցածր խավի մի խումբ կանայք, հավաքվել էին Շեյխ Ամինի տան մոտ և ուշադիր նայում էին առևտրի կենտրոնին: Հավանաբար, նրանք սպասում էին ազդանշանի, որը սկիզբ էր դնելու աղետին: Եվ հանկարծ, մահմեդական այդ կանանցից մեկը տեսնելով, որ առևտրի կենտրոնի տարածքում ոչ մի մահմեդական չկա, սկսեց գզգզել իր մազերը, դեմքին և մազերին հող լցնել ու բարձր գոռալ, որ ոչ մի մահմեդական չի մնացել և հայերը հարձակվել են մզկիթների վրա: Հետաքրքիր էր, որ այս մեղադրանքն արագորեն տարածվեց քաղաքի ամենահեռավոր անկյունները: Ավելի շուտ պետք է հավատալ, որ այդ նշանաբանը որոշված էր վաղօրոք: Կանխազգալով սպասվելիքը, հայերը փորձեցին փախչել առևտրի կենտրոնի տարածքից: Ոմանք հասցրին իրենց խանութը փակել մեկ կողպեքով, մյուսները՝ դա էլ չհասցրին: Մի հայ էր սպանվել՝ ձեռքին կախովի կողպեք. մահմեդականները ասում էին, որ նա փորձել էր մզկիթի դուռը կողպել դրսից, թեպետ, հնարավորություն չկա, ոչ մի մզկիթի դուռ դրսից կախովի կողպեքով փակել:

Շատ հայերի դիակներ մահմեդականները բերեցին մզկիթի մոտ: Շատ տարօրինակ էր, որ մզկիթների մոտ ու առևտրի կենտրոնի տարածքում, ուր իբր մահմեդականները հայերի կողմից հարձակման էին ենթարկվել, ոչ մի մահմեդականի դիակ չկար, մինչդեռ բազմաթիվ «հարձակված» հայեր սպանվել էին իրենց խանութների ու տների մոտ: Մեկ այլ հանգամանք ևս՝ ոչ մի «հարձակված» հայի մոտ զենք չկար:

Մի թուրք, որ ցանկանում էր խեղաթյուրել իրականությունը, ասում էր, որ տեսել է միայն մեկ հայի, որը ձեռքին ինչ-որ բան ուներ: Այդ մարդը մահացու վիրավոր էր և ձեռքին երկար դանակ ուներ: Նա փորձեց փախչել, բայց շատ հեռանալ չկարողացավ և նրան սպանեցին: Նա, հավանաբար, մսավաճառ էր, քանզի մսավաճառներն են ունենում նման դանակներ:

Տասնմեկ հայ թաքնվել էին հացի փռի տանիքում, երբ մահմեդականները, ջարդելով փռի դուռը, հայտնաբերեցին նրանց: Այնուհետև, դուրս հանելով նրանց, մինչև գիշեր քարկոծեցին: Գիշերը, այդ մասով անցնող զինվորականների ջոկատը, այս հայերին ուղեկցեց ապահով վայր: Սա միակ իրական օգնությունն է, որ ես կարողացա տեսնել:

Սպանված միակ մահմեդականն աղքատ փինաչի էր: Հավանաբար, ինչ որ մեկը նրան շփոթել էր հայի հետ: Եթե մահմեդականներից որևէ մեկը վիրավորվել էր, ապա դա, ավարի բաժանման պատճառով առաջացած կռվի արդյունք էր: Եթե մահմեդական որևէ առաջնորդ վիրավորվել էր, ապա դա կատարվել էր, որպեսզի ամբոխը ավելի կատաղած հարձակվեր քրիստոնյաների վրա:

Բացառություն էին կազմում միայն որոշ թուրքեր, որոնք իրենց հայ ընկերներին փրկեցին կոտորածներից:

Անկախ իրենց գտնվելու վայրից, թաքստոցում թե փողոցում անօգնական ու վիրավոր ընկած, հայերին սպանում էին՝ անկախ տարիքից ու սեռից: Այդ սպանվածների մեջ էր նաև իմ խոհարարի մայրը, որին սպանել էին զինվորականները: Մոտ հիսուն հայ պատանի էր սպանվել: Դաժան իրողություն էր այն հանգամանքը, որ ջարդերին մասնակցում էին պատանի մահմեդականները: Ես տեսա, թե ինչպես էին մահմեդական 7 կամ 8 տղաներ ծեծում մի փոքրիկ հայ տղայի: Նրան տանջամահ արեցին: Ոստիկանը մեկ անգամ փորձեց արգելել դա, բայց հետո թույլ տվեց շարունակելու իրենց սև գործը: Շատ հաճախ թուրքերը նավթ էին լցնում վիրավոր հայերի վրա և կենդանի այրում: Գա նաև ձեռնտու

էր. վառված մարմիններից բան չէր մնում և դրանով իսկ քչանում էր զոհերի թիվը: Մի խանութպանի, դաժանորեն սպանելով, գցել էին շիկացած ածուխների վրա: Թուրքերը մերկացնում էին սպանված մարմինները: Շատերին ես անձամբ ճանաչում էի: Նրանցից մեկը տղաների ամերիկյան դպրոցի ուսուցիչների ղեկավարն էր, որն, այդ չարաբաստիկ օրը, գնացել էր առևտրի կենտրոն:

Հայ բողոքական համայնքի անդամներից սպանվել էին ինը, իսկ վիրավորվել՝ երկուսը: Սպանվածներից մեկը մի ծեր ատաղձագործ էր, որ երկար տարիներ ծառայել էր միսիոներներին: Նա դուրս էր եկել մի թուրքի տնից, որտեղ աշխատում էր, պարզելու համար, թե արդյոք ամեն ինչ կարգին է իր տղաների հետ: Նա հազիվ մի քանի քայլ էր արել և նրան սպանել էին: Ես միայն այն ժամանակ հասկացա ջարդերի վայրագության աստիճանը, երբ տեսա նրա այլանդակված մարմինը, որ քարշ էին տալիս փողոցով մեկ:

Իմ վարձակալած տան տերն իր երկու տղաների հետ, որոնցից փոքրը հազիվ 12 տարեկան լիներ, նույնպես սպանվել էին: Ազդեցիկ հայ ընտանիքի մի երիտասարդ, Հովսեփ Ահմեդյան անուն-ազգանունով, որը շատ էր օգնել միսիոներներին՝ Սասունից եկած հայ փախստականներին սնունդ հայթայթելու գործում, նույնպես սպանվել էր:

Բիթլիսում մեծ համբավ ունեցող իմ դերձակ Սահակ Ջերմաջյանը, իր 4 աշակերտների հետ, սպանվել էր իր խանութում: Սպանվածների մեջ էր նաև մի կոշկակար, որը մի քանի օր առաջ ինձ համար կոշիկ էր կարել:

Հարյուրավոր հայեր սպանվեցին այդ օրը:

Երբ արևմուտքից երկու ժամ առաջ հնչեց ջարդերի ավարտն ազդարարող շեփորի ձայնը, հիմնական ուշադրությունը (մահմեդականների **Ա.Փ.**) ուղղվեց դեպի ավարը: Չնայած դրան, եթե այդ ընթացքում, թուրքերը գտնում էին որևէ թաքնված հայի, անպայման սպանում էին: Շաբաթ առավոտվանից փողոցներում և տներում լսվում էին լացի ձայներ:

Ուրբաթ երեկոյան, զորքը փորձեց հավաքել բոլոր փախստականներին: Մութն ընկնելուց հետո, զինվորականները եկան երկու խաների (ենթադրվում է, որ սա նույնպես առևտրի վայր է **Ա.Փ.**) մոտ, որտեղ փակվել էին մի խումբ հայեր: Այս երկու մեծ շինությունները կառուցված էին դատարանի շրջանում: Սրանցից ավելի մեծում, որը հայտնի էր «Նոր Խան» անունով և ուներ երկու դարպաս, թաքնվել էին մոտ 55 հայ: Ջարդերի ժամանակ հայերը բռնել էին մահմեդական դռնապանին, որպեսզի արգելեն նրան բացելու դարպասները: Երբ զինվորները եկան, հայերը պատրաստ էին հանձնվել, քանզի լսել էին դադարի ազդանշանը: Բայց, հայերի մեջ կային 1890թ. Էրզրումի դեպքերի[7] վկաներ, որոնք, հիշելով այն ժամանակվա զորքերի դավաճանությունը, դեմ եղան հանձնմանը:

Վերջապես, հայերից մեկն ասաց, որ դարպասները այնքան էլ ամուր չեն և եթե իրենք դուրս չգան, ապա իրենց մահն անխուսափելի կլինի: Վերցնելով դարպասի բանալին, բացեց այն ու կռանալով սպայի առաջ, ասաց. «Սա իմ վիզն է, իսկ դա քո սուրը: Վարվիր ինձ հետ այնպես, ինչպես քեզ հարմար է: Թույլ տուր կառավարությանը, որին ես հարկ եմ վճարում, սպանի ինձ, բայց ոչ ուրիշին»: Սպան վստահեցրեց, որ իրենք եկել են հայերին պաշտպանելու և ոչ թե սպանելու: Միայն դրանից հետո, թաքնված բոլոր հայերը դուրս եկան խանից և զինվորների ուղեկցությամբ գնացին կառավարական շենքերի մոտ. այնտեղ անվտանգ էր:

Մեկ այլ խանութում թաքնվել էին 27 հայ տղամարդ, որոնք, սակայն չհանձնվեցին: Զինվորները հսկում էին այդ տարածքը: Տանիքից նրանց համար իջեցնում էին ջուր և ուտելիք: Միայն 9-րդ օրը նրանք դուրս եկան թաքստոցից:

Բոլոր հայերի տների խուզարկությունը ղեկավարեցին անձամբ Օմեր բեյը և Ֆերիկ փաշան: Նրանք խառնեցին ամեն ինչ, նույնիսկ՝ քանդեցին շատ տների տանիքներ ու պատեր: Այս ամենի արդյունքում հայտնաբերվեց մեկ ատրճանակ, տարբեր տրամաչափի երեք փամփուշտ և մի քանի հին դաշույն: Եվ իշխանությունները հայտարարեցին, որ սա «զինված ապստամբություն» էր:

Ամբողջ ուրբաթ գիշերը, երկու խաների և առևտրի կենտրոնում գտնվող հայերի ապրանքը կողոպտվեց:

Շաբաթ առավոտյան զարհուրելի տեսարան էր ամբողջ քաղաքում: Վաճառականների մոտ կեսը հայեր էին: Շատ դեպքերում, հենց հարևան թուրք վաճառականներն էին տիրացել հայերի ապրանքներին: Առավել ազդեցիկ

Թուրքերը սայլերով էին տեղափոխում իրենց ավարը: Այն քրդերը, որոնք քաղաք էին եկել իրենց անասունները տանելու, վերադառնում էին բեռնված ավարով: Հայերի բոլոր արհեստանոցները եւ խանութները թալանված էին, իսկ այն ինչ պետք չէր՝ ջարդված էր:

Ամերիկյան միսիոներության դրախանութներում գտնվող Հայերեն գրքերի մի մասը տեղում պատռել էին, իսկ օտար լեզվով դրականության մեծ մասը տարել էին: Հուսանք, որ նրանք գոնե կկարդան այդ գրքերը: Վերջապես, առեւտրի կենտրոնում Հայերին պատկանող ամեն ինչ՝ սկսած սպանվածների Հագուստներից ու կոշիկներից եւ վերջացրած նրանց խանութներով, լրիվ թալանված էր:

Շաբաթ կեսօրին Հայ կանայք խիզախեցին դուրս գալ փողոց եւ փնտրել իրենց Հարազատներին: Սկզբում նրանք Հարց ու փորձ էին անում խաների ու կառավարական շինությունների տարածքում (անվտանգությունից ելնելով, թուրք իշխանավորները ջարդերից խույս տված Հայերին բերել էին այդտեղ -Ս.Փ.), իսկ երբ չէին գտնում նրանց մեջ, փորձում էին փնտրել մերկ, այլանդակված եւ կեղտոտ դիակների մեջ: Որեւէ մեկը, եթե լսի իրենց Հարազատներին դիակների մեջ գտած կանանց ողբը, ապա կյանքում անկարող կլինի այն մոռանալ:

Բացի բողոքական 7 եւ առաքելական մի քանի Հայերի դիակներից, որոնք սպանվել էին եկեղեցու բակում, 3 օր չէին թույլատրում տանել մյուս Հայերի դիակները, որովհետեւ նրանք պետք է ենթարկվեին պաշտոնական զննության: Սակայն, չորրորդ եւ հինգերորդ օրերին իշխանությունները թույլատրեցին դիակները թաղել եկեղեցու բակում: Այսպիսով, մոտ 210 դիակ թողեցին: 50 կամ 60 Հայերի դիակները ներկայացնում էին որպես Հայերի կողմից սպանված մահմեդականների դիակներ: Դրանց մեջ էր տեր Մխիթարի դիակը: Նա Խուլթի[8] քահանան էր եւ մի քանի օր առաջ եկել էր իմ մոտ: Այսպիսով, 300-ից ավելի Հայերի դիակներ թաղվեցին:

Քաղաքում նաեւ շրջակա գյուղերից եկած շատ Հայեր կային: Ինչպես արդեն նշել ենք, աշնան այս շրջանում թեժ առեւտուր էր տեղի ունենում: Գյուղերից քաղաք գալով, շատ Հայեր վաճառում էին բերած ցորենը եւ կաթնամթերքը ու գնում ձմռանն անհրաժեշտ շատ իրեր: «Մեյդանը» կամ բաց շուկան ջարդի այդ օրն անսովոր մարդաշատ էր, իսկ շատերն էլ գտնվում էին քաղաք եկող ճանապարհին: Ինչպես քաղաք եկածների, այնպես էլ ճանապարհի (մինչեւ 6 մղոն Հեռավորությամբ) վրա եղածների մեծ մասը սպանվեց: Շրջակա գյուղերից քաղաք եկած Հայերից մոտ 100-ը սպանվեց: Փաստորեն, մոտ 500 Հայ սպանվեց: Բայց շատ դժվար էր տալ սպանվածների Հստակ թիվը: Եթե Հայերը չՀասկանային, թե ինչ է նշանակում մահմեդականների խանութներ փակելը, ապա զոհերի թիվն անՀամեմատ մեծ կլիներ:

Քաղաքի բժիշկը իր եզրակացության մեջ նշել էր, որ սպանվածների մեջ չկա ոչ մի սվինահարված մարդ:

Այդ նույն ուրբաթ երեկոյան, քրդերը Հարձակվեցին Հայկական Խուլթիկ[9] գյուղի վրա, որն ուներ մոտ 400 տուն եւ գտնվում էր քաղաքից 8 մղոն արեւելք: Քրդերը շարունակեցին կողոպուտը մինչեւ շաբաթ երեկո, երբ մի քանի ժանդարմներ ժամանեցին դեպքի վայր: Նրանք մնացին Հազիվ մեկ ու կես ժամ եւ գնացին քրդական գյուղերը: Ժանդարմների Հեռանալուց Հետո Հարձակումը շարունակվեց նոր թափով: Մինչեւ ժանդարմների գալը սպանվել էր 2-3 Հոգի, իսկ նրանց Հեռանալուց Հետո սպանվածների թիվը Հասավ 29-ի, որոնցից 5 կանայք էին եւ մեկը՝ երեխա: Վերջինս ոտնակոխ էր եղել: Հարձակման վերջում սպանվածների թիվը Հասավ 40-ի: Բոլոր տները թալանված էին: Քրդերը ասում էին, որ ժանդարմներն իրենց կշտամբել էին, ասելով, թե քրդերը «վատ» մահմեդականներ են, քանզի ավելի շատ «անՀավատ» սպանելու փոխարեն, Հիմնականում մտածում են ավարի մասին, առանց այդ էլ իրենցն է լինելու:

Քաղաքից 3 մղոն Հարավ գտնվող եւ 30 տուն ունեցող Փարխանդ[10] գյուղը ամբողջովին թալանված էր, եւ գյուղում սպանվել էր ընդամենը 2 մարդ: Քաղաքից արեւմուտք (2 ժամվա Հեռավորության վրա) գտնվող եւ 60 տուն ունեցող Գորվու[11] գյուղը թալանված բնակավայրերի շարքին էր պատկանում: Այստեղ տների մեծ մասն այրված էր:

Քրդերի կողմից պաշտպանված, եւ այդ իսկ պատճառով չավերված գյուղերը բացառություն էին կազմում: Քրդերը որոշակի շահ ունեին այդ

գյուղերից՝ կամ դրանք Հարկ էին վճարում քրդերին, կամ իրենց բարիքներից փայաբաժին տալիս նրանց: Բայց, երեւի, նրանց վիճակն էլ թալանված գյուղերի վիճակի նման ծանր էր: Բիթլիսից Հարավ՝ երկու օրվա Հեռավորության վրա գտնվող Սղերդ[12] ավանում եւս տեղի ունեցան ջարդեր: Զեկուցագիրը գրելու պահին, իմ ձեռքին չկային դեպքերի մանրամասն տեղեկությունները, սակայն գիտեի, որ քրիստոնյաների տներն ու խանութները, թալանված են ու մոտ 60 մարդ է սպանվել: Տեղեկություններ կային նաեւ այն մասին, որ Էրուն[13] եւ Շիրվան[14] գավառակների Հայկական Յակոբինյան 16 գյուղեր ընդունել են մահմեդականություն: Եկեղեցիները դարձրել են մզկիթներ, որտեղ իրենց Հաղթանակն են տոնել շեյխերն ու մոլլաները: Ասում են նաեւ, որ Հեզան[15] գավառակի 15 գյուղեր թալանվել են եւ մոտ 40 մարդ սպանվել: Սպանվածների մեջ է եղել Սուրբ Խաչ եկեղեցու[16] բանաՀայր ՍաՀակ վարդապետը, ոբի տանը ես պատիվ եմ ունեցել լինելու: Սպանվածների թվում է եղել նաեւ Սասունի Հայ փախստականներին սնունդ մատակարարելու գործ կատարած Բիթլիսի ամերիկյան միսիոներության քարոզիչը, ինչպես նաեւ այլ ազգեցիկ մարդիկ:

Բիթլիսի ջարդերից 3 շաբաթ անց, Մուշում եւս տեղի ունեցան ջարդեր, որոնք, սակայն, ավելի թույլ էին: Շնորհիվ անգլիական Հյուպատոս պարոն Հեմփսոնի ջանքերի, իշխանություններն ամեն ինչ արեցին կասեցնելու Համար ջարդերը, որոնք տեւեցին մոտ մեկ ու կես ժամ եւ սպանվածների թիվը չանցավ 30-ից: Սասունի վիճակը կրկին ծանրացավ, երբ քրդերը թալանեցին անգլիական ֆոնդի կողմից Սասունի Համար նախատեսված խոշոր եղջերավոր անասունները եւ ողջ ցորենը:

Բայց եկեք վերադառնանք Բիթլիսի իրադարձություններին: Սկզբում իշխանությունները պնդում էին այն անՀեթեթությունը, որ Հայերն են Հարձակվել մզկիթների վրա եւ դրա պատճառով, իրենք ոչինչ չեն անում օգնելու Համար թշվառների ընտանիքներին: Միայն շաբաթ օրը որոշակի քայլեր ձեռնարկվեցին մարդկանց իրենց տները վերադարձնելու Համար:

Առավել ազդեցիկ մարդկանց (Հայերի -Ս.Փ.) բանտ նետեցին: Ջարդերի չարաբաստիկ օրը մոտ 20 զինվոր Սղերցից եկավ Բիթլիս: Մոտ 200-ը՝ եկան Հինգշաբթի: Իշխանությունները սկսեցին Հարցաքննել կալանված մոտ 200 Հայերի: Հայ բանտարկյալներին խուզարկեցին եւ արդյունքում՝ միայն մի քանիսի մոտ Հայտնաբերեցին դրպանի դանակներ:

Բոլորին, որոնք երդմամբ էին վկայություն տալիս, ստիպում էին ասելու, որ իբր Հայերի առաջնորդներն են Հրահրել Հայերին Հարձակվելու մզկիթների վրա, սակայն Հայերը մերժում էին նման բաներ ասել: Բայց միեւնույնն է Հայերը չէին Հասկանում, թե թուրքերը ինչ էին դրում թուրքերեն կազմած Հարցաքննության արձանագրություններում: Մոտ 10 օր պաՀելուց Հետո, սկսեցին Հայերին կամաց-կամաց արձակել: Սակայն, մոտ 40 ազդեցիկ Հայեր դեռ շարունակում էին կալանված մնալ: Թուրքերը ամեն ինչ արեցին, որ Հայերն իրենց վրա վերցնեն ջարդերի պատասխանատվությունը: Ով ընդունեց իր «պատասխանատվությունը», ազատ արձակվեց, իսկ ով չընդունեց թուրքերի պաՀանջը՝ մնաց կալանված:

Ջարդերից երկու շաբաթ անց, մաՀմեդականները կրկին Հավաքվեցին ու զինվեցին: Թուրքերը մզկիթներում Հավաքված, սպասում էին Հայերի վրա Հարձակվելու ազդանշանին: Սպասվող վտանգի մասին Հայ եպիսկոպոսը տեղեկացրեց Օմեր բեյին, եւ վերջինս կասեցնելու Համար այս վտանգը քայլեր ձեռնարկեց: Ժանդարմները ցրեցին մաՀմեդական զինված ամբոխին եւ այս անգամ Հայերը, շնորհիվ Օմեր Բեյի դժասրտության, խուսափեցին ջարդերից:

Այդ օրվանից սկսած, ամեն ուրբաթ, զինվորականները Հսկողություն էին իրականացնում ինչպես մզկիթների մոտ, այնպես էլ՝ Շեյխ Ամինի տան դիմաց: Հայերը շատ դժբախտություններից զերծ կմնային, եթե նման միջոցառումներ ավելի շուտ իրականացված լինեին:

Ջարդերից Հետո, չորրորդ շաբաթ օրը, Հայերի կողմից, իր ազգի նկատմամբ անբարյացակամ տրամադրված, մի Հայ էր սպանվել: Դրա պատճառով, իշխանությունները ձերբակալեցին 15 Հայի: Մի Հայի սպանության կապակցությամբ 15 Հայ ձերբակալվեց, իսկ մոտ 500 Հայի սպանության Համար, ոչ մի մաՀմեդական չձերբակալվեց:

Այս տարի ձմեռը սովորականից շուտ եկավ եւ ցրտից ու սովից մոտ 10 հայ մահացան: 10 օրվա ընթացքում, 8 հայ էլ մահացան Խառան[17] գյուղում: Իշխանությունները իրենց մոտ կանչելով հայ եպիսկոպոսին եւ մի քանի ազդեցիկ հայերի, առաջարկեցին կազմել այն ընտանիքների ցուցակը, որոնք, ցրտի պատճառով կորցնելով իրենց կերակրողին, մնացել էին խնամազուրկ: Ցուցակը պետք էր նրա համար, որպեսզի մեծացվի այդ ընտանիքներին հասանելիք հացի բաժինը:

Նրանք, ովքեր իմացան իշխանությունների այս մտադրության մասին, գոհ էին, որովհետեւ նման բան նախկինում երբեք չէր եղել:

Ասում են, որ մինչեւ իշխանությունների այս քայլը, ծայրահեղ կարիքի մեջ գտնվող եւ աշխատանք չունեցած մի մարդ, իր ընտանիքը սովամահությունից փրկելու համար, նամակ-խնդրանք էր ուղղել իշխանություններին: Իշխանությունները նրան կոպիտ պատասխանել էին, որ ինքը պետք է օգնություն խնդրի ոչ թե իրենցից, այլ՝ անգլիացիներից:

Զպետք է մոռանալ, որ ջարդերը տեղի ունեցան ձմռան նախաշեմին, եւ շատերը, փակելով իրենց խանութները, արդեն 5 շաբաթ է, ինչ զրկել են մարդկանց ձեռք բերելու ձմռանն անհրաժեշտ ապրանքներ: Այդ մարդկանց սնունդն արդեն սպառվել է եւ նրանք չունեն աշխատանք: Նրանք միայն մի բանով էին առավել Սասունի փախստականներից՝ նրանց տները հիմնականում ավերված չէին:

Նոյեմբերի 24-ին, իշխանությունները, 40 հայ կալանվածներին բավականին տանջելուց հետո, սպառնացին, որ եթե նրանք չստորագրեն դեպքերի վերաբերյալ թուրքերեն կազմած արձանագրությունները, ապա նրանց ընտանիքներին, ընդհուպ մինչեւ նորածին անդամների, կսպանեն: Միայն այս սպառնալիքից հետո, հայերը համաձայնեցին ստորագրել արձանագրությունները, եւ հայ համայնքը՝ իր կնիքը դրեց դրանց վրա: Փաստաթուղթն ուղարկվեց Բարձր Դռանը եւ Հայոց Պատրիարքարանին: Փաստաթուղթն ուներ հետեւյալ բովանդակությունը.

«Մեր համայնքի մի խումբ ըմբոստ եւ անմիտ պատանիներ, չար մտադրություններից դրդված, դարձան այս միջադեպի մեղավորները ու ստացան իրենց արժանի պատիժը՝ սպանվեցին: Մենք հավատարիմ ենք Սուլթանին եւ երախտապարտ նրա գթասիրտ կառավարությանը»:

Ստորագրածներից ոմանք, տարբեր պատճառներ բերելով, փորձում էին արդարացնել իրենց արածը: Խեղճ մարդիկ. նրանք դիտվում էին որպես ազգի դավաճաններ:

Դատավորին եւ ատենակալներին նշանակեցին դաժան եւ ազդեցիկ կողոպտիչներն ու մարդասպանները: Մեծ ջանք թափվեց, որպեսզի թուրքերը, մեղադրական արձանագրություն կազմելու աշխատանքներում ընդգրկեին մի գրագրի, որը պատասխանատու կլիներ այդ աշխատանքների համար: Սակայն, նրանք, պատճառաբանելով, որ ես (այսինքն Նեփր, հավանաբար Հայերը նրան էին առաջարկել գրագրի պաշտոնին – Ա.Փ.) օտարազգի եմ եւ թուրքերը իմ հետ որեւէ խնդիր չունեն, ինչպես նաեւ՝ օտարերկրացին իրավունք չունի խառնվելու Թուրքիայի ներքին գործերին, շատ շուտ հետ կանգնեցին այդ քայլից:

Ինչպես ենք մենք՝ օտարերկրացիներս, մեզ պահել ջարդերի այս ամսվա ընթացքում: Հեղինակը միակ օտարերկրացին էր Բիթլիսում: Պարոն Քոլը,[18] ամերիկյան միսիոներությունից, զբաղված էր Սասունում նպաստներ բաժանելով եւ, նույնիսկ մարդասիրական գործերով զբաղված դոկտոր Ռեյնոլդսի[19] լուրջ հիվանդության պատճառով, ուշացավ:

Լինելով այս զեկուցագրի միակ հեղինակը, ես չէի կարող չգրել տեսածիս մասին, եւ, չնայած ակներեւ մեծ ռիսկին, իմ վրա եմ վերցնում գրածիս ողջ պատասխանատվությունը: Երկրորդ օրվա առավոտը, երբ ուզում էի հարեւան տանը բնակվող պարոն Քոլի ընտանիքին գիմավորել (ցանկանում էի, որ միասին լինենք), հանկարծ նկատեցի, որ մոտական թուրքի տանիքից, որն ավելի ցածր էր, քան իմը, ծառան վազելով տուն մտավ եւ շուտով կրկին դուրս եկավ՝ հրացանը ձեռքին: Մինչ նա փորձեց կրակել, ես շտապ ներքեւ ցատկեցի: Հետո նկատեցի, որ տարբեր կողմերից մի քանի հրացանի փողեր են ուղղված տանս ուղղությամբ: Միակ բանը, որ ես կարող էի անել, դա՝ որոշակի ժամանակ տնից դուրս չգալն էր: Մոտ երեք օր ես քնեցի շորերով: Չորրորդ օրը նամակ ուղարկելով Օմեր բեյին, նկարագրեցի իրավիճակը եւ նրա պաշտպանությունը խնդրեցի: Օմեր բեյը

պատասխանեց, որ վտանգ չի սպառնում: Պատասխանը նման էր այն պատասխանին, որն Օմեր բեյը տվել էր հայերին՝ ջարդերից մեկ օր առաջ:

12-րդ օրը, Մեծ Բրիտանիայի հյուպատոս Հեմփսոնի՝ Օմեր բեյին ուղղված նամակից հետո, մեր վիճակին ծանոթանալու համար մի ենթասպա եւ 10 ժանդարմ ուղարկվեցին: Ես նրանց տուն չթողեցի եւ զրուցում էի պատուհանից: Միակ բանը, որ ցանկացա շեշտել, այն էր, որ փողոցներում հնարավորինս շատ ոստիկաններ լինեն: Մեր անվտանգությունն ապահովելու համար մեզ մոտ 15 զինվորական հատկացրին: Մենք նրանց տեղավորեցինք տղաների դպրոցին հարակից շենքում: Չնայած այս ամենին, ես դեռ չէի համարձակվում դուրս գալ տնից եւ նման էի վերացական բանտարկյալի:

Իմ հեռագրերից շատերը, չնայած նրան, որ վճարում էի, չէին ուղարկում: Անգլիական կամ ամերիկյան թղթերի վրա գրված համարյա բոլոր նամակները, եւս, թույլ չէին տալիս ուղարկել: Մենք ամբողջովին հանձնված էինք թուրքական իշխանությունների կամքին: Եվ հետո, ցանկություն էլ չկար տնից դուրս գալու, քանզի ոչ դպրոցը կար, եւ ոչ էլ՝ շուկան:

Օտարի համար, ջարդարարներից ավելի, սարսափելի էին այն մարդիկ, որոնք թույլ տվեցին դրանք իրականացնել: Ինչքան էլ մահմեդականները փորձեին արդարանալ, նրանց՝ մարդկանց սպանելու, գլխատելու ու կողոպտելու փաստարկները համոզիչ չէին: Այն է պարզ, որ այդ ամբողջը (ջարդերը – Ա.Փ.)՝ ուղղակի կրոնական հատուկ ծես էր եւ, այդ ուրբաթ մեծ «տոն» էր: Եվ բոլոր մահմեդականները գոռում էին. «Սպանել անհավատներին հանուն Ալլահի ու Մուհամեդի սիրո»: Մի քանի մոլլաներ եւ շեյխեր, անընդհատ վանկարկելով «մահ անհավատներին», առաջնորդում էին զինված մահմեդականներին: Նրանք, ովքեր շատ ծեր էին եւ չէին կարողանում հետապնդել ու սպանել հայերին, դրախտում իրենց տեղն էին ապահովում գետնին ընկածներին խփելով: Այս ամենը կազմակերպվել էր կրոնական ղեկավարների կողմից եւ կասկած չկար, որ այդ թույլատրված էր իշխանությունների կողմից: Ջարդերի ականատեսները չէին կասկածում, որ դրանք քաջալերվել էին տեղական իշխանությունների կողմից եւ կատարվել էր կենտրոնական իշխանությունների թողտվությամբ:

Շատ պաշտոնյաներ, կրոնական առաջնորդներ եւ հասարակ մարդիկ հաստատում էին, որ քրիստոնյաներին ջարդելու հրամանը տրվել էր իշխանությունների կողմից: Իմ տնից ոչ հեռու ապրող մոլլան ասաց ինձ, որ վերեւից եկած հրամանում նշվում էր, որ ջարդերը պետք է տեւեն 2.5 ժամ եւ, վեր-ջապես, եկել է դրանք դադարեցնելու հեռագիրը: Ես հասկացա, որ Կ. Պոլսից եկած հրամանները նպատակ ունեն իրար դեմ հանելու հայերին եւ մահմեդականներին: Պետք էր մի պատրվակ գտնել որովհետեւ շատ մահմեդականներ դեմ էին հայերի ջարդերին եւ կողմ՝ հայերի հետ խաղաղ գոյակցությանը:

Պատրանք ստեղծելով, թե իբր այդ չարաբաստիկ ուրբաթ օրը հայերը, մահմեդականների աղոթքի ժամանակ, ցանկանում էին հարձակվել մզկիթների վրա, դրդեցին մահմեդականներին կրոնական մոլեռանդ ոգով համախմբվելու քրիստոնյաների դեմ:

Ինձ հաջողվեց Բիթլիսի իշխանություններից տեղեկություններ ստանալ այն մասին, որ Օմեր բեյը Կ. Պոլսից հրահանգ է ստացել՝ հայերի ցանկացած բողոքի դեպքում, բոլորին որի քաշել: Զտեսնելով նման ոչ մի բան, տեղական իշխանությունները մի կողմ էին դրել այդ հրահանգը: Երկրորդ նման հրահանգ ուղարկվել էր ռազմական ղեկավարությանը (շրջանի – Ա.Փ.): Երեւի դա էր պատճառը, որ հոկտեմբերի 19-ին եւ 20-ին, նրանք, մոտակա բարձունք տարան հրանոթներ: Այդ նույն ժամանակ, հայ առաջնորդներից՝ Մուքսի Աղաջան Բաքալյանը գնացել է կառավարչի (հավանաբար քաղաքի ղեկավար – Ա.Փ.) մոտ եւ նրան տեղեկացրել, որ եկեղեցիներից մեկում մշտապես հայերի հավաք է անցկացվում: Մի թուրք ինձ պատմեց, որ Աղաջանը կառավարչին զգուշացրել էր՝ ուշադիր լինել մզկիթների նկատմամբ, քանի որ հայերը ծրագրում են հարձակվել դրանց վրա:

Ինչ վերաբերում է այդ միությանը. (եկեղեցում հավաքվող հայեր – Ա.Փ.), ապա այն ընդամենը՝ մի քանի հայ երիտասարդների ինքնահաստատման փորձ էր: Նրանք հիմնել էին ընթերցասրահ եւ դասարաններ, որոնք բաց էին բոլոր ցանկացողների համար:

Հայերին ջարդելու վերաբերյալ երրորդ հրահանգը եկավ հոկտեմբերի 24-ին եւ հաջորդ օրն իսկ՝ իրականացվեց:

Այն ինչ գրել եմ, ուղղված է ընթերցողների լայն շրջանակներին: Ես ազոթում եւ հավատում եմ, որ այն չի ընդունվի որպես հորինված պատմություն: Պատկերացրեք, որ քաղաքի բնակչության է 3/4 լավ զինված է եւ իշխանությունների թույլտվությամբ հանկարծակի հարձակվում է խաղաղ փոքրամասնության վրա: Առանց բացառության սպանում են բոլորին եւ թալանում ամեն ինչ (ասեմ Ձեզ, որ մարդիկ այդ ժամանակ պատրաստվում էին ձմռանը եւ նրանց տանը լիքը մթերք կար): Իսկ այդ նույն իշխանությունները 10 օր չարունակ կալանել էր մոտ 200 փախստականի, որոնք վախեցած, որբացած եւ անօգնական ընտանիքներին տիրել էր անորոշությունը եւ նրանք, իրենց դժբախտության մեղավորությունն ուղղել էին ազդեցիկ մեծամասնության դեմ: 200-ից՝ 40 հայ ազդեցիկ մարդկանց պահելով կալանքի տակ, ստիպեցին նրանց ստորագրել մի դաժան փաստաթուղթ, սպառնալով, հակառակ դեպքում, ավելի սարսափելի կոտորած իրականացնել: Այդ փաստաթղթի մոտավոր բովանդակությունն էր. այդ դեպքերի մեղավորությունը հայերինն էր եւ նրանք իշխանություններին են հայտնում իրենց սերն ու հնազանդությունը: Այդ ժամանակ, մեծամասնությունը չէր էլ մտածում վերադարձնել ավարը: Միայն մի քանի դեպքում այն վերադարձվեց:

Սիրելի ընթերցող, մտածիր այս ամենի մասին, մտածիր այս փոքրամասնության մասին, որին զրկել են ապրուստի միջոցից եւ իրենց եկեղեցիներից: Մարդիկ սովամահ են լինում: Նոյեմբերը դեռ չի ավարտվել, բայց քաղաքում արդեն բավականաչափ ձյուն է եկել:

Ինչ է պետք անել, դա էր կարեւոր հարցը հիմա: Հազարավոր մարդկանց կյանք կախված էր այդ հարցի պատասխանից: Հազարավոր մարդիկ զոհվել են եւ էլ չեն կարող վերադառնալ: Բայց ինչ պետք է արվի մնացածների ապահովվության համար: Նա, ով մտածում է կյանքերի այս հսկայական ու անիմաստ կորուստների մասին եւ այն մասին, թե ինչն է պահպանում մարդկանց կյանքը, չի կարող չբացահայտել՝ «ինչ-որ մեկը կոպիտ սխալ է թույլ տվել»: Ես դա թողնում եմ նրանց, ում հասկանալի են դիվանագիտական գաղտնիքները որոշելու, թե երեք ուժերից (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան եւ Ֆրանսիա **Ա.Փ.**) ով է պատասխանատու վարվող քաղաքականության համար եւ ովքեր են պատասխանատու քրիստոնյաներին անպաշտպան թողնելու համար, ինչպես՝ մի խումբ ոչխարներ անկուշտ գայլերի ճանկում: Նրանք երեւի կարող են իրենք իրենց ներել, ասելով, որ ոչխարներն են մեղավոր: Մի անգամ, ջուրը պղտորելու համար գայլը մեղադրում է գառնուկին, բայց Բիթլիսում գառնուկը նույնիսկ մոտ չէր առվակին:

Ես կարծում եմ, որ Բիթլիսի ջարդերը՝ նախկինում տեղի ունեցած ջարդերի անպատժելիության հետեւանք էին եւ հույս ունեմ, որ գոնե այս ջարդերի կազմակերպիչները կպատժվեն եվրոպական երկրների կողմից եւ չեն հանդիսանա նոր ջարդերի պատճառ: Թուրքական կառավարությունը սպանվածների ընտանիքներին տալիս էր 1000 ֆունտից էլ պակաս օգնություն, մինչդեռ միջազգային կազմակերպությունները՝ 10000 ֆունտ:

Եթե այն ժամանակ անգլիական ամսագրերը գրում էին, որ չպետք է կրկնվեն նման ջարդերը, ապա այժմ հայերին խորհուրդ էին տալիս դիմադրել թուրքական ուժին: Ո՞վ կարող է մտածել, որ նման վայրագությունների հետեւում կանգնած է թուրքական իշխանությունը: Ո՞վ կարող էր ենթադրել, որ Օսմանյան կայսրությունում կատարվող բարեփոխումները՝ նշանակում է սպանություններ եւ կողոպուտ: Ոստիկանությունը եւ ժանդարմերիան ստեղծված էին պաշտպանելու կայսրության բնակիչներին, այլ ոչ թե՝ սառնասրտորեն սպանելու:

Որպեսզի քրիստոնյա բնակչությունը կարողանա ապրել կայսրությունում, ապա արտաքին քրիստոնյա ուժերը պետք է տարածվեն կայսրության ամեն մի անկյունում: Սրա մասին արդեն կարիք չկա ասելու, բայց դեռ կան մարդիկ, որոնց պետք է հիշեցնել սրա մասին:

Ինչպես պետք է դա արվի: Մենք չգիտենք, եւ կարծես թե ոչ ոք էլ չգիտի: Մենք, որ հավատում ենք Աստվածաշնչին եւ Ամենակարողին, հավատում ենք, որ Աստված, որ անուշադիր չեղավ Աբելի արյան հանդեպ, չի թողնի, որ 10000 եւ ավելի թշվառ մարդկանց արյունը իզուր հոսի: Եվրոպայում եսասիրության առջեւ

դեռեւս ծունկի չեկած եւ իրեն հավատարիմ հետեւորդների օգնությամբ, նա (նկատի ունի Աստծուն **Ա.Փ.**) կօգնի փրկված քրիստոնյաներին: Մենք հավատում ենք, որ Անգլիայում դեռեւս կան մարդիկ, որոնց մեջ մարդկության հանդեպ սեր կա: «Եթե ուզում եք, անվանեք այն՝ ոչ հարմարվողական խիղճ»: Մենք հավատում ենք, որ այսպիսի մարդիկ են գերիշխելու եւ այն, ինչ որ նրանք աղքատ մարդկանց համար չկարողացան անել, ոչ միայն չի խանգարի ուրիշներին անելու դա, այլ ընդհակառակը՝ կօգնի կատարելու իրենց պարտականությունը՝ հանուն Աստծո եւ նրա հետեւորդների:

Ջորջ Փերկինս Նեփ

Ծանոթություններ

1. Դոկտոր Հենրի Ատկինսոն - Ամերիկացի միսիոներ, բժիշկ, Հարվրդի շրջանավարտ: 1902թ. հիմնել է հիվանդանոց Թուրքիայում՝ Խարբերդում:

2. Հենրի Ֆինիս Լինչ (1862-1913թթ) - իռլանդացի հայագետ, ճանապարհորդ, փաստաբան, հասարակական-քաղաքական գործիչ: 1889-1890թթ ճանապարհորդել է Միջագետքում եւ Պարսկաստանում: 1906թ.-ից ընտրվել է Անգլիայի խորհրդարանի անդամ, միաժամանակ եղել է խորհրդարանի պարսկական կոմիտեի նախագահ: Երկու անգամ ճանապարհորդել է Հայաստանում: Երկրորդ ուղեւորությունը նվիրել է Հայաստանի երկրաբանությանը եւ աշխարհագրության ուսումնասիրությանը: Ընդհանուր ակնարկով տվել է հայ եկեղեցու յուրահատուկ պատմությունը: Ունի երկհատորյակ նվիրված Արեւելյան եւ Արեւմտյան Հայաստանին:

3. 1894թ. հուլիսի 27-ից մինչեւ օգոստոսի 27-ը կառավարական ուժերը անցնում են հարձակման: Սասունցիները նրանց տալիս են հակահարված: Սակայն ուժերը խիստ անհավասար էին: Սուլթանական զորամասերը օգոստոսի վերջերին, ի վերջո, հաղթում են սասունցիներին եւ սրի քաշում մոտ 7 հազար հայի:

4. Տալվորիկ- գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգում, Սասունի գավառակում, Տալվորիկի գյուղախմբի կենտրոնը: Գյուղը տեղակայված է Մուշ քաղաքից 35 կմ հարավ-արեւմուտքում:

5. Բարենորոգումների ծրագիր - 1894թ. նոյեմբերին կազմվեց հատուկ հանձնաժողով, Սասունի դեպքերն ուսումնասիրելու համար: Նրա նյութերի հիման վրա Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի Կ.Պոլսի դեսպանները 1895թ. մայիսին Բ.Դռանը ներկայացրին բարենորոգումների ծրագիր: Սակայն այդ ծրագիրը ձեւական նշանակություն ունեցող փաստաթուղթ էր, որովհետեւ գլխավոր պաշտոնյաների նշանակման իրավունքը վերապահվում էր Սուլթանին: Բ.Դուռը, ստանալով այդ փաստաթուղթը, կեղծավորաբար գոհունակություն հայտնեց դեսպաններին:Ապա նշեց, որ սուլթանն անարդար է համարում բարենորոգումների կիրառումը կայսրության միայն մի մասում: Մի խոսքով՝ սուլթանական կառավարությունը փաստորեն չընդունեց բարենորոգումների անգամ խիստ չափավոր Մայիսյան ծրագիրը:

6 Կարմրակ եկեղեցի - Բիթլիս քաղաքի հարավ-արեւելքում ս.Նշան (հնում՝ ս.Կիրակոս) գմբեթավոր եկեղեցի, որը պատկանում էր քաղաքում գտնվող Ամրդոլու (Ամլորդվո) ս. Հովհաննես վանքին:

7 1890թ. հունիսի 20-ին թուրք հրոսակները ներխուժեցին հայոց եկեղեցու բակը եւ խանգարեցին պատարագը: Զայրացած ամբոխը հնչակյանների գլխավորությամբ դիմագրավեց ոստիկաններին: Տեղի ունեցած ընդհարման հետեւանքով սպանվեցին ու վիրավորվեցին ավելի քան 20 հայ: Երկու օր անց իշխանությունները նոր ջարդեր կազմակերպեցին քաղաքի հայկական թաղամասերում:

8 Խութ - գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Բիթլիսի գավառում, Խիզանի գավառակում:

9. Խուլթիկ - գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի, Բիթլիսի գավառում, Բիթլիս քաղաքից մոտավորապես 16 կմ. հարավ-արեւելք:

10. Փարխանգ - գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգում, Բիթլիս քաղաքից 4կմ. հարավ:

11. Գորվու - Գյուղ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգում, Մոտկան գավառակում:

12. Սղերդ - Քաղաք Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի, Սղերդի գավառում, Բիթլիս քաղաքից 50-52 կմ. հարավ-արեւմուտքում:1891թ. ուներ 15.000 բնակիչ, որից հայեր՝ շուրջ 4000: Սղերդի ու նրա շրջակայքի հայերի ողբերգությունը սկսվեց 1895թ. հայկական կոտորածներով: Այդ ժամանակ քաղաքի հայերից շատերը սպանվեցին, շատերն էլ բռնությամբ մահմեդականացվեցին: Նրանց ունեցվածքը կողոպտվեց թուրքերի եւ քրդերի կողմից, իսկ տներն ու խանութները քարուքանդ արվեցին:

13. Էրուն - գավառակ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգի Սղերդ գավառում:

14. Շիրվան - գավառակ Արեւմտյան Հայաստանում, Բիթլիս նահանգի, Սղերդի գավառում: Տարածվում էր Սղերդ քաղաքից հարավ-արեւելք:

15. Հեզան - գավառակ Արեւմտյան Հայաստանում, Դիարբեքիր նահանգի Արշանմագենի գավառում:

16. Սուրբ Խաչ եկեղեցի - եկեղեցի Արեւմտյան Հայաստանում, Խիզանի գավառակում, Շինիճոր գյուղի մոտ:

17. Խառան -Հարան - գյուղ Հյուսիսային Միջագետքում, Եգեսիայից մոտ 80 կմ. հարավ-արեւելք, պատմական Խառան քաղաքի ավերակների մոտ:

18. Պարոն Քոլ - Ամերիկացի միսիոներ, իր հիմնական գործունեությունը ծավալել է Բիթլիս քաղաքում:

19. Դոկտոր Ռեյնոլդս - Ամերիկացի միսիոներ, 1872թ. հիմնել է Վանի ամերիկյան միսիոներությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920թթ.

Առ այսօր քիչ է լուսաբանված այն հարցը, թե ինչպես է Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. ստեղծել անվտանգության իր համակարգը, որի բաղկացուցիչ մասերն էին՝ հետախուզությունը եւ հակահետախուզությունը:

Հարկ է նշել, որ այս ընագավառում Հայաստանի Հանրապետության առջեւ ծառացել են մեծ բարդություններ եւ խոչընդոտներ. Նրան վիճակված էր մաքառել հետախուզական եւ ռազմական-քաղաքական հզոր ներուժ ունեցող երկրներին, ինչպիսիք էին՝ Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանը, մուսավաթական, իսկ այնուհետեւ՝ բոլշեւիկյան Ազրբեջանը, մենշեւիկյան Վրաստանին փոխարինած Խորհրդային Վրաստանը եւ այլն: Եվ չնայած առկա ահռելի դժվարություններին, Հայաստանի Հանրապետության կառավարական մարմինները հնարավորինս ուշադրության կենտրոնում են պահել հետախուզական եւ հակահետախուզական գործի կազմակերպման հիմնախնդիրները, մշտապես մտահոգվել են ներքին եւ արտաքին անվտանգության օղակների կազմակերպման հարցերով: Կառավարությունը կայացրել է համապատասխան որոշումներ, լուծվել են կադրային, ֆինանսական եւ այլ հարցեր:

Սույն հրատարակությունը նպատակ է հետապնդում մասամբ լրացնելու վերոնշյալ հարցի վերաբերյալ հայ պատմագիտության մեջ գոյություն ունեցող այդ զգալի բացը: Հրատարակվող փաստաթղթերը հնարավորություն են տալիս մասամբ ներկայացնելու ՀՀ հետախուզական բաժանմունքի 1918-20թթ. գործունեությունը:

Վանիկ Վիրաբյան
պատմական գիտությունների
թեկնածու

N 1

ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 օգոստոսի 1918թ.
Երեւան

Լսեցին. Զինվորական մինիստրության միջնորդությունը իրեն միջոցներ բաց թողնելու մասին՝ ավիացիայի, հետախուզության, հակահետախուզության եւ ռադիոհեռագրի գծով չնախատեսված ծախսերը ծածկելու համար:

Որոշեցին. Բաց թողնել զինվորական նախարարությանը՝ կառավարության 6 միլիոնանոց նախագծի հաշվին.

ա) չնախատեսված ծախսերի համար՝ 20 հազար ռուբլի,
բ) հետախուզության համար ՝ 20 հազար ռ.,
գ) հակահետախուզության համար՝ 20 հազար ռ.,
գ) ավիացիայի տեխնիկական սարքավորման համար՝ 15 հազար ռ.,
ե) զինվորական մինիստրության օրինագծի հաշվին ռադիոհեռագրի կարիքների համար բաց թողնել 10հազար ռ.:

ՀԱԱ, ֆ.Պ- 201, ց.1, գ.484, թ.9: Պատճեն: Մեքենագիր:

N 2
ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՍԻԼԻԿՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 մարտի 1919թ.
Երեւան

По имеющимся сведениям в Тифлисе агентами контрразведки грузин арестован служивший в Армянских войсковых частях и находящийся в настоящее время на службе Добровольческой Армии [Тигран] Девоянц с важными документами, передан суду и приговорен к расстрелу. Англичане протестовали против постановления суда, который не приведен в исполнение в виду болезни Девоянца сыпным тифом в тюрьме. Полагаю необходимым принять меры к облегчению участи Девоянца, если сведения эти действительны.*

Генерал-майор Силиков
За начальника штаба капитан Гросс

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, գ.1, թ.1: Պատճեն: Մեքենագիր:

N 3
ՏԻԳՐԱՆ ԴԵՎՈՅԱՆՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԻՆ

25 մարտի 1919թ.
Թիֆլիս

Девоянц обвиняется в военном шпионаже. Следствие о нем закончено. В ближайшем временем дело будет заслушено на сессии суда.

За товарища министра иностранных дел Сабахтаришвили

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, գ.1, թ.111-112: Պատճեն: Մեքենագիր:

N 4
ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 ապրիլի 1919թ.
Երեւան

Լսեցին. Զինվորական մինիստրի զեկուցումը Թիֆլիսում եւ Բաքվում մեր դիվանագիտական միսիաներին կից զինվորական ներկայացուցչություն հիմնելու մասին:

Որոշեցին. Կարեւոր համարել Թիֆլիսի միսիային կից զինվորական ներկայացուցչություն հիմնելը: Զինվորական ագենտը նշանակվում է զինվորական եւ արտաքին գործերի մինիստրների փոխադարձ համաձայնությամբ, նա հաշվվում է Դիվանագիտական միսիայի կազմի մեջ եւ գործում է Միսիայի գլխավորի ցուցմունքների համաձայն: Ռոճիկը ստանում է զինվորական մինիստրության վարկից, որպես զինվորական: Յանձնարարել Արտաքին գործերի մինիստրին մտցնի նախահաշվի մեջ 9 ամսվա համար՝ 1919թ. ապրիլի 1ից մինչեւ

*Հայ հետախույզ, որը 1920թ. ապրիլից մինչեւ հունիսի վերջը գլխավորել է ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբին կից հետախուզական բաժանմունքը -Վ.Վ.:

տարվա վերջը 90 հազար ռուբլի Թիֆլիսի գրասենյակային, ներկայացուցչական եւ այլ ծախքերի համար:

ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց.1, գ.100, թ.62: Բնագիր: Մեքենագիր:

N 5
ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

14 ապրիլի 1919թ.
Երեւան

Генеральный штаб ведает 1) производством занятий в военно-учебных заведениях войск, 2) борьбой с шпионажом и т.п.

7) Генеральный штаб состоит из: Разведывательного отделения, которое ведает сбором сведений о противнике и местностей, обработкой этих данных и своевременной рассылкой их в войска, руководит разведкой ведущей штабами бригад, ведет учет суммах, отпускаемых на разведку, организует борьбу с шпионажем. Штаб генерального штаба Военного Министерства

Штаты

Разведывательное отделение.

Начальник отделения (Генерального штаба, штаб офицер)-1

Организация по особому секретному плану.

Помощник (штаб или штаб-офицер) – 2 (один из них ведает контрразведкой), писарей: старших-1 , младших – 1.

Примечание: На случай двух летучих, оперативных штабов разрешается сверх указанного числа иметь в оперативном, разведывательном и общем отделениях еще по 2 помощника, причем в оперативном оба добавляемые должны быть офицеры Генерального Штаба. А также для указанной цели разрешается иметь в каждом отделений добавочных писарей по 1 старшему и по 1 младшему. Число офицеров и писарей, добавленных по настоящему примечанию разрешается иметь на срок до 1 июля 1919г.

ՀԱԱ, ֆ.Պ- 204, ց. 1, գ.132, թ.52-55: Պատճեն: Մեքենագիր:

N 6
ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻ ՊԵՏԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԵՏԱԽՈՒՅԶ ՍՊԱՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 մայիսի 1919թ.
Երեւան

С расширением деятельности Разведывательного отделения и открытием пунктов в соседных государствах необходимо озаботиться о том, чтобы агенты разведки, находящиеся за пределами Армении, имели бы хоть какую-нибудь поддержку от Представителей своей страны. Офицер-разведчик в случае “провала” официально не пользуется правом зашиты, он работает на свой страх и риск. Между тем существенную поддержку в его работе, неофициально конечно могли бы оказывать дипломатические миссии - что и имеет место во всех государствах - ни для кого не секрет, что, во главе разведки всегда стоит глава миссии.

К сожалению у нас этого не наблюдается. Наши дипломатические представители при обращений к ним агентов разведки сразу пугаются и отказывают, поясняя, что боятся возможных “дипломатических осложнений”, и

если и оказывают иногда некоторую помощь, то настолько неумело, что ставят агента в самое рискованное положение - это я испытал на себя.

Необходимо войти в сношение с Министерством Иностранных дел и просить о посылке распоряжений всем дипломатическим представителям, как в Закавказье, так и в пределах Турции, где указать, что поддержка агентов разведки в их работе есть прямая обязанность миссии. Эта поддержка должна заключаться главным образом в пересылке памяток и содействия для получения необходимых документов при поездке в различные районы. Кроме того, чины миссии должны принимать все меры, чтобы своими неосторожными действиями не подвести агентов.

Подробные указания в чем должна выражаться помощь, могут быть даны на месте офицером разведки.

Вр. и. д. начальника отделения
поручик по адмиральтейству Ован. Хан-Котурский

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց. 1, գ.155, թ.24: Պատճեն: Մեքենագիր:

N 7
ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 մայիսի 1919թ.
Երեւան

1. Լսեցին. զինվորական մինիստրի զեկուցումը հետախուզական եւ հակահետախուզական բաժնին բաց թողնել մայիս ամսվա ծախսերի համար 657 000ռ:

Որոշեցին. Բաց թողնել զինվորական նախարարության հետախուզական եւ հակահետախուզական բաժնի մայիսի ծախսերի համար 657 000r. 40 միլիոն հատուկ ֆոնդից:

2. Լսեցին. զեկուցում արտասահմանի մեջ հետախուզական եւ հակահետախուզական գործի մասին:

Որոշեցին. Արտասահմանի մեջ հետախուզական եւ հակահետախուզական գործունեությունը ենթարկել ՀՀ դեսպանների հսկողությանը:

ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց.1, գ.146, թ.82: Բնագիր: Մեքենագիր:

N 8
ՀՀ ԶԻՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՐՏԳՈՐԽՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԱՅ ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 մայիսի 1919թ.
Երեւան

Секретно

Препровождая при сем рапорт Начальника Разведывательного отделения Генерального Штаба относительно координации действий чинов Министерства Иностранных дел и Военного, прошу Вашего распоряжения об оказаний самой интенсивной помощи чинам разведки, обращающимся к представителям Вашего Министерства за пределами Армении за содействием.

Подробные данные, в чем должно выражаться содействие, взаимная поддержка и общность действий могут быть выяснены на месте в переговорах высших чинов разведки с представителями миссии.

Военный министр Республики Армения ген-майор Араратов
Вр. и. д. Начальника Ген. Штаба Военного Мин-ва
Генерального штаба подполковник Шнеур

ՀԱԱ, ֆ.Պ- 200, ց.1, գ.155, թ.23: Պատճեն: Մեքենագիր:

N 9
ՔԱՂՎԱԾՔ ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԻՑ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆԸ ՖԻՆԱՆՍՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 սեպտեմբերի 1919թ.
Երեւան

Լսեցին. Զինվորական մինիստրի զեկուցումը հետախուզության եւ հակահետախուզության ծախսերի համար 535 000 վարկ բանալու մասին:

Որոշեցին. Հավանություն տալ եւ խնդրել պարլամենտի զինվորական հանձնաժողովին բաց թողնել այդ գումարը:

ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց.1, գ.100, թ.194: Բնագիր: Մեքենագիր:

N 10
ՀՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՊԱՌԼԱՄԵՆՏՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 սեպտեմբերի 1919թ.
Երեւան

Ներկայացնելով մինիստրների խորհրդի սեպտեմբերի 1-ի նիստում հավանություն ստացած զինվորական մինիստրի զեկուցումը հետախուզության եւ հակահետախուզության ծախսերի համար 535000 վարկ բաց անելու մասին, պատիվ ունեմ խնդրել ներկայացնել պարլամենտին ի հաստատումն փակ նիստում:

Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ

ՀԱԱ, ֆ.Պ- 202, ց.1, գ.29, թ.1: Պատճեն: Մեքենագիր:

N 11
ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

օգոստոս 1920թ.
Երեւան

ՀՀ Սպարապետի շտաբ. Հետախուզական բաժանմունք

Շրջաբերական

Համարյա բոլոր սահմանների վրա մեր հաղթական մանուկ բանակը պաշտպանում է իր կրծքով հայրենիքի ազատությունը եւ անկախությունը:

Մեզ անհասկանալի է, դատապարտելի վերաբերմունքը շատերի կողմից նույնիսկ պաշտոնական անձանց իրենց ստանձնած պաշտոններին վերաբերող գաղտնիքները:

Զորաշարժային տեղեկությունները նախքան բանակի շտաբին Հայտնի լինելը, սկսվում են տարածվել եւ դատողության առարկա դառնալ զանազան անկյուններում, ճեմելիքներում եւ սրճարաններում: Ժամանակն է վերջ տալ դրան:

Հայտարարելով այս մասին,Հետախուզական բաժանմունքը, Համաձայն Ռազմական նախարարի Հրամանի, Հայտնում է, որ այն ամենքը, որոնք անկախ իրենց Հասարակական դիրքից եւ աստիճանից կնկատվին.

1.Զինվորական գաղտնիքները տարածելու մեջ, տեղափոխությունների, ենթադրությունների եւ այլն:

2.Բանակի գործողությունների մասին տեղեկություններ տարածելու մեջ, նախքան նրանց պաշտոնական յայտարարման:

3.Կեղծ լուրեր տարածելու մեջ - կձերբակալվեն եւ կդատվեն Արտակարգ կամ Զինվորական դատարանի միջոցով, որպես թշնամուն աջակցողների:

Սպարապետի Շտաբի պետ, գլխավոր շտաբի գնդապետ Վեքիլով
Հետախուզական բաժանմունքի պետ՝ լեյտենանտ Յովհան խան-Ղոթուրի

ՀԱԱ, ֆ.Պ- 199, ց.1, գ.118ա, թ.199-200:Պատճեն: Մեքենագիր:

ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ ԵՎ ՆՐԱ ԿԱՊԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ 1945-1985ԹԹ.

Եթովպիայի Հայ Համայնքը կազմավորվել է 7-րդ դարում: Երբ արաբները, նվաճելով Սիրիան, Պաղեստինը եւ Եգիպտոսը, սկսել են Հալածել տեղի քրիստոնյաներին, մեծ թվով Հայեր գաղթել ու ապաստան են գտել մերձակա քրիստոնյա երկրում՝ Եթովպիայում: Եթովպահայ Համայնքը Համալրվել է 12-րդ դարում՝ Եգիպտոսից եւ 14-րդ դարի վերջին՝ Կիլիկիայից գաղթած Հայերով:

Հայերի Հոսքը Եթովպիա ուժեղացել է Թուրքիայում 1894-1896-ին կազմակերպված Հայկական կոտորածներից Հետո: Նորագաղթ Հայերի մեծ մասն արՀեստավորներ ու գյուղացիներ էին:

Հայերի վերջին նշանակալի Հոսքը Եթովպիա տեղի է ունեցել Մեծ եղեռնից Հետո: Առաջին ՀամաշխարՀային պատերազմի ժամանակ եթովպաՀայ կամավորները կռվել են եգիտական ռազմաճակատում՝ թուրքական բանակի դեմ:

20-րդ դարի սկիզբն եթովպաՀայ Համայնքի ծաղկման շրջանն էր: Ադիս Աբեբայում փաստորեն ի Հայտ եկավ Հայկական թաղամաս, որտեղ կառուցվել էին եկեղեցի, դպրոց, մարզական ակումբ, շատ բնակելի տներ: 1930-ական թթ. Հայերի թիվը Հասել է 2800-ի:

ԵթովպաՀայ Համայնքի բնականոն զարգացումն ընդՀատվեց 1935-ին, երբ իտալացիներն օկուպացրին Եթովպիան: Բազմաթիվ Հայեր մեկնեցին Լիբանան, Ջիբութի եւ այլ երկրներ: Փակվեցին դպրոցն ու եկեղեցին: Եթովպիայի ազատագրումից Հետո ազգային կյանքը կրկին աշխուժացավ:

1974թ-ի Հեղափոխությունից Հետո, Եթովպիայում ստեղծված տնտեսական ծանր կացության Հետեւանքով, տեղի Հայերի մեծ մասը կորցրեց ունեցվածքը եւ արագաղթեց երկրից:

2003թ. տվյալներով, Եթովպիայում մնացել է շուրջ 80 Հայ(բնակվում են միայն մայրաքաղաքում՝ Ադիս Աբեբայում):

Այլ գաղթօջախների նման, եթովպաՀայ Համայնքի պաՀպանման ու զարգացման միակ երաշխիքը մայր Հայրենիքի Հետ ամուր կապերն են:

Հատկապես ետպատերազմյան տարիներին այդ կապերն իրականցվում էին պետական-կառավարական ու Հասարակական բազմաթիվ մարմինների (մասնավորապես ԱրտասաՀմանյան երկրների Հետ բարեկամության ու մշակութային կապի Հայկական ընկերության՝ ԱՕԿՍ, իսկ 1964-ից՝ ՍփյուռքաՀայության Հետ մշակութային կապի կոմիտեի) եւ Էջմիածնի կաթողիկոսության միջոցով:Նրանց գործունեության արդյունքում ստեղծվել են արժեքավոր փաստաթղթեր, որոնք պաՀվում են Հայաստանի ազգային արխիվում: Դրանք բազմակողմանիորեն լուսաբանում են ինչպես եթովպաՀայ գաղթօջախի ընդՀանուր պատկերը, այնպես էլ նրա՝ Խորհրդային Հայաստանի Հետ ունեցած բեղմնավոր կապերը:

Սույն Հավաքածուի 1-ին մասը տալիս է եթովպաՀայ Համայնքի նկարա-գիրը, իսկ 2-րդ մասը ներկայացնում է Հայրենիքի Հետ նրա ունեցած կապերը: Հավաքածուի փաստաթղթերը Հրապարակվում են առաջին անգամ եւ գալիս են Հարստացնելու ներկայացվող Հարցի աղբյուրագիտական բազան: Բոլոր փաս-տաթղթերը վերցված են Հայաստանի ազգային արխիվից:

Հավաքածուն կազմված է պատմական փաստաթղթերի Հրապարակման գործող կանոններին Համապատասխան: Հրապարակվող որոշ փաստաթղթերի վերնագրերը չծանրաբեռնելու եւ ավելորդ կրկնությունից խուսափելու Համար ԱրտասաՀմանյան երկրների Հետ բարեկամության ու մշակութային կապի Հայկական ընկերությանը եւ ՍփյուռքաՀայության Հետ մշակութային կապի կոմիտեին Համապատասխանաբար փոխարինել ենք ԱՕԿՍ եւ ՍփյուռքաՀայության կոմիտե անվանումները: Ներկայացվող որոշ փաստաթղթերում, երբ խոսքը վերաբերել է թեմային առնչվող, սակայն, ոչ էական Հարցերին, կատարել ենք կրճատումներ, որպիսիք չեն աղավաղում Հավաքածուի բովանդակությունը: Կրճատումները նշվել են բազմակետերով:

Արմեն Բաղալյան
պատմական գիտությունների
թեկնածու

ՄԱՍ I

N 1
ՔԱՂՎԱԾՔ ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ ԽՍՀՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻՑ՝ ԵԹՈՎՊԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՍՀՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11 դեկտեմբերի 1956թ.
Ադիս Աբեբա

Армянская колония в Эфиопии насчитывает 940 человек, из которых 830 человек проживают в городе Аддис-Абебе, 83 человека - в городе Дире-Дауа и остальные 27 человек проживают в других городах и районах страны. Из 940 армян, проживающих в Эфиопии, взрослых мужчин - 345 человек (от 20 лет и выше), остальные 595 человек составляют женщины и дети.

Армянская колония Эфиопии существует более 50 лет, однако, следует отметить, что абсолютное большинство армян проживает по ливанским, сирийским и другим иностранным паспортам. По заявлениям членов Правления армянской колонии, только 30 армянских семей состоят в эфиопском подданстве. Вопрос о приеме армян в эфиопское подданство рассматривается местными эфиопскими властями десятилетиями, и решения, как правило, принимаются отрицательные. По своему социальному составу армянская колония в Эфиопии является весьма разнообразной. Среди членов этой колонии 25-30 семей являются крупными в местных масштабах собственниками промышленных предприятий и торговых фирм, однако основная масса армян занимается мелкой торговлей и кустарным промыслом.

Правление Армянской Колонии

Для руководства всей работой армянской колонии избирается правление в составе 7 человек сроком на три года. Через Правление члены армянской колонии устанавливают контакты с местными и правительственными органами и разрешают все деловые и спорные вопросы. Правление также занимается бытовыми, культурно-массовыми и другими вопросами, связанными с жизнью колонии. Нынешний состав Правления избран в 1955 году. Выборы Правления проходили в борьбе против некоторых членов армянской колонии, пытавшихся поставить у руководства Правления дашнака Пейлака Языджана. Однако, общее отчетно-выборное собрание армянской колонии отвергло все эти попытки, и в Правление армянской колонии были избраны лица, которые настроены против дашнаков. Председателем Правления армянской колонии в 1955 году был избран Мардирос Даракчьян, беженец из Турции. Даракчьян является владельцем обувной фабрики и кожевенного завода. На указанных предприятиях занято в общей сложности 550 человек рабочих. Кроме этого, Даракчьян имеет несколько обувных магазинов в городе Аддис-Абебе. Его сын окончил университет в США, специализировался в области коммерческой деятельности и сейчас работает вместе с отцом. Другой его сын в настоящее время учится в США. Заместителем председателя Правления является Богос Егиян, который работает директором одной из крупных торговых фирм "Сафарян". Остальные 5 человек членов Правления - Эдвард Карапетьян, Андраник Кечерян, Кеворк Севаджян, Григор Погарян и Агаси Богосян - также являются владельцами магазинов или торговых фирм.

Несмотря на то, что члены Правления армянской колонии в основном являются богатыми людьми, владеющими собственными фирмами, или

занимающими посты директоров в крупных фирмах - все они к Советскому Союзу относятся положительно и в беседах с сотрудниками Посольства называют Армянскую ССР своей родиной...

Политические организации и группировки в армянской колонии

До 1936г. в Аддис-Абебе открыто существовала контрреволюцион-ная организация дашнаков. В настоящее время в армянской колонии нет организационно-оформленных партий или политических группировок. Однако бывшие члены организации дашнаков ведут активную анти-советскую пропаганду. Основной центр организации дашнаков находится в г.Бостоне (США), но непосредственное руководство деятельностью дашнаков в Эфиопии, как и на всем Ближнем и Среднем Востоке и Африке, осуществляет второй центр организации дашнаков, находящийся в Каире.

На вопрос, с какой целью созывается эта конференция, председатель комитета заявил, что она созывается для выработки обращения к Организации Объединенных наций о возвращении исконных армянских земель отторгнутых турками. Я интересовался, один он едет из Эфиопии, или еще намечены другие лица. Как сказал он, вместе с ним едут Иегеян и Георгий Минасян, житель Дире Дауа.

Беёснилян попросил Иегеяна выйти из кабинета, добавил, что он хочет поговорить со мной по личному вопросу.

Сейчас, говорил он, почти у всех здешних армян настроение поехать в Советскую Армению. Однако, часть из них не может сделать этого в данный момент, так как они связаны с имуществом и другими делами. Кроме того не ясно для них какова будет судьба их собственности при окончательном решении уехать отсюда в Армению. Поэтому я хотел бы на обратном пути из Нью-Йорка посетить Сов. Армению и встретиться с отдельными ее руководителями с целью получения некоторых указаний по этому вопросу. Просил выдать ему въездную визу в СССР.

Я сказал, что доложу посланнику об этом и результаты сообщу позже.

ՀԱԱ, ֆ.326, ց.1, գ.158, թ.1-3: Պատճեն: Մեքենագիր:

N 2

ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՎՕԿՍ) ԼԻԱԶՈՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՕԿՍ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻՆ՝ ԵԹՈՎՊԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՅԵՐԵՆՖԻԼՄԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

30 հունիսի 1955թ.
Ադիս Աբեբա

I.Как Вам известно, в Аддис-Абебе имеется многочисленная армянская колония, которая в своем большинстве проявляет большой интерес к СССР, особенно к жизни армян в Армянской ССР. В настоящее время имеются вполне реальные возможности для широкого ознакомления армянской колонии с мирной политикой Советского Союза, достижениями в области техники, сельского хозяйства и искусства, а также с жизнью Армянской ССР, и оказания определенной помощи армянской школе путем демонстрации соответствующих кинофильмов и снабжения соответствующей

литературой. Однако у нас совершенно отсутствуют фильмы на армянском языке и это крайне затрудняет реализацию мероприятий, которые несомненно, принесли бы значительную пользу. В этой связи просим оказать содействие и в самое ближайшее время наладить присылку:

1.Документальных фильмов (включая кинохронику "Новости дня") на армянском языке, особенно о жизни армян в Советском Союзе.

2.Художественных фильмов (35 и 16 мм.) на армянском языке (па базе этих фильмов можно было бы наладить кинопросмотры для местной армянской общины).

3.Научно-популярных фильмов на армянском языке, особенно по вопросам естествознания (жизнь животных, птиц, географических филь-мов и др.).

II.Одновременно считаем необходимым увеличить количество высылаемой Вами художественной литературы на армянском языке, особенно русских классиков и крупных армянских писателей и поэтов.

Попутно сообщаем, что значительная часть имевшейся до настоящего времени литературы на армянском языке (включая собрание сочинений В.И.Ленина) представлены для организуемой в армянской школе библиотеке по просьбе директора армянской школы Карника Тополяна (ранее проживал в Бейруте).

III. В связи с поступившими от ряда армян просьбами просим выслать.
а) Армянский словарь - автор Малхасьян - 10 экз.
б) -"- - автор Аджарян - 10 экз.
в) Физические карты
учебные (настенные)
школьные (Кавказа, Арм. ССР, на арм. языке) - 4 экз.
г) "История Армении" - автор Аперьян -10 экз.
д) Ноты (партитуры, оркестровка)
опер "Ануш", "Алмаст" - по 3 экз.
е) Пластинки с записями популярных армянских песен (хор,соло), а также арий из опер армянских композиторов.

И. О. Уполномоченного ВОКС в Эфиопии П.Тарасов

ՀԱԱ, ֆ.709, ց.3, գ.28, թ.42-43: Բնագիր: Մեքենագիր:

N 3

ՔԱՂՎԱԾՔ ՎՕԿՍ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԵՎ ԱԴԻՍ ԱԲԵԲԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ԹՈՓԱԼՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿԱՅԱՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԻՑ՝ ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17 նոյեմբերի 1958թ.
Ադիս Աբեբա

... Тополян еще раз интересовался возможностью получения художественных и научно-популярных фильмов из Еревана на армянском языке. Эти фильмы, по его словам, они смогли бы показывать как бесплатно (для школьников и преподавателей), так и за деньги для состоятельных армян. Вырученные деньги дирекция школы реализовала бы на нужды школы. Такие коммерческие мероприятия в рамках армянской колонии Аддис-Абебы необходимы, так как, по заявлению Тополяна, годовой бюджет школы равен 60.000 эф. дол., 20.000 из которых, школа получает в качестве платы за обучение от учащихся, а 40.000 эф. дол. от различных благотворительных вечеров и пожертвований богатых армян. В случае демонстрации фильмов

Советской Армении за деньги, совету школы удалось бы гораздо легче приобрести эти 40.000 эф. дол. На это я ответил, что если мы и получим фильмы на армянском языке, то вряд ли АОКС пойдет на то, чтобы эти фильмы демонстрировались за деньги, так как они предназначены для общественного бесплатного показа. Тополян сказал, что об этом говорит только в связи с тем, что армянская школа не получает от правительства Эфиопии ни одной копейки. Совету приходиться приложить много труда, чтобы организовать нормальный учебный процесс в финансовом отношении. Здесь же он заявил что, армянам очень трудно жить и работать в стране, где не чувствуется абсолютно никакой заботы и поддержки со стороны государ-ственных властей, где нет армянских представителей в правительстве.

Продолжая разговор о своей школе, Тополян попросил помощь приобрести учебные карты Советского Союза, Советской Армении (желательно на армянском или английском языках). Я обещал содействовать в этом вопросе.

Представитель Союза советских обществ дружбы и культурной
связи с зарубежными странами в Эфиопии А.Степунин

ՀԱԱ, ֆ.709, ց.3, գ.70, թ.4: Պատճեն: Մեքենագիր:

N 4
ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ ՎՕԿՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՕԿՍ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՁԱՅՆԱՊՆԱԿՆԵՐ ԵՎ ՖԻԼՄԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 հունվարի 1961թ.
Ադիս Աբեբա

1.Армяне, проживающие в Аддис-Абебе, интересуются культурной жизнью Советской Армении.

Они часто обращаются к нам за помощью в приобретении грампластинок и магнитозаписей некоторых народных и эстрадных песен и концертов в исполнении известных мастеров искусств Армянской ССР.

Просим Вас, если есть такая возможность, выслать представителю СОД в адрес Посольства набор пластинок или магнитозапись армянской классической, народной и эстрадной музыки, песен для использования на Постоянной выставке Союза обществ дружбы и для подарков некоторым представителям армянской общины Аддис-Абебы.

Было бы весьма желательным включение в музыкальную подборку грампластинок с записью опер ”Ануш” и ”Давид Бек”.

2.Фотовыставка на армянском языке ” 40 лет Советской Армении” нами передана для экспонирования в клубе Армянской общины в Аддис- Абебе.

Совет общины должен дать разрешение на её показ.

3.Находясь в Ереване в августе 1960 года вместе с эфиопским писателем Кебеде Микаэлем, я обсуждал с Вами возможность посылки в Аддис-Абебу художественных фильмов на армянском языке. Из бесед я понял, что АОКС имеет такую возможность.

Желательно было бы в 1961 году получить 2-3 армянских художест-венных фильма как на широкой, так и на узкой плёнке.Наличие армянских фильмов на Постоянной выставке СОД значительно облегчило нашу работу среди армян, проживающих в Аддис-Абебе.

4.Нам известно, что на празднование сороколетия республики было приглашено много зарубежных армян .

Посольство считало бы целесообразным получить из Еревана подборку фотографий об участии зарубежных армян в празднествах.

Представитель Союза обществ
дружбы в Эфиопии. А.Степунин

ՀԱԱ, ֆ.709, ց.3, գ.127, թ.24-25: Բնագիր: Մեքենագիր:

N 5
ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ ԽՍՀՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆԵՉԱԵՎԻ ԵՎ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՀԱՆԱ ՎԱԶԳԵՆԻ ՄԻՋԵՎ ԿԱՅԱՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ ԵԹՈՎՊԱՀԱՅԵՐԻ ՀԽՍՀ ՆԵՐԳԱՂԹԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

15 հունիսի 1961թ.
Ադիս Աբեբա

Сегодня посольство вновь посетил священник армянской общины Васген. Вместе с ним пришел проживающий в Аддис-Абебе Кнаджян, армянин по национальности, подавший в августе месяце 1960г. ходатайство о приеме его и его жены в гражданство СССР. В течении 9 месяцев, которые прошли со времени направления посольством в МИД СССР дела о приеме семьи Кнаджян в гражданство СССР. Кнаджян неоднократно посещает посольство с целью узнать результаты рассмотрения своего дела.

Кнаджян сказал, что он получил письмо от своих родственников, проживающих в Армянской ССР, в котором они сообщили ему, что подготовили его семье жилплощадь и что якобы власти Армянской ССР еще 6 месяцев назад дали согласие на принятие его семьи в гражданство СССР и въезд в Армянскую ССР на постоянное жительство. В связи с этим Васген заметил, что он, как глава армянской церкви в Эфиопии, направляет свои усилия на то, чтобы оказать содействие проживающим в Эфиопии армянам выехать на свою Родину в Советский Союз. Он принимает близко к сердцу судьбу Кнаджяна и просит ускорить решение по его ходатайству, т.к. положительное решение по делу Кнаджяна нашло бы широкий отклик среди молодых армян в Аддис-Абебе. При этом он заметил, что в мае месяце с.г. в США выехало 9 армян, потерявших в Эфиопии работу в связи с политикой эфиопского правительства, направ-ленной на замену иностранцев эфиопами. Васген считает, что эти 9 армян потеряны для армянского народа, т.к. подвергнутся соответствующей обработке в США. Потеряв работу в Эфиопии, эти армяне были поставлены в весьма трудное положение и зная, что въезд в США легче, чем в СССР, решили выехать в США. Васген добавил, что если бы прием в советское гражданство осуществлялся в более короткие сроки, то армяне предпочли бы поехать не в США, а в Армянскую ССР. Васген сказал, что недавно его посетила группа молодых армян с просьбой обратиться в посольство СССР и выяснить возможности ускоренного въезда в СССР. При этом Васген отметил, что армянам непонятно, почему до сих пор не дано разрешение на въезд Кнаджяну, если власти Армянской ССР не возражают против принятия его в гражданство СССР и его родственники готовы обеспечить его жилплощадью.

На вопрос относительно состава армянской общины, Васген сказал, что она насчитывает примерно одну тысячу человек, что большинство армян, вынужденных вести острую борьбу за свое существование, знает несколько языков, владеет несколькими специальностями. При этом следует иметь ввиду, что значительное число армян является весьма состоятельными людьми и в случае получения разрешения на въезд в СССР готовы передать советскому посольству в Аддис-Абебе свои денежные сбережения для перевода их в СССР. На эти денежные средства они готовы построить для себя дома или отдать их советскому государству в счет получения жилплощади. В заключение беседы Васген еще раз попросил рассмотреть возможность

введения сокращенной процедуры рассмотрения ходатайств о приеме в гражданство СССР лиц армянской национальности, указав при этом, в частности, что частое посещение армянами в Советского посольство с целью узнать результаты по своему ходатайству о приеме в гражданство СССР, ставит их в весьма трудное положение, ввиду того, что эфиопские власти следят за ними.

Второй секретарь посольства СССР в Эфиопии Б.Нечаев.

ՀԱԱ, ֆ.326, ց.1, գ.296, թ.1-3: Բնագիր: Մեքենագիր:

N 6
ԱՕԿՍ-Ի ՆԱԽԱԳԱՀ Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ«ԳԵՎՈՐԳՈՎ» ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՎ «ՓՅՈՒՆԻԿ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՆ ԻՐԵՆՑ ԵԹՈՎՊԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՏԱՑՈԼՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունիսի 1961թ.
Երևան

Անչափ ուրախալի էր Ձեր նամակից տեղեկանալ, որ մեր ուղարկած 5 ամսագրերը հետաքրքրում են Ձեր գաղութի երիտասարդությանը: «Սովետական Հայաստան» թերթում տեղ գտնող նյութերը գլխավորապես վերաբերում են մեր Հայրենիքի տնտեսական և մշակութային կյանքին, նրա առօրյային, որ անպայման պետք է հետաքրքրի Ձեր գաղութին: Այդ օրաթերթում հնացած կարող են լինել միայն միջազգային լուրերը:

Հարգելի բարեկամներ, խնդրում ենք մեզ ուղարկեք Եթովպահայ գաղութի մշակութային կյանքն արտացոլող լուսանկարներ և այլ նյութեր՝ մեր Ընկերության ցուցափեղկի «Սփյուռքահայ կյանք» բաժնում զետեղելու համար: Գաղութներին նվիրված նյութերի ցուցադրումը մեծ հետաքրքրությամբ է դիտվում Երևանի հասարակության կողմից:

Նախագահության նախագահ Բ.Գրիգորյան

ՀԱԱ, ֆ.709, ց.3, գ.273, թ.122: Պատճեն: Մեքենագիր:

N 7
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԵՐԿՈՒ ԵՐԵԽԱ ՀԱՅՐԵՆԻՔ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 հունիսի 1970թ.
Երևան

Հարգելի հայրենակիցներ.

Այս տարի Եթովպիայի հայ գաղթօջախից նախատեսված է 2 երեխա հրավիրել Հայրենիք, պիոներական ճամբարում հանգստանալու համար:

Խնդրվում է այդ հարցով դիմել տեղի Սովետական դեսպանատուն: Ընտրյալները պետք է օգոստոսի 1-ին լինեն Երևանում: Հայրենիքում նրանք կհանգստանան 30 օր:

Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյան

ՀԱԱ, ֆ.875, ց.4, գ.363, թ.5: Պատճեն: Մեքենագիր:

N 8
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

25 հունիսի 1971թ.
Երևան

Հարգելի հայրենակիցներ.

Մ.Մաշտոցի անվան Մատենադարանին հետաքրքրում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի կիրառումը հայ գաղթօջախներում:

Խնդրում ենք գրել մեզ, կիրառվե՞լ է երբևիցե Գոշի Դատաստանագիրքը Եթովպիայում, ի՞նչ հիմունքներով և ո՞ր գործերի կապակցությամբ:

Բաժնի վարիչ Ռ. Մարտիրոսյան

ՀԱԱ, ֆ.875, ց.4, գ.363, թ.6: Պատճեն: Մեքենագիր:

N 9
ԵԹՈՎՊԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ՝ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՉԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

16 հուլիսի 1971թ.
Ագիս Աբեբա

Ազնիվ Տիար Ռ. Մարտիրոսյան.

Ստացած ենք Ձեր 25 հունիս 1971թ. թիվ 772 նամակը ի մասին Մխիթար Գոշի Դատաստանագրքի գործածության:

Ներկայումս կտեղեկացնենք Ձեզի, թե Ատիս Ապապայի հայ համայնքին մեջ Մ.Գոշի Դատաստանագիրքը բնավ չէ գործածված, համաձայն Եթովպահայ գաղութի ամենեն հին անդամներուն պաշտոնական հայտարարության:

Տեղեկացնելով այս պարագան, մնանք Ձեր ազգօգուտ գործերու հաջողության մաղթանքներով և հարգանքներով՝

Եթովպահայ գաղութային ժողով

Ատենապետ Գեորգ Սվաճյան Ատենադպիր Հայկաշեն Ուզունյան

ՀԱԱ, ֆ.875, ց.4, գ.363, թ.19: Բնագիր: Մեքենագիր:

N 10
ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ ԽՍՀՄ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ՌՈՄԱՇԿԻՆԻ ԵՎ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԷԼԻԱՍ ՋԵՐՕԽՅԱՆԻ ՄԻՋԵՎ ԿԱՅԱՑԱԾ ԶՐՈՒՅՑԻ ԳՐԱՌՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒ ՀԽՍՀ-Ի ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7 հուլիսի 1974թ.
Ագիս Աբեբա

21 июня 1974г. посетил президента Национального совета Армянской общины в Эфиопии, владельца Компании "Артистик Принтерс" Элиаса Джерохяна и имел с ним беседу по вопросам культурного сотрудничества.

В начале беседы передал ему письмо, в котором сообщались условия приглашения в СССР певца, члена армянской общины О.Ворпеньяна.

Поблагодарив за письмо, Э.Джерохян отметил, что Национальный совет армянской общины в Эфиопии придает важное значение развитию культурных связей с Советской Арменией. В прошлом году он сам посетил АССР, в этом году туда выехала семья Налбандян, занимающая влиятельное

положение в общине, в августе с.г. община направляет в Армению своего представителя Л.Искандерьян для участия в семинаре преподавателей армянского языка, большим событием для колонии является и гастроли в СССР О.Ворпеньяна, получившего музыкальное образование в АССР.

Вместе с тем Э.Джерохян отметил, что сотрудничество между колонией и соответсвующими организациями АССР могло бы быть более эффективным. В частности он указал на недостаточное количество художественных фильмов на армянском языке, получаемых колонией, а также на то, что его предложение о направлении в Эфиопию армянского художественного коллектива не получило никакого развития.

По его словам, во время его пребывания в Армении в сентябре 1973г. он сообщил Армянскому комитету по связи с соотечественниками за рубежом, о готовности армянской общины в Эфиопии взять на себя расходы по пребыванию в Эфиопии группы артистов из 4 человек, в состав которой, в случае, если невозможно направление квартета им. Комитаса, могли бы войти певец, пианист (он же аккомпаниатор), скрипач и виртуоз-исполнитель на одном из национальных инструментов.

Э.Джерохян сообщил также, что армянская община готова оказать всяческое содействие в организации демонстрации в Эфиопии выставки прикладного искусства Армении.

"Как Вы знаете,-сказал он в заключении, эфиопы очень гордятся своей трехтысячелетней культурой. Нам тоже хочется показать, что мы люди не с улицы, а армянская культура является еще более древней и передовой, чем эфиопская".

На вопрос о количественном составе армянской общины Э.Джерохян ответил, что последний политический кризис тяжело отразился на армянской общине. Многие армяне с тревогой думали о том, что случится со страной, если умрет император, и многие из них готовились к отъезду за границу, в основном, в Австралию и Канаду. Бурное развитие событий в Эфиопии за последние 4 месяца подтолкнуло колебавшихся, а, по его мнению, после отъезда всех, кто собрался уезжать, в колонии останется примерно 700 человек, вместо 1250 человек.

Учитывая, однако, влиятельную роль армян в деловой жизни страны, полагали бы целесообразным. 1) принять предложение армянской колонии о направлении артистического коллектива в Эфиопию на изложенных выше условиях, 2) предусмотреть в плане обменов на 1975г. направление в Эфиопию выставки народно-прикладного искусства в сопровождении одного художника и представителя Армянского общества дружбы и культурной связи с зарубежными странами для выступлений перед местной общественностью о достижениях АССР в культуре и народном хозяйстве, 3) увеличить направление кинофильмов и фотовыставок для армянской колонии.

Первый секретарь посольства СССР в Эфиопии В.Ромашкин

ՀԱԱ, ֆ.709, ց.5, գ.21, թ.6-7: Բնագիր: Մեքենագիր:

N 11

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ՝ ՆՐԱՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԹԵՐԹԵՐ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

28 մայիսի 1976թ.
Երևան

Հարգելի հայրենակիցներ.

1976թ. հունվարից կոմիտեն Ձեզ բաժանորդագրել է հետևյալ թերթերն ու ամսագրերը.

1.«Հայրենիքի ձայն», 2.«Սովետական Հայաստան», 3.«Արվեստ», 4.«Գարուն», 5.«Հայաստանի աշխատավորուհի», 6.«Առողջապահություն», 7.«Բանբեր Հայաստանի արխիվների»:

Խնդրում ենք հայտնել ինչպես եք ստանում առաքումները, ինչպես նաև Ձեր ցանկությունները մամուլ ու գրականություն ստանալու մասին:

Հարգանքներով
Բաժնի վարիչ Ռ.Կոզմոյան

ՀԱԱ, ֆ.875, ց.8, գ.130, թ.20: Պատճեն: Մեքենագիր:

N 12

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ «ԳԵՎՈՐԳՈՎ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆԸ՝ ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

11 մարտի 1982թ.
Երևան

Հարգելի հայրենակիցներ.

Ինչպես գիտեք, կոմիտեն ամեն տարի օգոստոս ամսին Երևանում կազմակերպում է սփյուռքահայ ուսուցիչների կատարելագործման դասընթացներ: Այս տարի ընդառաջելով Ձեր խնդրանքին, կոմիտեն «Գևորգով» վարժարանին հատկացնում է 2 ուսուցչի տեղ՝ մասնակցելու նշված միջոցառմանը:

Խնդրում ենք Ձեր թեկնածուներին շտապ ներկայացնել տեղի ԽՍՀՄ դեսպանատուն: Այնտեղ Դուք կստանաք առավել մանրամասն տեղեկություններ:

Հաջողության լավագույն մաղթանքներով
Բաժնի վարիչ Ա.Ասլանյան

ՀԱԱ, ֆ.875, ց.13, գ.24, թ.9: Պատճեն: Մեքենագիր:

Հոդվածներ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1880-1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

Հայտնի է, որ Ռուսաստանում 1881 թվականի մարտի մեկի ահաբեկչությունից հետո ամբողջ երկրում ընթացող խստությունները ուղեկցվում էին նաև ծայրամասերի վարչական կառուցվածքի փոփոխություններով: Այսպես, Կովկասում գոյություն ունեցող փոխարքայության համակարգը 1882 թվականին վերափոխվեց կառավարչապետության: Նախկին փոխարքա Ալեքսանդր II-ի եղբայր Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչ Ռոմանովին, որը համակրելի և համեմատաբար ազատական հայացքներ ունեցող անձնավորություն էր համարվում, փոխարինեց նորանշանակ կառավարչապետը իշխան Ա.Մ.Դոնդուկով-Կորսակովը: Նրան հաջորդեց գեներալ՝ Ս.Ա.Շերեմետևը: Վերոհիշյալ անձնավորությունների կառավարչապետության տարիներին կովկասահայության նկատմամբ ծայր առավ Պետերբուրգից ուղղորդվող անվստահության և կասկածամտության գործելաձև: Նոր կայսրը և նրա շրջապատը շատ սառը, նույնիսկ թշնամական վերաբերմունք դրսևորեցին այդ տարիներին Հայկական հարցի հնարավոր լուծման խնդրում չհուսահատվող հայության համակած աշխուժության կապակցությամբ: Կառավարությունը որոշեց հայ ժողովրդի ունեցած սեփական արժանապատվության զգացումը և ազգային սուվերենության-ինքնության գիտակցությունը ընկճել:

Հարկավ, Հայության ինքնության գլխավոր կռվարարներն էին Հայոց առաքելական եկեղեցին, ազգային դպրոցները եւ մշակութային Հաստատությունները: Հայապահպանության այդ գլխավոր օջախների դեմ էլ ցարական արքունիքը որոշեց ուղղել առաջին Հարվածները:

Այդ տարիներին Կովկասյան երկրամաս աշխատանքի էին գործուղվել մի շարք բարձրաստիճան սեւՀարյուրակային պաշտոնյաներ, որոնք այսպես կոչված ժողովրդական լուսավորության նախարարության Հանձնարարությամբ տնօրինելու էին Հայկական եկեղեցու եւ դպրոցների ճակատագիրը: Դրանցից ամենանշանավորներն ու ամենաՀետադիմական գործիչներն էին Յու.Մ.Նեւրովը, Ա.Ժ.Նիկոլային, Կ.Պ.Յանովսկին եւ մի շարք այլ աստիճանավորներ: Կովկասը ուշադրության կենտրոնում է եղել, որը Ռուսաստանի կողմից նվաճվելուց Հետո ամբողջ Հարյուրամյակի ընթացքում Հազվադեպ բացառությամբ, ռուսական արքունիքի սեւեռուն նպատակն էր աստիճանաբար դիմաՀեղման ենթարկել տեղական ժողովուրդներին, ուսուցանել վերջիններիս: Իշխանությունների՝ այդ նպատակին Հասնելու ճանապարՀին Անդրկովկասում գլխավոր խոչընդոտը Համարվել է Հայերի ազգային արժանապատվության գիտակցությունը: Կովկաս գործուղած մեծ ու փոքր պաշտոնյաները տեսնելով Հայոց եկեղեցու ու դպրոցների սերտ կապը եւ Հայ ժողովրդի ներքին գիմադրությունը, չՀրաժարվելով իրենց մտադրությունից՝ որոշեցին սկզբնական շրջանում աստիճանաբար գործել՝ նախ Հարված Հասցնել կրթական Հաստատություններին եւ Հետո ոտնաՀարել Հայոց եկեղեցու իրավունքները: Հարկավ, ցարական կառավարության եւ կովկասյան իշխանությունների գլխավոր նպատակը, նրանց ռազմավարական ծրագիրը երկրամասի ժողովուրդներին, այդ թվում եւ Հայ ժողովրդի ազգային դեմաՀեղման ենթարկելու՝ ռուսացնելու մտադրությունն էր:

Հայ ժողովրդի ձգտումը դեպի առաջադիմություն եւ լուսավորություն Հավասարակշռությունից Հանում էր ցարական պաշտոնյաներին: Հայտնի է, որ դեռեւս 1883 թվականին Պետերբուրգի բարձրագույն ատյաններում տեղի ունեցած խորՀրդակցությունը ոչ նպաստավոր կանոններ մշակեց Հայոց դպրոցների մասին: 1884 թվականի փետրվարի 16-ին Ալեքսանդր 3-րդը Հաստատեց «Հայ լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները»: Հայկական դպրոցների գործունեությունը սաՀմանափակող այդ կանոններից ամենախիստը տարրականից բարձր Հայկական դպրոցների գոյության իրավունքի բացառման կետն էր: Բայց կառավարությունը Հանդիպեց անսպասելի դիմադրության: Էջմիածնի Սինոդը Հրաժարվեց նոր կանոններն ընդունելուց:

Կառավարության ոլորտներում տեղի ունեցած մի շարք խորՀրդակցությունից Հետո որոշվեց չփոխել 1884 թվականի կանոնները, եւ ցարը 1885 թվականի փետրվարի 5-ին Հաստատեց խորՀրդակցության որոշումները: Եվ ոտնաՀարելով Հազարավոր սովորող Հայ երիտասարդների ազգային զգացմունքները՝ կառավարությունը 1885 թվականին երկրամասում, Նոր Նախիջեւանում եւ Բեսարաբիայում 300 դպրոցներ փակեց:

Իշխանությունների այս մարտաՀրավերը անպատասխան չմնաց: Առաջացավ Համաժողովրդական Հուզում: Բուռն էր Հատկապես Թիֆլիսում գործող Հայ Հեղափոխական նարոդնիկական կազմակերպության գայրույթը: 1885 թվականի փետրվարի 5-ին նրանք Հրատարակեցին «Հայ եղբայրներ եւ Հայ քույրեր» թռուցիկը, որը «Սարսափելի ավազակություն» էր Համարում Հայկական դպրոցների փակումը[1]:

Թռուցիկի Հեղինակները գրում էին, որ դպրոցը Հայերի Համար կենսական նշանակություն ունի: «Եվ աՀա այսօր, երբ մեր Ազգային դպրոցը՝ Հին սխոլաստիկայի կապանքներից նոր ազատված՝ պետք է իրականապես ցույց տար իր ուժի մեծությունը, այդ վաղուց փայփայած րոպեին Հայտնվում է մի բռնակալ եւ ձեռքի մի շարժումով ոչնչացնում այն, ինչ մենք դարերի ընթացքում Հազիվ կարողացել ենք բարելավել»: «Մեր դպրոցները փակում են չտիկների օգնությամբ, թող այդ լինի բռնակալների միակ մխիթարությունը».-գրված է թռուցիկում:

«Յուրաքանչյուր Հայ ընտանիք թող ներկայացնի իրենից առաջին Հայ դպրոց»-աՀա թռուցիկի եզրակացությունը: Ցարական ոստիկանությունը ջանքեր

[1] Մ.Գ.Ներսիսյան, նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երեւան, 1940:

չխնայեց գտնելու թռուցիկի Հեղինակներին: Անդրկովկասի քաղաքներում տարածվում էին թռուցիկի բազմաթիվ օրինակներ: ԱրտասաՀմանում Հրատարակվող «Նարոդնայա վոլյա» թերթը 1885 թվականի վերջին Համարում ընդարձակ տեղեկանք զետեղեց այդ թռուցիկի մասին: ԱրտասաՀմանի Հայությունը եւս խիստ ընդդիմադիր դիրքորոշում ընդունեց ցարական կառավարության Հակադպրոցական քաղաքականության նկատմամբ[2]:

Ինչպես Հայտնի է նարոդնիկական շարժումը մեծ Հետք է թողել Ռուսաստանի պատմության մեջ, խորն է եղել նարոդնիկության ազդեցությունը նաեւ Հայ դեմոկրատական մտավորականության վրա եւ զարմանալի չէ, որ բազմաթիվ Հայեր, մասնավորապես սովորող երիտասարդության շարքերից, սոցիալական եւ ազգային ազատագրության ակնկալությամբ ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նարոդնիկական զանազան խմբակների գործունեությունը եւ իրենց կյանքի ուղին Հաճախ ավարտել աքսորավայրերում:

Նշված մարտաշունչ թռուցիկի Հեղինակները դեռեւս 1882 թվականին Անդրկովկասում կազմակերպված մտավորական նարոդնիկական խմբակի անդամներն էին. ընդՀանրապես նարոդնիկները մեծ ազդեցություն ունեին Անդրկովկասում: Խմբակը սոցիական Հարցերի արծարծման ուղղությամբ գրավոր քարոզչության առաջին քայլերն արեց 1884 թվականին, երբ Հեկտոգրաֆով բազմացրեց Մ.Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարՀ» աշխատությունը:

Ռուսաստանի նարոդնիկներին Համակած ձուլման տրամադրությունները պատճառ դարձան Հայկական նարոդնիկական խմբակի անդամներին իրենց Հայացքն ուղղելու դեպի Հարազատ ազգի ճակատագիրը:

Հայկական դպրոցներին վերաբերող թռուցիկի Հեղինակները Հետագայում դարձան ազգային-ազատագրական շարժման գործիչներ: Նրանցից ամենանշանավորներն էին Գ.Միրզոյանը, Գ.Ղարաջյանը, Ք.Միքայելյանը, Ա.Պետրոսյանը (Մանդալ), Խ.Սալումյանը, Ա.Դաստակյանը, Մ.Զավարյանը, Գ.Տեր-Մկրտչյանը (Միաբերան), Ի.Զուրաբյանը, Գ.Աղաբաբյանը, Հ.Թադեւոսյանը, Ա.Ադամյանը եւ ուրիշներ:

Հայկական դպրոցների փակման կապակցությամբ ժողովրդական Հուզումներին բուռն արձագանքեց նաեւ Րաֆֆին՝ 1885 թվականին Հրատարակելով «Սամվել» նշանավոր վեպը, որտեղ Հին Հայաստանի պատմությանը անդրադառնալով եւ ցույց տալով քրիստոնյաների Հալածանքը պարսից իշխանությունների կողմից, ծաղկում էր ցարական կառավարության ազգաՀալած քաղաքականությունը: Հայկական դպրոցների դեմ նախապատրաստվող բռնությունների շրջանում ցարական կառավարությունը խիստ մտաՀոգված էր նաեւ Հանգուցյալ Գեւորգ IV-ի կաթողիկոսական գաՀի վրա ռուսամետ կաթողիկոս տեսնելու ցանկությամբ: Կառավարական խարդավանքից Հետո 1885 թվականի մայիսին կաթողիկոս Հաստատվեց Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական առաջնորդ Մակար արքեպիսկոպոսը: Սակայն Մակարը, արտաքուստ Հնազանդ եւ ցարապաշտ թվալով Հանդերձ, դպրոցական Հարցում ինքնուրույնություն ցուցաբերեց: Կաթողիկոսը Էջմիածնում մի շարք խորՀրդակցություններ Հրավիրեց դպրոցական գործի վերաբերյալ, ապա Հանդիպեց կառավարչապետ Գոնդուկով-Կորսակովին եւ նրանից դպրոցների վերաբացման մասին խոստումներ ստացավ: 1885 թվականի դեկտեմբերի 17-ին կառավարական մակարդակով տեղի ունեցած խորՀրդակցությանը, որին մասնակցում էին նաեւ կառավարչապետ Գոնդուկով-Կորսակովը, որոշեց փոփոխության ենթարկել Հայկական դպրոցների վերաբերյալ 1884 թվականի կանոնները, թույլատրել կաթողիկոսին վերաբացել դպրոցները: 1886թ. Հունվարի 16-ին կայսրը Հաստատեց խորՀրդակցության որոշումները:

Միաժամանակ Էջմիածնի «Արարատ» ամսագրի 1886 թվականի Հուլիսյան Համարում տպագրվեցին Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոնները, որոնց մեջ Մակարն արձանագրել էր Հայկական դպրոցների գլխին կուտակված ամպերը չէին ցրվում: Կովկասյան դպրոցների Հոգաբարձու Հայատյաց Յանովսկին տեւականորեն շարունակում էր իր դավերը, նա պաՀանջում էր Հայկական

[2] ՎաՀե Երկանյան, Պայքար Հայկական նոր դպրոցի Համար Անդրկովկասում (1870-1905), Երեւան, 1970, էջ 148-151:

դպրոցներում արգելել հայոց պատմության և աշխարհագրության դասավանդումը:Այնուհետեւ նա լուսավորության նախարարությունից թույլտվություն խնդրեց, որպեսզի պետական դպրոցներում հայ կրոնը ավանդվի ռուսաց լեզվով, իսկ տեղական լեզվով ավանդվեն միայն աղոթքները:

Մակար կաթողիկոսը այս հարցում եւս դիմադրություն ցույց տվեց: Գործին միջամտեց Պետերբուրգը: Կայսեր համաձայնությամբ ներքին գործերի խորհրդի անդամ Ֆ.Գիրսը 1888 թվականի հունիսին գործուղվեց Անդրկովկաս, եղավ Էջմիածնում: Էջմիածնում կաթողիկոսը Գիրսին դպրոցների վերաբերյալ իր պահանջները ներկայացրեց, որոնց մեծ մասի հետ վերջինս համաձայնեց, մերժեց միայն դպրոցներում հայոց պատմության եւ աշխարհագրության դասավանդման խնդիրը: Ցարական իշխանություններին անհանգստություն էր պատճառում արեւմտահայերի եւ, մասնավորապես, Կոստանդնուպոլսի հայության զգոն վերաբերմունքը Ռուսաստանի հայկական դպրոցների ճակատագրի նկատմամբ, ուստի ամեն միջոցի դիմեցին Էջմիածնից հեռացնել տալու աստվածաբանության դասախոս Թուրքահպատակ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանին: Խիստ անհանգստացած հայկական դպրոցի ապագայով՝ Մակար կաթողիկոսը 1888 թվականի սեպտեմբերի 28-ին հանդիպում ունեցավ Անդրկովկաս այցելած Ալեքսանդր 3-րդ կայսեր հետ, որը խոստացավ լուծում տալ նրան հուզող հարցերին:

1889 թվականի մարտի 5-ի խորհրդակցությունը, ցարական բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ, ըստ էության ոչինչ չարեց հայկական դպրոցների համար նոր հաստատված օրենքները փոխելու ուղղությամբ: Չնայած դժվար ժամանակներին՝ հայ ժողովրդի՝ ուսման նկատմամբ ունեցած սերը չէր նվազում, անձուկ պայմաններում անգամ դպրոցները սկսում են աստիճանաբար աշխուժանալ եւ արդեն 1889 թվականին Անդրկովկասում գործում էին 147 հայկական դպրոցներ: 1892 թվականին Մկրտիչ Խրիմյանը ժամանեց Էջմիածին, եւ ընդամենը մեկ ու կես տարի հետո՝ 1894-1895 թվականներին, Անդրկովկասում, Աստրախանի թեմում, Նոր Նախիջեւանում եւ Բեսարաբիայում գործում էին 253 դպրոց[3]:

Այդ տարիներին դպրոցական կյանքի որոշ աշխուժացումը թե կովկասյան իշխանությունների եւ թե Պետերբուրգի բարձրաստիճան պաշտոնյաների՝ ներքին գործերի նախարար Ի.Դուրնովոյի, ժողովրդական լուսավորության նախարար Ի.Դելյակովի, արտաքին գործերի նախարար Ն.Գիրսի սրտովը չէր: Նրանք ոչ բացահայտ, բայց հետեւողականորեն եւ բոլոր ուղղություններով շարունակում էին արշավանքը հայ ժողովրդի դեմ: Այդ տարիներին կովկասյան հացկատարները սադրիչ լուրեր էին տարածում Էջմիածնի մասին՝ համարելով հայոց վանքը յուրատեսակ պետություն պետության մեջ, որ Անդրկովկասի հայկական բնակավայրերում քիչ չեն կասկածելի, ըմբոստ, հեղափոխական անձնավորություններ, որ հայերը ձգտում են Կովկասը անջատել Ռուսաստանից եւ Արաքսից մինչեւ Վորոնեժ ստեղծել անկախ պետություն: Նման զրպարտիչ լուրերը զգալի չափով աղտոտում էին մթնոլորտը հայոց շուրջ: Տեսնելով հայոց դպրոցների գլխին կախված սպառնալիքը՝ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը, զգուշորեն խորհրդակցելով Թիֆլիսի «բանագետ» հայ անձնավորությունների հետ, դիմումներ էր հղում Պետերբուրգ եւ փորձում էր հիմնավորել հայոց դպրոցների վրա Էջմիածնի ունեցած իրավունքները: Միաժամանակ տեղերում ուսումնական գործի մասնագետների կողմից դպրոցների փակումը կանխարգելող զանազան առաջարկներ էին արվում:

Կաթողիկոսը, շարունակելով իր բուռն գործունեությունը, մի շարք բարձրաստիճան հոգեւորականների ուղարկում է մայրաքաղաք, սակայն կառավարության հակահայկական-հակադպրոցական որոշումը կանխել չի հաջողվում: Եվ իշխանությունները 1896թ. հունվարին. որոշում են վերջնականապես փակել հայկական դպրոցները:

Կովկասյան իշխանությունները չսահմանափակվեցին հայ ժողովրդի ուսումնական-դպրոցական կյանքը խաթարելով: 1890-ական թվականներից սկսած իշխանությունները հարձակման անցան բոլոր ուղղություններով: Նրանց խիստ

[3] Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Երեւան, 1970, էջ 172:

անբարեհույս էին թվում հայկական բարեգործական, մարդասիրական, հրատարակչական ընկերությունները եւս, կանանց բարեգործական միությունը: Հատկապես իշխանություններին անհանգստացնում էր 1881 թվականին հիմնված «Կովկասյան հայոց բարեգործական ընկերությունը»: Վերջինիս հիմնադիրն էր հայ նշանավոր հասարակական գործիչ բժշկապետ Բագրատ Նավասարդյանը: Ընկերության ղեկավար կազմում էին գեներալ Դմիտրի Տեր-Ասատրյանը, Գաբրիել Սունդուկյանը, Արսեն Թոխմախյանը, Ալեքսանդր Ստեփանյանը (Սեւ Սանդրոն), Աբրահամ Դաստակյանը եւ ուրիշներ: Ընկերությունը արագ ճյուղավորվում էր, նրա անդամները գործում էին անլեգալ: Նրանց գլխավոր նպատակը արեւմտահայության ազատագրումն էր: Կովկասյան իշխանությունները, աչալուրջ հսկողություն սահմանելով ընկերության վրա, կարողացան նեղացնել նրանց գործունեության շրջանակները: Այդ տարիներին սաստկացան հալածանքները գրահրատարակչության եւ հատկապես մամուլի նկատմամբ: Թիֆլիսում, Օդեսայում, Մոսկվայում, Պետերբուրգում աշխատող գրաքննիչները՝ ցենզորները, պատուհաս էին դարձել հայ մտավորականության գլխին: 1890 թվականին նրանք մերժեցին հրատարակել «Արաքս» հանդեսը, 1895 թվականին՝ «Ժամանակ» ամսագիրը, 1896 թվականին՝ «Խոսք» թերթը, 1897 թվականին ցենզուրային կոմիտեն մերժեց արտասահմանում հրատարակված «Հայկական հին եւ նոր ազգային երգեր» ժողովածուների մուտքը Ռուսաստան, պատճառաբանելով, որ ժողովածուներում տպագրված են նաեւ Մ.Նալբանդյանի «Ազատություն», «Իտալացի աղջկա երգը», Ռ.Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Մ.Պեշիկթաշլյանի «Եղբայր ենք մենք» բանաստեղծությունները: Այդ տարիներին շրջանառության մեջ էր դտնվում գրչի ոստիկանների մասին Ռ.Պատկանյանի գրած «անգութ ոզնեց» դաժան ցենզորին ծաղրող քառյակը:

1890-ական թվականներին՝ հետադիմության տարիներին, հայկական մամուլը իշխանությունների վրեժխնդրության թիրախն էր: Մի քանի անգամ ժամանակավորապես արգելվեցին «Տարազը», «Մշակը», «Նոր դարը», «Արձագանքը»: Իշխանությունների աչքին հատկապես անվստահելի էր համարվում վերջինս: 1893 թվականին «Արձագանքի» նյութերից մերժել են տպագրել 64 հոդված, 1897 թվականին՝ 83 հոդված, 1895 թվականին՝ 141 հոդված, 1896 թվականին՝ 145 հոդված, 1897 թվականին՝ 89 հոդված: 1898 թվականին թերթը վերջնականապես փակվեց[4]:

Գոլիցինյան կառավարության տարիներին հայերին դավանափոխելու քաղաքականությունը նոր ուժգնությամբ է դրսեւորվում: Պաշտոնական "Кавказ" օրաթերթում ավագ-երեց քահանա Ռուստորգովը անընդհատ հոդվածներ է տպագրում, որտեղ նա հայերին դավանափոխության կոչ է անում: Թիֆլիսում ստեղծվում է «Կովկասում ուղղափառության տարածման ընկերություն»: Երեւանի նահանգում ուղղափառ քահանաները այցելում էին բանտերը եւ քրեական հանցագործների պատժաչափերը իջեցնել էին խոստանում, եթե նրանք ընդունեն ուղղափառություն: Հակահայկական մոլուցքը Գ.Գոլիցինին հանգիստ չէր տալիս: Նա հայերի ունեցած հակառուսական տրամադրությունների մասին անընդհատ զեկուցագիր էր հղում Ռուսաստանի պետական ատյաններ, որոնք միշտ չէ, որ արժանանում էին ուշադրության: 1898 թվականին Նախարարների խորհրդի հատուկ նիստում Գոլիցինը ելույթ ունեցավ եւ հայ ժողովրդի «հեղափոխական տրամադրությունները» նկատի ունենալով՝ առաջարկեց ժողովրդի մի մեծ զանգված արտաքսել Սիբիր: Սակայն կառավարչապետին խիստ առարկեց զինվորական նախարար Ա.Կուրոպատկինը: Հետաքրքիր է, որ Նիկոլայ 2-րդի եւ նրա շուրջը համախմբված մոլի հետադիմականների քաղաքականությանը վերապահումով էր ընդունում նաեւ Կովկասի նախկին փոխարքա Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաեւիչը, որը մտերիմների շրջանում ասել էր. «Արդեն քսան տարի է, որ ես լսում եմ ռուսականացման փրկիչ ծրագրերի մասին եւ անհամար բարիքների, օգուտների փոխարեն ես տեսնում եմ, որ Լեհաստանում մեզ ատում են, Ֆինլանդիայում արհամարհում են, Կովկասում նախկին սիրո փոխարեն՝ համատարած թշնամություն, եւ նույնիսկ Անդիժանում, ուր գեռեւս չեն չորացել ռուսական արյան հե-

[4] С.Г.Арешян, Армянская печать и царская цензура, Ереван, 1957, с.236-261.

ղեղները, նախապատրաստվում են ապստամբության»:[5] *1899 թվականին Գոլիցինը կառավարական ատյաններին առաջարկեց Սև ծովի ափերին, Սուխումի շրջակայքում ապրող գյուղատնտեսական խաղաղ աշխատանքներով զբաղված Համշենահայերին, որոնք ժամանակին գաղթել էին Տրապիզոնի շրջակայքից, արտաքսել Սիբիր: Համշենահայերի, որոնց թիվը հասնում էր մոտ 30 հազարի, գլխին կանգնած վտանգը խիստ անհանգստացրեց հայ մտավորականությանը: Թիֆլիսում կայացած խորհրդակցություններից հետո որոշվեց կազմակերպել Համշենահայության ներկայացուցիչները Մինաս Տեր-Մինասյանի (ապագայի Ռուբենի) ընկերակցությամբ մեկնեցին Ատրպատական՝ հարմար բնակատեղի ընտրելու համար: Սակայն իրանական իշխանությունները թուրքական կառավարության դրդումով, մերժեցին հայերին Ատրպատականում տարածք տրամադրել:*

Համշենահայության տեղավորման հարցը բացասական արձագանք գտավ նաև աբխազ կալվածատերերի մոտ, որոնց հողերը մշակում էին ծխախոտագործ հայերը: Աբխազ կալվածատերերը և նրանց ղեկավար գեներալ Շերվաշիձեն կարողացան կանխել Համշենահայերի տեղահանության հարցը: Հայերի տեղահանությանը դեմ էին արտահայտվել նաև ռուսաստանյան ակադեմիայի գիտական շրջանակները: Կառավարչապետ Գոլիցինի հակահայկական սադրանքները սուր ծայրով ուղղված էին նաև արևմտահայության դեմ: Այնուամենայնիվ կառավարության ոչ բոլոր անդամներն էին ընդհանրապես համամիտ նրա անհեռատես քաղաքականության հետ: Գոլիցինին իրենց անհամաձայնությունն էին հայտնում ֆինանսների, զինվորական, արտաքին գործոց նախարարներ Մ.Վիտեն, Մ.Կուրոպատկինը, Մ.Մուրավյովը: Գոլիցինն անուշադրության էր մատնում նրանց կարծիքները՝ իր գործունեության համար ունենալով Սինոդի դատախազ Գ.Պոբեդանոսցևի, ներքին գործերի նախարար Պ.Գրեմիկինի և հատկապես Նիկոլայ 2-րդի համաձայնությունը: 1901 թվականի նոյեմբերին Գոլիցինը կառավարության համաձայնությամբ շրջաբերական հրապարակեց Անդրկովկասում գտնվող գաղթականների վերաբերյալ, որոնց թիվը հասնում էր հիսուն հազարի: Դրանք 1894-1896 թվականների կոտորածներից հետո մազապուրծ Անդրկովկաս հասած արևմտահայեր էին, որոնք իրենց ըմբոստության համար, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ինքնապաշտպանական գոյամարտ, պաշտոնական Ռուսաստանի կողմից դիտվում էին որպես խռովարարներ: Վերոհիշյալ շրջաբերականը ազդարարում էր, որ 1893 թվականից Անդրկովկաս անցած փախստականները կարող են կամովին հեռանալ կայսրության սահմաններից, իսկ նրանք, որոնք չեն հեռանա, պարտավոր են ռուսահպատակություն ընդունել, անդամագրվել գյուղական համայնքներին կամ տվյալ քաղաքի քաղքենի դասին: Փախստականները քաղաքից դուրս կարող են անշարժ գույք ձեռք բերել միայն քսան տարի հետո: Նոր հպատակները անպայման ենթակա են զինվորագրության: Սույն կանոնները տարածվում էին մինչև 1901 թվականի փետրվար Անդրկովկաս անցած փախստականների վրա, մյուսները արտաքսվելու էին երկրից[6]*: Փախստականների մեծ մասը ռուսահպատակություն չընդունեցին. տուն-տեղ, հողաբաժին ունենալու հեռավոր հեռանկարը, գումարած զինվորագրությունը նրանց չէր հրապուրում: Նրանց մի մասը վերադարձավ Արևմտյան Հայաստան, մյուս մասը գնաց Պարսկաստան, ուր հայերի նկատմամբ բավական լոյալ վերաբերմունք կար, և այնտեղ ձեռք բերելով քաղաքացիական իրավունք՝ վերադառնում էին Անդրկովկաս՝ լրացնելու քաղաքային բանվորների և մշակների քանակը: Իշխանությունները այս պարսկահայերի վրա կրկնակի հսկողություն էին սահմանել և «անբարեհուսության» մեջ մեղադրվելու դեպքում աքսորում էին Ռուսաստանի հեռավոր նահանգները՝ Արխանգելսկ, Վոլոգդա, Վյատկա, Օրենբուրգ և այլ վայրեր: Գոլիցինի ձեռնարկած հակահայկական գործողությունները դեռևս իրենց գագաթնակետին չէին հասել: Սպասվում էր բռնությունների նոր ալիք:*

[5] Гр.Чалхушян. Армянский вопрос и армянские програмы в России. Ростов на Дону, 1905, стр. 90.
[6] Դավիթ Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, Վենետիկ, 1926, էջ 12, նաև ՀԱԱ, ֆ.102, ց.2, գ.105, թ.55-57:

1895 թվականին լույս տեսավ Գրիգոր Ջանշյանի կողմից հրատարակված «Հայերի դրությունը Թուրքիայում մինչև տերությունների միջամտությունը» շատ արժեքավոր հոդվածների ժողովածուն: Ժողովածուի հեղինակներից պրոֆեսոր Մ.Գերվեն մեր ժողովրդի դառը ճակատագիրը նկատի ունենալով հայերին համարել է «պատմության խորթ զավակներ»: Այս բնորոշումը հայ ժողովրդի պատմության ճակատագրական պահերին մտավորականության կողմից հաճախ էր շրջանառության մեջ դրվում:

Բարեբախտաբար հետագա տարիներին մեզ հասած ճակատագրի ավելի ծանր պահերին հայ ժողովուրդը ցույց տվեց իր անսասան կամքը և կենսահաստատ բնավորությունը:

Դերենիկ Մուրադյան
պատմական գիտությունների
թեկնածու

ВОСТОЧНАЯ АРМЕНИЯ В 1880-1890 ГОДЫ. УСИЛЕНИЕ КОЛОНИАЛЬНОЙ ПОЛИТИКИ ЦАРИЗМА.

РЕЗЮМЕ

После убийства народниками первого марта 1881 года императора Александра II император Александр III не только пресек первые шаги либерально-реформаторской деятельности Александра II и его советников, но и, одновременно, усилил национально-колониальную политику в отношении нерусских народов. Естественно, армянский народ не был исключением. Наоборот, самобытность и в какой-то мере самостоятельность, основой кото-рого была армянская апостольская церковь, благотворительные общества и кровная связь с западноармянскими братьями вызывали отрицательное отношение в дворцовых кругах Петербурга.Царское правительство начало с того, что ограничило некоторые права армянской церкви, затем нанесло удар по учебным заведениям.В январе 1896 года был издан указ об окончательном закрытии армянских школ.Несмотря на репрессии, армянский народ держался с достоинством готовясь к новым испытаниям судьбы.

Дереник Мурадян
кандидат исторических наук

ԴՐՎԱԳՆԵՐ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՎ ԶԻՆԱՏԱՐ ԽՄԲԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1898Թ.)

*Հայ ժողովրդի XIX դ. վերջի և XX դ. սկզբների ազգային-ազատագրական պայքարում առանձնահատուկ ու կարևորագույն նշանակություն ունեին մարտական և զինատար խմբերի գործունեությունը: Եթե անաչառորեն գնահատենք, ապա աներկբայորեն պետի ընդգծել, որ Երկիր (Արևմտահայաստան -***Հ.Գ.***) մեկնող մարտական և զինատար խմբերը գլխավորապես համալրել էին ազատագրական պայքարին զինվորագրվածներից ամենանվիրյալներն ու խիզախները, որոնց համար ազատության համար մղվող պայքարը եղել է կյանքի իմաստն ու դերխնդիրը: Հսկայական ճանապարհ կտրելու ու բազում անասելի դժվարություններ հաղթահարելու պատրաստակամ այդ մարտախմբերին զինվորագրվածները քաջ գիտակցել են, որ իրենք մեկնում են մարտադաշտ, դեպի կենաց-մահու կռիվ, ուր որևէ մեկի ողջ մնալը, չզոհվելը երաշխավորված չէր:*

Ի՞նչով էր պայմանավորված մարտական և զինատար խմբերի կազմակերպման անհրաժեշտությունը և ինչպիսի՞ խնդիրներ պետք է լուծեին նրանք՝ մեկնելով Արևմտահայաստանի նախատեսված շրջանները:

Երկիր մեկնող խմբերի ճնշող մեծամասնությունը, սկսած Սարգիս Կուկունյանի գլխավորած մարտախմբից, հիմնականում կազմավորվել է ՀՅ. Դաշնակցության նախաձեռնությամբ և գործուն մասնակցությամբ: Բնականաբար, մարտական և զինատար խմբեր կազմավորելու ու նրանց Երկիր առաքելու

իրողությունը նախ և առաջ պայմանավորված է հենց այդ կուսակցության որդեգրած ռազմավարությամբ և մարտավարությամբ, որոնք ի սկզբանե իրենց ձևակերպումներն էին ստացել 1890թ.՝ ՀՅԴ 1-ին ծրագրում ու Հռչակած մանիֆեստում, իսկ ապա հաստատվել 1892թ. կայացած ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովում:

Իր գործունեության, պայքարի հիմնական նպատակը հռչակելով «...Թիւրքաց Հայաստանի մէջ ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատութիւնը»,[1] Հ.Յ. Դաշնակցությունն անհրաժեշտաբար պիտի մշակեր իր ռազմավարությունը կենսագործելու ձևերն ու միջոցները, պայքարի մարտավարությունը:

Համաձայն 1-ին Ընդհանուր ժողովի ընդունած ծրագրի (ռազմավարության)՝ ՀՅԴ-ն, որպես իր նպատակի կենսագործման գործունեության եղանակ (մարտավարություն), մատնանշում է ոչ թե համընդհանուր ապստամբությունը, այլ՝ « ... ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար կը կազմակերպէ յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան դէմ անընդհատ և զօրեղ կռուի հետ՝ կռիւ կը մղեն նաև այն ընդհանուր պայմաններուն դէմ, որոնցմ է ճնշուած են միևնոյն ժամանակ թէ հայ և թէ օտար տարրերը...»[2]:

Հարց է ծագում, եթե Արևմտահայաստանի զանազան շրջաններում հաստատված գործիչներն ու ՀՅԴ-ի կողմից այստեղ կազմակերպված ապակենտրոն կառույցներն ու մարտական փոքրաքանակ ուժերն ի զորու չէին առաջ բերել համընդհանուր միասնական շարժում, ապա ինչպես կարող էին մասնակի գործողություններով, ցուցական ելույթներով ու ահաբեկչություններով իրականացնել ամենագլխավորը՝ թոթափել Օսմանյան կայսրության դարավոր լուծն ու ազատագրել Արևմտահայաստանը:

Ինչո՞ւ էր հայ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդելու առաքելությունը ստանձնած ՀՅ Դաշնակցությունը որդեգրել պայքարի համանման մարտավարություն:

Միքայել Վարանդյանը «ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն» աշխատությունում անդրադառնալով այդ հարցի մեկնաբանմանը, ցնորք համարելով ընդհանուր ապստամբությունը, պնդում է, որ երբեք որևէ հզոր քաղաքական կազմակերպություն չի կարողացել կենսագործել համընդհանուր ապստամբություն: Ավելին, նա վկայակոչում է Ֆրանսիայի նշանավոր հեղափոխական գործիչներ Դանտոնին, Միրաբոյին, անգամ Գարիբալդիին և Մաձինին, որոնք չնայած իրենց գործունեության միջավայրի՝ Իտալիայի աշխարհագրական դիրքի նպաստավորությանը, նույնպես չեն կարողացել իրականացնել համընդհանուր ապստամբություն[3]:

Արտահայտելով կուսակցության մեջ այս հարցի վերաբերյալ առանձին գործիչների տեսակետները, Մ.Վարանդյանը նշում է. « ...Եւս, առաւել ցնորք մըն էր ընդհանուր ապստամբութիւնը մեր, հայկական պայմաններուն մէջ ... Ուստի ոմանք կը կքարոզեին մասնակի խլրտումներու, անհատական և խմբական ընդւզումներու, ահաբեկումի, տերրորի անհրաժեշտութիւնը...

...Անհատական տերրոր թուրք կառավարական պաշտօնեաններու և հայութեան ամէն կարգի թշնամիներուն դէմ, քանի որ մեր տկար ու ցրւած ժողովրդին համար ընդհանուր ապստամբութիւնը անկարելիութեան չափ դժվար է...»[4]:

Պատմական տվյալ ժամանակահատվածում մասնակի մարտական ձեռնարկումներով ու ահաբեկչական գործողություններով գործելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը, որպես պայքարի ընդունելի մարտավարություն, իր «Ամբոխային Տրամաբանութեան» աշխատությունում հիմնավորում է Քրիստափոր Միքայելյանը, որի, որպես ՀՅԴ հիմնադիրի ու առաջնորդի՝ ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը մշակելու և ընդունելու գործում տեսակետները, անկասկած, կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ կուսակցության համար:

---

[1] ՀՅԴ ԿԱ, թծ.5, դ.1, էջ 1:
[2] «Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Հ. Բ., էջ 4-5:

[3] Մ. Վարանդյան, «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն», 1992, էջ 96:
[4] Նույն տեղում:

Քր.Միքայելյանը հերքում է հեղափոխական գործիչների քննադատական այն տեսակետը, ըստ որի՝ իրենք չեն կարևորում ընդհանուր ապստամբությունը և գործում են բացառապես մասնակի շարժումներով: Մերժելով այս հարցերի կապակցությամբ իրենց առաջադրված մեղադրանքը, Քր.Միքայելյանը նշում է « ...Ձեզ ո՞վ ասաց, որ մենք բացառապէս մասնակի շարժումներ ենք առաջացնելու:

Ընդհանուր ապստամբութեան էք դիմում... Բայց ի՞նչ միջոցներով էք ուզում դրան հասնել: Լուռ ու մո՞ւնջ մնալով:

- Լուռ ու մունջ մնալով մեռնել կարելի է ներկա պարագայում և ոչ թէ ապստամբութեան պատրաստուել»[5]:

Ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը որդեգրելիս նա, որպես ելակետ, արժևորում է ժամանակաշրջանի գործոնը: Նրա գնահատմամբ, հայությունն այդ ժամանակաշրջանում դեռևս պատրաստ չէր և շատ-շատ հեռու էր ընդհանուր ապստամբություն սկսելու քայլից: Քր.Միքայելյանը վկայակոչում է հեղափոխական առումով ավելի կազմակերպված, հասուն ազգերի՝ կուբացիներին ու կրետացիներին, որոնք նույնպես իրենց ազատագրական պայքարը սկսել էին մասնակի շարժումներով, թեև նրանց համար ավելի դյուրին էր զենք ձեռք բերելն ու շարժում սկսելը:

Ընդհանուր ապստամբություն առաջ բերելու համար, ըստ Քր.Միքայելյանի, անհրաժեշտ էր նախապատրաստել ժողովրդին, նրա մեջ ներարկել ազատության ու պայքարի ոգին, վարժեցնել զենքին: «Հենց դրա համար անհրաժեշտ էն մասնակի շարժումները, որոնք գործնականապես պատրաստում են մեր ժողովրդին...»[6]:

Ընդհանուր ժողովում ամրագրված՝ «Կառավարութեան դէմ անընդհատ և զօրեղ կռիւ...» մղելու նպատակով հեղափոխական խմբերի կազմակերպումը, ՀՅ Դաշնակցությունը, իր գործունեության առաջին իսկ շրջանից և հատկապես 1895թ. սկսած, երբ ստանձնել էր ազատագրական պայքարի առաջնորդի ու կազմակերպչի դերը, իրականացնում էր հիմնականում հետևյալ ուղղվածությամբ.

1. Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության զանազան շրջաններում կազմակերպչական ապակենտրոն կառույցների հիմնում: Իսկ ՀՅԴ կառույցները, որպես կանոն, միաժամանակ օժտված էին մարտական կարողությամբ, այսինքն նրանք պիտի լինեին նաև ռազմականացված կառույցներ:

2. Քանի որ Արևմտահայաստանում կազմակերպած մարտական ուժերն իրենց սահմանափակ կարողությունների պատճառով ի զորու չէին սեփական ուժերով իրականացնել առավել արդյունավետ ու նշանակալի մարտական գործողություններ, ապա ՀՅԴ մեծ կարևորություն էր տալիս մարտական և զինատար խմբերին, որոնք պիտի մեկնեին Երկիր, համալրեին տարբեր շրջաններում գործող ՀՅԴ կառույցների մարտաշարքերը և կենսագործեին կուսակցության որդեգրած մարտավարության հետևյալ խնդիրները.

ա) Զենքի և զինամթերքի տեղափոխությունն Արևմտահայաստանի նախանշված շրջանները: Այս խնդիրը առավելապես վերաբերում է զինատար խմբերին, նրանցում ընդգրկված մարտիկներին, որոնց անվանում էին նաև չալակավորներ:

Խանասորի Վարդանի (Վարդան Մեհրաբյան) բնորոշմամբ «Խմբերը կոչւում էին «զինակիր», այսինքն՝ զէնք փոխադրող: Նրանք, սովորաբար, աւելորդ հրացաններ էին առնում իրենց հետ ուժերին նայած, երկու հոգուն՝ 3 հրացան, իսկ աւելի ուժեղները, մի հոգին 2 հրացան...

...Հայդուկի բեռը միայն հրացանները չէին կազմում, յուրաքանչիւր հայդուկ ունի 150-200 փամփուշտ, ատրճանակ, սուր, հացի տոպրակ մէջքի վրայ...»[7]:

բ) Արևմտահայաստանի զանազան շրջաններում մարտական խմբերի կազմակերպում ու մարզում:

---

[5] «Դրօշակ», 1897, թիւ 14, էջ 114:
[6] Նույնը, էջ 112:

[7] «Պատմագրութիւն Հ.Յ. Դաշնակցութեան», 1990, էջ 217:

գ) Հայ բնակչության կյանքի ու ունեցվածքի պաշտպանությունը թուրքերի, քրդերի և բոլոր տեսակի մահմեդական հրոսակախմբերի, հարստահարիչների ոտնձգություններից:

Մարտական և զինատար խմբերի կազմավորման համար կուսակցությունը պետք է լուծեր մի շարք խնդիրներ, որոնց մեջ առաջնահերթ էին.

1. Խմբերի համալրումը: Որպես կանոն, խմբերը հիմնականում համալրում էին ազգային-ազատագրական պայքարին նվիրված այն անհատները, որոնք քաջ գիտակցում էին իրենց գավանած գաղափարի և գործի կարևորությունն ու պատասխանատվությունը: Անհերքելիորեն կարելի է պնդել, որ հայ ազգային ազատագրական պայքարի առավել նշանավոր գործիչների մեծ մասը իրենց մարտական մկրտությունը ստացել է հենց մարտական ու զինատար խմբերի կազմում:

2. Խմբերի զինումը և հանդերձավորումը: Այդ խնդրի լուծումը հիմնականում կապված էր ֆինանսական անհրաժեշտ միջոցների ձեռքբերման, զենք ու զինամթերքի, հանդերձանքի գնման և այն համապատասխան վայրերը տեղափոխելու դժվարին աշխատանքների իրականացման հետ:

3. Երկրում գործող հեղափոխական կազմակերպություններին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու և մարտական ու զինատար խմբերը համապատասխան վայրերը ուղարկելու համար, Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում պետք է հիմնվեին հուսալի հենակետեր (խարիսխներ), որտեղից հարկավոր պահին հնարավոր լիներ կազմակերպել անհրաժեշտ ուժերի առաքումը: Այդ նպատակով ՀՅԴ-ն իր կառույցները ստեղծում էր նաև Օսմանյան կայսրության սահմանամերձ վայրերում, որոնցից առավել կարևոր էին Կարսի և Սալմաստի շրջանները:

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, Կարսը և նրա մերձակա շրջաններն առանձնահատուկ նշանակություն ունեին ազատագրական պայքարում: Այդ շրջանն ոչ միայն Երկիր մեկնող մարտական ու զինատար խմբերի գլխավոր խարիսխներից էր, այլև այն կարևոր գարբնոցը, որտեղ իրենց առաջին և անհրաժեշտ փորձությունն էին ձեռքբերում հեղափոխական գործիչները: Ռուբեն Տեր-Մինասյանի դիպուկ բնութագրմամբ «Եւ իրօք, Կարսի նահանգը վայր մըն էր, որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուել եւ դուրս գալ թրծուած եւ յղկուած, կամ չդիմանալով այդ տեղի ծայրաստիճան գաղափարական եւ սպարտական կեանքին՝ լքել յեղափոխական ասպարէզը»[8]:

Սկսած առաջին՝ Հունոյի (Հարություն Աղա Տեր-Մարտիրոսյան) մարտախմբից, Կարսի նահանգում 1890-1899թթ., մոտավոր տվյալներով, կազմավորվել և Երկիր են մեկնել ավելի քան 20 մարտական ու զինատար խմբեր, որոնց մի մասին հաջողվել էր կռիվներ մղելով և բազում արգելապատնեշներ հաղթահարելով հասնել Տարոնի, Սասունի, Էգրումի և Բասենի շրջանները[9]:

Զինատար խմբերի պայքարի նշանավորէջերից է Աղբյուր Սերոբի հորեղբորդու՝ Ճարտարի (Հակոբ Վարդանյան) գլխավորած ֆիդայիների՝ զենք ու զինամթերքով բեռնված խմբի բարեհաջող անցումը Կարսից Ախլաթ:

Անդրադառնալով իր արգյունավետությամբ գրեթե հավասարը չունեցող Ճարտարի զինատար խմբի այդ գործողության արժևորմանը, Աղբյուր Սերոբի մարտախմբի անդամ Բիթլիսցի Պողոսը գրում է. «1897 տարուայ աշնանը խմբապէտ Յակոբը (նկատի ունի Ճարտարին –Հ.Գ.) 77 եօթանասուն եւ յօթը հոգով Նեմրութ լեռան գլուխ եկաւ Սերոբ փաշայի քովը եւ բերաւ նաեւ 77 եօթանասունյօթը հրացան (հրացաններն էին մօսին, պերտանկի եւ մարւլի) եւ յանձնէց Ս. Փաշային եւ քիչ ժամանակ յետոյ խմբապէտ Յակօն հետ առաւ 25 քսանհինգ հոգի եւ դարձաւ Ռուսաստան»[10]:

Մինչև 1898թ., մարտական ու զինատար խմբերի կազմակերպման և Երկիր առաքման խնդիրը, ինչպես նաև ֆիդայական-պարտիզանական կռիվների մղումը, ահաբեկչական գործողությունների իրականացումը գեռևս մնում էր Հ.Յ. Դաշնակցության մարտավարության ամենագործուն շարժիչ ուժը:

---

[8] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 1:
[9] Տե՛ս, նույնը, էջ 131-132:
[10] ՀՅԴ ԿԱ, թծ. 685, գ.1, էջ 7:

1898թ. տեղի է ունենում ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովը, ուր, ի թիվս մի շարք հարցերի, քննարկվում են նաև ընդհանուր ապստամբության ու հայդուկային-պարտիզանական պայքարին վերաբերվող հարցերն ու ընդունվում է հետևյալ որոշումը. «Ժողովը, երկար վիճաբանութիւններէ վերջ, բատվար մեծամասնութեամբ (2 ձայն դէմ) սկզբունքնով ընդունեց ուժերու կեդրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով ֆէտայական ասպատակային գործունէութիւնը՝ ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»[11]:

Համաձայն այս որոշման, ՀՅԴ փաստորեն հրաժարվում է իր՝ ֆիդայականպարտիզանական կռիվներ մղելու մարտավարություններից և ընդհանուր ապստամբություն կազմակերպելու համար, պատրաստվում է ուժերը կենտրոնացնել Երկրի առավել կարևորագույն վայրերում՝ Բարձրավանդակ և Վասպուրական:

Գործունեության նոր եղանակի որդեգրումը բնականաբար թելադրում էր, որպեսզի կուսակցությունն ավելի մեծ ծավալի աշխատանքներ իրականացներ «կեդրոնացման» վայրի մարտական ուժերն ըստ ամենայնի կազմակերպելու և այն առավելագույնս զինելու գործում:

Իսկ Ընդհանուր ժողովի որոշումների կենսագործումը պարտագիր էր ՀՅԴ բոլոր ապակենտրոն կառույցների, ինչպես նաև «Դուրան-Բարձրավանդակ» կենտրոնական կոմիտեի համար:

«Սերոբ (նա Ընդհանուր ժողովի կողմից ընտրվել էր Բարձրավանդակի Պատասխանատու Կենտր. կոմիտեի անդամ –Հ.Գ.), - գրում է Կ. Սասունին, - տեղեակ էր, որ Հ.Յ. Դաշնակցութեան Բ Ընդհանուր ժողովը տեղի կունենայ Կովկասի մէջ: Տեղեակ էր նաեւ այն տրամադրութեան, որով Սասունը կրնորէին որպես միջնաբերդ հայ յեղափոխական շարժման»[12]:

Քանի որ Ճարտարի Գլխավորած զինատար խմբի անցումը Կարսից Ախլաթ պսակվել էր աննախադեպ հաջողությամբ, իսկ զենք ու զինամթերքի ձեռքբերումը, մարտական խմբերի կազմակերպումը եղել և մնում էր Հ.Յ. Դաշնակցության գործունեության կարևորագույն բաղադրամասերից մեկը, ուստի «Դուրան-Բարձրավանդակ» կենտրոնական կոմիտեի և անձամբ Աղբյուր Սերոբի հանձնարարությամբ, Ճարտարը, գարձյալ նույն՝ զենք ու զինամթերք տեղափոխելու առաքելությամբ, 25 մարտիկներով մեկնում է Կովկաս.[13]

Ճարտարը բարեհաջող հասնում է Կարս, ՀՅԴ տեղի կենտրոնական կոմիտեից ստանում որոշակի քանակության զենք ու զինամթերք և միաժամանակ, նոր մարտիկներով համալրելով իր զինատար խումբը, պատրաստվում է վերադառնալ Ախլաթ:

Համաձայն Կ. Սասունու և Ռուբենի տվյալների, Ճարտարի խումբը բաղկացած է եղել 66, իսկ Ա. Նորյանի, որի վկայությունն, իր իսկ հավաստման, գրի է առել ականատեսի պատմածի հիման վրա, 78 մարտիկներից.[14]

Զինատար խմբի կազմում են եղել Բիթլիսցի Մուշեղը, Առաքելը, Բալաբեխ Կարապետը, Երկար Նազոն, Զուլումաթը, Աւյուծ Ավագը և այլ փորձառու ռազմիկներ, որոնք մինչ այդ մասնակցել էին Աղբյուր Սերոբի գլխավորած Ախլաթի ինքնապաշտպանական և գրեթե բոլոր ֆիդայական-պարտիզանական մարտերին:

1898թ. սեպտեմբերի սկզբներին զինատար խումբը Ճարտարի գլխավորությամբ Կարսից տեղափոխվում է Կաղզվան, ապա անցնում ռուս-թուրքական սահմանը և փորձում Ալաշկերտ-Մանազկերտ-Բուլանուխ գծով աննկատ ուղևորվել Ախլաթ: Սակայն, այս անգամ նույն հաջողությունը, ինչպիսին առաջին անցման ժամանակ էր, չի ուղեկցում հայ մարտիկներին:

Մինչև Ճարտարի 2-րդ զինատար խմբի մեկնումը, Կարսից դեպի Երկիր էին ուղևորվել մոտավորապես 16 մարտական ու զինատար խմբեր.[15] Որևէ

---

[11] «.Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար», Հ. Բ., էջ 58-59:
[12] Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 600:

[13] Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, թծ. 681, գ.1, էջ 7:
[14] Տե՛ս, Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 600, Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 1, էջ 131-134:

կասկած լինել չէր կարող, որ հայ մարտական ուժերի երթուղինները կարող էին դուրս մնալ թուրք իշխանութիւնների տեսադաշտից: Ամենուրեք գործող գործակալների ու մատնիչների աջակցութեամբ, ակնդետ հետեւելով հայ հեղափոխական գործիչների գործողութիւններին, թուրք իշխանութիւնները մեծ ջանքեր էին գործադրում կանոնավոր զորամասերի եւ քրդական աշիրեթների ուժերով ջախջախել բոլոր այն խմբերը, որոնք փորձեր էին ձեռնարկում անցնել ռուս-թուրքական սահմանն ու ուղեւորվել Արեւմտահայաստանի որեւէ շրջանը:

Ճարտարի 1-ին խմբի բարեհաջող անցումին ամիսներ էին հաջորդել: Իսկ թուրք իշխանութիւններն այդ ընթացքում ավելի ու ավելի էին ուժեղացնում սահմանամերձ շրջանների, հատկապես Կարսից դեպի Բագրեւանդ (Ալաշկերտ) - Տարոնը ձգվող ուղիների հսկողութիւնը: Կարսի նահանգից մինչեւ Էրզրում, Տարոն եւ Սասուն ընկած տարածքում տեղաբաշխվել էին բազմաթիվ համիդիե գնդեր, որոնց գլխավոր պարտականութիւններից մեկը՝ հայ մարտական ուժերին ու հեղափոխական գործիչներին հետեւելն ու ոչնչացնելն էր: Իհարկե, Հ.Յ. Դաշնակցութեան ղեկավար մարմիններն, իրենց դավանած ռազմավարութիւնը կենսագործելու նպատակով համապատասխան մարտավարութիւն մշակելիս եւ որոշակի քայլեր ձեռնարկելիս, տեղյակ էին թուրք իշխանութիւնների ձեռնարկումների եւ իրենց գործունեութեանը խոչընդոտող բոլոր կարգի դժվարութիւնների մասին: Բայց Արեւմտահայութեան ազատագրական պայքարը կազմակերպելու համար անհրաժեշտ էին կարող եւ նվիրյալ գործիչներ, մարտական ուժեր, զենք ու զինամթերք:

Ճանապարհելով հերթական զինատար խումբը, ճանապարհողները չէին կարող կասկածել, որ այս անգամ Ճարտարին եւ նրա գլխավորած մարտիկներին սպասվում էին ավելի դաժան փորձութիւններ:

Եվ իրոք, Ճարտարի խումբն այս անգամ ենթարկվում է դաժան փորձութիւնների: Զինատար խմբի մղած հերոսամարտերը, որոնք պատմութեանը հայտնի են «Խաթավին եւ Ավերակ Ջրաղացի կռիվներ» անվամբ, ազատագրական պայքարի այն նշանավոր դրվագներից են, որոնց մասին հյուսած երգերը ժողովուրդը երգում է մինչ օրս:

Զինարար խմբի անվտանգութիւնն ու աննկատ անցումն առավելագույնս ապահովելու նպատակով, խումբը բաժանվում է երկու մասի: Առաջին՝ փոքրաքանակ մասը Երկար Նադոյի գլխավորութեամբ, որպես առաջապահ, շարժվում է առջեւից: Այդ խումբը հակառակորդին անակնկալորեն հանդիպելիս, առաջինը պիտի դիմագրավեր հարձակումը եւ այդ մասին անհապաղ տեղեկացներ իր հետեւից շարժվող հիմնական խմբին:

Առաջապահ խումբը մտնում է Ալաշկերտի սարահարթը եւ հասնելով մի քրդական գյուղի, հանգստանալու նպատակով, որոշում է փոքր-ինչ դադար առնել: «Այդ բանի համար, - նշում է «Դրօշակ»-ի հոդվածագիրը, - քիւրդին կը վճարեն որոշ գումար մը, որպէսզի զիրենք պատսպարէ մինչեւ երեկոյ: Քիւրդը կը խաբէ տղաներին եւ կը լեցնէ տունը ու գումարն էլ առնելուց յետոյ, կը վազէ լուր կը տայ դիւղապէտին».[16]

Գյուղապետն անմիջապես հավաքում է գյուղի բնակիչներին եւ նրանց առաջնորդում պաշտպանելու այն տունը, որտեղ իր զինակիցներով հանգրվանում էր Նադոն: Հայ մարտիկները հայտնվում են անելանելի իրավիճակում: Քրդերը չորս կողմից պաշարելով տունը՝ կրակ են տեղում հայ մարտիկների վրա: Ելքը միակն էր՝ հարկավոր էր դուրս գալ տնից եւ սրընթաց գրոհով ճեղքել պաշարման շղթան ու արագորեն հեռանալ: Տնից դուրս գալու փորձ կատարելիս ֆիդայիներից մի քանիսը զոհվում են, իսկ Նադոն երեք զինակիցներով կարողանում է դուրս գալ տնից եւ դրսում շարունակել մարտը.[17]

Բարեբախտաբար, հիմնական խումբը, որը նույնպես անցնում էր այդ գյուղի մերձակայքով, լսում է հրացանների ձայնը եւ ճիշտ կողմնորոշվելով՝ շտապում օգնութեան ու պաշարում գյուղը:

[15] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 1, էջ 131-134:

[16] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:

[17] Տե՛ս «Պիթլիսցի Մուշեղ», Կ. Պոլիս, 1919, էջ 24:

«Մի քանի, - նշում է «Դրօշակը», - ժամւայ մէջ բնակչութիւնը պատուհասելէ յեյոյ, կենդանի մնացած մեր զինւորներին կազատի:

...Ռազմամթերքը, որ մինչեւ հոս շալակով կը բերէին, բեռցնելով քիւրդ գիւղի գրաստների վրա, մայրամուտին կը շարունակեն իրենց ճանապարհը».[18]

Արագորեն հաղթահարելով առաջին արգելքը, խումբը ձգտում է որքան կարելի է արագորեն անցնել Ալաշկերտի տարածքը եւ խուսափելով կռիվներ բռնվելուց՝ Մանազկերտ-Բուլանուխ գծով ուղեւորվել Ախլաթ:

«Սեպտեմբերի 3-ին, - գրում է Ա. Նորյանը, - խումբն հանգիստ է առնում Սիպկնցոց սահմանի մէջ՝ Քեօշկայ լերան արեւելեան (Քեօշք՝ սիպկնցոց քիւրդ բէկերի գիւղն էր, որ իր մէջ խոշոր ապստանք ունի, սրի համար եւ գիւղն ու շրջակայքը Քէօշք են կոչվում)».[19]

Ապարանքի պահպան քրդերը հեռվից նկատում են զինված խմբին եւ հասկանալով նրանց՝ ոչ յուրային լինելը, եւ համաձայն իրենց սովորութեան, իսկույն վայնասուն (հավար) են բարձրացնում եւ շատ չանցած ավելի քան 2000-2500 համիդիեի զինվորներ, հեծյալ ու հետեւակ զինյալ քրդեր արագորեն հայտնվում են դեպքի վայրում:

Թեպետ հայ մարտիկներն ամեն կերպ ձգտում էին խուսափել ավելորդ կռիվների բռնվելուց, բայց այս պարագայում այլընտրանք այլեւս չկար:

Ֆիդայիները, դույզն ինչ չերկնչելով թշնամու բազմաքանակութիւնից, սառնասրտորեն ընդունում են հակառակորդի մարդահրավերը եւ պատրաստվում մարտի:

Վստահ իրենց թվական գերակշռութեանը, քրդերը համազարկեր տեղալով, նետվում են գրոհի: Հայ մարտիկներն այդ ընթացքում հասցնում են հարմար դիրքեր գրավել մերձակա սարի բարձունքներում եւ իրենց մոսինների հեռահար ու դիպուկ հարվածներով կարողանում են կասեցնել քուրդ զինյալների անընդմեջ շարունակվող հարձակումները:

Քանի որ Ալաշկերտի սարհարթում կային բազմաթիվ հայկական գյուղեր, ուստի ֆիդայիները, նկատի ունենալով հայ բնակչութեանը սպառնացող վտանգը, կռվի սկզբում այնքան էլ տրամադրված չեն եղել դիպուկ հարվածներով դիմագրավել հարձակվողներին եւ խորացնել ընդհարումը: Սակայն, իրավիճակը փոխվում է, երբ քրդերն ավելի ու ավելի սաստկացնելով կրակն ու գրոհները, սպանում են Ախլաթցի Գեւորգին:

«Մուշեղը երբ կը տեսնէ Գէորգի անշնչացած դիակը, կը հրամայէ, - «Տղե՛ք, լաւ նշան բռնեցէք դէպի թշնամին: Մեր ֆիդայիները մէկի փոխարէն 20-ի չափ դիակներ կը փռեն»».[20]

Կռիվը, չթուլացող ուժգնութեամբ, շարունակվում է մինչեւ կեսօր: Քրդերը, փոքր-ինչ դադար առնելուց եւ իրենց մարտաշարքերը նոր հրոսակախմբերով համալրելուց հետո, առավել սաստկութեամբ կրակ են բացում հայ մարտիկների դիրքերին եւ վերսկսում գրոհները. «Սակայն, ապարդյուն են անցնում քրդերի ձեռնարկած բոլոր հարձակումները, ֆիդայիներն անխորտակ պաշտպանութեամբ պահում են իրենց դիրքերը»:

«Քրդերը, - նշում է Ա. Նորյանը, - մի քանի անգամ գրոհ են տալիս, խտացրած շարքերով, բայց քաջարի մարտիկների մօսիններն անմիջապէս յետ են մղում նրանց: Թշնամին բազմաթիւ դիակներ է տալիս».[21]

Ռուբեն Տեր-Մինասյանը, նույնպես անդրադառնալով այդ կռվի լուսաբանմանը, գրում է. «Կէսօրէ ետք, սկսած կռիւը կը շարունակուի անընդհատ, մինչեւ ուշ երկոյ: Հայերը կուտան մէկ-երկու զոհեր, իսկ քիւրդերը տասէն աւելի».[22]

Ֆիդայիները նախորդ կռիվներից քաջատեղյակ էին քրդերի կռիվներ մղելու սովորութեանը: Որպես չգրված օրենք, քրդերը կռվում էին մինչեւ մութն ընկնելը: Աներեր դիմագրավելով հակառակորդի շարունակաբար կրկնվող

[18] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 53:

[19] Ա.Նորեան, «Դրւագներ Հ.Յ.Դաշնակցութեան գործունէութիւնից», Բոստոն, 1917, էջ 332:

[20] «Պիթլիսցի Մուշեղ», Կ. Պոլիս, 1919, էջ 54:

[21] Ա. Նորեան, «Դրւագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից», էջ 332:

[22] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», Հ. 3, էջ 164:

հարձակումներին, հայ ֆիդայիները կռվում են մինչեւ մութն ընկնելը եւ ապա, օգտվելով մթության պատճառով քրդերի դադարեցրած գրոհներից, կարողանում են անկորուստ իջնել դիրքերից եւ « ...Գուղախի մօտէն աննկատելի կերպով կանցնին Եփրատը: Ամբողջ գիշեր ճամբայ կտրելով կը հասնին Քեօշկ գիւղը, հոգնած, բեզարած».[23]

Ֆիդայիները, թեեւ չափազանց հոգնած էին, բայց ձգտում էին ինչքան հնարավոր է կտրվել հակառակորդից եւ բարձրանալ գյուղի մերձակա Խաթավին սարը, փոքր-ինչ հանգստանալ, ապա նոր ուղեւորվել Ախլաթ: Բայց, քանի որ շատ հոգնած էին ու քաղցած, ուստի անտեսելով վտանգը, հարկադրված մոտենում են հայ-քրդական խառը բնակչություն ունեցող Քեոշկ գյուղին (Ա.Նորյանի ներկայացրածը՝ հենց այս գյուղն է -Հ.Գ.): Նախորդ օրվա կռվի արձագանքները տարածվելով, հասել էին նաեւ այդ գյուղին: Քրդերը, երկյուղելով հայ ֆիդայիների հայտնվելուց, յուրաքանչյուր գյուղի մոտ կարգել էին զինված պահակախմբեր: Գյուղին մոտենալիս, խումբը դարձյալ նկատվում է քրդերի կողմից, որոնք, փորձելով խոչընդոտել նրանց առաջխաղացումը, անմիջապես կրակ են բացում հայ մարտիկների վրա, ու միաժամանակ, ֆիդայիների հայտնվելու մասին տեղեկացնում համիդիեի գնդին եւ մոտակայքում գտնվող քրդական աշիրեթներին: Քանի որ քրդերն այս անգամ փոքրաքանակ էին, ուստի ֆիդայիներն՝ անաղմուկ գործելու նպատակով, մերկացնում են դաշույնները եւ հարձակվելով նրանց վրա՝ արագորեն ընկճում են նրանց դիմադրությունն եւ շարունակում իրենց ուղին: Բայց, մի քանի քրդերի այնուամենայնիվ հաջողվում է խույս տալ հայ մարտիկների դաշույնների հարվածներից եւ նրանց հայտնվելու մասին տեղեկացնել համիդեի զինվորներին, որոնց կենտրոնը գտնվում էր Պոնտոսի մոտակայքում:

«Հոն, - նշում է Կ. Սասունին, - կը նստէր Քէօռ Հիւսէին փաշան, որ կանգնած էր 2000-3000 համիտիէներուն գլուխը: Քիչ մը աւելի դէպի արեւմուտք - հարաւ կը տարածուէին Հասանացի համիտիէներն ու գիւղերը, որոնց գլխաւորներու՝ Ֆաղէհի եւ Ոըզախի հրամանատարութեան տակ կը գտնուէին 800 ամենարնտիր քիւրտ հեծեալները: Մօտ էր նաեւ Սիփկանցի աշիրէթը, որ արդէն ընդհարում ունեցել էր խումբի հետ եւ փնտրտուքի մէջ էր, ուզելով վրէժ լուծել երէկուայ զոհերուն համար».[24]

Նույն վկայությունը բառացիորեն մեջ է բերում նաեւ Ռուբենը:

Մինչ համիդիեի գնդերն ու քրդական աշիրեթները կհասցնեին շտապել դեպքի վայրը, հայ մարտիկները, հաղթահարելով քաղցն ու հոգնածությունը, հասնում են Խաթավին սարին եւ որոշում գիշերն անցկացնել սարի վրա:

Հաջորդ օրը, լույսը բացվելուն պես, համիդեի դնդերն ու աշիրեթները պաշարում են Խաթավին սարը եւ առանց փոքր-ինչ դադար առնելու, հարյուրավոր հրացանների համազարկերի պաշտպանությամբ՝նետվում գրոհի:

«Ղըլըճ Կէտիւկէն, - նշում են Ռուբենն ու Կ.Սասունին, - մինչեւ Սիփան, մինչեւ Խաթաւին եւ Մանազկերտի դաշտը՝ քրտական գիւղերը, գիւղէ գիւղ հաւարի ազդանշան տալով, կը հաւաքուին գունդագունդ՝ պաշարելու համար ֆետայիներու փոքրիկ խումբ մը...».[25]

Իսկ Ա.Նորյանը, ներկայացնելով քրդերի առաջին հարձակման պահը, գրում է. «Արշալույսին, երբ հայդուկները թշնամուց շրջապատելն իմանում են, չնայած յոգնածութեան եւ քաղցին, մի րոպէ կը մոռանան ամէն ինչ եւ խմբի «Մահ կամ Ազատութիւն» վերտառութեամբ ժապաւէնեայ դրօշն են բարձրացնում».[26]

Դիրքեր գրավելով սարի լեռնալանջերին, ֆիդայիներն անկոտրում համառությամբ եւ անվրեպ հարվածներով կասեցնում են թշնամու գրոհները: Այդ օրը քրդերը, նախորդ կռվի համեմատ, ավելի կատաղությամբ ու համարձակությամբ են գրոհում հայ մարտիկների դիրքերը:

[23] Նույն տեղում:
[24] Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 601:
[25] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 165, Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 601:
[26] Ա. Նորեան, «Դրւագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից», էջ 333:

« ...Ալիար քիւրտ գիւղի չեյխի երկու «Թոսուն» (կտրճ) տիտղոսը կրող որդիներն առանջ ընկան, եւ գնդակների տարափի տակ, կրօնական կանչերով եւ հայհոյանքներով «կուռ է խորսէ՛, ամ հաթրն (հոտաններու տղաքներ, մենք եկանք) կանչելով՝ դէպի դիրքերը վազեցին»».[27]

Ֆիդայիները, տեսնելով քրդերի նման ինքնավստահ եւ արհամարական կեցվածքը, որոշում են նրանց դերի վերցնել ու արժանավույնս պատժել: Այդ նպատակով, նրանք դադարեցնում են կրակը եւ հնարավորություն ընձեռում քրդերին ավելի մոտենալ իրենց: Ոգեւորվելով, քրդերն ընդհուպ մոտենում են ֆիդայիների դիրքերին:

«Այդ ժամանակ տղաներն հրացանները դէպի նրանց ուղղեցին, պահանջելով «Թէսիմ, թէսիմ(անձնատուր, անձնատուր) եղէք, իշու՛ ծնունդներ...»:

Հայդուկները երկուսին էլ բռնելով, ոտն ու ձեռքը կապելով՝ մօտակա խոաի դէզի մէջ ձգեցին ու լուցկիով կրակ տուին...».[28]

Մինչեւ կեսօր հետ մղելով քրդերի մեկը մյուսին հաջորդող գրոհները, ֆիդայիները կարողանում են ամուր պահել իրենց դիրքերը: Կեսօրին, քրդերը առավել մեծաքանակ ուժերով ու եռանդով, ուժգին գրոհ են ձեռնարկում եւ մի պահ արդեն մոտ էին հաջողությանը, գրավելու էին երկու կարեւոր դիրքեր: Եթե քրդերին հաջողվեր գրավել այդ երկու դիրքերը, ապա հայ մարտիկները կհայտնվեին անելանելի կացության մեջ: Բայց ֆիդայիները, դժվարագույն պահին անգամ դրսեւորելով իրենց մարտական հզոր կամքն ու ոգին, կատարում են աներեւակայելին. «... յանկարծ Առիւծ Աւագը, Բալաբեխ Կարապետը, Առաքելն ու Մուշեղը իրենց տասնեակ մը ընկերներով գրոհ կու տան յարձակողներու վրայ եւ, մեծ զոհեր պատճառելով թշնամին, կը փրկեն Երկար Նատոյի վտանգուած դիրքը».[29]

Այդ խիզախ գրոհից ոգեւորված, վճռական հարվածներով, քրդերին իրենց դիրքերից հետ են մղում նաեւ մյուս ֆիդայիները: Թեպետ հայ մարտիկները տոնում են իրենց հերթական հաղթանակը, բայց նրանց շարքերն, անընդմեջ կռիվների հետեւանքով, արդեն զգալիորեն նոսրացել էին: Դրան հակառակ, քրդերի քանակը, չնայած հարյուրավոր սպանվածների, գնալով ավելի ու ավելի էր շատանում:

Ֆիդայիները, եթե նույնիսկ օժտված լինեին գերմարդկային կամքով ու դիմադրողականությամբ, ապա դժվար թէ ի զորու լինեին դիմակայել հակառակորդի հերթական գրոհները: Արդեն զգացնել էր տալիս նաեւ զինամթերքի սակավությունը, իսկ մյուս կողմից՝ նրանց խիստ կերպով տանջել է քաղցն ու հոգնածությունը:

Մութն ընկնելուն պես, խմբի հրամանատար Ճարտարը, հաշվի առնելով զոհերի քանակն ու տիրող կացությունը, հավաքում է դիրքերում գտնվող 25 մարտիկների եւ իջնելով սարից, փորձում է կտրվել հակառակորդից ու շարժվել Ախլաթ:

Սակայն, համիդիեի զինվորները նկատում եւ կրակ են բացում նրանց վրա: Ֆիդայիներից մի քանիսը զոհվում են, իսկ Ճարտարը, մի քանի զինվորներով, կարողանում է խույս տալ քրդերի հետապնդումից եւ բազում դժվարություններ հաղթահարելով, վերջապես հասնում Ախլաթ:

Զինատար խմբի մյուս մասը՝ Առաքելի եւ Բիթլիսցի Մուշեղի եւ Առյուծ Ավագի գլխավորությամբ, կարողանում են ճեղքել պաշարման շղթան եւ կտրվելով հակառակորդից, փորձում են Մանազկերտի ուղղությամբ շարժվել Ախլաթ:

Ճարտարը, որը մինչ այդ հմտորեն ու քաջաբար էր վարել կռիվները, այդ պահին մարտավարական սխալ է թույլ տալիս: Այն պահին, երբ նա 25 մարտիկներով իջնում էր սարից, այնտեղ դեռեւս մնացել էին ֆիդայիների մի մասը:

«Մինչ Ճարտարը, - նշում են Ռուբենն ու Կ. Սասունին, - կիջնէր դաշտ եւ կռիւ տալով Ճաբայ կուգէր բանալ իր խումբին համար, Բալաբեխ Կարապետը իր

[27] Նույն տեղում, էջ 334:
[28] Նույն տեղում:
[29] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 166, Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 602:

տասնեակ մը զինուորներով Խաթաւինա բարձունքներու վրայ կը փնտռէր Ճարտարը».[30]

Զգտնելով Ճարտարին, Բալաբեխ Կարապետը իր մարտիկներով անկարող լինելով սարից իջնել, հարկադրված տեղափոխվում է սարի մեկ այլ տեղ և ապաստանում չորացած խոտերի մեջ: Նկատելով դա, քրդերը վառում են չորացած խոտը, և կրակը տարածվելով՝ մոտենում է այն տեղին, ուր պատսպարվել էր Կարապետի տասնյակը: Քրդերը, համոզվելով, որ ֆիդայիներն այլևս չունեն փրկվելու որևէ հնարավորություն, կրակի հետևից բարձրանում և ընդհուպ մոտենում են ֆիդայիներին: Ելքը միակն էր. Բալաբեխ Կարապետի ֆիդայիներն, անսպասելիորեն դուրս են թռչում բոցերի միջից և անվրեպ հարվածներ տեղալով, շարունակում են կռիվը մինչև երեկո:«Նորէն, - գրում է Ռուբենը, - մութը կիյնա և Բալաբեխ Կարապետ իր խումբով աննկատելի կերպով կը բռնէ Քաջառուի ճամբան: Քանի մը օր ետք կը հասնի Նէմրութ, զարմանք պատճառելով իր ընկերներուն և Աղբիւր Սերոբին».[31]

Իսկ Մուշեղի, Առաքելի և Առյուծ Ավագի մարտիկներին սպասում էին նոր դժվարին փորձություններ: Այդ խումբը, Խաթավինի կռվից հետո Ախլաթ ուղևորվելիս, նույն օրը երեկոյան հասնում է Զավուշ և Բաթնոց սարերի մոտ ու փորձում մի փոքր հանգստանալ այդ սարերից մեկի վրա: Համիդեի զինվորներն ու քուրդ զինյալները, որոնք կրնկակոխ հետապնդում էին, հասնում են նրանց և դարձյալ ֆիդայիները հայտնվում են թշնամու օղակում: Հայ մարտիկները, մոռանալով հոգնածությունը, արագորեն դիրքեր են գրավում և սպասում հակառակորդի հարձակմանը:

«Տղաները, - նշում է «Դրօշակ»-ը, - ապաստանած ամբողջ լեռը պաշարուած էր թշնամիի բազմաթիւ զօրքերով: Եվ ահա սկսւում է համազարկերը թշնամու յառաջապահներու կողմից դէպի մեր հայդուկներու դիրքերը».[32]

Այդ օրը, քրդերը հակառակ իրենց սովորության, թեև ոչ այնքան ուժգնությամբ, գրոհներ են ձեռնարկում նաև գիշերը: Առավոտյան, մարտադաշտում են հայտնվում քրդական նոր հրոսակախմբեր և կռիվը բորբոքվում է առավել մեծ ուժգնությամբ ու ծավալով:

Մուշեղը, որը ստանձնել էր ֆիդայիների հրամանատարությունը, «նկատի առնելով, որ թշնամին իր պաշարման օղակը ավելի պիտի թանձրացնէ, կը հրահանգէ ընկերներուն լեռն ի վեր մերթ կռւել, մերթ առաջանալ դէպի Մարմարուս գետը».[33]

Ֆիդայիներին, ճկուն մարտավարություն կիրառելով, հաջողվում է կտրվել հակառակորդից և անընդհատ առաջանալով, հաջորդ օրն առավոտյան հասնում են հայկական Դարագայա գյուղի մոտ և ապաստանում Առահուտ բերդի ստորոտում գտնվող քարայրում: Քանի որ չափազանց հոգնած էին, փակում են քարայրի բոլոր մուտքերն ու քնում: Առավոտյան ֆիդայիները դուրս են գալիս քարայրից և հանդիպում ճիշտ նույն պահին այդ տեղով անցնող թուրք ոստիկաններին:

Դիպուկ հարվածներով փախուստի մատնելով ոստիկաններին, հայդուկները «... կերթան Մանազկերտի Բերդի վրայով դէպի Եփրատ գետի եզերքը գտնւող աւերակ Ջրաղացը, ու հոն կը մրնան գիշերը: (Աւէրակ Ջրաղացը Մանազկերտի գյուղաքաղաքէն կէս ժամ հեռու է, Խաթուն և Եփրատ գետերի միացման տեղը)».[34]

Մի քանի օր անընդմեջ կռվելով ու տեղաշարժվելով, ֆիդայիները, չունենալով սնվելու որևէ հնարավորություն, հարկադրված հավաքում են Ջրաղացի պատերին ու անկյուններում մնացած ալյուրը, և քանի որ թշնամին դեռևս չէր երևում, կրակ են վառում և բաղարջ թխում: Առավոտյան, Ջրաղացի մոտակայքով անցնող մի քուրդ, նկատելով ծխնելույզից բարձրացող ծուխը և կարծես հասկանալով, որ այնտեղ կարող են ապաստանել միայն հայ ֆիդայիները, շտապում է

[30] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 166, Կ. Սասունի, «Պատմութիւն Տարօնի աշխարհի», Պէյրութ, 1957, էջ 602:
[31] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 167:
[32] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:
[33] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:
[34] Նույն տեղում:

Մանազկերտ ու այդ մասին հայտնում ոստիկանությանը: Տեղեկանալով Ջրաղացում ֆիդայիների գտնվելու մասին, ոստիկանական ուժերը, համիդիեական ջոկատներն ու քրդական աշիրեթները, որոնք ամենուրեք որոնում էին նրանց, անմիջապես ուղևորվում են քրդի մատնանշած վայրն ու չորս կողմից պաշարում Ջրաղացում ապաստանած ֆիդայիներին.[35]

Պաշարելով Ջրաղացը, զորքի և ոստիկանների հրամանատարությունը, նախքան ռազմական գործողություններ ձեռնարկելը, իրենց տեղեկություն հայտնած քրդին ուղարկում են պարզելու հայ մարտիկների այնտեղ գտնվելու իսկությունը:

«Քիւրդը վարանումով կը մօտենայն Ջրաղացին, բայց դէռ չմօտեցած՝ կը նշմարուի Մուշեղին ամենատես աչքերէն: Մուշեղ խօրհելով, որ իրենց դիրքի մասին կրրնար տեղեկութիւն հաղորդել՝ մուսէնիի գնդակով մը գետին կը տապալե զայն».[36]

Տեսնելով իրենց լրտեսի վախճանը, թուրք զինվորներն ու քրդերը չորս կողմից կրակում են և փորձում առաջանալ դեպի Ջրաղացը: Պատսպարվելով պատերի ետևում և խնայելով փամփուշտները, ֆիդայիները, մերթ ընդ մերթ արձակած, բայց անվրեպ հարվածներով, խափանում են Ջրաղացին առավելագույնս մոտենալ ձգտող հակառակորդի փորձերը:

Իրենց զարկերն առավել արդյունավետ ու ազդեցիկ դարձնելու և թշնամու հարձակումներն ավելի դյուրությամբ հետ մղելու նպատակով, հայդուկները փոքրիկ ճեղքեր են բացում պատերի մեջ և այնտեղից սկսում են դիպուկ նշանառությամբ գնդակահարել հարձակվողներին: Հայ մարտիկների հերոսական դիմադրությունից դազազած, թուրք զինվորներն ու քրդերը, կեսօրին համալրելով իրենց մարտաշարքերը, կատաղի գրոհ են ձեռնարկում:

«Հարիւրապետ մը, - նշում է «Դրօշակ»-ը, - բանակին մէջ կը գտնուէր, կատարուած եղերական ամլութենէն կատղած՝ զօրաց խուռն բազմութեամբ մը կը խուժէ դէպի կամուրջ, բայց դէռ կամուրջին կէտը չհասած, Մուշեղը իր հրաշալի նշանառութեամբ, գնդակը կը զետեղէ անոր ճակտին...».[37]

Թուրք հարյուրապետի ճակատագրին են արժանանում հարձակվողներից շատերը, որոնք փորձում էին անցնել Եփրատ և Խաթում գետերի կամուրջներն ու մոտենալ Ջրաղացին: Տեսնելով, որ սոսկ գրոհներով հնարավոր չէ ընկճել ֆիդայիների դիմադրությունը, հակառակորդը որոշում է ցախ, չոր խոտ, փուշ և տատասկ լցնել Ջրաղացի չորս կողմերն ու այն կրակի տալ: Իսկ քրդերից մի քանիսը բարձրանում են տանիքն ու փորձում երդիկից քարյուղ լցնել Ջրաղացի ներսը ու չորս բոլորն և ապա այրել: Սակայն, հայդուկները, լսելով քրդերի ոտնաձայները, վարպետորեն գնդակահարում են տանիք բարձրացողներին ու խափանում թշնամու այդ ձեռնարկումը.[38] «Մութն, - գրում է Ռուբենը, - իյնալուն պէս ֆեդայիները դուրս կելլեն Ջաղացքի ծորակով...».[39] Լուսաբացին, թշնամին անտեղյակ ֆիդայիների՝ գիշերային աննկատ հեռանալուց, վերսկսում է կրակ տեղալ Ջրաղացի վրա, իսկ ֆիդայիներն արդեն հեռացել էին: Հաջորդ օրը, առավոտյան, նրանք հասնում են Բուլանուխի Շեխ-Ազատ գյուղը և նրա մոտակա ձորերից մեկում մի փոքր հանգստանում, ու ապա շարունակելով իրենց ուղին, երեք օր անց՝ վերջապես հասնում են Ախլաթ գավառ և որոշում փոքր ինչ դադար առնել Փրխուս և Սպրաձոր գյուղերի արանքում գտնվող Սուչխան ձորում:

Կարսից մինչև Տարոն ձգվող տարածքը, ինչպես արդեն նշել ենք, ամենախիստ կերպով հսկվում էր թուրքական զորամասերի, համիդեական գնդերի, քրդերի ու չերքեզների կողմից: Եվ պատահական չէ, որ նրանք շատ արագ տեղեկանում են Սուչխան ձորում ֆիդայիների գտնվելու մասին և անհապաղ ձեռնարկում համապատասխան միջոցներ. «... Փրխուսէն զօրքեր, թիւով 200, Ախճավերան և Խուլիկ գիւղերի չերքերզները Ալի Բէգի առաջնորդութեամ,

[35] Տե՛ս, «Պիթլիսցի Մուշեղ», էջ 39:
[36] Նույն տեղում:
[37] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:
[38] Նույն տեղում:
[39] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 168:

Ախլաթի զորքերն ու Թիւրքերը մօտ հարիւր ձիաւորներ կը գան ու կը պաշարեն Մուշեղի ապաստանած վայրը».[40]

Ֆիդայիներն, այս անգամ եւս, բնավ չընկճվելով թշնամու բազմաքանակությունից, աննահանջ դիմադրում են: Ալաշկերտից մինչեւ Ախլաթ զինատար խմբի մղած զարմանահրաշ կռիվների արձագանքները տարածվելով, արդեն հասել էին նաեւ Ախլաթ: Այն պահին, երբ թշնամին շտապում էր պաշարել Սուչխանի ձորում ապաստանած հայ մարտիկներին, Աղբյուր Սերոբը, տեղեկանալով իր զինակիցներին սպառնացող վտանգի մասին, Նեմրութի բարձունքներից շտապում է օգնության: Հակառակորդի ուշադրությունը չգրավելու եւ նրան անակնկալ մատուցելու նպատակով, նա, իր զինվորներին ծպտելով քրդական համազգեստներով, աննկատ հայտնվում է մարտադաշտում ու, թիկունքից սրընթաց հարձակում ձեռնարկելով, ճեղքում է թշնամու մարտաշարքերը եւ մոտենում իր զինակիցների դիրքերին: Առաքելը, Մուշեղն ու մյուս ֆիդայիները, կարծելով, որ իրենց դիրքերին մոտեցողները քրդերն են, կրակ են բացում Աղբյուր Սերոբի մարտիկների վրա:

«Յանկարծ անսպասելիօրէն կը լսի Սերոբ Աղբիւրի ձայնը, որ կը պոռայ.

- «Մուշեղ ջան, այդ ի՞նչ է քո արածը, ես աՀաւոր կռիւներ մղելով հազիվ յաջողեցայ թշնամու շղթան պատռել ու անցնել եւ ձեզ օգնութեան հասնել, դուն մեր վրա կրակ կը բանաս»:

Մուշեղը դիրքէն ցատկելով կը վազի դէպի կտրիճ Սերոբը, ու կը փաթաթւի նրա վզով».[41]

Մարտադաշտում Աղբյուր Սերոբի անսպասելի հայտնվելն ավելի է ոգեւորում մինչ այդ էլ արիաբար մարտնչող ֆիդայիներին: Հայ մարտիկների երկու խմբերը միանալով, այս անգամ արդեն իրենց հայդուկապետի՝ Աղբյուր Սերոբի առաջնորդությամբ, վճռական եւ անկասելի հարվածներով խորտակում են թշնամու արգելապատնեշներն ու բարձրանում Նեմրութ:

«Զինատար խումբի, - նշում է Ռուբենը, - այս կռիւները խոր տպաւորութիւն ձգեցին հայերուն եւ քիւրդ աշիրեթներու վրայ: Այդ բուռ մը հայ զինուորները, ռուսական սահմանէն սկսած, շատ մը կռիւներ ունենալով հասած էին մինչեւ Նեմրութ...

Իրենց երգերուն մէջ քիւրտերը անէցք եւ գովք կուղղէին ջան ֆետայիներուն: Հայերն ալ երգեր հիւսեցին Խաթաւինայ կռիւներուն համար: Այդ երգերէն ամենէն տարածուածն է. «Առաքել, Մուշեղ, լեռներից իջան, աւերակ ջաղաց իջեւան եղան» երգը».[42]

Համլետ Գեւորգյան

պատմական գիտությունների թեկնածու

ОТРЫВКИ ИЗ ИСТОРИИ БОЕВЫХ И ОРУЖЕНОСНЫХ ГРУПП (1898Г.)

РЕЗЮМЕ

В национально-освободительной борьбе армянского народа в кон-це 19 и в начале 20 веков особенное значение имела деятельность боевых и оруженосных групп.

Подавляющее большинство групп, отправляющихся в Западную Армению, было образовано по инициативе и непосредственном участии армянского революционного союза Дашнакцутюн.

Они частичными действиями и показательными выступлениями должны были осуществить самое главное — свергнуть вековое ярмо Османской империи и освободить Западную Армению.

Форму такой борьбы обосновали в своих взглядах некоторые дашнакские руководящие деятели, как например Кр. Микаелян.

Отправляя боевые и оруженосные группы в Западную Армению, армянский революционный союз Дашнакцутюн важное значение придавал также Карсскому вилаету.

Начиная с первой боевой группы — группы Гуно (Арутюн Ага Тер-Мартиросян), в Карсской области, но приблизительным данным, в 1890-1899 годах были сгрупированы и отправлены в Западную Армению более чем 20 боевых и оруженосных групп, из которых нескольким группам удалось дойти до Тарона, Сасуна, Эрзрума и Басена.

Примером борьбы оруженосных групп служит переход фидаинов в Ахлат из Карса под руководством племянника Ахбюр Сероба Чартара (Варданян Акоп).

В 1898г. группа выходит из Карса и пытается незаметно перейти через Алашкерт, Маназкерт, Буланух в Ахлат.

По пути группа имела множество вооруженных столкновений с турками и курдами. Группе удалось освободиться от преследователей и продолжить свой путь.

Гамлет Геворгян

кандидат исторических наук

[40] «Դրօշակ», 1930, թիւ 2, էջ 56:

[41] «Պիթլիսցի Մուշեղ», էջ 48:

[42] Ռուբէն, «Հայ Յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 168:

ԱՆՏՈՒԱՆ ՊՈՒԱԴԵԲԱՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Անտուան Պուադեբարը, սկզբում որպես Ֆրանսիայի Լիոնի նահանգի ճիզվիտների միսիոներ Անատոլիայում, հետո Հայաստանի Հանրապետությունում (1918-1920թթ.) ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ, ապա Բեյրութի Սուրբ Հովսեփ համալսարանի դասախոս ակտիվ գործունեություն է ծավալել Արեւելքում՝ տարածաշրջան, ուր խաչաձեւվում էին երեք կայսրությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Պարսկաստանի ճանապարհները եւ այն ժամանակաշրջանում, երբ տեղի էին ունենում Առաջին աշխարհամարտի քաղաքական փոփոխությունները, ինչպիսիք էին՝ Օսմանյան եւ Ռուսական կայսրությունների անկումը:Նրա ամբողջ գործունեությունն արտացոլված է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության (Քե դե Օրսեյի) արխիվի, Վինսենի երկրի ռազմական պատմության արխիվի եւ Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերում եւ նյութերում:

Անտուան Պուադեբարը ծնվել է 1878թ. հոկտեմբերի 11-ին Լիոնում[1]: Լիոնի ճիզվիտների Սուրբ Հովսեփ քոլեջի ինտերնատում ուսումն ավարտելուց հետ, 1897թ. հունիսի 2-ին մտել է էք սան-Պրովանսի Ճիզվիտների եղբայրության շարքերը: Իր զինվորական ծառայությունն ավարտելուց հետո (1900թ.), նա մեկ տարի դասական դրականություն է ուսանում Լավալում, մինչ այդ ձեռնարկելով փիլիսոփայության ուսումնասիրությունը, ինչը նա շարունակում է Ժերսեյ կղզում (1901-1904թթ.):

19-րդ դարի վերջերին, Ֆրանսիայում բարձրանում է հակակղերականության ալիք, որն ուղեկցվում է Ֆրանսիայից ճիզվիտների արտաքսմամբ: Ֆրանսիայից տեղահանված ճիզվիտներն իրենց տեղն ամրապնդում էին արտասահմանում գործող իրենց առաքելություններում, որտեղ վայելում էին կառավարության օգնությունն ու աջակցությունը, քանզի, կառավարությունը, հանձինս նրանց, տեսնում էր տարածաշրջանում ֆրանսիական մշակույթն ու ազդեցությունն արդյունավետ տարածողների: Իսկ Ֆրանսիան, իր վրա էր վերցրել տարածաշրջանի, հատկապես արեւելքի «քրիստոնյաների հովանավորողի» դերը:

1904թ. գալով Թոքատ (Փոքր Ասիա), Ա.Պուադեբարը ստանձնեց Հայաստանյան Առաքելության[2] պաշտոններից մեկը: Թոքատում նա մնաց մինչեւ 1907թ., որտեղ եւ սովորեց հայերեն եւ թուրքերեն: Աստվածաբանության գծով ուսումը շարունակելու նպատակով, նա վերադարձավ Եվրոպա (1907-1910թթ.): 1910թ. հուլիսի 10-ին Լիոնում, նա դարձավ քահանա: Կրկին որպես միսիոներ, Պուադեբարը մեկնում է Հայաստան, սկզբում Մարսիվան (1911-1912թթ.), ապա՝ Սվազ (1912-1914թթ.):

Հայաստանյան Առաքելությունը[3]

Հայաստանյան Առաքելությունը ստեղծվել է 1881թ. ճիզվիտ Ամեդե դե Դամայի կողմից: 17 տարեկանում մտնելով ճիզվիտների շարքերը, ապա Ղրիմի պատերազմի տարիներին (1854-1856թթ.) նշանակվելով զինվորական քահանա եւ դառնալով Սիրիական Առաքելության պրոկուրոր, երկար տարիներ եղել է Մերձավոր Արեւելքում:

Նա 60 տարեկան էր, երբ Լեոն XIII պապի կողմից ստանձնեց Հայաստանյան Առաքելության հիմնադրումը[4]: Այս հաստատությունը կազմում էր կաթոլիկ միսիոներների ռազմավարության բաղկացուցիչ մասը: Պապը հույս ուներ, որ «օրթոդոքս» (արեւելյան քրիստոնյաները) զանգվածները կվերադառնան հռոմեական եկեղեցու դիրկը: Լեոն XIII-ը ցանկանում էր նաեւ արձագանքել Օսմանյան կայսրության բավականին մեծաթիվ կաթոլիկ հայերի (1880.թ. կազմում էին 57 000 մարդ) կոչին, որը վերջ էր դնում իրար դեմ դուրս եկած հասունյաններին եւ հակահասունյաններին[5]:

[1] Կենսագրական տվյալների հետ կապված բազմաթիվ մանրամասներ զետեղված են Անտուան Պուադեբարի անձնական գործում, որը պահվում է Ֆրանսիայի ճիզվիտների արխիվում՝ Վանվեսում (92):

[2] Հայաստանյան Առաքելության մասին տես հաջորդիվ-Ա.Տ-Մ.:

[3] Տես՝ Հայաստանյան Առաքելության մասին 1914-1921թթ. նյութերը՝ Վանվեի Ֆրանսիայի ճիզվիտների արխիվային փաստաթղթերում (այսուհետ AJF - Ֆրանսիայի ճիզվիտների արխիվ):

[4] Մինչեւ XIXդ. կեսերը Էրմինիստան (Հայաստան) հասկացությունը օսմանյան արխիվներում նշանակում է անտիկ Փոքր եւ Մեծ Հայաստանների տարածքները: Հասկացությունն ու արտահայտությունը անհետացավ վիլայեթների ռեֆորմից հետո (1864թ.), բայց շարունակում էր օգտագործվել արեւմտյան դրասենյակների, արեւմտյան ճանապարհորդների եւ հայ գրողների մոտ:

[5] Պառակտումը վիճաբանության արդյունք էր, որն իրար էր հակադրում Պիոս IX պապի կումից Կոնստանդնուպոլսում նշանակված եւ Օսմանյան իշխանությունների կողմից ճանաչված հայ կաթոլիկ նշանավոր մեծահարուստ, արքեպիսկոպոս Հասունի (1845թ.) եւ Կիլիկիայի կաթոլիկ հայերի պատրիարք Միքայել Պետրոս VIII (որի նստավայրը գտնվում էր Բզոմարում՝ Լիբանան) հետեւորդների միջեւ: Այս վերջինիս մահից հետո (1866թ.) Նրան ժառանգեց Հասունը՝ Անտոնիոս Պետրոս IX անվամբ եւ ասպիսով Պոնտիֆիկատի թույլտվությամբ դարձավ հայ կաթոլիկների միակ հոգեւոր առաջնորդը: Նրա նվիրվածությունը Պիոս IX, նրա հնազանդությունը Հռոմին, նրա տիրատենչությունը իր դեմ հանեցին հայ

Ամեդե դե Դաման ուղեւորվեց Անատոլիա եւ ընտրեց Հայաստանյան Առաքելության վեց առաջին կայանների վայրը՝ Ադանա, Կեսարիա, Սվազ, Թոքատ, Ամասիա, Մարսիվան, որոնց, չնայած բազմաթիվ դժվարություններին, ավելացան Սվազի եւ Կեսարիայի միջեւ տեղակայված վեց գյուղական կայանները եւ Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված Սամսունի պրոկուրորիան: Որպեսզի իրավունք ունենա բանակցել թուրքական եւ ֆրանսիական իշխանությունների հետ, Դաման Առաքելության բարձրագույն եւ տնտեսական ղեկավարության նստավայրը տեղակայել էր Կոնստանդնուպոլսում, որտեղից եւ ղեկավարում էր բոլորին: Առաքելության տարբեր բաժանմունքներում տեղավորվել էին 40 ճիզվիտ միսիոներներ, Սուրբ Մարիամի 3 վանական, Լիոնի Սուրբ Ժոզեֆի միաբանության 78 հոգեւորական, «որոնց պետք է ավելացնել 3 հոգեւորական, 78 տեղաբնակ ուսուցիչ եւ ուսուցչուհի»[1]: Կոնստանդնուպոլսում նա կազմեց իր «Հայացք դեպի Հայաստան»[2] հիմնավոր պատմական աշխատություն-վերլուծությունը, որում հաստատվում է հայ առաքելական եկեղեցու գիմադրությունը ճիզվիտներին, որոնք դիտարկվում էին որպես հերետիկոսներ: 1892թ. Դաման վերադարձավ Ֆրանսիա: Այսպիսով, Հայաստանյան Առաքելությունը տարածվում էր Միջերկրականից դեպի Սեւ ծով ընկած տարածքների վրա եւ ընդգրկում Սվազի եւ Ադանայի վիլայեթները, ուր բնակվում էր հայկական բնակչության զգալի հատվածը[3]:

Առաքելության աշխատանքները իրականացվում էին չորս ուղղություններով. կրթական, բարեգործական ավետարանական (դավանափոխության իրականացում), տպագրական: Մինչեւ 1914թ., Օսմանյան կայսրությունում կրթական բնագավառը եղել է կաթոլիկ կամ բողոքական՝ ֆրանսիացի, ամերիկացի, իտալացի կամ գերմանացի միսիոներների աշխատանքային հիմնական ուղղությունը: Հայաստանյան Առաքելությունը չէր խախտել այս կանոնը. «Առաքելության աշխատանքի հիմնական նպատակը իր հիմնադրումից սկսած եղել է դպրոցը: Ջանքերը, որ գործադրում են մեր մրցակիցները, որպեսզի իրենց կողմը գրավեն բոլոր երեխաներին, վկայում են, որ մեզ անհրաժեշտ է անհապաղ վերսկսել այս կարեւոր ու հիմնարար աշխատանքը»[4]: 1910թ. մարտին, արական անվճար դպրոցներում սովորում էր 1218 աշակերտ, իսկ իգականում՝ 1975: Վճարովի դպրոցներում, որտեղ ուսուցման մակարդակն ավելի բարձր էր, սովորում էր 590 տղա եւ 525 աղջիկ: Բոլորը միասին՝ 4308 աշակերտ: 1912 թ. մարտին այս թիվը հասավ 4978-ի, իսկ 1913թ. մարտին՝ 5740-ի: Արդյունքները բավականին ակնառու եւ ազդեցիկ էին: Այս դպրոցներում, դիտական առարկաների հետ մեկտեղ սովորում էին նաեւ հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն եւ «հիմնական լեզուն»: Չնայած դպրոցների մի մասը ընդունում էին միայն մահմեդական երեխաների, սակայն դպրոցականների հիմնական զանգվածը ուներ հայկական ծագում. «Հայերը հասկանում էին գիտելիքների կարեւորությունը եւ անհրաժեշտությունը: Նրանք շատ ընդունակ էին, դյուրությամբ սովորում էին օտար լեզուները եւ հիմնականում ցուցաբերում էին մեծ աշխատասիրություն: Օրինակ,

հոգեւորականության մի մասին: 1870թ. Վատիկանի ժողովից հետո դժտությունը սրվեց «արեւելյան կաթոլիկների» պառակտումով, որոնք պոնտիֆիկալ անսղալականության սկզբունքների եւ հակահասունյանականներին եկեղեցուց վտարելու կողմնակիցներ էին: Պիոս IX -ից առավել ճկուն Լեոն XIII-ը հասավ նրանց հնազանդության: Հասունին նշանակեց կարդինալ (1880թ.) եւ նրան հրավիրեց Հռոմ, որտեղ էլ 1884թ. նա մահացավ:

[1] AJF, Հայկական Առաքելություն, 6-րդ փաթեթ, փաստաթուղթ 13, (ca 1919): Կատարված է աբբա Ժալաբերի ստորագրությամբ:

[2] Amédée de Damas,Coup d'oeil sur l'Arménie. Փոքր Ասիայում Լեոն XIII պապի հրամանով ճիզվիտների Առաքելության բացման վերաբերյալ», Լիոն եւ Փարիզ, 1888թ.:

[3] Համաձայն Կոստանդնուպոլսի հայկական պատրիարքարանի մարդահամարի (1914թ.), Սվազի վիլայեթում հաշվվում էր 204 472 հայ, իսկ Ադանայում՝ 83 733 մարդ: Տես.R. Kevorkian et P. Paboudjian «Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide»,Paris, 1992.:

[4] AJF, Հայաստանի, Եգիպտոսի եւ Սիրիայի Առաքելությունները, 28, էջ. 384, «Կլավդիոս Շանտյորի նամակը Առաքելության Հայրերին եւ Եղբայրներին, որն արվել է Արեւելք իր վերադառնալուց հետո՝ 1914թ. հունվարի 16-ին»:

Սվազում հասարակ ընտանիքների զավակները, որոնք անշուշտ չգիտեին ժամացույցի մասին, դպրոց էին գալիս առավոտյան ժամը 4-ին»[1]:

Ի հակակշիռ միսիոներների կրթական գործունեության, Կ.Պոլսի Հայ պատրիարքարանը հայկական մշակութային ընկերությունների միջոցով ստեղծում էր «ազգային» դպրոցներ, որոնք համապատասխանելու էին կրթական պահանջներին եւ հավասարակշռելու էին միսիոներների ազդեցությունը[2]:

Բարեգործական աշխատանքն իրականացվում էր երկու որբանոցում, փոքրիկ հոսպիտալում, վեց դիսպանսերում, որոնք բաց էին բոլորի համար՝ անկախ կրոնական պատկանելությունից: Տպագրության աշխատանքը կայանում էր նրանում, որ հայերեն եւ թուրքերեն էին թարգմանում Աստվածաշնչի որոշ հատվածներ: Այս առումով ճիզվիտները, ոչ առանց հումորի, պնդում էին, որ ամերիկյան միսիոներներն ի շնորհիվ ֆինանսական մեծ ռեսուրսների, ավելացնում էին բրոշյուրների, ամսագրերի եւ թերթերի հրատարակությունը եւ դրանով՝ այդ բնագավառը վերցնում ֆրանսիացիներից:

Չնայած Ամասիայում եւ Սվազում արձանագրված՝ կաթոլիկություն ընդունելու որոշ դեպքերի, ճիզվիտների համար սա մեծ ձախողում էր:

Անտուան Պուադեբարն Անատոլիայում

Ճիզվիտների արխիվներն աննշան բեկորներ են պահպանել Փոքր Ասիայում Անտուան Պուադեբարի անցկացրած յոթ տարիների գործունեության վերաբերյալ: Ոչինչ չի կարելի գտնել նրա նաեւ այն զեկուցագրում կամ «միսիո-ների պատմվածքում», որը հրատարակվել էր նրա անունից: Կարելի է միայն ասել, որ լինելով հավատքի մարդ եւ հիմնվելով Առաքելության իր գործընկերների վրա, Պուադեբարը չէր խախտում իր պարտավորությունները, կատարում էր իր աշխատանքը, ենթարկվում էր Միաբանության կարգ ու կանոնին եւ չէր գրսեւորում առանձնահատուկ կրոնական մոլեռանդություն:

Յոթ տարի շարունակ ճանապարհորդելով Անատոլիայում, յուրաքանչյուր քայլի Ա.Պուադեբարը ծանոթանում էր տեղական բնակչության՝ հայերի, ինչպես նաեւ թուրքերի, չերքեզների եւ այլ թրքախոսների ապրելակերպին եւ նրանց՝ միջէթնիկ փոխհարաբերություններին, ինչպես նաեւ Օսմանյան իշխանությունների քաղաքականությանը:

Նա, սակայն, զարմանալի լռություն պահպանեց Հայաստանյան առաքելության մաս կազմող Ադանայի հայության կոտորածների (1909թ. մարտ-ապրիլ) վերաբերյալ[3]:

Սվազ՝ Ֆրանսիայի իշխանավորին ուղղված երկու նամակում (1913թ. փետրվարի 15 եւ փետրվարի 18) հստակ երեւում է Պուադեբարի աշխատանքը. «Ի՞նչ ասենք Սվազի մասին: Ցրտաշունչ ձմեռ է: Հարավային քամին հալեցնում է ձյան կույտը, որը ծածկել է տները, փակել է ճանապարհներն ու փողոցները: Կ.Պոլսի փոստը Սվազ հասավ միայն անցյալ շաբաթ՝ 20 օրում... Դրամի բացակայության պատճառով բոլորին սով է սպառնում... Մեր քաղաքը տվել է մեծ թվով զինվորներ, որոնք լավ տնտեսվարողներ էին, սակայն նրանց մեկնումն իրենց ընտանիքներին մատնել է չքավորության: Պատերազմը կանգնեցրել է ամբողջ առեւտուրը:»[4]: Նույն նամակում նա ուղարկում է Կոստանդնուպոլսի հայկական «Բյուզանդիոն» ամսագրում «որը ,որպես կանոն, չէր թաքցնում իր սերը կաթոլիկ միսիոներների նկատմամբ», Սվազի ճիզվիտների հասցեին տպագրված գովաբանական հոդվածի թարգմանությունը: Կարելի է նաեւ տեղեկանալ, որ Ա.Պուադեբարը հիմնել է Սվազի «ֆրանսիական խմբակը», որը բերել էր հակատիֆային շիճուկ եւ Առաքելության դիսպանսերի օգնությամբ անվճար տրամադրել տեղական բնակչությանը: Այս սանիտարական գործունեությանը զուգահեռ, Պուադեբարն Առաքելության Քույրերի շրջանում անցկացնում էր հայերենով

[1] AJF, Հայաստանի, Եգիպտոսի եւ Սիրիայի Առաքելությունները, 28, էջ. 384:

[2] A. Ter-Minassian, <Sociétés de culture, écoles et presse arméniennes à l’époque d’Abdul-Hamid II>, Revue du monde arménien moderne et contemporain, 1997թ., էջ. 7-30:

[3] Տես 1909թ. մարտից-մայիս Հայր Պ.Բենուային, Պ.Տաբեին, Ա.Սաբատյեին դրված մանրամասն նամակները: AJF, Missions de Syrie, d’Egypte et d’Armenie, 28:

[4] AJF Mission d’Armenie, փաթեթ 1:

դասընթացներ: Նա պահում էր «անձնական օրագիր», որը ցանկանում էր վերածել ֆրանսիական հասարակության համար նախատեսված փոքրիկ ամսագրի[1]:

Ա.Պուադեբարի միսիոներական գործունեությունը հանդիպում էր տեղի հայկական կուսակցությունների հակազդեցությանը: Այդ պատճառով, նա բոլորովին չէր թաքցնում իր զայրույթը Սվազի հայության նկատմամբ. «Հեղափոխական կոմիտեները աշխատում էին ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների շրջանում, եւ հակակրոնական գաղափարները տարածվում էին ամենուր...»: Այս քննադատությունը անհիմն չէ: Հայկական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) եւ սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը՝ երկու հակամարտ եւ հակակղերական սոցիալիստական կուսակցություններ, որոնք օրինական էին եւ սկսած 1908թ.-ից[2] ներկայացված Օսմանյան Թուրքիայի խորհրդարանում, ակտիվ քարոզչություն էին տանում քաղաքների հարաբերականորեն բազմաքանակ երիտասարդ աշակերտության շրջանում, որտեղ՝ ինչպես եւ ողջ Անատոլիայում, դպրոցական հակամարտություն կար օտարալեզու դպրոցների եւ հայկական «ազգային» դպրոցների միջեւ (1903թ. Սվազում կար 46 դպրոց, որն ուներ 4621 աշակերտ): Այս վերջինները (կուսակցությունները - Ա.Տ-Մ.) չէին թաքցնում իրենց հակակրանքը ամերիկացի կամ ֆրանսիացի միսիոներների նկատմամբ, որոնք կարող էին գայթակղել իրենց երիտասարդության լավագույն հատվածին[3]:

Մեծ պատերազմը

Առաջին համաշխարհային պատերազմը վճռական բեկում մտցրեց Անտուան Պուադեբարի կյանքում եւ նրան պոկեց Հայաստանյան Առաքելությունից, ուր նա այլեւս չվերադարձավ[4]: Վերադառնալով Ֆրանսիա, նա՝ որպես զինվորական քահանա, 1914թ. օգոստոսին, կամավոր անդամագրվում է 2-րդ Դրագունյան, ապա 13-րդ օդային նավատորմ, ուր եւ մնում է մինչեւ 1917թ. նոյեմբեր:

Պատերազմի ժամանակ հրատարակած «Օդային նավատորմի զինվորական քահանայի ճանապարհորդության օրագիրը»[5] վերնագրով նրա ամսագիրը գրավեց ֆրանսիական հրամանատարության ուշադրությունը: Առաջին էջերը նվիրված էին Թուրքիայի ասիական շրջանների իրավիճակին (1914թ. մայիս-հունիս): 1914թ. հունիսի 27-ին Սարայեվոյի մահափորձի ժամանակ Պուադեբարը կրկին Սվազում էր.

«Ուսումնական տարին վերջացել էր: 1913թ. խոստումնալից էր: Չնայած հայկական ավանդական դպրոցների թշնամական հակամարտությանը, մեր՝ ֆրանսիական քոլեջ էին գալիս հայ ազդեցիկ ընտանիքների երեխաները... Ավարտական հանդիսությանը, ի զարմանս թուրք բարձրաստիճան պաշտոնյաների եւ քաղաքի բազմաշատ ազնվականության, խոսք վերցրեց գեներալ Ավնի փաշան,

[1] Այս օրագիրը անհետացել է կամ հանձնվել իր եղբորը, որպես կովկասյան Հայաստանում անցկացված օրերի օրագիր: Պուադեբարը պահանջում էր, որ այն հրատարակվի « միայն իր կողմից խմբագրվելուց հետո»:

[2] A. Ter Minassian, <The Role of the Armenian Community in the Foundation and Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey 1876-1923> , in M. Tunçay et J.Zürcher dir. <Socialism and Nationalism in the Ottoman Empire>, Լոնդոն եւ Նյու Յորք, 1994թ., էջ.109-156:

[3] 1914թ. մարտին Սվազի ճիզվիտներն ունեին 1166 աշակերտ, մի փոքր պակաս քան նախորդ տարին: AJF, Հայաստանյան Առաքելությունը, փաթեթ 1:

[4] Ֆրանս-թուրքական պատերազմի ժամանակ, ճիզվիտները պետք է լքեին իրենց կայանները եւ 1914թ. դեկտեմբերին արտագաղթեին, բացառությամբ Սամսունում գտնվող մի Սբ. Հոր, որն ազգությամբ թուրք էր: Իր ընկերները փախել էին, իսկ նրանց գույքը բռնագրավվել: Հաշտությունից հետո, 1919թ. որքանով որ դա հնարավոր էր, հայրերից ոմանք վերադարձան, ֆրանսիական բանակի օգնությամբ ետ գրավեցին իրենց ունեցվածքը եւ Ադանայում, Մերսինում, Սվազում ու Ամասիայում բացեցին իրենց կայանները, որոնք մեծ դժվարություններով գործեցին մինչեւ 1921թ., ապա փակվեցին:

[5] Օրագիրը պատկերում է 1914թ. հունիսի 24-ից մինչեւ 1917թ. նոյեմբեր ընկած ժամանակաշրջանը: Այն հրատարակվել է «Etudes»- ում 1917թ. մայիսին, հ.151 եւ 1918թ. հունվարին, հ.154:

որի տղան մեր աշակերտներից մեկն էր. «Ֆրանսիային է, որ մենք պետք է վստահենք մեր զավակների կրթության գործը, նա է, որ աշխարհում տարածում է իսկական քաղաքակրթությունը»: Ես բնազդաբար նայում եմ Գլխավոր Հրամանատարության (Թուրքական բանակի -Ա.Տ.Մ.) համար նախատեսված տեղերի շարքում գտնվող գերմանացի գնդապետի բազկաթոռին: Բարեբախտաբար թե դժբախտաբար, բազկաթոռը դատարկ էր: Հետո խոսեց Էնվեր փաշան, սակայն, պատվանդանից ասված նրա գովաբանական խոսքում երևում էր երիտթուրքերի ազգային ֆանատիզմը... Այն (մեր ֆրանսիական խմբակն-Ա.Տ.Մ.) իր շուրջն էր համախմբում լրջախոհ և աշխատասեր երիտասարդների, ովքեր համակրում էին Ֆրանսիային: Մեր ազգային ազդեցությունը կարծես թե գործնական արդյունքների էր հասնում: Թուրքիայի Ասիական շրջաններում Օսմանյան վարկի (Ֆրանսիայի կողմից հատկացված-Ա.Տ.Մ.) շուրջ բոլոր բանակցություններից հետո, վերջապես որոշվեց, որ Սամսուն-Սվազ երկաթգծի աշխատանքները և Սև ծովի նավահանգիստները տրվելու են ֆրանսիական ընկերություններին: Արդյոք մենք կտեսնենք թե ինչպես է բարձրանում ֆրանսիական ազդեցությունը՝ ուղղահայաց իջեցնելով գերմանականը (խոսքը գերմանացիների կողմից Բաղդադի երկաթգծի շահագործման մասին է)»[1]:

Մի քանի տեղ արդեն ասել ենք, որ Պուադեբարը թշնամանք էր տածում գերմանացիների նկատմամբ, որոնց ներկայությունը Թուրքիայում, նա տագնապալի էր համարում: Բեռլինից Թուրքիա ժամանած գերմանացի սպաները Կովկասյան ճակատի 10-րդ կորպուսում ինտենսիվ զինվորական մարզումներ էին անցկացնում, ինչպես նաև Կրուպի հրանոթի վերջին մոդելն էին տարածումը Թուրքիայում: Գերմանացիների նկատմամբ ունեցած թշնամանքը, Պուադեբարին հանգեցնում էր հետևյալ հարցադրմանը. «Թուրքիայի վրա ունեցած գերմանական մեծ ազդեցությունը կործանարար չի՞ դառնա նաև հայերի համար: Արդյունաբերությամբ և առևտրով զբաղվող հայ ազգը, որը համակրելի է Ֆրանսիայի և նրա դաշնակիցների համար, չի՞ դառնա արդյոք մեծ խոչընդոտ գերմանական գաղութացմանը»: 1915թ. երիտթուրքերի հրամանով Օսմանյան Թուրքիայում իրականացված հայերի տեղահանություններից և ջարդերից հետո հրատարակված այս գուշակությունը, որը մինչ օրս մերկացնում է գերմանացիների պատասխանատվությունը հայերի ցեղասպանության գործում, մտել է պատմագրության մեջ[2]:

Ծայրամասային ռազմավարություն

1917թ. դեկտեմբերին, լեյտենանտ, ապա ժամանակավորապես կապիտան, «Մարտական Խաչի» ասպետ Պուադեբարը, բաժանվում է գնդապետ Շարդինյիի կողմից ղեկավարվող Կովկասի ֆրանսիական զինվորական Առաքելությունից և որպես թարգմանիչ սպա գործուղվում ֆրանսիական Բանակի Գլխավոր զորակայան[3]: Կովկասում, Պարսից ծոցի հաղորդակցության քարտեզը կազմելու այս պաշտոնում, նա նշանակվել էր մարշալ Ֆոշի կողմից, որի մոտ նրան տեղավորել էր գեներալ Վեյգանը[4]: Փարիզում Կովկասը ընկալվում էր որպես պատնեշ ռուսական և օսմանյան կայսրությունների ու ճանապարհների խաչմերուկ՝

[1] 1914թ. հուլիսի 6-ին Պուադեբարը Սամսունում էր: Ֆրանսիայի հյուպատոսարանում նա ծանոթացել էր երկաթգծի մի ինժեների հետ, որը ժամանել էր ճանապարհը շահագործելու և լիահույս էր ակնկալվող եկամուտներից՝ արտահանել ցորեն, ծխախոտ, անասուն, բժշկական օգնություն ցուցաբերել լեռնական քոչվոր քրդական ցեղերին, նպաստել ֆրանսիական ընկերության կողմից Մարզվանի քարածխի հանքի շահագործմանը, որպեսզի ֆրանսիական ինժեներների կողմից տեղանշվեն քարածխի ու պղնձի հանքերը:

[2] Տես. R. Pinon-ի պաշտպանած թեզը «La suppression des Armeniens. Methode allemande, travail turc» (Հայերի ջարդը. գերմանական մեթոդ, թուրքական աշխատանք), Փարիզ, 1916թ., V. Dadrian «Histoire du genocide armenien», Պրինսթոն, 1967թ.:

[3] H. de Courtivron, La Mission militaire française au Cauase, Maîtrise d’histoire, Փարիզ, Սորբոնի համալսարան, 198թ.: Աղբյուրները վերցված են Վինսենի SHAT-ի հիմնական արխիվներից: Առաքելությունը ստեղծվել է 1916թ. հոկտեմբերին: Հղումը անհրաժեշտ է:

[4] Մյուլլեր Սիմոնիսը արդեն հաստատել էր այս տարածաշրջանի կարևորությունը Կովկասում և Պարսից ծոցում, որն անցնում էր Հայաստանի, Քուրդիստանի և Միջագետքի վրայով: Փարիզ-Լիոն, 1892թ.:

Եվրոպայի և Պարսկաստանի միջև, ինչպես նաև կարևորագույն ճանապարհ դեպի Հնդկաստան ու Կենտրոնական Ասիա:

Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքում, ռուսական բանակը լքեց Կովկասյան ճակատը և այն քայքայվեց: Ռազմական նախարար Էնվեր փաշայի օսմանյան բանակը գրոհեց քայքայվող ճակատը: Նպատակը մեկն էր՝ «Իրեդենտ հողերի» (Կարսի, Արդահանի, Բաթումի) ազատագրումը, այդ շրջաններում մահմեդական բնակչության ավելացումը և հետագա արշավանքը դեպի Բաքու և Կենտրոնական Ասիա: 1917թ. դեկտեմբերին, Անգլիան ու Ֆրանսիան ստորագրեցին Բոլշևիկյան Ռուսաստանն իրենց ազդեցության գոտիների բաժանելու մասին կոնվենցիան: Կովկասը (այդ թվում նաև Անդրկովկասը) բաժին հասավ Անգլիային, որը խնդիր ուներ Սև և Կասպից ծովերում դիմադրության պատնեշ ստեղծել գերմանա-թուրքական ուժերի, իսկ այնուհետև՝ բոլշևիկների դեմ: Անդրկովկասում ազգային ուժերի՝ վրացական, հայկական և թաթարական խմբավորումների տարերային կազմակերպումը թույլ չէր տալիս կանգնեցնել օսմանյան բանակի առաջխաղացումը, առավել ևս, որ նրանք ունեին տարբեր շահեր: «Թուրքական վտանգին» հանդիման, միայն հայերը ցուցաբերեցին պատերազմն ավարտելու պատրաստակամություն և 1918թ. գարնանից վարում էին «Հայ-թուրքական պատերազմ»: 1918թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի և 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրերի ընդունման միջև ընկած ժամանակահատվածում, Թուրքիայի պահանջով, Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հռչակեցին իրենց անկախությունը, որը նախնական պայման էր խաղաղության բոլոր բանակցությունների ժամանակ[1]:

Ռուսաստանի անկումը փոխհատուցելու, պանթուրանիզմի նպատակների իրականացմանը խոչընդոտելու, Պարսկաստանում, հետագայում՝ մինչև Թիֆլիս, ամենուրեք, գերմանական քարոզչությամբ զբաղվող գործակալների գործունեությունը կանխելու համար, Դաշնակիցները ցանկանում էին համագործակցել Ադրբեջանի քրիստոնյաների՝ ջելոյացիների, ասորա-խալդականների, նեստորականների, հայերի հետ: Ազգային խմբավորումները ոտքի կանգնեցնելու մասին Փարիզից և Լոնդոնից հանձնարարականներ ստացած Շարդինյին, Թիֆլիսից Ուրմիա է ուղարկում լեյտենանտ Գասֆիելդիին և ֆրանսիական շտապօգնության ներկայացուցչին: Վերջիններս մարդասիրական նպատակներով քողարկված, պետք է ստեղծեին ասորական և հայկական զորամիավորումներ, որոնց նպատակն էր դիմակայել օսմանյան բանակին[2]:

Պարսկական հերոսապատումը

1918թ. հունվարի 26-ին, Ա.Պուադեբարը դալիս է Պարսկաստանի Համադան քաղաքը:

Սովից ավերված այս քաղաքում է, որ նա գտավ դեպի Կասպիական իր ճանապարհը դադարեցրած ու անգլիական փոքրաթիվ զորամիավորման գլուխ կանգնած՝ գլխավոր հրամանատար Դանսթերվիլին և Բարաթովի ռուսական բանակի մի քանի փրկված կազակների:

Շարդինյիից, որին նա պետք է միանար Թիֆլիսում, լուրեր չունենալու պատճառով, Պուադեբարը ժամանակավորապես ծառայության էր մտնում Պարսկաստանում գտնվող զորակայանում ու համարվում էր 36-րդ հնդկական բրիգադի 2-րդ բաժնի (իմա՝ հետախուզական բաժնի) պետ: Այդ պաշտոնին նա մնաց մինչև պատերազմի ավարտը: 30 մարդուց բաղկացած զորախմբին, որի կազմում էր նաև Պուադեբարը հանձնարարվել էր հասնել Թավրիզ և միանալ Ուրմիայի հայերին ու ասորիներին: Սակայն զրկված լինելով օգնությունից և նյութատեխնիկական աջակցությունից, զորախումբը չի հասնում Թավրիզ և

[1] S.Afanasyan, L’Arménie, l’Azerbaïdjan et la Géorgie de l’indépendance à l’instauration du pouvoir soviétique /1917-1923/, Փարիզ, 1981թ.:

[2] F. Hellot, <L’ambulance française d’Urmia (1917-1918) ou le ressac de la Grande Guerre en Perse>, Studia Iranica, 1996, հ. 25, մ. 1 էջ. 45-80: Ուսումնասիրությունը նշանավորում է տարածաշրջանային քաղաքականությունը և դաշնակիցների պատասխանատվությունը միջհասարակարգային բռնություններին 1917-1918թթ.:

հետեւաբար, չի կարողանում օգնել Ուրմիայի 45.000 գաղթականներին (որոնցից 25.000-ը Վանի հայերն էին):

1918թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից հետո, Ֆրանսիան վավերացնում է համաձայնագիր, որով թուրքական զորամիավորումները պետք է հեռանային նաեւ Անդրկովկասից, իսկ դաշնակիցները գրավեին Բաքուն եւ Բաթումը: Այդ իսկ պատճառով, նույն օրը, վերակազմակերպվում է Կովկասի ֆրանսիական ռազմական Առաքելությունը, որը հաջորդաբար ղեկավարվում է երեք նշանավոր մարդկանց՝ գնդապետ Շարդինյեի, հրամատար Նոնանկուրի եւ գնդապետ Կորբելի կողմից: Դեկտեմբերի 20-ին վերադառնալով Թիֆլիս, Շարդինյեն, որը միաժամանակ Անդրկովկասում եւ Դաղստանում կատարելու էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցչի պարտականությունները, իր հրամանները ստանում էր Ֆրանսիայի ռազմական նախարարությունից: Նա, համագործակցելով անգլիացիների հետ, պետք է ստիպեր թուրքերին եւ գերմանացիներին հեռանալ Կովկասից, վարեր Ռուսաստանի նկատմամբ հակաբոլշեւիկյան քաղաքականություն եւ Կովկասում անգլիական նկրտումներից պաշտպաներ ֆրանսիական շահերն[1]:

«1916 թվականի ֆրանս-անգլիական համաձայնագիրը ճանաչեց Ֆրանսիայի գերիշխանությունը Փոքր Հայքի (Վերին Կիլիկիա), Սվազի եւ Մամուրեթ-էլ Ազիզի վիլայեթների հայաշատ շրջանների նկատմամբ: Որպեսզի դժվարին հաղթանակից հետո Ֆրանսիան կարողանար հաջողությամբ գործեր Արեւելքում, անհրաժեշտ էր, որ հայկական այս միջավայրում նա բաց չթողնի երես առ երես հայ ժողովրդին իր համակրանքը հայտնելու առիթը»[2]:

Ֆրանսիայի կառավարությունը նպատակ ուներ գնդապետ Շարդինյեի միջոցով «Կովկասի սովյալ հայերին» բաժանել 500 հազար ֆրանկ, որը նրանց հնարավորություն կտար 20 միլիոն ռուբլու վարկ ստանալ: Այդ վարկը, դեռեւս, Ֆրանսիայի Նախարարների Խորհրդի որոշմամբ բացվել էր 1917 թվականի դեկտեմբերի 17-ին՝ «Բոլշեւիկների անկարգությանն ու գերմանացիների կողմից Ռուսաստանի գրավմանը դիմակայող Կովկասի ազգաբնակչությանը օգնելու համար»:

Ձմեռը Հայաստանում[3]

1918թ. նոյեմբերի 5-ին Պուադեբարը ժամանեց Բաքու, ուր նա վերստին հանդիպեց անգլիական օկուպացիոն զորամիավորման հրամանատար, գեներալ Թոմսոնին եւ գնդապետ Շարդինյեին: Այստեղից, նա ժամանակավորապես գործուղվեց հայկական բանակի հրամանատար գեներալ Նազարբեկովի մոտ: 1918 թվականի դեկտեմբերի 13-ին Երեւան հասնելու համար, Պուադեբարը պետք է նախ գնար Թիֆլիս. «Հարավային Կովկասի բարձրակետ Արարատը (ուր հասնում էին Պարսից չղթան ու երեք՝ ռուսական, թուրքական եւ պարսկական սահմանները) տեսնելուց զատ, ես երկու տարվա ընթացքում ազատ ժամանակ կունենամ ուսումնասիրելու Կովկասի իրադարձությունները: Պարտված Թուրքիան չէր ցանկանում պարտված մնալ: ...Հենվելով իր երիտասարդ, կարգապահ եւ հայրենասեր սպաների վրա, նա դուրս եկավ դաշնակիցների դեմ եւ հենարան փնտրեց Խորհրդային Ռուսաստանի մոտ».[4] Իրավամբ, Պուադեբարը Երեւանում բացեիբաց ռիսկի դիմեց: Նա առաջին եվրոպացին էր, որը հայերին ցույց տվեց ֆրանսիական սպայի իր հմտությունները Կովկասի ռազմավարական եւ քաղաքական հարցերում:

Ցուրտ ձմռանը, չվախենալով ցրտից եւ համաճարակներից, արհամարհելով սննդի եւ ջեռուցման բացակայությունը, հաղթահարելով խոչընդոտները, ուշադրություն չդարձնելով հաղորդակցության միջոցների (գնացք, հեռագրատուն) հազվադեպության կամ բացակայության վրա, Պուադեբարը 1918թ. դեկտեմբերի սկզբից ակտիվ գործունեություն է ծավալում, որն արտահայտվում էր Թիֆլիս - Ալեքսանդրապոլ - Կարս - Երեւան - Ղարաքիլիսա անընդմեջ տեղաշար-ժերով՝ 10 օր անցկացնելով վագոններում: ...Դա դեկտեմբերի 10-ից 29-ը ընկած ժամանակա-

[1] H. de Courtivron, նշվ. աշխ. , էջ 49:

[2] MAE, Levant 1914-1929, Arménie, 1. Fol. 117, 18.IX.1918.

[3] Հայաստանի Հանրապետության պատմության հատվածի համար տես. R. G. Hovannisian, The Republic of Armenia, 4 vol., Berkeley, Los Angeles et Londres, 1971-1996.

[4] A. Poidebard, Au carrefour…, նշվ. աշխ., էջ 126:

հատվածն էր[1]: Առաջին շփումներն անմոռանալի տպավորություններ թողեցին նրա վրա: Երեւանի կայարանում Հայաստանի կառավարության անունից նրան դիմավորում են եւ ներկայացնում գեներալ Նազարբեկովի գլխավորած զորամիավորմանը. «Այս լեռնականների սրտի խորքից հնչող ողջույնում ես զգում էի 1914, 1915, 1916 թվականների հին ռուսական բանակի ոգին, որը 1918 թվականին հայոց մարմնում դեռեւս ի հեճուկս ամենի փորձում էր մարտնչել հանուն մեզ»[2]: Անորոշ սահմաններով (ՀՀ սահմանների չափը դեռեւս չէր որոշվել) Հայաստանի Հանրապետությունը շատ փոքր է, մարդիկ շատ հուզիչ են, ունեն իրենց հավատքն ու հարգանքը, որը թե ռազմական, թե քաղաքացիական բնագավառներում ձեւավորվել է ռուսական դպրոցի ազդեցության ներքո: Սակայն միեւնույն ժամանակ նրանք ռուսացած են՝ գեներալներ Նազարբեկյան, Կորգանով (Ղորղանյան), (Հայաստանի Հանրապետության) ռազմական նախարար կամ Թիֆլիսի նախկին քաղաքապետ եւ Կովկասյան քաղաքների դաշնության նախկին նախագահ Հախվերդով (Հախվերդյան), Ալեքսանդր Խատիսյան (Խատիսով կամ Հատիսով)՝ սկզբում (Հայաստանի Հանրապետության) արտաքին գործերի նախարար, ապա՝ 1919-1920 թվականներին՝ վարչապետ: Վերջինս, որին երկու պատերազմների ընթացքում Պուադեբարը հանդիպում էր Փարիզ կատարած իր յուրաքանչյուր այցի ժամանակ, նկարագրում է իրենց առաջին հանդիպումը.

«Ինձ հայտնեցին ֆրանսիացի սպա Պուադեբարի մասին: Նա տեսակցություն էր խնդրում: Ասացի, որ անմիջապես ներս թողնեն: Նա 40 տարեկան էր ու ֆրանսիական համազգեստ էր կրում: Մեր հանդիպման ընթացքում պարզվեց, որ Պուադեբարը խոսում է հայերեն, քանի որ որպես միսիոներ (քարոզիչ)՝ վեց տարի անցկացրել է Թուրքիայում: Այդ կապակցությամբ կարող եմ հետաքրքիր մանրամասներ հաղորդել: Անցկացնելով մեկ օր Ալեքսանդրապոլում, Պուադեբարը հայերենով ուջույնի խոսք հղեց նրանց, ով պատիվ ուներ կայարանում նրան դիմավորելու: Հայերենին չտիրապետող (հայկական) զորամասի հրամանատարությանը այն հասկանալի դարձնելու համար անհրաժեշտ եղավ նրա խոսքը թարգմանել ռուսերեն: Հետագայում Պուադեբարը դարձավ հայերի անկեղծ բարեկամը: Մեզ հետ կիսեց մեր բոլոր դառնություններն ու ուրախությունները»[3]:

Սակայն, արձանագրենք, որ Պուադեբարն իր հաղորդագրություններում չի հիշատակում անկախ Հայաստանի ստեղծման գործում առաջնային դեր խաղացած այնպիսի հայ գործիչների, ինչպիսիք են Արամ Մանուկյանը կամ Հովհաննես Քաջազնունին: Միգուցե նրա համար, որ վերջիններս Հայաստանում իշխող՝ ՀՅԴ կուսակցության ղեկավարներ էին, որոնց պետական գործունեությունն առավել վճռական էր, քան նույն կուսակցության անդամ Խատիսյանինը: Իրավիճակը, որը նա իր համար բացահայտում է Հայաստանում ՝ կործանարար էր: Մինչեւ Երեւան ժամանելը, նա ականատես եղավ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ծագած պատերազմին (1918 դեկտեմբեր - 1919 հունվար): Երկու կողմն էլ պահանջում էին Բորչալուի եւ Ախալքալաքի շրջանները: Վրացիները ճանապարհին կանգնեցրել էին Հայաստան օգնություն բերող գնացքը, որին երկու օր է սպասում էր լեռներով շրջապատված, Ադրբեջանի հետ Ղարաբաղին, Զանգեզուրին եւ Նախիջեւանին տիրանալու համար հակամարտության մեջ ներքաշված եւ մշտապես սովի վտանգի առջեւ կանգնած Հայաստանի բնակչությունը: Կովկասյան ազգությունների խճանկարում դժվարությունը բաժին էր ընկել միայն հայ ժողովրդին եւ

[1] MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 32-66, 10.XII.1918 au 29.XII.1918.

[2] A. Poidebard, <Le rôle militaire des Arméniens sur le front du Caucase après la défection de l’armée russe (décembre 1917 à novembre 1918)>, Revie des études arméniennes, t. 1, 1920, էջ. 5-23: Պուադեբարը սրտանց հիանում էր, հեղափոխությունից հետո ռուսական բանակի կումից լքված, Կովկասյան ճակատում օսմանյան հարձակմանն ընդդիմացու հայկական ջակատների ինքնապաշտպանությամբ: Սեւրի պայմանագրի վերաբերյալ 1920 թվականին Փարիզի ամսագրերից մեկում հրատարակված հոդվածում Պուադեբարը ներկայացնում է քաղաքական նպատակները: Այս հարցի շուրջ տես. Աֆանասյան, նշվ. աշխ..; Ter Minassian, La République d’Arménie, նշվ. աշխ..; G. Korganoff, La participation des Arméniens à la guerre mondiale sur le front du Caucase (1914-1918), Paris, 1927.

[3] Ա.Խատիսյան, նշվ. աշխ., էջ 173: Ա.Խատիսյանը (1874-1945) Հայաստանի խորհրդայնացումից հետո, արտագաղթեց Փարիզ, որտեղ դարձավ Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ, ապա՝ նախագահ:

Հայաստանի Հանրապետությանը, որն անընդհատ հակամարտությունների աղբյուր էր նորաստեղծ պետությունների միջեւ:

Պուադեբարն անմիջապես համակրում է հայերին, քանի որ ի տարբերություն հարեւանների, նրանք 1918թ. չէին դիմել գերտերությունների օգնությանը: Իրավամբ, վրացիներն ընդունել էին «Գերմանիայի առաջարկները», իսկ ազերիները՝ թուրքերին ընդունում էին իբրեւ իրենց ազատարարների: Համաձայն Մուդրոսի զինադադարի, թուրքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասից: Գեներալ Շեվքի փաշայի ջոկատները, հեռանալով Ալեքսանդրապոլի շրջանից, իրենց հետ տանում էին նաեւ շրջանից թալանած գույքը: Միաժամանակ, գերեցին եւ իրենց հետ տարան 13-45 տարեկան տղամարդկանց: Ալեքսանդրապոլ-Կարս ճանապարհի հսկայական զինանոցը լքված էր: Թալանած գենքը մահմեդական գյուղացիությանը բաժանելուց հետո, Շեվքի փաշան Կարսից հանգիստ հեռացավ Էրզրում: Տարածվող սովը եւ հետագա հուզումները կանխելու նպատակով Պուադեբարը ձգտում է դաշնակիցների միջոցով անհապաղ վերականգնել Ալեքսանդրապոլ-Թավրիզ երկաթգիծը եւ այնտեղ ուղարկել Կովկասում գտնվող դաշնակիցների միակ ուժի՝ անգլիական գլխավոր զորակայանի ներկայացուցչին:

Երեւանում նա իր համար բացահայտում է գաղթականների խնդրի խորությունը, որոնց բաժանում է երեք խմբի՝ տաճկահայերի, Կարսի հայերի եւ կովկասահայերի: Պուադեբարը մեջբերելով Հայաստանի գլխավոր սանիտարական տեսուչ Պապիկյանի զեկույցը, ըստ որի, հայ ժողովուրդը՝ ենթարկվելով կոտորածների, համաճարակների ու սովի, փշրված է, խնդրում է ֆրանսիական Կարմիր խաչի օգնությունը: Նա իր ստորագրությամբ հաստատում եւ երաշխավորում է նաեւ մատակարարման նախարարի զեկույցը: Թուրքական բանակի կողմից թալանված եւ աշխարհից կտրված Հայաստանում կար ընդամենը՝ 3 լոկոմոտիվ, 5 վագոն եւ ցիստերն, մինչդեռ տեղական բնակչության թիվը կազմում էր 800 000 մարդ, գաղթականներինը՝ 300 000 եւ զինված ուժերինը՝ 16 000: Հետագա ամիսների ընթացքում ավելի քան 200 000 հոգի դառնալու են սովի եւ համաճարակների զոհը:

Վերադառնալով Սանահինից, ուր անգլիացի կապիտան Գրինի եւ հայկական խորհրդարանի պատգամավորների հետ մեկնել էր մասնակցելու Վրաստանի հետ կնքվելիք զինադադարի բանակցություններին, Պուադեբարը վերոնշյալ տվյալների հիման վրա, անմիջապես տագնապալի մի զեկուցագիր է ուղարկում Բաքու՝ գեներալ Թոմսոնին, խնդրելով նրա անմիջական միջամտությունը հայ-վրացական հակամարտությունը կարգավորելու հարցում: «Վիճահարույց տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքն անվիճարկելի է: Ես հետազոտել եմ Բաթումի եւ Կ.Պոլսի կոնֆերանսների բոլոր քննարկումները: Վիճահարույց Բորչալուի, Ախալքալաքի եւ Ղարաբաղի շրջանների բնակչությունը, (1917թ.) ռուսական հեղափոխության ժամանակ, իրենց՝ իսկ վրացիների հավաստմամբ, մեծամասամբ, իսկ որոշ տարածքներում, ամբողջապես հայկական է եղել»:

Դժվար է ասել, թե արդյո՞ք Շարդինյիի միջոցով Փարիզ ուղարկված Պուադեբարի զեկուցագրերը հաշվի առնվել են Ֆրանսիական կառավարության կողմից որոշումներ կայացնելու ժամանակ: Սակայն այն պահին, երբ բացվում է Փարիզի խաղաղության կոնֆերանսը, որպես նախազգուշացում հնչում է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի ելույթը. «Հայաստանը դարեր շարունակ գոյություն է ունեցել իբրեւ անկախ պետություն՝ յուրաքանչյուր անգամ տարբեր սահմաններով: Նրա անցյալը կամաց-կամաց հանգեցրեց իր հողում տարբեր եւ միեւնույն ժամանակ հակադիր էթնիկական տարրերի երեւան գալուն: Ինչպե՞ս այս պայմաններում, XX դարում կրկին կառուցել մեկ միասնական եւ ինքնուրույն Հայաստան: Հայաստանի առջեւ ծառացած՝ բաժանված տարածքների եւ բնակչության խնդիրները լուծելու համար, ցանկալի կլինի ստեղծել դաշնային պետություն, պայմանով, որ նրա կազմակերպումը իր ձեռքը վերցնի եվրոպական մի գերտերություն»[1]:

[1] MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 70-84. M.de Montbas, Գրառումներ Հայաստանի մասին:

Փարիզում, խաղաղության կոնֆերանսի բացման հայտարարությունը լրացուցիչ հույսեր է արթնացնում Պողոս Նուբար փաշայի[1] գլխավորած ու Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի եւ Եթովպիայի հայկական կոմիտեների կողմից պաշտպանության արժանացած հայկական ազգային պատվիրակության մոտ, որը կամենում է ի ցույց դնել հայերի, իբրեւ «պատերազմող» կողմ լինելու հանգամանքը:

1916 թվականին Արեւելյան լեգեոնում հայ կամավորներ ընդգրկելու հարցի շուրջ Պողոս Նուբար փաշայի հետ բանակցող Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնի ձայներանգը փոխվում է հայերի կողմից Կիլիկիան (որը Ֆրանսիայի վերահսկողության տակ էր եւ գաղթականների մեծ ներհոսք էր նկատվում) ետ պահանջելուց հետո: 1919 թվականի մարտին Շարդինյիին հասցեագրված հեռագրում նա հստակեցնում է.

«Ֆրանսիան ստանձնել է հայերին թուրքական լծից ազատագրելու եւ լուսավոր ապագայի հասցնելու պարտավորություն: Նա հաճույքով աջակցում է կամավորներին Թուրքիայի արեւելյան նահանգներում հայկական պետություն ստեղծելու գործում, որը կմիանա Երեւանի հայկական Հանրապետությանը եւ Օքսինի կամրջով կապվելով Հունաստանի հետ ելք կունենա դեպի Տրապիզոն: Ուստի, այս հարցի շուրջ հայաստանաբնակ հայերի կարծիքի արտահայտումը օգտակար կլինի, որպեսզի կասեցվեն այն հայ քաղաքական գործիչների տենդենցիոզ նկրտումները, ովքեր պտտվելով հայկական պատվիրակության շուրջ, փորձում են նրան ներքաշել հսկայածավալ հայկական տերության (որտեղ բացակայում են միայն հայերը) պահանջատիրական խնդրի մեջ: Ազգային շահերից ելնելով, նրանց ուղղորդողները պետք է կասեցնեին վեհության մոլուցքով տառապողներին»[2]: Թիֆլիսում Շարդինյին, իր հերթին, շոշափում էր Փարիզ ուղեւորվող Ավետիս Ահարոնյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության պատվիրակության մոտեցումը: «Հավաստում եմ, որ հայկական կառավարությունից հրահանգ եմ ստացել Խաղաղության կոնֆերանսում պաշտպանել Հայաստանի (Միացյալ Ռուսահայաստանի եւ Տաճկահայաստանի) անկախության սկզբունքը... Հայ ժողովրդի կրած տառապանքները, ընդհանուր գործի համար թափված արյունը նրան իրավունք են տալիս պահանջելու իր անկախությունը»: Սակայն, պատերազ-մի ընթացքում Ռուսահայաստանը ավերվել էր, իսկ «Տաճկահայաստանից մնացել էր միայն անունը»: Նրա վերակենդանացման համար անհրաժեշտ էր ժամանակ, միջոցներ եւ ազգաբնակչություն: Պատվիրակների ինձ հաղորդած խոսքերից պարզվեց, որ 500 հազար հայ գաղթականները կկարողանան այստեղ վերադառնալ մի քանի տարվա ընթացքում»[3]:

Ֆրանսիան եւ հայ գաղթականների վերադարձը

Մի կողմ դնելով Կիլիկիայի եւ Հայաստանի գաղթականների (որոնց մասին Պուադեբարը մշտապես հիշեցնում էր) խնդիրները կարգավորելու անհրաժեշտությունը, Շարդինյին սպասում է հրահանգների, որպեսզի օգտագործելով անգլիական ուժերին, առանց արյուն թափելու կազմակերպի «ռուսահայերի» պաշտպանությունն ու վերադարձը: Ինչ վերաբերում է իրենց բնակավայրերը տաճկահայերի վերադարձին, ապա դա բավականին դժվար է:

Իսկապես, տարածաշրջանի անցուդարձերին քաջատեղյակ Պոլ Լեպիսյերը[4] Տրապիզոնից հաղորդում է Կ.Պոլսում մշակված «Հայ-հունական պետության»

[1] Եգիպտոսի հայ նախարարի որդի Պուղոս Նուբար փաշան (1851-1930) Եվրոպայում Թուրքիայի հայկական նահանգների բարեփոխումների խնդիրը պաշտպանելու նպատակով Գեւորգ Ե կաթողիկոս կողմից 1912 թվականին նշանակվել է հայկական ազգային պատվիրակության ղեկավար: Տե՛ս A. Beylerian, Les Grandes Puissances, l'Empire ottoman et les Arméniens dans les Archives françaises (1914-1918). Recueil de documents, Paris, 1983.

[2] MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 4. Խոսքը հայերի կողմից Կիլիկիան վերադարձնելու պահանջներով Փարիզում Ֆրանսիայի դեմ կազմակերպված ցույցերի մասին է:

[3] MAE, Levant 1914-1929, Arménie, 3. fol. 32-66, 10.XII.1918 au 29.XII.1918.

[4] Ֆրանսիացի դիվանագետ Պոլ Լեպիսյերն (1884-1954), որը տարբեր պաշտոններ էր զբաղեցրել, իր լավ աշխատանքի համար արժանացել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարարության բարձր գնահատականին: Գործուղվելով Տրապիզոն իբրեւ Կ.Պոլսի

նախագծի դեմ տեղերում կազմակերպված ելույթների եւ «մեծամասնության համար սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունք» պահանջող թուրքերի «ազգային պաշտպանության կոմիտեների» ստեղծման մասին: Ռուս-թուրքական սահմանում եւ արեւելյան վիլայեթներում խաղաղության վերահաստատման համար Պ.Լեպիսյերը խորհուրդ է տալիս «ամրապնդել Կովկասի մեր (Ֆրանսիական) ռազմական առաքելությունը, որին Տաճկահայաստանը գրավելու ակնկալիքով հնարավոր կլինի հանձնարարել ներկայումս ամբողջությամբ կազմալուծված եւ ռազմական արժեք չներկայացնող հայոց բանակի վերակառուցումը»: Նա խորհուրդ է տալիս Տրապիզոն ուղարկել ֆրանսիացի սպաների, որոնք կկարողանան հասնել Սվազ, Խարբերդ, Էրզրում, Բիթլիս, վերակազմակերպել ոստիկանությունը, զինաթափել թուրք բնակչությանը եւ «հայ գաղթականներին վերաբնակեցնել իրենց բնակավայրերում»[1]:

1919 թվականի մարտի 6-ին, Պուագեբարը Երեւանում ստացավ հավաստագրեր, համաձայն որոնց, Հայաստանի կառավարությունը՝ երկրի անվտանգու-թյան ապահովման հարցում (հայկական բանակի կազմակերպում եւ նրանց՝ սպառազինության մատակարարում) Ֆրանսիայի աջակցությունը հայցելու նպատակով, Երեւանում ֆրանսիական ռազմական առաքելության ներկայացուցիչ կապիտան Պուագեբարին, իբրեւ միջնորդ, օժտեց լայն լիազորություններով »[2]:

Նույն օրը Շարգինյին Թիֆլիսից Ֆրանսիայի արտգործնախարարության 2-րդ բյուրոյին է ուղարկում Պուագեբարի կողմից իրեն փոխանցված եւ Ֆրանսիական կառավարությանն ուղղված նամակ-հավաստագիրն ու բազմաթիվ այլ փաստաթղթեր:

Հայաստանը Ֆրանսիայից ակնկալում էր պաշտպանության համար նախատեսված խիստ անհրաժեշտ ռազմական տեխնիկա (ինքնաթիռներ, բանակի եւ ինժեներական զորքերի համար անհրաժեշտ մեքենաներ եւ այլն): Շարգինյին կողմնակից էր այս խնդրանքին: Միեւնույն ժամանակ անհրաժեշտ էր, որպեսզի գերտերությունները մեկ միասնական վստահված ներկայացուցիչ ունենան Հարավային Կովկասում եւ Հայաստանում. «Քանի որ ես (Շարգինյին) խաբեություն եմ համարում բոլոր կոնվենցիաները, որոնք ֆրանսիական ազդեցության տակ կգնեն ավերված հայկական վիլայեթները (Թուրքահայաստանը), իսկ անգլիական ազդեցության տակ կթողնեն Հարավային Կովկասի հարուստ դաշտերը»:

Պուագեբարը Ֆրանսիական կառավարությանը փոխանցում է նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարարի գրությունը, որը բաղկացած էր մի շարք խնդրանքներից՝ հայկական տարածքներից շուտափույթ հեռացնել թուրքական սպաներին ու զինվորներին եւ զինաթափել Ախալքալաքը, Ախալցիխեն, Կարսը, Արդահանը, Նախիջեւանը, Էրզրումը, Երզինջանը, Բիթլիսը, Վանը ապատակող թուրքական սպաների կողմից ղեկավարվող հրոսակախմբերը, վերականգնել Հայաստանն արտաքին աշխարհին կապող հաղորդակցության ճանապարհները եւ Ֆրանսիական սպաների աջակցությամբ ստեղծել բանակ, հայ գաղթականներին վերադարձնել իրենց բնակավայրերը՝ ապահովելով նրանց սնունդը, բնակարանների վերականգնումն ու սանիտարական ծառայությունը: Փարիզի հաշտության կոնֆերանսի նախագահ եւ Ֆրանսիայի ռազմական նախարար Կլեմանսոյի պատասխանը հստակ էր. «Հայաստանում ռազմական ներկայացուցչության պաշտոնը պետք է հանձնվի այն տերությանը, որը Խաղաղության կոնֆերանսում կստանա Հայաստանի մանդատը: Եթե այդ մանդատը չտրվի Ֆրանսիային, ապա անիմաստ է ընթացք տալ այս խնդրանքին»[3]:

գլխավոր կոմիսար (1918թ. դեկտեմբեր) ու միաժամանակ ստանձնելով Տրապիզոնի հյուպատոսի պաշտոնը (1919թ. հունվար), նա քեմալական եւ բոլշեւիկյան շարժումների փայլուն ուսումնասիրողներից էր: 1921թ. նոյեմբերի 24-ին նա օգնել է Կիլիկիայի ֆրանսիական առաքելությանը: 1924թ. Վեյգանդը նրան նշանակել է Բեյրութի գլխավոր կոմիսարիատի գլխավոր քարտուղար:

[1] MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 235-236, 12.IV.1919.

[2] MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 241. Կնքված եւ ստորագրված է 3 նախարարի կողմից՝ Ս. Տիգրանյան, Հախվերդով, Ա.Խատիսյան:

[3] MAE, Levant 1914-1929, Arménie, 4. fol. 240, 13.IV.1919.

Մերժումը չհուսահատեցրեց ոչ Պուագեբարին, ոչ էլ Շարգինյիին: Երկուսն էլ ոգեւորված էին հայկական հարցի լուծմանը մասնակցելու փաստով: Նրանք համոզված էին, որ հայ գաղթականների «վերադարձի իրավունքը» պետք է կիրառվի, սակայն եւ՛ մեկը եւ՛ մյուսը զուրկ էին գործելու միջոցներից եւ վշտացած՝ անզորության զգացումից: Ապրիլին, Հայաստանի վիճակի եւ անհրաժեշտ աջակցության վերաբերյալ Շարգինյիին ուղարկված Պուագեբարի զեկուցագրերը դառնում են ավելի ու ավելի թախանձագին: Դա ուներ իր պատճառը: Ալեքսանդրապոլը, ուր հազարավոր գաղթականներ էին խմբված, արդեն 20 օր է հացահատիկ եւ ալյուր չէր ստացել. «Մինչդեռ ես ամերիկյան օգնության կոմիտեի համար իմ գնացքով բերել էի 11 վագոն ալյուր»: Իսկ Երեւանում, ուր իրադրությունը միշտ առավել ծանր էր, ինչպե՞ս էին կարողանում կերակրել բնակչությանը: Եվ այսպես երկու տարի շարունակ: Փոխարենը, Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհին «ես ութ օրվա ընթացքում մեծ տարբերություն նկատեցի: Հողի մի մեծ հատված՝ գրեթե քառորդ մասը, սկսել էր մշակվել»: Հայկական կառավարությանը տեղեկացրել էին, որ Կարսում անգլիական զորամիավորումը մեծ հարգանք էր վայելում մահմեդական բնակչության մոտ. «Հայերի վարչակարգն ու բանակը նույնպես լավ էին ընդունվում Կարսի մահմեդական բնակչության կողմից: Տարագիրներով բեռնված Ալեքսանդրապոլի առաջին գնացքները առանց դժվարությունների հասել էին Կարս: Սպասում ենք գյուղերում նրանց բնակեցման հետ կապված մանրամասն տեղեկությունների»:

Պուագեբարը նշում է նաեւ, որ անգլիական զորակայանը Կարսում առգրավել է թուրքերի կողմից ռուսների զինանոցից վերցրած զենքը: ՀՀ կառավարությանը հանձնելու փոխարեն, արդեն Թիֆլիս է ուղարկվել 65 հրանոթ, վեց վագոն արկ եւ մի քանի միլիոն փամփուշտ, որի պատճառով, հայերը զրկել են վերաբնակվող գաղթականներին պաշտպանելու համար խիստ անհրաժեշտ զենքից եւ զինամթերքից: Միեւնույն ժամանակ, 1919թ. ապրիլի 21-22-ը, գեներալ Բիչը եկել էր խորհրդակցելու Երեւանի կառավարության հետ Հայաստանի ապագա սահմանների եւ «հայ տարագիրների՝ դեպի Հայաստան վերադարձի» տեխնիկական հարցերի շուրջ: Բիչը դեմ էր Պողոս Նուբար փաշայի՝ Մեծ Հայաստանի ծրագրին եւ կողմ Հայաստանի Հանրապետության կառավարության այն ծրագրին, որը նախատեսում էր սահմանը Քերազունդից (Գիրեսուն) հասցնել Խարբերդ, Մուշ եւ Բիթլիս: Պուագեբարը կրկին անդրադառնում է իր եւ գեներալ Նազարբեկովի կողմից մշակած՝ «տարագիրներին» իրենց բնակավայրերը վերադարձնելու ծրագրին: 10 000 հայ զինվորի կողքին անհրաժեշտ է ունենալ 5 000 անգլիացի զինվոր: Անգլիական կամ դաշնակիցների զորամիավորումների ներկայությունը պարտադիր է, քանի որ հայկական բանակը զուրկ է զենքից, զինամթերքից, հագուստից, կոշիկից եւ չունի անհրաժեշտ միջոցներ միայնակ գործելու համար. «Հայկական զորախմբերի կողմից տարագիրների ուղեկցումը նշանակում է անխուսափելիորեն նրանց դատապարտել ջարդի»: Չնայած, անգլիական զորքերի Հայաստանից հեռանալու մասին գեներալ Միլնի հայտարարությանը, բրիտանական գլխավոր զորակայանի եւ Նախիջեւանի տարագիրների հարցերով զբաղվող գեներալ Նազարբեկովի տեղակալ Դրոյի միջեւ համագործակցությունը դեռեւս շարունակվում էր: Միեւնույն ժամանակ, գեներալ Թոմսոնը համոզված էր, որ Նախիջեւանը պետք է տրվի Հայաստանին, իսկ Ղարաբաղը՝ Ադրբեջանին: Նա համաձայնել էր օգնել հայերին եւ գրավել Երեւան-Նախիջեւան հատվածի ճանապարհն ու երկաթուղին: Անհայտ է մնում թաթարական բնակչության գիրքորոշումը: Անգլիացի գնդապետ Տեմպերլիի կարծիքով, նրանց դիմադրությունը կասկածից վեր էր, սակայն հայ ղեկավարների՝ Դրոյի[1], Նազարբեկովի, Խատիսովի կարծիքներով, այդ պարագայում պատասխանատվությունը կրնկներ անգլիական զորքերի վրա:

Պուագեբարը՝ Շարգինյիին ուղարկած զեկուցագրերում, անդրադառնում է նաեւ թուրքական ընդդիմության (Մ.Քեմալի կողմնակիցների) վերելքին, թուրքերի եւ բոլշեւիկների միջեւ ընթացող գաղտնի բանակցություններին եւ հայ գաղթականների կողմից կազմակերպված կամ անկանոն կերպով իրենց բնակավայ-

[1] Դրո /Դ.Կանայան, 1884-1956թթ./ ՀՅԴ ականավոր ֆիդայի: Նա ղեկավարում էր թուրքերի դեմ Բաշ-Ապարանի ճակատամարտը /1918թ. մայիսի վերջ/: 1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին եղել է ռազմական նախարար:

րերը վերադառնալու փորձերին: Իրավիճակը լարված էր նաեւ անգլիական զինվորականների վերահսկողության տակ գտնվող Բաթումում: Այստեղ կարելի էր հանդիպել Բիչերակովի կազակների, հազարավոր հայ գաղթականների, ինչպես նաեւ ռուսների, աջարների եւ վրացիների աջակցությունը վայելող բոլշեւիկների: Լազիստանում՝ օգտագործելով բանակը եւ Ախալքալաքի ու Նախիջեւանի կապը, իթթիհադականների կողմից Կ.Պոլսի կառավարության եւ դաշնակիցների դեմ ընդդիմադիր շարժում էր կազմակերպվել: Տրապիզոնի վիլայեթում Միություն եւ Առաջադիմություն կոմիտեն մեծամասնություն չէր, սակայն Իթթիլյաֆ (լիբերալ համաձայնություն) կուսակցությունը Կ.Պոլիս էր ուղարկել երկու պատվիրակի, տեղեկացնելու, որ Տրապիզոնը ոչ հունական, ոչ էլ հայկական չի դառնա: Թուրքերը թշնամաբար են տրամադրված Վիլսոնի եւ «մեկ ազգային դրոշի ներքո աճող բոլշեւիկյան շարժման» դեմ: Թուրք ընտանիքներում կարելի էր գտնել բազմաթիվ հայ երեխաների (հաճախ աղջիկների), եւ նեթե 100 հայ մեկ ամսում վերադառձել էին Տրապիզոն եւ վերաբնակվել իրենց տներում, ապա սարերում վիճակն անկառավարելի էր: Մի քանի տասնյակ հայ ընտանիքներ վերադարձել են Քերագունդ, Սասուն, Զոնգյուլդակ: Կ.Պոլսում, ուր հայերը դիտվում էին որպես ֆրանսիացիների, անգլիացիների եւ իտալացիների դաշնակիցներ, նրանց թիվն ավելանում էր: Կիլիկիան եւս իր մասնաբաժինն ուներ այս գործընթացում՝ ավելի քան 100 000 հայ վերադարձել էին ֆրանսիական ուժերի հովանու տակ: Այսինքն, գաղթականների վերադարձը հնարավոր էր միայն դեպի Թուրքիայի ծովափնյա շրջանները եւ բացարձակապես անհնար դեպի հայկական տարածքների խորք՝ Էրզրում կամ Մուշ[1]:

Ֆրանսիական պարտավորությունների դադարմանն ընդառաջ

Փարիզում, Շարդինյիի հեռագրերը (զեկուցագրերը) սպասվող արդյունքը չեն ունենում եւ Կովկասի ֆրանսիական Առաքելությունը չի ուժեղացվում: Ընդհակառակը, ինչպես ինքն է տեղեկացնում, իր դերը, դժբախտաբար, միայն «տեղեկություններ հաղորդելն է»: Պուադեբարը ներկա էր գեներալ Միլնի եւ Խատիսովի 1919թ. ապրիլի 30-ին Երեւանում կայացած հանդիպմանը: Քննարկվել էին Հայաստանի կարիքներին եւ սահմաններին առնչվող, անգլիացիների կողից Ղարաբաղը ադրբեջանցիներին հանձնելու եւ տաճկահայերի՝ իրենց բնակավայրերը վերադառնալու հարցերը: Միլնը հայտարարում է, որ բացառությամբ զինադադարով նախատեսված ռազմավարական կետերի, Թուրքիա այլ զորքեր չեն ուղարկվի: Այնուամենայնիվ, Պուադեբարը, Շարդինյիի խնդրանքով, նրան նախազգուշացնում է, որ գաղթականների վերադարձը ռուսական նախկին կայսրության սահմանամերձ շրջանները պետք է կատարվի նախանշված երթուղիներով: Ավարտելով այդ հանդիպման նկարագրությունը, նա ավելացնում է. «Անչափ ուրախ եմ հանդիպելու անգլիացի գեներալի, որը գիտակցում է առ դաշնակիցները տածած հայերի սերը: Ոչ ոք նրանց այսքան արագ չէր ճանաչել: Ես այդ մասին ասացի նրան եւ նա հավատաց իմ անկեղծությանը: Բայց ինչպես լռել, երբ քո առջեւ տեսնում ես հազարավոր խեղճ մարդկանց մահը: Քանիսը դեռ կմեռնեն, մինչեւ որ, պարզ կդառնա այս, իսկապես ուշացած, ճշմարտությունը: Այժմ ամեն գնով անհրաժեշտ է խանգարել Հայաստանից անգլիական զորքերի հեռանալուն: Մենք կատարվածի վկաներն ենք... Մարդկային կյանքը անձնական շահից գերադասելի է եւ մեր անկեղծությունը կարող է հազարավոր մարդկանց կյանք փրկել»[2]:

Սակայն անկեղծությունը բավարար չէ եւ դրանով չես փոխարինի Կովկասում բացակայող ֆրանսիական քաղաքականությունը, որտեղ ֆրանսիացիների եւ անգլիացիների հարաբերությունները մտել են «բարեկամական տարաձայնությունների» փուլ: Մայիսի 20-ին Պուադեբարը հեռագրում է, որ անգլիական հրամանատարությունը թույլ է տվել Ալաշկերտի դաշտավայրի գաղթականների վերադարձը, սակայն առանց ուղեկցության՝ կցելով ընդամենը մեկ սպա: Թիֆլիսում Շարդինյին վրդովվում է. «Եթե վերաբնակեցումը իրականացվում է այս պայմաններով, ապա բազմաթիվ եւ ցավալի միջադեպերն անխուսափելի են:

[1] MAE, Levant 1914-1929, Arménie, 4. Fol. 22-26, 332-337.
[2] MAE, Levant 1914-1929, Arménie, 5. fol. 23-27, 7. V. 1919.

Մյուս կողմից, Կարսի անգլիական զորքերի նահանջը վաղաժամ է, ինչի վրա ես բազմիցս, սակայն ապարդյուն, հրավիրել եմ անգլիական հրամանատարության ուշադրությունը... Որպես հետեւանք կփոխվի քուրդ եւ թուրք բնակչության վերաբերմունքը»[1]:

Հայ գաղթականները շարունակում էին վերադառնալ Կարս, սակայն սննդի պակասը հարկադրում է նրանց վերադառնալ Ալեքսանդրապոլ, որտեղ ժամանակավոր ճամբարել էր մոտ 60 000 մարդ: Անգլիացի գեներալ Դեվիի հետ Խատիսովը գնաց Ջուղա (Ջուլֆա), որպեսզի պաշտոնապես ընդունի Նախիջեւանը: Արտաքուստ բարյացկամություն ցուցաբերելով թաթարական խաների եւ մահմեդական խորհրդի նկատմամբ, նա կոչ է անում զինվել լավատեսությամբ եւ աջակցել Ռուսաստանից հայ գաղթականների վերադարձին: Լավատեսությունը չէին կիսում հայ զինվորականները, որոնք կանխատեսում էին որ անգլիական զորքերի հեռանալուց հետո Երեւան-Նախիջեւան հատվածը գրոհի կենթարկվի թաթար հրոսակների կողմից: Հայկական ուժերի զորացման համար Դրոն կոչով դիմում է ռուսական բանակում ծառայած մարդկանց, սակայն վերջիններս զենք եւ սպառազինություն չունեին[2]:

Ապրիլի 28-ին Երեւան ժամանած Հայնցը՝ Հուվերի գլխավորած ARA-ի (ամերիկյան օգնության վարչություն) ներկայացուցիչը, առաջարկում է Խատիսովին հստակեցնել Փարիզում Պողոս Նուբար Փաշայի եւ Ա.Ահարոնյանի կողմից ստորագրված նախագիծը: Հայնցն առաջարկում է 3-ամսվա ընթացքում Հայաստանը մատակարարել ցածր գներով ալյուրով՝ ամսեկան 400 000-ական փութ: Նա նաեւ առաջարկում է վճարման արտոնյալ ժամկետներ (Խատիսովը խնդրում է 4 տարի) եւ պայմաններ[3]: Հայաստանը մարդասիրական օգնությամբ մատակարարելու հարցում, ամերիկացիները անգերազանցելի էին: Մայիսից սկսած, նրանք ալյուրի բեռներ էին ստանում Հայաստանի համար: 1919թ. վերջին, սովը հաղթահարվել էր, եւ պետական հաստատությունները սկսել էին գործել:

Անդրանիկ. ըմբոստի դիմանկարը

Այդ նույն ժամանակ, հայ հերոսներից ամենաժողովրդականը՝ գեներալ Անդրանիկը[4] եկել էր Երեւան: Պուադեբարի համար սա հնարավորություն էր մոտիկից ճանաչելու մի մարդու, որի խիզախությամբ նա հիանում էր հեռվից, թեեւ վերջինիս Թավրիզի արշավանքը ձախողվել էր[5]: Անդրանիկի, իբրեւ «անտանելի բնավորության» տեր մարդու՝ ճիշտ բնութագրումը ցույց է տալիս, որ նրան խորթ է գրասենյակային աշխատանքը: Խռոված ՀՅԴ կուսակցությունից, հրաժարվելով ճանաչել «թուրքերի ձեռքով ստեղծված Հայաստանը», Անդրանիկը՝ Թավրիզի ասորիներից եւ տաճկահայերից կազմված իր ջոկատները ցրելուց եւ իր զենքը Կաթողիկոսին հանձնելուց հետո, ապրիլի 27-ին անգլիացի գնդապետ Գիբբոնի ուղեկցությամբ թողնում է Էջմիածինը: Անդրանիկին Կովկասից հեռացնելու անգլիական հրամանատարության որոշումն, ընդհանուր առմամբ, հավանության էր արժանացել... Կառավարությունն ու հրամանատարությունը, ներառյալ Դրոն, միաժամանակ էին նրա ջոկատները ցրելու եւ Երեւանի շրջակայքում դեռեւս գործող ոչ պետական (ոչ կանոնավոր) զորամիավորումը զինաթափելու իրենց պահանջում: Այդ ամենը արվում էր ի օգուտ կազմակերպված եւ կարգապահ

[1] Նույն տեղում, 177, 20.V.1919:
[2] Նույն տեղում, 178-179, 17.V.1919:
[3] Նույն տեղում, 217:
[4] Անդրանիկ Օզանյան (1866-1927), ծնվել է Շաբին Գարահիսարում: Ֆիդայի եւ ակտիվ դաշնակցական (ՀՅԴ): 1904թ. գլխավորում է Սասունի ապստամբությունը: Հակառակ իր կուսակցության կարծիքի, նա բուլղարացիների կողքին մարտնչում է թուրքերի դեմ (1912թ.), ապա գլխավորում է հայ կամավորների ջոկատները Կովկասում (1915թ.): Մինչեւ գեներալ դառնալը, գլխավորել է ռուսների հատուկ դիվիզիոնը (1917թ.): Բազմաթիվ շրջադարձերից հետո, նա հավաքում է Ուրմիայի 20 000 գաղթական քրիստոնյաների, որոնց հետ մարտնչելով հասնում է մինչեւ Զանգեզուր: Ղարաբաղի վերահսկողությունը ստանձնած անգլիացիների կողմից ձերբակալվելով, նա որոշում է լքել Զանգեզուրը եւ գնալ Արեւմուտք:
[5] MAE, Levant 1918-1929, Arménie, 5. fol. 218-219.

բանակի, որն ի վիճակի կլինի «վերադարձնել հայ գաղթականներին իրենց բնակավայրերը»: Խորհուրդ տալով ՀՀ կառավարությանը՝ բանակում ընդգրկել Անդրանիկի առավել ազդեցիկ սպաների ու մի քանի հարյուր զինվորների և չմոռանալով իր գործառույթների հետ կապված պարտականությունները, Պուադեբարը ազատություն է տալիս իր զգացմունքներին.

«Շատ էի ցանկանում անձամբ նրա հետ ծանոթանալ... Անդրանիկն անհատապես գրավիչ է, ինչպես այս հերոսական շրջանի բոլոր առաջնորդները, ովքեր ջոկատներ էին կազմավորում ջարդարար թուրքերից անօգնական հայերին պաշտպանելու համար: Նրա լեզուն կոպիտ է և չիտակ, սակայն նրա աչքերը, որոնցով նա գրավում է մարդկանց իր գաղափարներով, շատ խորամանկ են: Իր թշնամիների կարծիքով, նա երբեք մանրախնդիր, անազնիվ քայլեր չի կատարել: Այսպիսի թափառական կյանքից հետո, հաջողության բարձունքներին հասնելու փոխարեն, նա մնացել էր աղքատ, բայց հենց այդ հանգամանքն էր, որ նրան լավագույն գովեստի էր արժանացնում: Մահմեդականներին ջարդելու հարցում, նա Կաթողիկոսի ներկայացուցչի առջև իր կոչումն է հայտարարում հավատքը. «Ես երբեք չեմ կոտորել անմեղներին, միայնակներին, ես պատժել եմ միայն մեղավորներին»: Կարծում եմ, որ այդ ջոկատների կողմից կատարած ջարդերը ուռճացվում էին: Նա Աստված էր իր զինվորների և հազարավոր այն մարդկանց համար, որոնց փրկել էր: Վերջին ժամանակներս, նա էր, որ ցորեն էր մատակարարում Զանգեզուր եկած հայ գաղթականներին: Նա գիտակցում է, որ իր մոտ Բուլղարիա եկած մարդիկ՝ իր սովամահ եղող և հուսախաբված ժողովուրդն է, որոնց նա չի կարողանում օգնել: Անհրաժեշտ է լսել այդ թշվառ հայ գաղթականների զրուցապատումները, որպեսզի հասկանանք այն մեծ գաղափարը, որ կար այս մարդու մեջ: Հակառակ իր բարեկամների կարծիքի, Անդրանիկը ի վիճակի է 100 մարդուց բաղկացած ջոկատով խիզախորեն մարտնչել ոչ փոքրաթիվ կանոնավոր բանակի դեմ: Նա կազմակերպություն ստեղծելու որևէ մտադրություն չի ունեցել և ի վիճակի է եղել ղեկավարել մեծ զորամիավորումներ: Խենթություն կլինի նրան հանձնարարել դիվիզիոնի ղեկավարումը: Նա որևէ մեկի չի ենթարկվի և չի կարող վերադաս ունենալ: Չնայած բոլոր բանակցություններին, որ մայոր Գիբբոնը և Կաթողիկոսը ունեցել էին նրա հետ, նա չի ճանաչել Երևանի ներկայիս կառավարությունը...

Դրոյի զորքերը խուճապի մեջ են և Անդրանիկը մենակ պետք է լուծի գաղթականների խնդիրը: Ի դեպ Անդրանիկն այժմ շատ ծեր է և ի վիճակի չէ այն իրականացնել: Ես անչափ երջանիկ էի անձամբ ուսումնասիրելու այս մարդուն, որի մասին այդքան խոսում էին տարբեր զգացումներով: Նախորդ մի քանի դիտարկումներս կարծում եմ հասկանալի են դարձնում, թե ինչ էին ասում Անդրանիկի մասին:

Անձամբ ես հաճույքով մի քանի ժամ անցկացրեցի Էջմիածնում, մոտիկից շփվելով նրա հետ, երբ նա պատրաստվում էր ազատ արձակել իր զինվորներին: Մեզ համար, ովքեր ապրում են՝ արդեն հինգ տարի է այս անվերջանալի տառապանքները կրող և հակառակ այդ ամենին կրկին ապրել ցանկացող, անսահման համբերություն ցուցաբերող հայ ժողովրդի կողքին, Անդրանիկի նման մարդիկ շատ սիրելի են: Եվ մենք ասում ենք, որ չնայած ամեն ինչին, մենք նրանցով հիանում ենք: Դյուրին է պարսավել անկարգությունը: Դժվար է վատ հագնված, վատ զինված, վատ սնված զինվորներով, մշտապես սպասելով արտաքին օգնությանը, տարիներ շարունակ պաշտպանել հայրենակիցներիդ: Հետաքրքիր կլինի ունենալ այս ջոկատի հրամանատարի մասին թուրք հրամանատարների կարծիքը, որոնք ուզում են չափվել նրա հետ: Կարծում եմ, որ որոշ թուրքական դիվիզիաներ վատ հիշողություններ ունեն Անդրանիկից:

Բոլոր դեպքերում, ես կարող եմ միայն դրական արտահայտվել այս առաջնորդի և նրա խմբի առնչությամբ Կովկասում անգլիական գլխավոր զորակայանի ընդունած որոշման և այն ի կատար ածելու ձևերի մասին»:

Անգլիացիների նահանջը

Գաղթականների վերաբնակեցման խնդրից զատ, Շարդինյիի կողմից Փարիզ ուղարկված անվերջանալի հեռագրերի (որոնք խթանվում էին Պուադեբարի զեկուցագրերով) մյուս հիմնապատճառը հայկական բանակին ռազմական տեխնիկայի տրամադրումն էր: 1919թ. հունիսին, երբ Ղարաբաղում իրադրությունը կտրուկ ծանրացել էր, անգլիական հրամանատարությունը բավարարվում էր հայկական բանակին լծկաններ վաճառելով: Ունենալով Լեբելի 40 մլն. փամփուշտ, սակայն չունենալով այդ մոդելի հրազեն, նրանք (իմա՝ հայերը) խնդրում են Ֆրանսիային իրենց համար գնել Լեբելի 10 000 հրազեն. «մանդատակրի հարցն ինձ թվում է չի կարող որևէ դեր խաղալ այս հարցում», - ավելացնում է Շարդինյին[1]:

Փարիզը նույնպես տեղակացվել էր Երևանում ընդունված քաղաքական նախաձեռնության մասին: Նշանակվելով վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար, Խատիսյանը հաստատել էր տաճկահայ 12 պատգամավորի նշանակումը, կոչ անելով վերջիններիս նիստեր գումարել Երևանի խորհրդարանում: 1919թ. մայիսի 28-ին՝ անկախության առաջին տարեդարձի առիթով, նա ընդունում է նոր պատգամավորներին և հաստատում Միացյալ Հայաստանի փաստաթուղթը, որը հայտարարում է Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի միավորումը: Այդ փաստաթուղթը խորը ճգնաժամ է առաջացնում ՀՅԴ-ի կողմնակիցների և Պողոս Նուբար փաշայի բարեկամների միջև: Իսկապես, միասնական Հայաստանի հռչակումը խանգարում է Կիլիկիայի ապագա կարգավիճակի շուրջ բանակցություններին, որ նա վարում էր Փարիզում:

Պուադեբարի՝ մայիս ամսվա գաղտնի զեկուցագրերի շարքը պատկերում է Հայաստանում ստեղծված ճգնաժամային իրավիճակը: Ալեքսանդրապոլում հաց չկար, իսկ տաքանալու նպատակով դաղթականները քանդում էին քաղաքի տները և օգտագործում դրանց փայտերը: Ինչ վերաբերում է Կարսին, ապա Կարսից արտագաղթած հայերը, շատ վատ ճանապարհներով, շարունակում էին վերադառնալ այնտեղ (Բաթում-Արդահան-Կարս ճանապարհը վերահսկվում էր անգլիացիների կողմից), իսկ վերադարձը Նախիջևան՝ կասեցվել էր գեներալ Թոմսոնի հրամանով: Խատիսովի և անգլիական բարձր հրամանատարության, գեներալներ՝ Թոմսոնի, Բիչի ու Բրուգի միջև մայիսի 9-ին Թիֆլիսում կայացած հանդիպումն ամբողջ խորությամբ բացահայտեց կատարված սխալները: Թոմսոնը ուզում էր Ղարաբաղը զիջել հայերին: Խատիսովը հրաժարվում է և կրկին կենտրոնանում Նախիջևանի վրա: Ինչ վերաբերում է տաճկահայերի Ալաշկերտ վերադառնալուն, Թոմսոնը հայտնում է, որ «անգլիական զորքերը չեն կարող անցնել թուրքական սահմանը, ուստի դաղթականները մենակ կլինեն»: Պուադեբարը կարծում է, որ Խատիսովը չէր գգուշանում թաթարներից, և ավելացնում է. «թաթարը կարող է բարեհամբույր հյուրընկալել, սակայն, հաջորդ օրը՝ սպանել»: Ահա թե ինչու, անհրաժեշտ էր ամրապնդել հայկական բանակը և իրավունք տալ այս հարցի վերաբերյալ խնդրագրեր հղել Ֆրանսիային: Նա նաև նշում է, որ «հայերի ժամանումը Նախիջևան և Կարս, հակառակ արտահոսք է առաջացնում Կարսի և Նախիջևանի թաթարների մոտ, որոնք ցանկանում են վերադառնալ Երևան և նրա շրջակայքը: Սակայն, ներկայումս, թաթարական նախկին դյուղերը մեծամասամբ զբաղեցված են տաճկահայ գաղթականների կողմից: Որտեղից էլ առաջանում է այս գաղթականների շտապ Թուրքիա վերադառնալու խնդիրը: Անդորրը կվերականգնվի միայն, երբ յուրաքանչյուրը մոտ կլինի իր նախկին բնակավայրին»[2]:

Անգլիական զորքերի հեռանալու և հայկական զորքերի անտարբերության պատճառով, Շարուր-Նախիջևանի շրջանի թաթարական ընդվզումներն ամռան ընթացքում վերածվեցին զինված ապստամբության: Մտահոգված Պուադեբարը րոպե առ րոպե նկարագրում է Դրոյի և թաթարական զորքերի միջև հուլիսի 12-ին Բույուք-Գեվիում տեղի ունեցած դաժան ընդհարումը: Կային «շատ սպանված և վիրավոր հայեր: Այս կորուստները՝ թուրք սպաների կողմից ղեկավարվող թաթարական հրանոթներից էին»: Նա հիշատակում է պարագլուխների անունները՝ խան Թեքինսկի և «փոքր» խան Նախիջևանսկի - և խնդրում անհապաղ անգլիական զորաջոկատ ուղարկել թաթարական շարժումը ճնշելու համար. «Կարծում եմ, անմիջապես անհրաժեշտ է մեկ գումարտակ, մեկ հեծելավաշտ և մի քանի աէրոպլան»[3]: Միևնույն ժամանակ, նա չի մոռանում Երևանում Ֆրանսիա-

[1] MAE, Levant 1918-1929, Arménie, 5. fol. 223, 22. VI. 1919.
[2] MAE, Levant 1918-1929, Arménie, 6. fol. 117-127, 27. VI. 1919.
[3] **Նույն տեղում**, 76, 13. VII. 1919:

յի Հանրապետության ներկայացուցչի իր պարտականությունները: Իբրեւ Ֆրանսիայի դեսպանություն ծառայող, իր նստավայրում, նա 1919թ. հուլիսի 14-ի առիթով պարահանդես է կազմակերպում[1]:

Խորամուխ լինելով գաղթականների խնդրի մեջ, Պուագեբարը ավելի էր քննադատում գեներալ Թոմսոնին, որի քաղաքականությունը խոչընդոտում էր նրանց (գաղթականների) վերադարձը: Նա իր անհանգստությունն է հայտնում Շարգինյիին «Գեներալի իրական մտադրության մասին, որը պաշտպանում էր Նախիջեւանի (մեծամասնությունը թաթարներ էին) միացումը Հայաստանին եւ Զանգեզուրի ու Ղարաբաղի (մեծամասնությունը հայեր էին) միացումը Ադրբեջանին[2]:

Պուագեբարի հոռետեսական կանխատեսումները հաստատում է ամերիկյան գնդապետ Վիլյամ Հասքելը, որն օգնություն կազմակերպելու եւ խաղաղությունը պաշտպանելու առաքելությամբ Խաղաղության կոնֆերանսի կողմից, Հուվերի խորհրդով, նշանակվում է Հայաստանի գլխավոր կոմիսար: Ժամանելուց հետո, նա տեղեկանում է, որ 1919թ. օգոստոսի 15-ին, անգլիական զորքերը վերջնականապես հեռանում են Կովկասից:

Նա շտապ մի հեռագիր է ուղարկում Խաղաղության կոնֆերանսի Գերագույն խորհրդին: Անգլիացիների հեռանալը նշանակում է չրջանը հանձնել անիշխանության ու «Բաթումը, Թիֆլիսը, Երեւանը թողնել առանց միլիոնավոր դոլարների օգնության... եւ կանգնեցնել գոյության բոլոր միջոցները, որոնց բացակայության պատճառով, Ռուսահայաստան գաղթած հազարավոր հայեր սովամահ են լինելու: Հայերը շրջապատված են թշնամիներով եւ չունեն բավարար զենք, զինամթերք կամ ուժ՝ պաշտպանվելու համար»[3]: Դաշնակիցների պատասխանը պարունակվում է Գերագույն խորհրդի այս բանաձեւում. «Այսպիսով, ոչ մի կառավարություն զորքեր չի ուղարկի Հայաստան: Գնդապետ Հասկելի հեռագրով բարձրացված հարցը... հետաձգվում է, առանց որոշում կայացնելու»[4]:

Քեմալական շարժման վերելքը

1919թ. սեպտեմբերին, լեյտենանտ-գնդապետ Շարգինյին, որը հաջողել էր արձակուրդ ստանալ, Փարիզում էր[5]: Նրա այցելությունը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարություն, ավարտվում է Հայաստանի ճգնաժամի վերաբերյալ իրատեսական վերլուծական զեկուցագրով. չկա Հայաստան առանց դաշնակիցների զորքերի, չկա Հայաստան առանց հայերի, չկան բավարար թվով հայեր՝ Հայաստան կառուցելու համար: Լրացուցիչ նա հայտնում է. «Հայաստանին սպառնացող նոր վտանգի կամ քեմալականների շարժման մասին»[6]: Շարգինյին խորհուրդ է տալիս Կովկասի ռազմական առաքելությունն ընդգրկել Ֆրանսիայի դիվանագիտական անձնակազմում: Նա առաջարկում է նաեւ, զորացրումից հետո Պուագեբարին թողնել Երեւանում որպես հյուպատոսական գործակալ[7]:

Ժամանելով Թիֆլիս, Շարգինյիին փոխարինած հրամանատար Նոնան-կուրը, խորամուխ եղավ իր առջեւ ծառացած խնդիրների մեջ: Պուագեբարի զեկուցագրերը, որոնք նա, իր շրջագայության ժամանակ, փոխանցում է Փարիզ, վկայում են վերջինիս անաչառ գործունեության մասին: Երեւանից ուղարկված, 1919թ. հոկտեմբերի 3-ի, զեկուցագիրը պատմում է Կարսի շրջանի հարաբերական

[1] Զեկուցվել է Միշել Ռիքեի միջոցով: AJF, Ժալաբերի ֆոնդ, Պուադեբար-Ժալաբեր նամակագրություն:

[2] MAE, Levant 1918-1929, Arménie, 6. fol.127.

[3] Նույն տեղում, 143, 5. VIII. 1919:

[4] Նույն տեղում, 155, 11. VIII. 1919:

[5] Արձակուրդը արամադրվել էր, քանի որ ֆրանսիական ռազմական առաքելության նախադահին զրպարտություն էր ներկայացվել, որի համաձայն՝ Շարդինյին «Թիֆլիսում ապրել է հայկական ընտանիքում, որը հոդացել է նրա բոլոր ծախսերը»: Հետաքննության արդյունքում զրպարտիչը պատժվել էր, սակայն «խուսափելով ավելորդ բացատրություններից», Շարդինյիին առաջարկել էին թողնել Կովկասը: Հենց այս ժամանակ է, որ նա դառնում է Թուրքիայի հետ սահմանները կարդավորող հանձնաժողովի՝ ֆրանսիական կողմի փարձադետ: MAE, Europe-Russie, 695. fol. 13-18.

[6] MAE, Levant 1918-1929, Arménie, 7. fol. 152, 28. IX. 1919.

[7] Նույն տեղում, Arménie, 12. fol. 22, 17. XI. 1919.

հանգստի մասին: Իրավիճակն առավել սրված էր Սուրմալուի շրջանում (Երեւանից հարավ-արեւմուտք), որտեղ ռմբոստացել էին Արարատի քրդերը: Սակայն առավել իրական է Ադրբեջանի կողմից Զանգեզուրի վրա կախված վտանգը. «Այս շրջանը միակն է, որ ներկայումս խոչընդոտում է Բաքու-Էրզրում հաղորդակցության հաստատմանը, ճանապարհ, որն այդքան ցանկալի է պանթուրքական շարժման համար»[1]:

Պոլ Լեպխյերից (Տրապիզոնում Ֆրանսիայի հյուպատոս) տեղեկություններ ստանալու նպատակով, մեկ շաբաթ անց, Պուագեբարն, ականակրի վրա, ճանապարհորդություն է կատարում Բաթումից Տրապիզոն: Հայերի թիվը Տրապիզոն քաղաքում հասնում էր 400-ի, նույն վիլայեթում նրանց թիվն այժմ կազմում է 4 000 մարդ՝ «նախապատերազմյան 60 000-ի փոխարեն: Քեմալ փաշայի հրոսակախմբերի ահից, ոչ ոք չէր համարձակվում ճանապարհորդել Թուրքիայի ներքին շրջաններում: Աշխատանք չունենալով, շատերը մտածում էին հեռանալու մասին: Մյուսները վախենում էին, որ Հայաստանի վերաբերյալ Փարիզի խաղաղության կոնֆերանսի որոշումները, կոտորածների պատճառ կդառնան»: Տրապիզոնում Կ.Պոլսի կողմից հաստատված պաշտոնապես գոյություն ունեցող վարչակազմը՝ «Քեմալի հրոսակախմբերն են (թիվը հասնում է 12 000-ի), որոնք տնօրինում են ամեն ինչ»: Ամենուր գյուղացիները զինված են, իսկ ճանապարհները լցված են ավազակներով. «Թուրքիայի ներսում նույն թշվառությունն է, նախապատերազմյան անկազմակերպվածությունը: Այս զանազանության մեջ Օսմանյան ուղեղում խարիսխի նման գցած է մյուս ռասաների նկատմամբ իր գերիշխանության գաղափարը»: Իսկ Փարիզում կրնգունվի այսպիսի որոշումնախազգուշացում. « Քեմալի շարժումը ճնշելու համար դաշնակիցներից կպահանջվի մեծ ջանք եւ մեծաթիվ ռազմական ուժեր»:

Պուագեբարը խստորեն դատապարտում է Կամուրջի Հանրապետություն ստեղծելու վերաբերյալ հույների նախագծերը եւ հայտարարում, որ հունահայկական դաշինքը դատապարտված է անհաջողության. «Հայերի եւ նրանց առաջնորդների անղիջողության պատճառով, որը նրանք ունեն իրավիճակին բացարձակապես չտիրապետելու եւ չհասկանալու հետեւանքով»: Ավելի խիստ է նրա գնահատականը Կովկասում անգլիական քաղաքականության վերաբերյալ, որը ձգտում է բոլոր միջոցներով (բարոյական, տնտեսական, ռազմական) պայքարել Արեւելքում ֆրանսիական ազդեցության դեմ: Չնայած անգլիական զորքերի հեռանալուն, Բաթումն օկուպացված մնաց անգլիական բանակի կողմից: Անգլիացիները ցանկանում են վերահսկել Բաքվի հաղորդակցության ճանապարհները, որը կարեւոր է Պարսկաստանում եւ Հնդկաստանում իրենց քաղաքականության համար: Այդ իսկ պատճառով, Բաթումի ինտերնացիոնալացումը ցանկալի է. «Բոլոր դեպքերում, անհրաժեշտ է ուժեղացնել Բաթումի եւ Բաքվի մեր գործակալներին մեր շահերն ու ֆրանսիական ազդեցությունը պաշտպանելու համար... Բաքուն եւ Բաթումը գործողության բազաներ են դեպի Թուրքեստան, Չինաստան, Հյուսիսային Պարսկաստան եւ Հարավային Ռուսաստան: Եվրոպական պատերազմի ընթացքում Տրանսկասպյան երկաթգծի ավարտը մնաց շատերի համար աննկատ: Հենց որ բոլշեւիզմը նորից բացի Կրասնովոդսկի նավահանգիստը, կերեւա դեպի Կենտրոնական Ասիա այս նոր հաղորդակցության ճանապարհի կարեւորությունը: Ֆրանսիական դիվանագիտությունը այժմ պետք է մտածի պանթուրանական շարժման կենտրոն դարձող Թուրքեստանի այս շրջանում առեւտուր եւ արդյունաբերություն զարգացնելու ու պաշտպանելու մասին... Այնուամենայնիվ Ֆրանսիան, շարունակում էր ժողովրդականություն վայելել թաթարական միջավայրում: Երբ մոտիկից տեսնում ես թաթարական եւ թուրքական զանգվածները, համոզվում ես, որ լավ կազմակերպված քարոզչության, որն իդեպ գերմանական ծագում ունի, շնորհիվ կարելի է դյուրությամբ վերացնել արտասահմանցիների նկատմամբ մահմեդականների ատելությունը»[2]:

Ամերիկացի էմիսարը

[1] Նույն տեղում, Arménie, 12. fol. 4-6, 3. X. 1919.

[2] MAE, Levant 1918-1929, Arménie, 12, fol. 6-11, 14. X. 1919

ԱՄՆ-ի կողմից Հայաստանի նկատմամբ ամերիկյան մանդատի հնարավորությունը ուսումնասիրելու նպատակով, ամերիկյան զինվորական առաքելության գլուխ նշանակված եւ 1919թ. սեպտեմբերին Երեւան գործուղված, գեներալ Հ.Հարբորդի ժամանումը մեկնաբանությունների առարկա է դառնում, որը մասնակիորեն մեջ է բերում Պուադեբարը. «Գեներալի անձնական կարծիքը՝ Թուրքիայի եւ Այսրկովկասի միասնական մանդատի ստացումն էր», որոնք տնտեսական եւ քաղաքական տեսանկյունից շատ շահավետ կլինեին մանդատը ստացողի համար.

«Գեներալը չէր կարծում, որ ներկայումս Հայաստանը վախենում է Թուրքիայի հարձակումից: Նա մեքենայով շրջել է ողջ Թուրքիայով եւ քիչ թվով զինվորներ տեսել... Թուրքերը նրան ասել են, որ վախենում են, թե հայերը, որոնք մեծացրել են իրենց բանակը (50000 մարդ), կանցնեն սահմանը՝ Փարիզի Կոնֆերանսի կողմից հաստատված Հայաստանի տարածքները գրավելու համար: Նրան թվում է, որ հայերի եւ թուրքերի միջեւ խաղաղությունը ներկայումս դյուրին կլինի... Թուրքերը շատ հմուտ են իրենց ուզածը ստանալու գործում: Պետք էր վախենալ, որ գեներալի՝ հապճեպ ճանապարհորդությունը Թուրքիայով, կարող էր ոչ ճիշտ պատկերացում տալ թուրքական զինուժի մասին: Թուրքերն, իհարկե, անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել էին, որպեսզի թաքցնեն իրենց ուժերը: Դա բավականին դյուրին էր՝ գեներալի երթուղին նախապես հայտնի էր»[1]:

Վերադառնալով Միացյալ Նահանգներ, գեներալ Հարբորդը մի քանի ամիս անց հիմնավոր զեկույց է ներկայացնում ամերիկյան Սենատին: Գեներալն, ընդհանուր առմամբ, կողմնակից էր Հայաստանի ամերիկյան մանդատին, սակայն հստակ եւ տարանջատված եզրակացության փոխարեն, Հարբորդը 13 էջ կողմ եւ 13 էջ դեմ փաստարկներ է ներկայացնում մանդատի վերաբերյալ: 1920թ. ապրիլի 4-ի «Նյու-Յորք Թայմսում» հրատարակված հոդվածը այդ եզրակացության վերլուծությունն էր:Նրանում ոչ միայն ասվում էր, որ մանդատի հարցը՝ առնվազն մեկ սերնդի համար ԱՄՆ-ին կներքաշի «արեւելյան արկածախնդրության մեջ», այլեւ նշվում էին այն բոլոր ֆինանսական եւ ռազմական քայլերը, որոնք անհրաժեշտ էին 59 000 մարդու համար պատասխանատվություն կրելու գործում... Գեներալը կանխատեսում էր Սենատի մերժումը (1920թ. հունիսի 1)[2]:

Պանթուրանիզմը եւ «Հայկական դաշինքը (բլոկը)»

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ստեֆան Պիշոնին ուղղված Պուադեբարի 1920թ. հունվարի սկզբի երկար զեկուցագիրը ցույց է տալիս երկու խնդիրների՝ պանթուրանիզմի եւ հայ գաղթականների միջեւ առկա կապը.[3]

«Հայկական հարցի մեծագույն խնդիրը՝ պատերազմի արդյունքում կոտորված եւ ցրված հայ բնակչության վերադարձն է Թուրքիայի վիլայեթներ: Առաջին հայացքից, արձանագրելով թուրք ազգայնականների շարժման մոլեռանդությունն ու ռազմական կազմակերպվածությունը, ականատես լինելով Ռուսահայաստանի որոշ շրջաններ (օր. Նախիջեւանի շրջան) վերադառնալու ձախողմանը, մասնավորապես կարելի է ենթադրել, որ տաճկահայերի վերադարձն անհնարին է: Այս տեսակետից, Կարսի շրջանը գործնական եւ շատ հետաքրքիր օրինակ է, թե ինչ է հնարավոր անել, եւ ինչ մեթոդներ կիրառել: Կարսում, կարծում եմ, առավել դժվար կլինի վերադառնալ նախկին կարգավիճակին: Անհրաժեշտ է հաշվի առնել թուրքական բանակի հրամանատար՝ գեներալ Շեւքի փաշայի կողմից Կարսում, անմիջապես զինադադարից հետո, ստեղծած հակահայկական մահմեդական կազմակերպության ուժը... Մահմեդական շարժումը նկարագրելու համար, 1918թ. դեկտեմբերից մինչեւ 1919թ. ապրիլ, անձամբ կամ սեփական դիտորդների օգնությամբ, բազմիցս ուսումնասիրել եմ Կարսը: Ուստի չեմ կարծում, որ անգլիական զորքերի նահանջից հետո, այնտեղ հայկական իշխանական մարմինների տեղակայումն ու նրանց գոյությունը հնարավոր կլինի»:

---

[1] **Նույն տեղում**, Arménie, 12, fol. 13-14, 4. X. 1919

[2] **Նույն տեղում**, Turquie, 144. fol.26-38

[3] **Նույն տեղում**, Arménie, 8. fol. 11-16

Սակայն Պուադեբարն արձանագրում է, որ չնայած թուրք գործակալների քարոզչությանը, Կարսում, ուր նա գնացել էր Խատիսյանի ուղեկցությամբ, մահմեդական բնակչությունը հանդստություն է պահպանում: Նա բարձր է գնահատում... մահմեդական ղեկավարների հետ համաձայնության եկած ռուս բանիմաց վարչարար՝ նահանգապետ (պարետ) գեներալ Կորգանովի (իմա՝ Ղորղանով, Ղորղանյան) աշխատանքը, ինչպես նաեւ այնտեղ տեղակայված եւ երկու փայլուն գեներալներ՝ Դանիել Բեկ Փիրումովի եւ Հովսեփյանցի կողմից ղեկավարվող հայկական կանոնավոր եւ կարգապահ բանակը: Նախիջեւանի նման շրջաններում հայկական վարչակարգի անհաջողության պատճառներն էին՝ անգլիական զորքերի արագ հեռացումը, պաշտոնյաների ապաշնորհությունը, կառավարիչների անփորձությունը, շրջանի մահմեդականների՝ թաթարների նկատմամբ վարած կոպիտ եւ անհանդուրժողական քաղաքականությունը եւ 30 000 հայ գաղթականների անվտանգությունն ապահովվող անկանոն բանակը: Իր զեկուցագրում Պուադեբարը նաեւ նշում է, որ Հայաստանի մանդատը ստացած տերության առաջին խնդիրը պետք է լինի՝ սեփական բանակը ծառայեցնել «տարանջատվելու (բաժան բաժան լինելու) հիվանդությամբ տառապող» հայերին կազմակերպելու գործին.

« Պատերազմի եւ կոտորածների պատճառով, հայերն էին, որ Կովկասի եւ Թուրքիայի մյուս ժողովուրդներից ավելի, ապակազմակերպվել եւ պառակտվել էին: Ուժերը վերականգնելու եւ վերակազմակերպելու համար, նրանց անհրաժեշտ է հանգստության մի քանի տարի: Այս տեսակետից է, որ պետք է օգնել նրանց ներքին վերակազմակերպմանը: ...Քրիստոնյաների միությունը (բլոկը) Կովկասում անհրաժեշտ է, որպեսզի քանդվի մեծ մահմեդական շարժումը, որը միավորելու է Թուրքեստանը, Չինաստանը եւ Հնդկաստանը»:

Այսպիսով, Գերմանիայի հանդեպ անհանդուրժողական թշնամանք տածող Պուադեբարը պանթուրանիզմի հարցի հիման վրա կատարում է Հայաստանի աշխարհաքաղաքական վերլուծությունը: Իր վերլուծականը նա կառուցել էր երիտթուրքական գաղափարախոսության հետ իր ծանոթության վրա, որն առավել խորացրել էր Պարսկաստանում եւ Կովկասում կատարած իր դիտարկումների շնորհիվ: Հետագայում, նրան մեծ ճանաչում բերեց գրքի տեսքով ներկայացված իր վերլուծական աշխատանքը[1]: Պանթուրանիզմը, որը նա տարանջատում է պանիսլամիզմից, կազմում է պանթուրքիզմի մի մասը եւ նշանակում է Եվրոպայի ու Ասիայի թուրքական ռասայի («Թուրան») բոլոր մահմեդականների միություն: Նրա գաղափարական ազգակցությունը պանգերմանիզմի հետ պատահական չէ: Անգլիացիներին Հնդկաստանից դուրս մղելու գերմանացիների երեկվա ստեղծած դործիքը, այսօր կիրառվում է Կովկասում՝ «գերմանա-բոլշեւիկյան ծրագրում»: Արդյո՞ք սա Պուադեբարի սխալն է. եթե այո, ապա, փայլուն սխալը, որն ուղեկցվում էր Էնվեր փաշայի կողմից Բեռլին, Մոսկվա եւ Բաքու ուղեւորություններով:

1920թ. հունվարին Անդրկովկասյան հանրապետությունները դե ֆակտո ճանաչվեցին որպես անկախ պետություններ: Թիֆլիսում նշանակվեցին երեք գլխավոր կոմիսար, որոնցից մեկը՝ դե Մարտելն էր: Փետրվարին, Նոնանկուրի կողմից Ֆրանսիայի արտդործնախարարությանն ուղարկված Պուադեբարի զեկուցագրերը ընդգծում են ապագայի անորոշությունը[2]: Կարսի շրջանում ներկայումս հանգիստ իրավիճակ է, սակայն, գարնանը, երբ կվերեկանդնվի Էրզրումի հետ հաղորդակցությունը, հնարավոր է, որ սկսվեն անկարգություններ:Այդ պատճառով, անհրաժեշտ է շրջանի հայկական վարչակազմին ապահովել զենք ու զինամթերքով: Սուրմալույում, թուրքերի դեմ պայքարում, Հայաստանի կառավարությունն աջակցում է քրդերին: Կառավարությունը խնդրել էր Պուադեբարին մասնակցել քրդերի հետ բանակցություններին, սակայն, Պուադեբարը

---

[1] Poidebard, Au carrefour des routes Perse, op. cit. , **էջ** 220: **Պանթուրանիզմը խթանել է շատերի աշխատանքները, ինչպես** Zarevand-**ին** Turcia I Panturanizm, Paris, 1930, **թարգմ. անգլերենից,** United and Indepenent Turania: Aims and Designs of the Turks, Leyde, Brill, 1971; **կամ** A. Zenkovsky, Pan-Turkism and Islam in Russia, Cambridge Mass., Harvard University Press, 1960.

[2] MAE, Levant 1918-1929, Arménie, 8. fol. 127-134, 13. II. 1920.

տեղյակ չլինելով քրդական հարցում ֆրանսիական քաղաքականությանը, ցանկացել է իմանալ Կիլիկիայում տեղակայված ֆրանսիացի գեներալ Գուրոյի՝ այդ հարցի վերաբերյալ դիրքորոշումը: Նախիջեւանում թաթարները կտրել են Պարսկաստան տանող ճանապարհները եւ թուրքական զորքերը՝ Խալիլ փաշայի գլխավորությամբ փորձում են գրավել տեղի իշխանությունը. «Կովկասում [Դաշնակիցների կողմից] իրականացվող հստակ քաղաքականությունը, այդուհանդերձ, չառաջացրեց թաթարների եւ թուրքերի պառակտումը...»: Զանգեզուրում, որտեղ անկարգությունները ամիսներ են տեւում եւ սպառնում թուրք-թաթարական ուժերի նոր պոռթկմամբ, իսկ անգլիացի գլխավոր կոմիսար Ուորդրոպը սիրված է մահմեդականների կողմից, հայերի նկատմամբ վերաբեր-մունքը փոխվել է: Անգլիացի սպաները վերջապես հասկացել են, որ.

«Պանթուրանյան շարժման մեծ խոչընդոտը Ղարաբաղ-Զանգեզուր հայկական դաշինքն է: Սակայն, այն ամենը, ինչ մենք՝ գնդապետ Շարդինյին եւ ես կանխատեսել էինք անցյալ տարի, իրականանում է եւ Հայաստանը՝ կորցնելով Երեւանի արեւմտյան հատվածում բնական ռազմավարական դիրքը, թուլանում է թուրքերի եւ թաթարների դեմ: Կկարողանա՞ արդյոք նա գիմադրել, եթե բոլշեւիկյան ճնշմանը միանա Թուրքիան: Լավ զինված Զանգեզուրն ու Ղարաբաղը լուրջ պատնեշ կլինեին բոլշեւիկյան ալիքի հետ միացած պանթուրանյան հարձակմանը... Հասկանալով Զանգեզուրի կարեւորությունը, Հայկական կառավարությունն ամեն գնով պաշտպանում է այն »:

Поэт Ованес Туманян, пользовавшийся большим моральным авторитетом, специально отправляется в Ереван, чтобы лично ознакомиться с ситуацией. 24 марта он пишет Орджоникидзе, что в Армении массы рабочих и крестьян сталкиваются с коммунистами. Очевидно, народным массам большевики предпочитают своих товарищей. Таким образом, возвратившись после победоносной кампании советизации Грузии, Красная Армия вновь овладевает Ереваном и 2 апреля 1921 года восстанавливает советскую власть.

*Врацян и его правительство бегут в Зангезур, где с декабря 1920 года существует Независимая армянская республика Сюника, созданная генералом, поэтом и публицистом Гарегином Нжде. С 1918******* года ему удавалось сохранять эту расположенную между Турцией и Азербайджаном область свободной от всех захватчиков: турок, азербайджанцев и коммунистов. Но Зангезур будет взят Красной Армией в середине июля, и дашнакам придется искать убежище в Персии. Симон Врацян*

****** Դրոն չի ձերբակալվել - խմբ.:

******* Գ.Նժդեհը Զանգեզուրում գործել է 1919թ. կեսերից. - խմբ.:

умрет гораздо позднее в Ливане; Гарегин Нжде будет арестован в конце второй мировой войны в Болгарии и перевезен в СССР, где после 11 лет заключения он умрет в мрачных застенках владимирской тюрьмы в 1955 году.

С восстановлением большевистской власти в Ереване в середине 1921 года весь Кавказ оказывается вовлеченным в орбиту Советской России.

РАЗДЕЛ АРМЕНИИ И КОНЕЦ АРМЯНСКОЙ МЕЧТЫ

20 ноября 1920 года, буквально одновременно с резней, устроенной турецкими войсками в Армении, и за несколько дней до вторжения в страну Красной Армии, американский президент Вильсон опубликовал свой проект урегулирования кавказского региона, в котором Армения была представлена в очень широких границах. В действительности размеры молодой Советской Армении будут зависеть от политических игр, абсолютно не связанных с интересами самих армян: в очередной раз за свою историю страна будет поделена между двумя сильными соседями, на этот раз между новой Турцией кемалистов и молодым советским государством.

В самом деле, 16 марта 1921 года кемалисты и большевики отменили все прежние соглашения и определили границы закавказских государств в договоре "о дружбе и братстве", подписанном в Москве. Полная незаконность этого договора очевидна. Во-первых, в 1921 году Мустафа Кемаль никоим образом не представлял турецкое государство, официально еще находившееся под властью последнего султана Мухаммеда VI. Кемаль будет выбран президентом только в 1923 году. Во-вторых, у Москвы не было никакого права (даже по советскому закону) определять границы республик, которые она сама называла "независимыми". Наконец, 16 марта коммунисты вовсе не стояли у власти в Армении, где около сорока дней существовало, как мы видели, дашнакское правительство.

Но ни большевиков, ни кемалистов не беспокоила законность их действий. "Дружба и братство", о которых заявляли обе стороны, получили вполне реальное воплощение и были скреплены щедрыми подарками: Москва предоставила турецким товарищам безвозмездную помощь в размере 10 миллионов рублей золотом и значительную партию вооружения. Эти дарения в виде денег и оружия, начавшиеся уже летом 1920 года, будут продолжаться, постоянно увеличиваясь, вплоть до 1922 года; в эти самые годы, как известно, миллионы русских крестьян умирали от голода. У кемалистов же был свой способ проявления "дружбы и братства" по отношению к армянам. Как раз тогда, когда в Москве разрабатывался договор, 6 марта турецкие войска вторглись в Ахалкалакскую область, где в 1918 году жертвами младотурок уже стали 40000 человек. Всего за 10 дней, то есть до подписания московского договора, они уничтожили более 10000 армян.

Через несколько месяцев, в октябре 1921 года, Москва заставит представителей трех закавказских республик утвердить в Карсе соглашения о "дружбе и братстве", поставив подписи под окончательным договором с турками. Отныне западная граница Армении будет проходить по реке Аракс, таким образом, Армения теряет гору Арарат, древнюю столицу Ани, области Карса и Ардагана; кроме того, Советская Россия обязуется превратить Нахичеван в азербайджанский протекторат, что позволяет туркам иметь коридор, связывающий их с азербайджанскими братьями.

Между тем 4 июля 1921 года кавказское отделение (Кавбюро) компартии заявило о праве карабахских армян самим выбирать свою судьбу. На следующий день то же собрание под давлением Сталина, представлявшего Ленина и Троцкого, решило, что город Ахалкалак (населенный на 72% армянами) отходит к Грузии, а Нагорный Карабах (94% армян) - к Азербайджану. В течение всей советской эпохи Нагорный Карабах будет территорией, произвольно присоединенной к Азербайджану, а армянское население будет явно и неявно подвергаться беззаконию, унижению и дискриминации.

Таким образом, начало большевистского правления оказывается фатальным для Армении - она становится самой маленькой из республик СССР. Такое решение полностью противоречило действиям, которые сама Россия предприняла за век до этого. 'Действительно, когда в 1828 году русские освободили от турок Восточную Армению, присоединив ее к Российской империи, в качестве армянских территорий они взяли и Карабах, и Нахичеван.

Итак, начиная с этого момента и вплоть до последнего десятилетия XX века, у Армении будут три удела жизни, и все три мучительные: Восточная Армения под бременем большевистской диктатуры; Западная Армения без армян как провинция современной Турции; рассеянные по всему миру западные армяне без Армении.

Разделение, проведенное большевиками и кемалистами, будет де-факто признано мировыми державами на разных конференциях: в Лондоне в феврале 1921 года, в Париже в марте 1922 года и в Лозанне в ноябре 1922 года.

Международный баланс сил изменился: союзники более заинтересованы в сближении с новой Турцией, и, действительно, в 1923 году они заключают мир с Кемалем. Франция уже отказалась от протектората над Киликией, американцы отвергли порученную им Лигой Наций роль попечителей над армянскими провинциями Турции. Короче говоря, никто не заинтересован вновь поднимать сложный армянский вопрос. Особенно советские руководители, которые боятся националистических претензий армян в СССР.

В результате разные договоры не только не отражают интересы армян, но и само слово Армения в них вообще не фигурирует: армянский вопрос решен так, словно армян вовсе не существует.

Таким образом, открывающаяся в Лозанне 13 ноября 1922 года конференция, которая ставит окончательную точку в нерешенных вопросах между Турцией и государствами - победителями в первой мировой войне, означает для армян погребение их прав. Две армянские делегации напоминают собранию, что в данный момент 700000 армян, избежавших геноцида, не имеют земли, что более 73000 армянских женщин и детей еще находятся в турецких гаремах и сиротских приютах, что 150000 константинопольских армян и, может быть, столько же рассеянных по Турции еще находятся под угрозой смерти и с ужасом узнали о только что совершенных (в период до октября) зверствах в Смирне... Но эти сообщения никак не влияют на ход переговоров. Когда армяне поднимают эти вопросы, турецкий делегат Исмет Иненю с негодованием демонстративно покидает зал заседания. Армения, так же как Курдистан и Восточная Фракия, остается под турецким суверенитетом, и армянский вопрос входит в акты конференции в качестве "нерешенного".

В действительности на Лозаннской конференции отстаивались интересы экономические: те, кто уже извлек огромные выгоды из разваливающейся Османской империи, теперь хотят добиться от новой Турции возобновления горнорудных, нефтяных, железнодорожных концессий... Для этих экономических групп интересы армян, небольшого народа, ничтожной горстки выживших в пустыне людей, не значат ничего.

С другой стороны, если международная обстановка изменилась, изменилась и сама Восточная Армения: скорость, с какой разворачивались непредсказуемые события последних лет, начиная с 1917 года, привела к состоянию дезориентации. За слишком короткий промежуток времени страна пережила череду разных правительств и политических систем, бессчетное число раз меняла границы, провела две войны с турками, объединялась с другими кавказскими странами и отделялась от них, бывала автономной и оккупированной, отделялась от Советской России и аннексировалась...

Таким образом, в эти стремительные дни, когда Красная Армия вступает на армянскую территорию и в Армении устанавливается советская власть, народ разобщен в своем отношении к большевикам: разве русские не наши освободители и братья? И разве коммунисты не отстаивают права народов, социальную справедливость, разве они не поддерживают борьбу угнетенных?..

Джованни Гуайта
Италия

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՋՆԴԱՆԻ ՄԻՋԵՎ

ԱՄՓՈՓՈՒՄ

1917թ. Փետրվարյան ապստամբությունից հետո, Ռուսաստանում ձևավորված ժամանակավոր կառավարությունը բարյացկամորեն էր տրամադրված հայ ժողովրդի և Հայկական հարցի նկատմամբ և նպաստում էր հայ փախստականներին՝ վերադառնալու ռուսական զորքերի կողմից ազատագրված Արևմտյան Հայաստան:

1918թ. սկզբներից, թուրքական զորքերը անցան հարձակման և հետ նվաճեցին ողջ Արևմտյան Հայաստանը ու Արևելյան Հայաստանի որոշ տարածքներ: Սարդարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերի արդյունքում, հայերը կանգնեցրեցին թուրքական զորքերի առաջխաղացումը:

1918թ. մայիսի 26-28-ը, իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը, որոնց միջև (հատկապես Հայաստանի ու Ադրբեջանի) մշտապես տեղի ունեցան զինված բախումներ:

1918թ. աշնանն ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը, որի արդյունքում՝ Թուրքիան պարտվեց:

ՀՀ կառավարությունը քայլեր ձեռնարկեց բարելավելու երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը: 1919թ. մայիսին, ՀՀ իշխանությունները հռչակեցին Արևմտյան ու Արևելյան Հայաստանների միավորումը: 1920թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված պայմանագրի համաձայն, ՀՀ տարածքը լինելու էր 160.000 կմ²:

1920թ. աշնանը սկսված հայ-թուրքական պատերազմը հանգեցրեց ՀՀ պարտությանը, որից օգտվելով, Խորհրդային Ռուսաստանը ուժեղացրեց ճնշումը ՀՀ-ի վրա:

1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությունը խորհրդայնացավ: Խորհրդային Ռուսաստանը ու Քեմալական Թուրքիան դե ֆակտո բաժանեցին Հայաստանը, որն իրավական ձևակերպում ստացավ 1921թ. մարտի 16-ին՝ Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրում:

Իսկ Դաշնակիցները, հետևելով իրենց տնտեսական շահերին, հետագա տարիներին տեղի ունեցած կոնֆերանսներին (1921թ. Լոնդոն, 1922թ. մարտ Փարիզ, 1922թ. նոյեմբեր Լոզան) հրաժարվեցին Սևրի պայմանագրից և Հայաստանի շահերը պաշտպանելու դիրքերից:

Ջովաննի Գուայտա
Իտալիա

ՌԱՄԿԱՎԱՐ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 1918-1920թթ.

Հայկական կուսակցություններից՝ իրենց ազդեցությամբ և գործունեության մասշտաբներով, ՀՅԴ-ից հետո հաջորդ միավորը ՌԱԿ-ՀԺԿ խմբավորումն էր: Եթե, ՀՀ ներքաղաքական կյանքում՝ հատկապես կոալիցիոն կառավարության գործունեության ժամանակաշրջանում, ակտիվ և նկատելի էր ՀԺԿ գործունեությունը, ապա արտասահմանում՝ հատկապես Հայկական հարցի միջազգային քննարկումների ժամանակ, ակնհայտ էր ռամկավարների դերակատարությունը:

Ռամկավարներն իրենց ծրագրային հայեցակետերը համապատասխանեցրեցին ազգային և միջազգային իրադրության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխություններին.[1]

Նախ, հատկանշական պետք է համարել այն հանգամանքը, որ ՀՌԿ և ՀԺԿ ղեկավարները չեշտում էին իրենց ծրագրերի ու գործելաոճի նույնականության փաստը, իսկ տարբեր անվանումներ ունենալը բացատրում էին քաղաքական անհրաժեշտությամբ: Եվ բնավ պատահական չպետք է համարել այն փաստը, որ

[1] ՀՌԿ Առժամյա նախագիծ ծրագիր-կանոնագիր, ա. տ., 1920:

ՀՌԿ-ն իր ծրագրում բավականին ծավալուն տեղ էր հատկացրել ՀԺԿ-ին:[1] Այս ծրագրում ՀՌԿ-ն, հասկանալիորեն զգալի տեղ էր հատկացնում Հայկական Հարցի լուծման ուղիներին եւ մանրամասն ներկայացնում ազգային պահանջների սահմանները: Ըստ այս ծրագրի, Հայաստանը պետք է ընդգրկեր Ռուսահայաստանը, Թուրքահայաստանի վեց վիլայեթները՝ Սեւ ծովի ափերով, Կիլիկիան՝ Ալեքսանդրետով եւ Մերսինով: ՀՌԿ-ն մերժում էր Հայաստանի վրա որեւէ մշտական մանդատի գոյությունը, եւ գտնում, որ պետք է միայն ջանալ ապահովել դաշնակիցների տնտեսական ու բարոյական պաշտպանությունը, այն էլ՝ շատ կարճ ժամանակ: Մյուս կողմից հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանը քաղաքականապես եւ տնտեսապես քայքայված է, իսկ նրա վերականգնումը երկար ժամանակ կպահանջի, եւ որ՝ ռուսական բանակը լքեց Կովկասը ու հայ ժողովուրդը մենակ կռվեց թշնամու դեմ, ՀՌԿ-ն կտրականապես դեմ էր հագես գալիս Անդրկովկասում Ռուսաստանի հետ որեւէ կապ ունենալուն:

Հայաստանի ճանաչման հարցում ՀՌԿ-ն պահանջում էր, որպեսզի դաշնակից պետությունները Հայաստանը ճանաչեն որպես «պատերազմիկ եւ դաշնակից» պետություն ու ընդունեն Ազգերի Լիգայի մեջ: ՀՌԿ-ն, եթե կողմ էր Հունաստանի եւ Վրաստանի հետ համաձայնության կնքմանը, ապա կտրուկ դեմ էր արտահայտվում Թուրքիայի հետ որեւէ քաղաքական կամ կրոնական առնչություն ունենալուն, մերժում թուրքական պարտքի՝ Հայաստանի բաժնի ընդունումը: Այս ամենից զատ, առաջնային էր համարվում «թուրքերի ձեռքը մնացած հայ հողերի անմիջական գրավումը հայ զորքով եւ դաշնակիցների աջակցությամբ», իսկ հետագայում՝ «կապիտուլյացիաներից» օգտվելու իրավունք եւ Թուրքիայի կողմից հայոց վնասների հատուցում: Պետք է փաստել, որ այս եւ Ազգային պատվիրակության պահանջները նույնական էին: Այդ առումով օրինաչափ պետք է համարել, որ ՀՌԿ-ն իր այս ծրագրային պահանջները հրամցնում էր որպես Փարիզի վեհաժողովի ռամկավար անդամներին ուղղված հրահանգներ: Նրանց թելադրվում էր նաեւ «ամեն բարոյական եւ նյութական աջակցություն ընծայել» Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին եւ վեհաժողովին մասնակցելու համար նրան ընտրել հայության ներկայացուցիչ:[2]

ՀՌԿ-ն անդրադարձավ նաեւ հայ-թուրքական հարաբերությունների խնդրին: Շեշտելով այն փաստը, որ ամենից շատ ՀՀ-ն կարիք ունի Դաշնակիցների խնամակալությանը եւ հարեւանների հետ ինքնապաշտպանական կառույցների ստեղծմանը, բայց, նորից հույս կապելով Եվրոպայի բարեացակամության հետ, գտնում էր, որ «արտառոց եւ անհնար» չպետք է թվա այն միտքը, ըստ որ՝ հայերի «երեկվա բարբարոս տերը պիտի դառնա վաղվա բարեկամ դրացին»: ՀՌԿ Հայաստանի խորհուրդն, անդրադառնալով Հայկական Հարցի լուծման հնարավոր տարբերակներին, նշում էր. «Այն չափով, ինչ չափով Հայկական Հարցը ռուսական հարց է, պետք է արդեն լուծված համարել: Թուրքական Հայաստանի հարցն է, որ իբրեւ միջազգային հարց դեռ կմնա կնճռոտ, բայց եւ անլուծելի»: Ըստ այդմ, ՀՀ անկախության ճանաչմանը էական նշանակություն չէին տալիս, քանզի «Հայաստանի ազատության հարցը դեռ անլուծելի կմնա»:[3]

Ռամկավարները, անվերապահ պաշտպանելով ՀՀ-ի կողմից ամերիկյան մանդատի ընդունումը, փորձում էին ապացուցել, որ ԱՄՆ-ը այլեւս չի կարող «հին կղզիացումի վարդապետության (նկատի ունեն Մոնրոյի դոկտրինան - Ա.Հ.) կառչիլ», ավելին՝ իբր թե ԱՄՆ-ը միտք չունի կամ շատ չի փափագում քայքայված Օսմանյան կայսրության որեւէ մասի վրա մանդատատեր լինել, այլ Հայաստանի շուրջ «արթնցող համակրութենեն մղված միայն հանձն պիտի առնեն մեզի, որ կազմակերպենք մեր քաղաքական ու տնտեսական շենքը»: Իրենց ընդգծված ամերիկամետ դիրքորոշման մեջ հեռու գնալով, ռամկավարները նույնիսկ քննադատում էին Եվրոպայի գիվանագիտությունը, եւ հայերի փրկությունը ակնկալում միայն՝ «ԱՄՆ-ի նման ազատասեր եւ արդարասեր երկրից»:[4]

«Ժողովրդի ձայնը»-ի շուրջ խմբված ռամկավարները եւս անվերապահ կողմ էին ամերիկյան մանդատի հաստատմանը: Դրա մասին են վկայում

[1] ՀՌԿ Առժամյա նախագիծ ծրագիր-կանոնագիր, էջ 7-10:
[2] Նույ տեղում, էջ 15-19:
[3] «Հայաստանի ձայն», Երեւան, 1920, հունվարի 18, 29, հոկտեմբերի 12:
[4] «Ազգ», Պոստոն, 1919, հուլիսի 15, օգոստոսի 26:

բազմաթիվ հոդվածներ եւ խմբագրականներ, որոնցում ամենադրական տոնով գովաբանվում եւ ողջունվում էր գեներալ Հարբորդը, որին ոչ ավել ոչ պակաս ցանկանում էին տեսնել անգամ որպես՝ «Հայաստանի պետ»: Ավելին, չափազանցության մեջ ընկնելով, նրանք ձգտում էին ապացուցել, թե իբր Հայաստանի մանդատի ընդունման համակիրը ոչ թե «Ամերիկայի քափիթալիստն է, այլ ամերիկյան ռամկավար ժողովուրդը, Ամերիկան իր դրամագլուխը շահագործելու համար պետք չունի Հայաստանի, ամբողջ աշխարհը բաց է իրեն համար»: Նույնիսկ ստանձնելով ԱՄՆ-ի շահերի փաստաբանի դերը, հավատում էին, որ «Հայաստանի հարցը կապված չէ ամերիկյան հոգատարության հետ» եւ երազում էին անջատ, առանձին մանդատի հաստատում:[1]

Ռամկավարները, մանրամասն վերլուծելով Սան-Ռեմոյի խորհրդաժողովի որոշումները, շեշտում էին այն կարեւոր հանգամանքը, որ Հայաստանի սահմանների չորոշելը նշանակում է՝ «քանի ամիս, գուցե նույնիսկ տարի, ժամանակ շահել Թուրքիայի մեջ իրենց դեռ անկերպարան գործերը, հաշիվները կարգավորելու եւ գին հայկական շահերուն՝ նույն Թուրքիայի հետ նորանոր համաձայնության ճամբաներ գտնելու»: Այս կապակցությամբ եզրակացնում էին, թե դաշնակիցները «արհամարհանքով կնայեն մեր դատի, մեր իրավունքների եւ մեր արյունի վրա»: Այս համատեքստում նրանք գժգոհություն էին հայտնում հաղթական դաշնակիցներից՝ Հայկական Հարցի լուծումը ձգձգելու համար, թեպետ, միաժամանակ, «ավելի մեծ գժգոհություն» հայտնելով Ռուսաստանից:[2]

Հայ Ազգային Ազատական Միությունը, Սան-Ռեմոյում նախագծի հաստատումից հետո, նշում էր, որ «Հայաստանի վերաբերյալ ամեն բան մութ է դաշնագրի մեջ»: Չնայած նման մոտեցմանը, ռամկավարները հետագայում շեշտում էին, որ «բարեբախտաբար դաշնակիցներու հաղթանակը եկավ փրկեց Հայաստանը իր վերջնական կործանումեն», իսկ արդեն Սեւրի պայմանագրի կնքումը համարում էին՝ թուրք ժողովրդի համար «իսկապես բարիք, եթե միայն նա վերածնվելու իր կարողությունը չէ կորսնցուցած»: Օբյեկտիվ գնահատելով իրավիճակը, ռամկավարները Հայաստանի սահմաններին տիրանալու համար անհրաժեշտ էին համարում ուժեղ կառավարության, ֆինանսի եւ բանակի առկայությունը: Նրանց կարծիքով դրանցից ոչ մեկը հայերը չունեին, եւ Հարցի լուծում էին համարում, բոլոր քաղաքական ուժերի համախմբմամբ, համաժողովրդական կառավարության ստեղծումը»:[3]

1920թ. վերջին, երբ արդեն մանդատի խնդիրը վերջնականապես փակված էր ու Հայաստանը խորհրդայնացած, ռամկավար գործիչները հրաժարվեցին Ամբողջական Հայաստանի ծրագրից, եւ իրենց ուշադրությունը կենտրոնացրեցին Կիլիկիայի վրա, ապա՝ հետապնդեցին «Ազգային օջախի» ծրագիրը: Տարիներ անց, Ա.Չոպանյանն անդրադառնալով այդ ժամանակաշրջանի դեպքերին, ենթադրում էր, թե իբր ռամկավարները, ՀՀ-ին խորհրդային առաջարկությունների մասին տեղեկանալու դեպքում, «պիտի մղեին դաշնակցական կառավարությանը ընդունել այդ պայմանները եւ օգտվել պոլշեւիկ Ռուսաստանի ուժեն եւ օգնությունեն»:[4] Ներկայումս կարելի է արդեն փաստել, որ նրա ենթադրությունն անիրական էր. Պողոս Նուբարը Ռուսաստանի հետ երբեք չէր բանակցի,քանզի Արեւմուտքի ու հատկապես Ֆրանսիայի քաղաքական շրջանակների հետ ուներ քաղաքական եւ լուրջ դիվանագիտական հարաբերություններ:

Այս համապատկերում, որպեսզի պատկերացում կազմենք օրինակ ԱՄՆ-ում գործող հայկական կուսակցությունների հեղինակության եւ ազդեցության չափերի մասին, նշենք հետեւյալ տվյալները. ՀՅԴ-ն ուներ 6000 անդամ, ՌԱԿ-ը՝ 3000, Վերակազմյալ Հնչակյան Ազատական Ազգայնական կուսակցությունը՝ 2500, ԱԴՀԿ-ն՝ 1500:[5]

1921թ., արդեն ՌԱԿ-ի ստեղծումից հետո, Ա.Չոպանյանը՝ ելնելով հայ ժողովրդի աշխարհաքաղաքական ծանր կացությունից, կոչ արեց համագործակցել

[1] «Ժողովրդի ձայնը», Կ.Պոլիս, 1919, սեպտեմբերի 5, հոկտեմբերի 3, նոյեմբերի 16, 1920, մարտի 1-5:
[2] «Հայաստանի ձայն», Երեւան, 1920, հունիսի 1, 6:
[3] «Հայաստան», Փարիզ, 1920, մայիսի 18, օգոստոսի 12, սեպտեմբերի 4:
[4] Չոպանյան Ա., Հայ ազգը «մեղավոր չէ», Բարիզ, 1926, էջ 12-13:
[5] Տես - Ամենուն Տարեցույց ԺԵ տարի, Կ Պոլիս, 1921, էջ 218:

բոլոր այն ուժերի հետ, որոնք կարող են օգտակար լինել նրա փրկության գործում, այդ թվում՝ կոմունիստների հետ, և Ազգային պատվիրակության նախագահ Գ.Նորատունկյանին առաջարկեց հենվել նոր Ռուսաստանի վրա:[1]

Հետագայում, ՌԱԿ-ն իր ծրագրում առաջ քաշեց հետևյալ նպատակները. «1.Հայաստանի պետության զարգացումն ու բարգավաճումը ազատ դաշնակցային կապերով իրար կապված և ռուսական օրինոտացիա ունեցող պետությունների խմբակցության մեջ: 2.Հայոց Թուրքիայի մեջ ունեցած իրավունքների և շահերուն հետապնդումը».[2]

ՌԱԿ-ի հետագա ծրագրում նպատակի առաջին կետ նշվում է՝ Թուրքիայի բռնագրավման տակ գտնվող հայկական հողերի ազատագրումը, որոնք պետք է կցվեին Խորհրդային Հայաստանին և արդյունքում իրականանար «Հայ ժողովրդի դարավոր երազը».[3]

Նուբարամետ ռամկավար ուժերը կազմակերպչական համախմբման ուղղությամբ որոշակի քայլեր էին ձեռնարկում: Ինչպես հայտնի է, 1917թ.-ից Զորավար Անդրանիկը վերջնական հեռացավ ՀՅԴ-ից և հանդես եկավ ռամկավարամետ դիրքորոշմամբ: Այսպես, «Վան-Տոսպ»-ին տված հարցազրույցում նա, ՀՀ-ի և ներքաղաքական զարգացումների մասին, հետևյալ կերպ էր արտահայտվում. «Երևանյան հանրապետությունը ու կառավարությունը միանգամայն անընդունելի են ինձ համար: Հանրապետությունը որպես շնորհք տրված է մեզի թուրք բարբարոս կառավարության կողմե: Ժողովուրդը իր ձեռքով իր գլուխն նստեցուցեր է հանրապետության ղեկավարները, եթե չի հավներ անոնց, ապա ամեն րոպե ազատ է թոթափել ղեկավար-խնամակալների լուծը, եթե մեղավոր է կառավարությունը, նույն չափի և ավելի մեղավոր է ժողովուրդը-հասարակությունը: Եթե այդ միացման (Միացյալ Հայաստանի ակտը-Ա.Հ.) անմիջական անհրաժեշտությունը զգացվեր, ապա Նուպարի պատվիրակությունը չէր ուշանար հաղորդել հոս».[4]

Կազմակերպչական համախմբման համատեքստում ուշագրավ է, հատկապես Ա.Չոպանյանի և Ն.Տեր-Ստեփանյանի նախաձեռնությամբ, 1919թ. հունիսի 30-ին, Փարիզում Հայ Ազգային Ազատական Միության ստեղծումը, որի առաջին ընդհանուր ժողովին բանախոսել են նաև ՀԺԿ ղեկավարներ Մ.Պապաջանյանը և Ա.Էնֆիաջյանը:[5]

Ա.Չոպանյանը ստեղծելով այդ Միությունը, նպատակ էր հետապնդում միավորել արևմտահայ և արևելահայ ռամկավար ու ժողովրդական ուժերը, որպեսզի նրանք, ներքին ու հատկապես արտաքին քաղաքականության հարցերում, դրսևորեն միասնական դիրքորոշում, ինչն և հանգեցնելու էր նրանց վերջնական ձուլմանը: Իսկ Ն.Տեր-Ստեփանյանի համոզմամբ Հայկական հարցի «լուծման բանալին Եւրոպայի մեջ է, քանզի նպաստավոր լուծման հարաբերաբար զորավորագույն գրավականները Դաշնակից Պետություններում Արևմտյան Հայաստանի վերաբերյալ հայ-տարարություններ են ու մանավանդ խնամակալության մասին Ազգերի Ընկերակցության հոդվածը: Այդ պատճառով Միացյալ Հայաստանի կազմության հիմ պետք է ըլլա Արևմտյան Հայաստանը»:[6]

Ազգայնական-ազատական կուսակցությունը սկզբունք էր հռչակում՝ անկախ և Միացյալ Հայաստանի հողերի ամբողջական ու անկախության «անբռնաբարելի ճանաչումը»: Կուսակցությունը, անդրադառնալով ներքաղաքական և միջկուսակցական հարաբերությունների կարգավորման հարցին, նշում էին այն ցավալի փաստը, որ «մինչև այսօր կարելի չէ եղած Բարիզի և Երևանի միջև սերտ ու անվերապահ գործակցություն մը գոյացնել», որ փոխարենը՝ գոյություն ունեն «երկու հակընդդեմ հոսանքներ, որոնք զանազան մանրամասնության մեջ անհամաձայն են իրար դժբախտաբար»: Որպես նրանց վիճաբանության և

[1] Դալաքյան Կ., Ա.Չոպանյանը և Հայոց քաղաքական կողմնորոշման հարցերը, «Պատմաբանասիրական հանդես», 1996, թ.1-2, էջ 53:
[2] Ծրագիր ՌԱԿ-ի, Բարիզ, 1930, էջ 3:
[3] Ծրագիր կանոնագիր ՌԱԿ-ի, Պէյրութ, 1968, էջ 7:
[4] «Վան-Տոսպ», 1919, ապրիլ 28, հունիս 2:
[5] ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 214:
[6] «Հայաստան», Փարիզ, 1919, թ. օգոստոսի 23:

փոխհարաբերության կարգավորման միջոց, գտնում էին, որ պետք է «նկատի ունենալ միջազգային իրավունքը»:[1]

Արդեն ՀՀ ճանաչումից հետո, Ազգայնական-ազատական կուսակցության դիրքորոշումը որոշակի հարցերում փոփոխվեց: Գնահատելով այն փաստը, որ «ջարդի ու քանդումի շրջանը» այլևս վերջացած է հայ ազգի համար, և հավատալով, որ ազատ ու անկախ գոյության մի «փառավոր թվական» է բացվում հայության առջև, կուսակցությունը գտնում էր, որ «Հայ Հանրապետությունը և հայկական բանակը մանավանդ» պետք է հայերի «գերագույն խանդաղատանքի ու պաշտամունքի առարկա դառնա»: Բայց, ազգայնական-ազատականները ավելի կարևոր էին համարում այն հանգամանքը և ըստ այդմ հույս հայտնում, որ այդ ճանաչումը պետք է վերջ դնի այլևս «ռուսահայի և տաճկահայի խտրություններին», որ այլևս «երկու հայություն գոյություն չունի և ՀՀ վավերացումը վճռապես միացուց հայ դատը»:[2]

ԱԱԿ-ը, իր գործունեության ընթացքում, զգալի տեղ էր հատկացնում արտաքին քաղաքականության հարցերին, կատարում օտար գործիչների հոդվածների թարգմանություններ, որոնք հետագայում արտատպվում էին հայկական մամուլում:[3]

Ռամկավարների համար, հենց սկզբից, առաջնային նշանակություն ուներ արևմտահայերի ազատագրման հիմնահարցը: Հայ Սահմանադիր Ռամկավար կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհուրդը, 1917թ. օգոստոսի շրջաբերականում, շեշտում էր այդ հանգամանքը:[4] Դեռ 1908թ. կազմության ժամանակաշրջանում, ՀՍՌԿ-ն նպատակադրվել էր Օսմանյան պետության կազմում արևմտահայերի համար ձեռք բերել ազգային լայն իրավունքներ: Իսկ արդեն նոր պայմաններում նրանք արևմտահայերին կոչ էին անում անխտիր կերպով «բոլորվել թուրքահայության ազատագրության, ավերված հայրենիքի վերաբնակեցման և վերաշինության գործի շուրջ ՀՍՌԿ դրոշակի տակ»: Այս առթիվ հիշատակենք, որ ՍՌԿ 1910թ. ծրագրում հռչակում էր. «Հիմնական բնաբանն է - օսմանյան բաղկացուցիչ տարրերու գոյությունը օսմանցիության հետ»:[5]

Հետագայում, 1920թ. դեկտեմբերի 3-ին, ՀՍՌԿ ղեկավարությունը, պարզություն մտցնելով իր արտաքին քաղաքականության մեջ հրապարակած շրջաբերականում, նշում էր. «Անդրկովկասի ներկա պայմաններում հայերը թուրքերի և թաթարների սպառնալիքների տակ իրենց ֆիզիկական գոյությունը, ինչպես նաև կարելի է ասել քաղաքական իրավունքները ապահովելու համար ուրիշ որևէ կողմից գործնական օգնություն չեն կարող ակնկալել, եթե ոչ՝ միայն Ռուսաստանից: Կենտրոնական Վարչությունը հանձնարարում է, որ կուսակցական օրգանները ռուսական օգնությունը Հայաստանին՝ ներկա պայմաններում ընդունելով իբր միակ հենարան, զգուշանան ռուսական օգնություն ենթադրող որևէ փաստի կամ երևույթի դեմ անխոհեմ արտահայտություններից, շարունակելով պաշտպանել մեր շահած իրավունքները: ՀՌԿ կարող է երկրորդական նշանակություն տալ Հայաստանի հասարակական կարգերի վրա Ռուսաստանի հեղափոխության ազդեցությունը»:[6]

Վերակազմյալ Հնչակյան (կամ Ազգային-ազատական) կուսակցությունը, «ամեն բանե գերիվեր» նկատելով հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական անկախությունը և «Հայ Հայրենիքի ինքնուրույն շահերն ու իրավունքները», իր ծրագրում զգալի տեղ էր հատկացրել արտաքին քաղաքական հարցերի լուսաբանմանը: Նա պետք է աշխատեր, որ Հայաստանն անդամակցեր Ազգերի Լիգային, իսկ որպես քաղաքական նպատակ հայտարարում էր. «Իրականացնել

[1] «Արագած», Կ. Պոլիս, 1919, սեպտեմբերի 14; դեկտեմբերի 7:
[2] «Արագած», Կ. Պոլիս, 1920, փետրվարի 1, թ. 1:
[3] Հ.Պոնճաքյան, Հայ և հույն բարեկամության մասին, «Արագած», 1919, մարտի 15, Վ.Շահրիման, Մոնրոյի վարդապետության շուրջ, 1919, ապրիլի 12; Լ.Բրայս, Հայաստանի ապագան, 1919, թ.21-23: Հ.Գրիգորյան, Հայաստանի հոգատարությունը, 1919, օգոստոսի 17, 24:
[4] Տես - Երկու խոսք թուրքահայ ժողովրդին, Թիֆլիս, 1917:
[5] Ծրագիր և կանոնագիր ՍՌԿ, Կ. Պոլիս, 1910, էջ 9:
[6] Ղազարյան Վ., ՌԱԿ. Ուղեցույց և համառոտ պատմություն,Ե.,1991, էջ 67:

բացարձակ ու ամբողջական ազատագրությունը հայուն սեփական հայրենիքին՝ իր պատմական ընդարձակագույն սահմանների մեջ, օժտված պետական Անկախ ու Անբաժան կազմով եւ Հանրապետական կառավարությամբ»: ՎՀԿ-ն առանձնակի թափով ներկայացնում էր իր տեսակետը մանդատի վերաբերյալ: Այսպես, նա չպետք է հակառակվեր «առժամյա օտար աջակցության նշանակմանն» հետեւյալ պայմաններով. «1. Աջակից պետությունը լինի հայ ժողովրդի վստահությունը վայելող պետություն, 2. Երկրի օրենքները գծվին հայերից կազմված խորհրդի կողմից, 3. Երկրի վարչական, ելեւմտական, դատաստանական կազմի մեջ գլխավոր դեր ունենան հայ պաշտոնյաներ եւ դատավորներ, 4. Եկեղեցական, կրթական, լեզվական, գրական, պատմական հաստատությունները ամբողջովին եւ անկաշկանդ կկառավարվին միայն հայերի միջոցով, 5. Երկրի ժամանակավոր աջակիցները որեւէ իրավասություն չունենան, առանց Հայկական պառլամենտի հավանության, օտար շահասիրական ընկերությունների հանձնել երկաթուղու, հեռագրի, հեռախոսի եւ հանքերի շահագործության գործերը»:[1]

Վերակազմյալ հնչակյանները, ի տարբերություն մյուս նուբարամետ հոսանքների, ազգային եւ արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ իրենց տեսակետներում որոշակի զարգացում էին ապրել: Այսպես, եթե սկզբնական շրջանում նրանք անվերապահ պաշտպանում էին Պողոս Նուբարին, ապա, հետագայում, ցուցաբերեցին ավելի անաչառ դիրքորոշում: Նրանք Ազգային պատվիրակության սխալն էին համարում այն, որ վերջինս՝ ՀՀ գործողությունների դեմ «առաջին վայրկյանից գրգռված զայրույթ հայտնեց»: Պողոս Նուբարի բողոքները Միացյալ Հայաստանի ակտի դեմ, համարում էին «ինչքան էլ արդարացի, բայց ատելության մթնոլորտ ստեղծող՝ երկու իշխանությունների եւ իրենց հետեւորդների միջեւ», եւ եզրակացնում. «ՀՀ-ի ուժը իր համառ հաստատակամության մեջ է, Ազգային պատվիրակության տկարությունը իր հակասական եւ տարտամ արարքներով կարտահայտվի»:[2]

Առաջնորդվելով ազգային համերաշխության գաղափարով, վերակազմյալները, ՀՀ-ի ճանաչումից հետո, շեշտում էին. «Ազգային պատվիրակությունը եւ ՀՀ-ի կառավարության ուժերը պետք է իրար միանան, իրավասության եւ աթոռի համար երկուստեք զիջողություններ ընելով, որպեսզի հայությունը կարենա, առանց պայքարի եւ բաժանման, դաշնակիցների այս ճանաչումից քաղել անհրաժեշտ ուժը՝ մեր գոյությունը հաստատելու եւ ազատությունը իրական ընծայելու համար»: Ուշագրավ է նրանց տեսակետը բանակցությունների ձախողման վերաբերյալ: Այդ հարցում քննադատելով Պողոս Նուբարի դիրքորոշումը, նրանք նշում էին. «Ազգային պատվիրակությանը միայն ՌԱԿ կճանչնա իրեն նեցուկ եւ ինքն էլ նրան կհարի, կլինի նրա նշանախոսը եւ նրա կուսակցական շահերի պաշտպանը»: ՀՀ-ի գնահատումը վերակազմյալների կողմից, ոչ մի քննադատության չի դիմանում: Նրանց կարծիքով, եթե «Երեւանի Հանրապետությունը» ճանաչված չէ, հետեւաբար «միջազգային դիրք» չունի, քանզի նրա կառավարությունը ունի «մասնակի, տեղական դիրք, քանզի զինքը իշխանության բարձրացնողները՝ իր սահմաններուն մեջ գտնվող հայերն են միայն», եւ գտնում, որ Ազգային պատվիրակությունը Փարիզի վեհաժողովի կողմից «ընդունված եւ լսված է իբր հայկական դատը ներկայացնելու եւ հետապնդելու իրավասությունով օժտված ընդհանրական մարմին»:[3]

Հանգամանալից անդրադառնալով մանդատի պայմաններին եւ վերլուծելով հնարավոր մանդատատերերի պահվածքը, նրանք տալիս էին հետեւյալ գնահատականները. «Մեծ Բրիտանիան առաջին ընտրելին է իր դրացիությամբ, Ամերիկան երկրորդն է, որովհետեւ որեւէ վտանգ չկա, թե Հայաստանը մեր ձեռքեն պիտի խլե, իսկ նրա կառավարությունը ունի առատ եւ ճոխ միջոցներ օգնելու Հայաստանի տնտեսական վերականգնումին: Ֆրանսիան եւ Իտալիան որքան էլ սիրենք՝ ստիպված ենք չմտածել իրենց մասին, քանզի այս հանձնարարությունը կպահանջե ծանր զոհողություններ, արդար չէ նրանց նոր պարտականություններով, զոհողությունով բեռնավորենք»: Իսկ գեներալ Հարբորդի առաքելության ավարտից հետո, վերակազմյալները կրկին հանգամա-

[1] Ծրագիր Վերակազմյալ Հնչակյան կուսակցության, ա. տ., ա. թ.:
[2] «Պահակ», Պոստոն, 1919, դեկտեմբերի 30:
[3] «Պահակ», Պոստոն, 1919, հուլիսի 25:

նալից անդրադառնալով մանդատի խնդրին, խստորեն քննադատեցին նրա զեկուցագրի դրույթները: Ուշագրավ պետք է համարել այն փաստը, որ նրանք, արդեն դրական համարելով միայն ամերիկյան զինվորական փոքր օժանդակություն պահանջող ՀՀ պատվիրակության գործելակերպը, շեշտում էին. «Ազգային Պատվիրակության մանդատի քաղաքականությունը ջուրը կրնկնի, սակայն միայն նա է, որ կուզե մանդատ»: ԱՄՆ-ի քաղաքականության անվերապահ դովերդմանը նվիրված նման խմբագրականները եւ հոդվածները բազմաթիվ են: Քննարկելով ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի մերժման հարցը, նրանք որպես հիմնական պատճառներ նշում էին հետեւյալը. 1. Մոնրոյի դոկտրինան, 2. Միջկուսակցական հակամարտությունը, 3. Վիլսոնի ծրագրերի նկատմամբ անգլո-ֆրանսիական վերաբերմունքը:[1]

Կ.Պոլսի ռամկավար մամուլը անթաքույց եւ միանշանակ պաշտպանում էր Պողոս Նուբարի անձը: Բավական է հիշել 1918թ. վերջին հրապարակված նրանց հետեւյալ լոզունգը. «Հայաստանի անկախությունը հռչակած Պողոս Նուպար փաշա նախագահ»:[2] Նրանց բնորոշ էր՝ ՀՀ-ի հանդեպ ծայրահեղ քննադատական եւ Պողոս Նուբարի հանդեպ զուտ գովաբանական միակողմանի դիրքորոշումը: Նրանք Պողոս Նուբարին աներկբա համարում էին «առաջին հայ քաղաքացին»: Անտեղի կուսակցականացնելով հարցը, օրինակ՝ ՀՀ-ի de facto ճանաչումից հետո, նրանք փորձում էին ապացուցել, որ Պողոս Նուբարը դրանով «երբեք իր ներկայացուցչի հանգամանքը չկորսնցուց», եւ բողոքում էին Ավ.Ահարոնյանի դեմ, որով հօգուտ Հունաստանի՝ նա հրաժարվել էր Տրապիզոնից:[3]

ՀԲԸՄ-ի ղեկավար գործիչներից Երվանդ Աղաթոնը, գնահատելով Ազգային պատվիրակության գործունեությանը, միանշանակ փաստում էր, որ նրա մեջ՝ եթե «հոգով, սրտով աշխատող մեկը կար, այն նախագահ Պողոս փաշա Նուպարն էր»:[4]

Ամերիկահայ ռամկավար գործիչ Միհրան Սվազլյանը անվերապահ բարձր էր գնահատում Պողոս Նուբարի փարիզյան գործունեությունը. «Իր ստանձնած առաքելությանը հարած էր ոչ թե միայն հավատքով, այլ պիտի ըսեմ խանդավառությամբ եւ կամ թագակիրի ոգիով: Հարմար մարդը, հարմար տեղը, որ կրցավ կարեւոր ազդակներ իր շուրջը համախմբել: Ամբաստանվեցավ, թե դիկտատորի պես կգործե եղեր: Իցիվ թե այդպես լիներ»:[5]

Ամերիկահայ ռամկավարամետ շրջանակները նույնպես նման տեսակետի էին հարում: Նրանք Պողոս Նուբարի հանդեպ գերազանցապես որդեգրել էին միմիայն գովաբանական կեցվածք: Օրինակ, «Կոչնակ Հայաստանի» պարբերականն առաջարկում էր նրա գլխավորած Ազգային պատվիրակությունը հռչակել «Համազգային առժամյա կառավարություն»: Եվ հակառակը, գտնում էին, որ իրենց բնորոշմամբ՝ «Արարատյան Հանրապետությունը» երբեք չի կարող նկատվել «համազգային կառավարություն եւ հեղինակորեն խոսել համայն Ռուսիայի եւ Թուրքիայի հայերուն անունով եւ կամ իր իշխանությանը ենթարկել Էջմիածնի կաթողիկոսությունը եւ Ազգային Պատվիրակությունը»: Այսուհանդերձ, ողջունելով ՀՀ երկրորդ տարեդարձը, դրան նվիրված հատուկ խմբագրականն ավարտում էին հետեւյալ կոչով. «Կեցցե Հայկական Հանրապետությունը, Կեցցե Միացյալ Հայաստանը»:[6]

Ռամկավարներն անխտիր բացասական կեցվածք որդեգրեցին Միացյալ Հայաստանի ակտի հանդեպ: 1919թ. մայիսին, ՀՍՌԿ որոշ կառույցների հիման վրա ձեւավորված Ազգային Ռամկավար կուսակցությունն իր ծրագրում որպես նպատակ հռչակում էր՝ Միացյալ Հայաստանի անկախության ապահովումը եւ պահպանումը, եւ ըստ այդմ, անկախ հայրենիքի քաղաքական, տնտեսական, բարոյական վերականգնման ուղղությամբ աշխատանքները:[7]

ՀՌԿ Հայաստանի խորհուրդը, խիստ դատապարտելով ակտը, միանշանակ հետեւյալ գնահատականն էր տալիս. «Միայն դաշնակցական պոլիտիկոս պետք էր

[1] «Պահակ», Պոստոն, 1919, փետրվարի 21, հոկտեմբերի 31; 1920, հունիսի 12:
[2] «Նոր Հայաստան», Կ.Պոլիս, 1918, դեկտեմբերի 9:
[3] «Ժողովրդի ձայնը», Կ.Պոլիս, 1919, դեկտեմբերի 26, 1920, օգոստոսի 4:
[4] Աղաթօն Եր., Կեանքիս Յիշատակներ, Ժնեւ, 1924, էջ 236:
[5] Ի Յիշատակ Միհրան Սվազլեանի, Պոստոն, 1944, էջ 107:
[6] «Կոչնակ Հայաստանի», Նյու Յորք, 1919, փետրվարի 1,1920,մայիսի 29:
[7] «Ազգ», Պոստոն, 1919, մայիսի 20: Ծրագիր ԱՌԿ, Պոստոն, 1919:

դառնալ անտեսելու համար այն իրավական եւ քաղաքական սխալը, որ գործեց Երեւանի կառավարությունը, մունետիկյան մեծ ծանուցումով Միացյալ Հայաստանը ռուսներից եւ թուրքերից խլելով»: Ակտի անմիջական արդյունքը բացասական համարելով, եզրակացնում էին. «Հայկական հարցը ռուսականի մեջ թաղվեցավ».[1]

ՀՌԿ Հայաստանի խորհրդի նախագահությունը, ատի առթիվ, իր «ամենաբուռն զայրույթն ու բողոքն» էր հայտնում կառավարության քայլի համար, որով նա, առանց նախապես «արեւմտահայերի գերագույն մարմին Պողոս Նուպարի» հետ բանակցելու, «ապօրինի եւ հեղափոխական» քայլով դեմ գնաց «ամբողջ թրքահայության շահերուն, որու համաձայնությունը չունի», եւ արդյունքում, միացնելու փոխարեն բաժանելով, իբր թե խորացրեց երկու հատվածների միջեւ եղած «վիհը».[2]

Հետաքրքիր է, որ ՀՀ-ի ղեկավարության հետ բանակցելու նպատակով Երեւան ժամանած Վ.Թեքեյանը եւ Ն.Տեր-Ստեփանյանը հանդիպումներ ունեցան ՀՌԿ Հայաստանի խորհրդի անդամների հետ: Վ.Թեքեյանը նշում էր, որ ակտի ընդունումը անակնկալ էր, «քաղաքականապես եւ իրապես սխալ քայլ», քանզի՝ Հայկական հարցի «ծանրության կենտրոնը Թուրքահայաստանն է, եւ անտեսվեց արեւմտահայ զանգվածի հեղինակավոր ներկայացուցչության իրավասությունը».[3]

Ն.Տեր-Ստեփանյանը, անդրադառնալով ակտի ընդունման հետեւանքներին, տվեց հետեւյալ բնորոշումը. «Մեծագույն ամբաստանությունը, որ կծանրանա Երեւանի կառավարության վրա, արհամարհած ըլլալն է արեւմտահայությանը եւ քաղաքական բարձրագույն ներկայացուցչություն եղող Ազգային Պատվիրակությունը».[4]

Անդրադառնալով Վ.Թեքեյանի եւ Ն.Տեր-Ստեփանյանի ծրագրին, Ա.Վրացյանն այն անվանում է «վրդովեցուցիչ», որով առաջարկում էին՝ Հայաստանը «կապալով տալ Պողոս փաշա Նուբարին եւ նրան շրջապատող ազգայիններին»: Նրա գնահատմամբ. «Հայաստանի պետականության գիտակցությունը չէր, որ խոսում էր այդ մարդկանց մեջ, այլ իշխանության տենչը կամ լավագույն դեպքում՝ քաղաքական տհասությունը: Հայաստանի վիճակված ծանր պայմաններում կոալիսիոնը անհրաժեշտ էր նախ եւ առաջ մեզ՝ դաշնակցականներիս համար, թեկուզ հենց աշխատանքի ծանրությունն ու պատասխանատվությունը բաժանելու համար».[5]

Ազգային ռամկավարների համոզմամբ, ՀՀ-ն ամբողջական Հայաստանի անունից խոսելու իրավական հիմքեր երբեք չուներ, քանզի «դժբախտաբար անոր ռուսական պետությենեն անջատորեն գոյությունն իսկ տակավին խնդրո առարկա է»: Համազգային համերաշխության սկզբունքին դեմ էր նրանց նաեւ այն պնդումը, թե «Երեւանի կառավարությունը թիզ մը հող չունի Ռուսահայաստանեն դուրս, որպեսզի իրավական հիմք ունենա արեւմտահայության անունով խոսելու»: Ի հակառակ այս մեղադրանքի, նրանք անվերապահ փաստում էին, որ Ազգային Պատվիրակությունը վայելում է հայ ազգի վստահությունը եւ իրավունք ունի ղեկավարել Հայաստանի դատը: Ավելին, Ազգային պատվիրակությունն էր համարվում այն միակ մարմինը, որը կարող է իրականացնել Հայկական հարցի նպաստավոր լուծման որեւէ հնարավորություն: Ազգային ռամկավարները նման անհիմն քննադատական գնահատական էին տալիս նաեւ «Երեւանի խումբի» (ՀՀ - Ա. Հ.) ընդունած ակտին, որը համարում էին Ազգային Պատվիրակության դեմ ուղղված «պետական հարված», ապագա Հայաստանի իշխանությունը, ի հաշիվ ՀՅԴ-ի, «հափշտակելու մեղապարտ փորձ», ինչն եւ առաջ բերեց «հայ ժողովրդի պառակտումը»: Այսպիսի մոտեցմամբ նրանք ի վերջո հանգում էին հակապետական եզրակացությունների. «Ամբողջ աշխարհի մեջ անկարելի է երեւակայել ավելի անճարակված կառավարություն մը՝ քան Երեւանինը: ՀՀ ոչ թե

---

[1] «Հայաստանի ձայն», Երեւան, 1919, հոկտեմբերի 9:
[2] «Վան-Տոսպ», Երեւան, 1919, հունիս 9:
[3] «Հայաստանի ձայն», Երեւան, 1919, հոկտեմբերի 19, 24:
[4] «Հայաստան», Փարիզ, 1919, օգոստոսի 30:
[5] Վրացյան Ս., Խարխափումներ, Պոսթըն, 1924, էջ 53:

բառին բուն իմաստով ազատ եւ անկախ երկիր մըն է, այլ թրքական գքողյալ վեհապետության ներքեւ փոքրիկ ինքնօրինություն».[1]

Ռամկավար գործիչ Տիգրան Զավենը Միացյալ Հայաստանի ակտը համարում էր իրավական ու գործնական հիմքից զուրկ՝ «մեր կյանքում պառակտում եւ քայքայում մտցնող», իսկ հասկելի նշանակումը առանց չափազանցության որպես «սկիզբը Միացյալ եւ Անկախ Հայաստանի կազմակերպության».[2] Ակտի ընդունումը քննադատեց նաեւ ՀՌԿ Աշակերտական միությունը.[3]

1917թ. սեպտեմբերի 27-ին ընդունված ծրագրով ազգային-քաղաքական կյանք մտած Հայ Ժողովրդական կուսակցությունը իրեն հռչակում էր համազգային եւ ապագասակարգային: ՀԺԿ-ն ազգային հարցը տարաբաժանում էր երկու մասի՝ Ռուսահայաստան եւ Հայկական հարց: Ըստ ՀԺԿ-ի, Անդրկովկասի հայաբնակ վայրերում, որոնց «սահմանները պետք է փոփոխել ըստ ազգային համախմբումների», հայերը պետք է ունենան՝ տարածքային ինքնավարություն եւ տեղական նշանակության հարցերը լուծեին օրենսդրական մարմնի միջոցով: Իսկ արդեն Հայկական (նկատի ունեն Արեւմտահայաստանը - Ա.Հ.) հարցը համարվում էր «միջազգային, որ կարող էր լուծվել միջազգային կոնգրեսում»: Ըստ այդմ, ՀԺԿ-ն պետք է աշխատեր, որպեսզի այդ հարցը լուծվի արեւմտահայերի ցանկության համաձայն.[4]

1919թ. սեպտեմբերի 7-15-ը կայացած 2-րդ համագումարում, ՀԺԿ-ն ընդունեց նոր ծրագիր, որտեղ, նախորդի համեմատ, արդեն կատարվել էին որոշակի փոփոխություններ: Արդեն, որպես գլխավոր նպատակ հռչակելով «բովանդակ հայ ժողովրդի իրավունքների պաշտպանումը եւ ազգային պետականության զարգացմանը ծառայելը», ՀԺԿ-ն, ՀՀ-ի ստեղծումից հետո, ազգային հարցը առանց որեւէ տարաբաժանման էր ներկայացնում՝ Հայաստանի անջատված մասերից սեփական ծովային ելքով Միացյալ ու Ազատ Հայաստանի, իսկ Հայաստանից դուրս ապրող հայերի համար՝ ազգային մշակութային ինքնավարության ստեղծումը նպատակ հայտարարում.[5] Փաստորեն, նույնիսկ Փարիզի վեհաժողովին հայկական հուշագրի ներկայացումից հետո անգամ ՀԺԿ-ն իր ծրագրում այդ հարցին շատ անորոշ ձեւակերպում տվեց:

Երկրորդ համագումարում ընդունած (որին մասնակցում էին նաեւ ռամկավար ու վերակազմյալ հնչակյան կուսակցության պատգամավորներ) բանաձեւում ՀՀ ներքին իրագրության եւ հասարակական-քաղաքական կյանքի գնահատման ուղղությամբ ՀԺԿ-ի հայեցակետերը հստակեցվեցին: Նշելով այն հանգամանքը, որ ՀՀ «օրհասական» օրեր է ապրում, ինչը «անխուսափելի հաջողությամբ» երկիրը գեպի «պետականության կատարյալ խորտակում եւ բնակչության ոչնչացում» է մղում, անհրաժեշտ էին գտնում, որպեսզի «ոչ պետական շահերով» ղեկավարվող ՀՅԴ կառավարությունը անհապաղ հրաժարական տա, պառլամենտը լուծարվի եւ նոր ժամանակավոր կառավարություն կազմվի.[6]

Քեմալական ագրեսիայի ժամանակ, 1920թ. հոկտեմբերի 2-ի կոչում ՀԺԿ Հայաստանի Կենտկոմը հռչակում էր. «Ամեն ինչ պիտի զոհաբերել հանուն հաղթանակի, հանուն մեր ժողովրդի փրկության եւ Միացյալ ու անկախ Հայաստանի: Սեղմենք մեր շարքերը, նորից ցուցադրենք ապրելու եւ հաղթելու մեր կամքը, կազմենք մի համազգային ճակատ»: Նման հոգատար վերաբերմունքի արդյունք էր ՀՀ կառավարությանն ուղղված հուշագիրը, ուր, ՀՀ անկախությունը ապահովելու համար, կոչ էր արվում շարունակել պայքարը արտաքին թշնամու դեմ: Ըստ այդմ, նրանք առաջարկում էին Հայաստանի անկախությունը ընդունող բոլոր հայկական քաղաքական հոսանքներից կազմել կոալիցիոն կառավարություն եւ պայման գնում, որ նրանում ՀՅԴ-ն լինի փոքրամասնություն, իսկ վարչապետը՝ ոչ դաշնակցական: Առաջարկվում էր բոլոր կուսակցությունների մասնակ-

---

[1] «Ազգ»,Պոստոն, 1919, հուլիսի 17, 26, 31, օգոստոսի 5, 23:
[2] «Ժողովուրդ», Կ. Պոլիս, 1919, հուլիսի 2, 10:
[3] Տես - «Վերածնունդ», Երեւան, 1919, հունիսի 8:
[4] Ծրագիր ՀԺԿ, Թիֆլիս, 1917: ՀԱԱ., ֆ. 1021, ց. 7. գ. 11:
[5] Ծրագիր ՀԺԿ, Երեւան, 1919, էջ 3:
[6] ՀԱԱ, ֆ.404, ց.1, գ.39:

ցությամբ կազմակերպել բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորություններով օժտված պետական խորհուրդ: Թեպետ, ստեղծված իրադրությունում ՀԺԿ-ն մյուս ընդդիմադիր քաղաքական հոսանքների նման իրեն պատասխանատու չէր համարում և գիտակցում էր իշխանության պատասխանատվության ծանրությունը, սակայն, նման քայլի գնում էր «հանուն մեր ժողովրդի ու պետության փրկության»: Հակառակ դեպքում, եթե ՀՅԴ-ն կրկին մերժեր նման առաջարկը, ապա ՀԺԿ-ի կարծիքո՛վ նրա վրա պետք է ծանրանա պետության վիճակի համար պատասխանատվությունը «ներկա և ապագա սերունդների առաջ».[1]

ՀԺԿ-ի Աշակերտական ֆրակցիան գլխավոր նպատակ էր հռչակում՝ «ազգային առողջ ինքնագիտակցության» զարգացումը ու իրականության հաշվի առումով «իլյուզիաներով և երևակայությամբ կերակրվելուն» վերջ տալը.[2]

ՀԺԿ Ալեքսանդրապոլի կոմիտեն ձգտելով հավաստել, որ իրենց կուսակցությունը հակազոր ուժ է մի կողմից աջակողմյան՝ «նեղ ազգայնական և ագրեսիվ տարրերի, որպիսիք են դաշնակցականները-ռեակցիոն ուժ», և մյուս կողմից՝ «ծայրահեղ սոցիալիստական տարրերին, որոնք ամեն բանից վեր դասում են դասակարգային կռիվը», դեմ է արտահայտվում հեղափոխական ցնցումներին, և ողջունում Հայաստան եկած անգլո-ամերիկյան դաշնակիցներին՝ որպես «մեր բարեկամների և հողթողների» ու հույսը դնում նրանց վրա.[3]

ՀԺԿ Երևանի Աշակերտական ֆրակցիան, քննադատելով ՀՅԴ-ին, փորձում էր հետևյալն ապացուցել. «Հայաստանի երիտասարդ սերնդի մեջ մենք առաջ ենք բերում մի ուղղություն, որ հենվելով ազգային գաղափարների և գիտության նվաճումների վրա, անպայման պիտի հաղթանակ տանի».[4]

ՀԺԿ Հայաստանի կոմիտեն ակտի ընդունումից հետո կայացած Խորհրդարանի ընտրությունների նկատմամբ ընդգծված բացասական դիրքորոշում որդեգրեց և բոյկոտեց: Այս փաստը պետք է բացատրել մասնավորապես հետևյալ նկատառումներով, նախ՝ վերջնականապես արդեն բացառվում էր կոալիցիոն կառավարության ստեղծման որևէ հնարավորություն, ապա՝ նոր խորհրդարանում ՀԺԿ-ին տեղեր զբաղեցնելու չնչին շանսեր էին մնացել, և ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում նրա համար միմիայն ընդգծված ընդդիմության կեցվածքն էր ձեռնտու: Այդպիսի իրավիճակի ձևավորմանը մեծապես նպաստում էր նաև արտաքին դիվանագիտական ասպարեզում ՀՅԴ և Պողոս Նուբարի խմբավորման միջև հակամարտության սրումը: Այսուհանդերձ, նման կեցվածքը չէր խանգարում, որպեսզի ՀԺԿ Հայաստանի կոմիտեն, 1920թ. մայիսի 28-ին, «ջերմ» շնորհավորական ուղերձ հղի ՀՀ վարչապետին, որն ավարտվում էր հետևյալ կոչով. «Կեցցե ազատ, անկախ, միացյալ Հայաստանը».[5]

Ի դեպ, ինչպես հայտնի է, Միացյալ Հայաստանի ակտի ներքո ստորագրել էր նաև ժողովրդական Հ.Ջմշկյանը, որ նախարարի պաշտոնում մնալու կապակցությամբ, գրավոր տեղեկացրել էր իր՝ ՀԺԿ-ից հեռանալու մասին: Այս ամենից հետո, ՀԺԿ Հայաստանի կոմիտեն, 1919թ. հունիսի 25-ին, միաձայն որոշեց նրան կուսակցությունից արտաքսել՝ տեղեկացնելով այդ մասին կուսակցական բոլոր մարմիններին.[6]

Միացյալ Հայաստանի ակտի ընդունումը քննադատեց նաև ՀԺԿ Բաքվի կոմիտեն.[7]

Ս.Վրացյանի վկայությամբ, ՀԺԿ-ի առաջնորդ Ս.Հարությունյանը ակտին դեմ էր, որովհետև այն համարում էր «միակողմանի բնույթ կրող, Պողոս Նուբարի հավանությունը չունեցող և Հայկական Հարցի միջազգային կացությունից չբխող», և պահանջում էր այն չեղյալ հայտարարել: Սակայն, Ս.Վրացյանի վկայությամբ, ժողովրդականների նման կեցվածքը թելադրված էր Փարիզից: Այդ տարիներին, Թիֆլիսն էր Փարիզի հետ արագ և անմիջական

---

[1] Նույն տեղում, ֆ.1021, ց.7, գ.21:
[2] «Քայլեր», Թիֆլիս, 1919, մարտի 23:
[3] «Նոր Կյանք», Ալեքսանդրապոլ, 1919, փետրվարի 9:
[4] «Նոր ուղի», Երևան, 1920, մայիսի 16; ՀԱԱ, ֆ.4004, ց.1, գ.40:
[5] Տես մանրամասն - ՀԱԱ, ֆ.1021, ց.7, գգ.12-16, 18-19:
[6] ՀԱԱ, ֆ.404, ց.1, գ.38:
[7] «Երկիր», Բաքու, 1919, հուլիսի 7:

հարաբերության մեջ և ավելի իրազեկ այնտեղի անցուդարձին, իսկ ինչպես հայտնի է, ՀԺԿ-ի Կենտկոմը գտնվում էր Թիֆլիսում.[1]

ՀԺԿ-ն, թեպետ դրական վերաբերվեց ՀՀ անկախությանը և մայիսի 28-ը համարեց «պատմական տարեդարձ», ու ողջունեց Միացյալ և Ազատ Հայաստանը, սակայն ակտը համարեց պետական հեղաշրջում, որը կատարվել էր «քաղաքական և նեղ կուսակցական շարժառիթներից, և ամենամեծ հարվածը հասցրեց ժողովրդական ներկայացուցչության գաղափարին»: Իսկ Միացյալ Հայաստանի իշխանությունը, ՀԺԿ-ի կարծիքով, պետք է կազմակերպվեր Ազգային պատվիրակության և ՀՀ կառավարության փոխադարձ համաձայնությամբ.[2]

ՀԺԿ-ն ուշադրության կենտրոնում էր պահում ինչպես Հայկական Հարցը, այնպես էլ ՀՀ արտաքին քաղաքականության խնդիրները: Անդրադառնալով հայ-խորհրդային հարաբերությունների կարգավորմանը, ՀԺԿ-ն գտնում էր, որ միջազգային իրավունքի համաձայն, պետք է անհապաղ «բարեկամական և տնտեսական» հարաբերություններ ստեղծվեն ՀՀ-ի և Խորհրդային Ռուսաստանի միջև: Անհրաժեշտ էր համարվում, որ Ռուսաստանը միջոցներ ձեռք առնի սանձահարելու Հայաստանի բոլշևիկների հակապետական գործունեությունը և ազդի Ադրբեջանի վրա: Քննադատելով 1920թ. օգոստոսի 10-ի հայ-խորհրդային համաձայնագիրը, Ռուսաստանից պահանջում էին՝ վերադարձնել Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, քեմալականներին ստիպել ազատել Արևմտահայաստանը և չխառնվել ՀՀ-ի ներքին գործերին.[3]

1920թ. Թուրք-հայկական պատերազմի օրհասական շրջանում, «Ո՞ւր է մարդկությունը» վերտառությամբ հոդվածում, քննադատելով Եվրոպայի, ԱՄՆ-ի և Ազգերի Լիգայի բացարձակ անգործությունը ՀԺԿ-ն, որպես փրկության միակ միջոց համարում էր՝ հայ ժողովրդի համար «իրեն վայել, իր հոգուն և բաղձանքներին համապատասխան իշխանության» ձևավորումը»: Հայրենիքի պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ կոչեր կատարած ՀԺԿ-ն խիստ դատապարտեց պատերազմի վերջում ՀՀ կառավարության որդեգրած թուրքական կողմնորոշումը, հատկապես՝ նկատի ունենալով այն պարագան, որ ՀՅԴ-ն 30 տարի ազատագրական պայքար է մղել թուրքերի դեմ.[4]

ՀԺԿ-ն, գոհունակությամբ ողջունելով հասկելի գալուստը, շեշտում էր, որ նրա՝ «Հայաստանի դիկտատոր» նշանակվելը եղել է ԱՄՆ-ի ազդեցության ներքո, ինչի արդյունքում «այդպիսով հիմք է դրվում Միացյալ Հայաստանի քաղաքական վերածնության գործին».[5]

Սան-Ռեմոյում պայմանագրի հաստատումից հետո, վերլուծելով Հայաստանին վերաբերող հոդվածները, ժողովրդականները համոզված պնդում էին, որ անկասկած Հայկական Հարցը կլուծվի դրական և Միացյալ Հայաստանի անկախությունը կճանաչվի «մեծ դաշնակիցների կողմից»: Ցավալի էր համարվում միայն Հայաստանի սահմանների վերաբերյալ հարցի անորոշ թողնվելը, քանզի, նրանց կարծիքով, Առաջավոր Ասիայում խաղաղություն չի կարող լինել, եթե Հայաստանը մնա առանց էրզրումի և սեփական ծովային ելքի.[6]

Սևրի պայմանագրի կնքման փաստը, ՀԺԿ-ն դիտարկում էր ներքաղաքական հակամարտության և միջկուսակցական պայքարի կանոնավորման համապատկերում: Այն համարում էին «ամենալավ և ամենահարմար ժամանակը՝ ներքին խուլ և անվայել պայքարին» վերջ տալու և Միացյալ Հայաստանի «արդար և ճշմարիտ միացյալ խառը կառավարություն» կազմելու համար.[7]

Ի տարբերություն ժողովրդական և ռամկավար մյուս հոսանքների, «Մշակ»-ը, ընդհանուր առմամբ, անաչառ էր գնահատում ներքին և արտաքին քաղաքական բնագավառների հարցերը: Մասնավորապես, Թուրք-հայկական պատերազմի ընթացքի և արդյունքների քննարկման ժամանակ, տեղին

---

[1] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 281-83:
[2] «Ժողովուրդ», Երևան, 1919, մայիսի 28; հունիսի 1, 4, 6:
[3] «Ժողովուրդ», Երևան, 1920, մայիսի 20, սեպտեմբերի 21:
[4] «Ժողովուրդ», Երևան, 1920, նոյեմբերի 10, 23:
[5] «Ժողովուրդ», Երևան, 1919, օգոստոսի 17, 22:
[6] «Ժողովուրդ», Երևան, 1920, մայիսի 23, հունիսի 23:
[7] «Ժողովուրդ», Երևան, 1920, օգոստոսի 27:

քննադատում էին, ինչպես քեմալականների ու բոլշեւիկների քաղաքականու-թյունը, այնպես էլ՝ ՀՀ ղեկավարության պահվածքը: Այս առումով, անդրա-դառնալով ստեղծված իրավիճակից ելքի փնտրտուքին, սկզբունքային ձեւով հավաստում էին. «Ամենից առաջ՝ սթափվել ցնորքներից: Մեզ ոչ ոք չի օգնել եւ չպիտի օգնի: Ամեն ինչ վաճառք է, ամեն ինչ արշին է եւրոպական դիպլոմատիայի կրծքի տակ»: «Մշակ»-ը պախարակիչ ձեւով քննադատեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքած ՀՀ կառավարությանը եւ ՀՅԴ-ին, որը նրա գնահատմամբ՝ «դեռ երեկ հղփացած, բարձրագլուխ էր, իսկ հիմա այդքան անգութ կերպով թաղեց իրեն իր ձեռքով պատրաստած գերեզմանի մեջ»:[1]

«Մշակ»-ի շուրջ խմբված մտավորականները եւ գործիչները (օրինակ՝ Լեոն) բավական ակտիվորեն անդրադառնում էին ներքին եւ արտաքին քաղաքականության խնդիրներին: ԱՄՆ-ի մանդատի մերժումից հետո իրադրության ավելի իրական ձեւով գնահատականներ տալով խոստովանում էին, որ հայ ժողովրդի ու Հայաստանի «միակ առողջ ու միակ շահավետ» քաղաքականությունը սեփական ուժերի վրա հենված քաղաքականությունն է, միակ փրկությունն էլ՝ բոլոր հատվածների «սերտ համերաշխության եւ կուռ միաբանության մեջ է, եւ միայն մենք կփրկենք մեզ», եւ համարում պահի «սրբազան պատվիրան ամեն մի հայի համար»: Սեւրի պայմանագրի կնքումը «Թուրքիան ոչնչացավ» մեկնակետով գնահատվեց. «Անկախ եւ Միացյալ Հայաստանը երազ չէ: Նա ճանաչված է, օրինականացված: Մնում է նրա հողային տարածքի խնդիրը: Մեր փրկությունը, մեր ուժը դրսից չէ, այլ մեզանից պիտի բղխե: Ամենագլխավորն այս է»:[2]

1919թ. մայիսի 28-ից հետո, դաշնակցականները ՀԺԿ-ին բնութագրում էին որպես «բուրժուաների կուսակցություն, որ ժողովրդի մեջ հեղինակություն եւ դիրք չունի եւ այդ պատճառով ընտրություններին չմասնակցեց, եւ որին ձայն էին տալիս միայն խանութպանները, չարչիները, շահագործող դասակարգերի անդամ-ները, նրանք դադարում են մեր կյանքում որեւէ դեր խաղալուց եւ ինքնասպան եղան»:[3]

ՀԺԿ-ի բնութագրման առումով ուշագրավ է Ա.Վրացյանի կարծիքը: Նրա վկայությամբ, ՀԺԿ ղեկավար Ա.Հարությունյանը, ժամանակին՝ հակառակ իր դիմումի, ՀՅԴ շարքերը չէր ընդունվել սոցիալիստ չլինելու պատճառով: Նրա գնահատմամբ ՀԺԿ-ն «անպայման ապագա ունեցող մի կազմակերպություն էր, դժբախտաբար նրա ղեկավարները տհաս գտնվեցին ըմբռնելու համար իրենց վերապահված պատմական դերը»:[4]

Փաստորեն, ռամկավարները եւ ժողովրդականները ակնհայտորեն միասնական դիրքորոշում էին ցուցաբերում, թե ՀՀ ներքաղաքական ու ներկուսակցական պայքարի, թե համազգային նշանակության ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրների, եւ թե, հատկապես, Հայկական հարցի միջազգայնորեն լուծման ուղիների առումներով: Այս խմբավորումը, օբյեկտիվ պատճառներով, գերազանցապես գտնվում էր Պողոս Նուբարի անառարկելի ազդեցության ներքո եւ ներքին ու արտաքին քաղաքական հարցերում հանդիսանում ՀՅԴ-ի ընդդիմախոսր:

Ավագ Հարությունյան
ՀԱԱ տնօրենի
տեղակալ

ПОЗИЦИИ ЛИБЕРАЛЬНО-НАРОДНОЙ КОАЛИЦИИ ПО ВОПРОСАМ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ В 1918-1920 ГОДАХ

Резюме

Среди армянских политических партий по своему влиянию и масштабу деятельности, второй по значимости после Армянской Революционной Федерации Дашнакцутюн была Либерально-Народная коалиция (Либерально-Демократичевская и Армянская Народная партия). Если во внутриполитической жизни Республики Армении активной была роль АНП, то на международной дипломатической арене для ЛДП главной задачей была защита и справедливое решение Армянского вопроса.

Либералы и Народники привели в соответствие свои програмные концепции согласно изменениям внутренного и международного положения.

Они отрицательно отнеслись к принятию правительством РА акта об объединенной Армении.

Либералы и Народники полностью защищали принятие мандата США над Арменией. Подписание Севрского договора они также рассматривали в контексте урегулирования внутриполитического противостояния и межпартийной борьбы.

Фактически, Либералы и Народники явно проявляли единую позицию как во внутриполитической борьбе в РА, так и по отношению к основным проблемам внешней политики, и особенно в поисках международного решения Армянского вопроса.

Эта коалиция по объективным и субъективным причинам находилась под безусловным влиянием Председателя Национальной Делегации в Парижской мирной конференции Погоса Нубара как во внутренних, так и во внешных политических вопросах, находясь в оппозиций к правящей АРФ Дашнакцутюн.

Авак Арутюнян
замдиректор НАА

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ (1918 - 1920թթ.)

Հայաստանի Առաջին Հանրապետությունը իր գոյության առաջին իսկ օրերից հայտնվել է ծանր, եթե չասենք օրհասական կացության մեջ: 10 հազ. քառ. վերստ հողակտորի վրա շուրջ 300 հազար անտուն ու քաղցած գաղթականություն, քառամյա ավերիչ պատերազմի հետեւանքով քայքայված ու կազմալուծված տնտեսություն:

Նորաստեղծ Հանրապետության կառավարությունը անհրաժեշտաբար ու անհապաղ պետք է լուծեր երկու կարեւոր խնդիր՝ ապահովեր երկրի անվտան-գությունը եւ ժողովրդին փրկեր սովի ու հիվանդության ճիրաններից: Հայաստանը շրջափակված ու մեկուսացված էր. հաղորդակցության ուղիները չէին գործում. Երեւան-Ալեքսանդրապոլ-Թիֆլիս երկաթուղին Թուրքիայի ու Գերմանիայի եւ վերջինիս բարեկամ Վրաստանի տնօրինության ներքո էր, Երեւան-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին՝ Նախիջեւանի թուրք-թաթարների:

Երկիրն ու ժողովրդին փրկելու խնդրում Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների կարեւորությունը Հայաստանի իշխանությունները քաջ գիտակցում էին: Վրաստանով էր անցնում աշխարհի հետ կապող միակ ճանա-պարհը՝ երկաթուղին, ինչպես նաեւ փոստային ու հեռագրական կապը, իսկ էներ-գակիրները ստանում էին Ադրբեջանից: Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ՝ Հ.Քաջազնունին խոսելով արտաքին քաղաքականության ասպարե-զում կառավարության խնդիրների մասին մատնանշում էր. «Բարեկամական ու բնականոն կապ հաստատել հարեւան երկրների հետ, մասնավորապես վերա-կանգնել ապրանքափոխանակությունը նրանց եւ Հայաստանի միջեւ»:

ՀՀ կառավարությունն այդ չափազանց դժվարին խնդիրն իրագործելու ուղղությամբ ջանքեր էր գործադրում: Նախ եւ առաջ անհրաժեշտ էր դիվանագի-

[1]«Մշակ», Թիֆլիս, 1920, նոյեմբերի 7, դեկտեմբերի 22-23, 1921, հունվար 25:
[2] «Մշակ», Թիֆլիս, 1920, հունիսի 1, հուլիսի 30, օգոստոսի 15:
[3] «Հայաստանի Աշխատավոր», Երեւան, 1919, հունիս 5:
[4] Վրացյան Ս., Կեանքի ուղիներով, հ. Գ, էջ 146-147:

տական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ: Վրաստանի հետ այդ հարցը լուծվեց 1918թ. ամռանը, Պարսկաստանի հետ՝ 1919թ. ամռանը, իսկ Ադրբեջանի հետ, ոչ առանց անգլիական իշխանությունների միջամտության, դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1919թ. փետրվարից[1]*: Ընդհանրապես իրադրությունն Անդրկովկասում որոշ չափով բարելավվեց պատերազմի ավարտից հետո, 1918թ. նոյեմբերի կեսերին, երբ հաղթանակած Անտանտի զինվորական ներկայացուցչությունը սկսեց գործել Անդրկովկասում:*

Միջպետական առևտրա-տրանզիտային և տնտեսական հարաբերություն-ներն իրականացնելու համար անհրաժեշտ էին կարգավորող փաստաթղթեր, պայմանագրեր, համաձայնագրեր: Վրացական հանրապետության կառավարու-թյունը 1919թ. փետրվարի 21-ին Արտաքին գործերի նախարար Գեգեչկորու ստո-րագրությամբ մի նամակ է հղում Ադրբեջանի և Հայաստանի կառավարու-թյուններին և՛ ելնելով ընդհանուր տնտեսական ու քաղաքական շահերից, առաջարկում. 1) կարգավորել երկաթուղու աշխատանքը, 2) մշակել միասնական օրենսդրություն փոստ հեռագրական ծառայությունների ու նրանց փոխանակման վերաբերյալ, 3) մշակել օրենսդրություն մաքսային ծառայությունների և փոխադարձ արտոնությունների վերաբերյալ, 4) կարգավորել ֆինանսական փոխհարա-բերությունները, 5) կարգավորել ու ճշտել ապրանքափոխանակության հարցերը: Վրաստանը գտնում էր, որ բացի երեք անդրկովկասյան հանրապետություններից, վերոհիշյալ հարցերի քննարկմանը պետք է մասնակցի նաև Լեռնականների միության հանրապետությունը[2]*:*

Ադրբեջանի կառավարությունը 1919թ. մարտի 6-ին պատասխանում է Գեգեչկորուն և նոր առաջարկություններ անում. 1) նախ և առաջ ճանաչել միմյանց անկախությունը, այդ մասին հանդիսավոր եղանակով հայտարարել Անտանտի երկրներին, 2) Խաղաղարար կոնֆերանսում և այլ միջազգային համաժողովներում համերաշխություն գրսևորել ի պաշտպանություն հանրապե-տությունների անկախության, 3) նախազգուշական միջոցներ կիրառել հանրապետություններից որևէ մեկի վտանգի ենթարկվելու դեպքում, 4) բոլոր վիճելի հարցերը լուծել արբիտրաժի միջոցով, 5) կարգավորել փախստականների՝ իրենց բնակավայրերը վերադառնալու հարցը: Ադրբեջանը «ցանկալի և անհրաժեշտ» էր համարում Հարավ-Արևմտյան հանրապետության[3]* մասնակցու-թյունը այդ հարցերի քննարկմանը, որն ըստ Ադրբեջանի պետք է տեղի ունենա հատուկ կոնֆերանսում: Նշվում էր կոնֆերանսի գումարման ժամանակը՝ մարտ 1919թ. և տեղը՝ Բաքու քաղաքը, անհամաձայնության դեպքում՝ Թիֆլիսը*[4]*:*

Ինչպես տեսնում ենք վրացական ծրագիրը առավելապես տնտեսական բնույթ էր կրում, մինչդեռ ադրբեջանականը գերազանցապես՝ քաղաքական: Չնայած դրան փոխադարձ քննարկումներ ու ճշտումներ կատարելուց հետո առևտրատրանզիտային պայմանագիր է կնքվում Հայաստանի և Ադրբեջանի միջև 1919թ. հունիսի 17-ին[5]* և տրնազիտային պայմանագիր՝ Հայաստանի և Վրաստանի միջև՝ 1919թ. նոյեմբերի 3-ին*[6]*: Բայց եթե վերջինս հաստատվել էր Հայաստանի պառլամենտում 1919-ի նոյեմբերի 12-ին, և Վրաստանի պառլամենտում՝ նոյեմբերի 17-ին*[7]*, ապա Ադրբեջանի պառլամենտը մինչև 1920թ. փետրվարի 15-ը այդ հարցին չէր անդրադարձել*[8]*: Ավելորդ չենք համարում նշելու, մինչև այդ պայմանագրերի կնքումը Հայաստանին հասցեագրված բեռնափո-խադրումները իրականացվել են անգլիական կամ ամերիկյան դրոշի ներքո:*

ՀՀ կառավարությունը երկրի տնտեսական կյանքը, մասնավորապես արտաքին առևտուրը կազմակերպելու ասպարեզում որոնումների մեջ էր: Չունենալով կառավարման փորձ, նաև մասնագիտական որակավորում, սխալների

[1] ՀԱԱ, ֆ.223, ց.1, գ.51, թ.26:
[2] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.111, թ.14:
[3] Հարավ-Արևմտյան հանրապետությունն ստեղծվել էր Թուրքիայի կողմից, ընդգրկում էր Կարսի մարզի արևմտյան մասի և Արդվինի շրջանի մահմեդաբնակ գյուղերը -Վ.Ց:
[4] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.111, թ.14:
[5] Նույն տեղում, գ.433, թ.511:
[6] Նույն տեղում, գ.168, թ.71,76,84:
[7] Նույն տեղում, գ.496, թ.13:
[8] Նույն տեղում:

էր գործում: Մյուս կողմից երկրի ու ժողովրդի օրհասական վիճակը, քայքայված, ավերված տնտեսությունը անհապաղ լուծումներ էին պահանջում: Անկախ քաղաքական, սահմանային վեճերից ՀՀ կառավարությունը փորձում էր ճեղքել շրջափակման շղթան, լուծել ժողովրդին կենսական միջոցներով, սննդամթերքով ապահովելու խնդիրը: Փորձում էր առևտուր անել սահմանակից երկրների, հատկապես Վրաստանի ու Ադրբեջանի հետ: Ֆինանսների նախարարությունը, վերջինիս առևտրաարդյունաբերական բաժինն Արտաքին գործերի նախարարու-թյան միջոցով 1919թ. մարտի 28-ին, երբ նոր-նոր էին դիվանագիտական հարաբերություններ հաստատվել հարևան երկրների հետ, դիմում է Արտաքին գործերի նախարարությանը, որ նա իր ներկայացուցիչներին հրահանգի տեղերում պարզել և Հայաստանի համապատասխան մարմիններին ստացիչ տեղեկություններ հաղորդել նավթամթերքների, էլեկտրական սարքերի, լամպերի, ծխախոտի աքցիզի, արտահանության մաքսի, արտահանության համար թույլատրված ապրանքների, շուկայական գների և այլ նման հարցերի վերաբեր-յալ: Նույն գրության մեջ հայտնվում է, որ Հայաստանը կողմնակից է ազատ ապրանքափոխանակության[1]*: Ինքը ևս պարտավորվում է դիվանագիտական ներ-կայացուցիչներին պարբերաբար տեղեկություններ հայտնել Հայաստանի տնտեսական վիճակի ու շուկայի մասին:*

Կառավարության անդամների անփորձությունը, մասնագիտական արհեստավարժության պակասն ու չտապողականությունն իրենց կնիքն էին դնում, բացասական ազդեցություն գործում հանրապետության առևտրատրան-զիտային գործունեության վրա: Հիշյալ գործոնները բացահայտվում են վարչա-կազմակերպչական ասպարեզում: Թիֆլիսում, Բաթումում, ավելի քիչ թվով Բաք-վում, տեղակայված էին Հայաստանի տարբեր նախարարությունների լիազոր-պաշտոնյաներ, անկախ դիվանագիտական ներկայացուցչություններից ու հյուպա-տոսություններից:

Արդյունքը լինում էր այն, որ գործարքներ էին կատարվում առանց միմյանց հետ համաձայնեցնելու, երբեմն գործարքներ էին կնքվում ասպարեզի հետ կապ չունեցող անհատների կողմից[2]*, չէին պահպանվում պայմանագրային ժամկետները հատկապես վճարների հարցում: Երկաթուղու անկանոն աշխատանքը մշտական բանավեճերի առարկա էր:*

Որոշակի լիազորություններով ու իրավունքներով օժտված առանձին կառույցներն բնականաբար ստեղծում էին խառնաշփոթ իրավիճակ, որին գումարվում էր հաշվառման գործի անբավարար դրվածքը[3]*:*

Հայաստանի և Վրաստանի միջև առևտրատնտեսական բնականոն հարաբերություններ սկզբում գոյություն չեն ունեցել: Բայց կա մի վավերագիր, որում առևտրական գործարքը հիմնավորվում է Վրաստանի կառավարության 10 մլն. գումարի տրտահանության թույլտվությամբ[4]*: Գոյություն ունեցող և մեր ձեռքի տակ եղած արխիվային վավերագրերը հաստատում են այդ իրողությունը և այն, որ հատուկենտ գործարքների հեղինակները, սակավ բացառությամբ, Վրաստանի հայազգի քաղաքացիներ էին: Մի կարևոր հանգամանք ևս. գործարք-ների վերաբերյալ վավերագրերը հիմք չեն տալիս կարծելու, թե դրանք իրագործվել են:*

Ապրանքափոխանակության հարցը Հայաստանի և Վրաստանի միջև, ըստ վավերագրերի, ծագում է 1918թ. օգոստոսից: Ի պատասխան Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչի գրության, Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի ստորագրությամբ նամակում հայտնվում է, որ Հայաստանը համաձայն է ապրանքափոխանակության՝ հաց, յուղ, շաքար ստանա-լու համար տալ տավար, ոչխար և այլն[5]*:*

«Գ. Զ. Սարաջև» ընկերությունը 1918թ. օգոստոսի 21-ին գրություն է հղում հայկական կառավարությանը առ այն, որ նա ցանկանում է Երևանի իրենց

[1] Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.130, թ.16:
[2] ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.108, թ.97:
[3] Վիճակագրական բյուլեաեն N 2, Հայասաանի ապրանքափոխանակությունը 1919 - 1920թթ., խմբագրությամբ Բ.Իշխանյանի, Երևան, 1920 թ., էջ 24:
[4] ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.64, թ.13:
[5] Նույն տեղում, գ.40, թ.2:

պահեստներից արտահանել երեք վագոն սպիրտ Թիֆլիսի իր գործարանի կարիքների համար, եւ որ այդ առթիվ նախապես ստացել է Վրաստանի իշխանությունների համաձայնությունը[1]: Ոմն Վարդան Վարդանյան 1918թ. սեպտեմբերի 4-ին դիմելով Հայաստանի Մինիստրների խորհրդին, հայտնում է, որ ինքը տեղյակ է Հայաստանի բնակչության ու բանակի ծխախոտի կարիքներին: Ծխախոտը Վրաստանից արտահանելու խնդիրը նույնպես համաձայնեցրել է Վրաստանի կառավարության հետ մի պայմանով, որ ներմուծված ծխախոտի արժեքին համազոր ապրանք արտահանի Հայաստանից[2]: Վ.Վարդանյանը խնդրում է արտահանության թույլտվություն: Վրաստանում Հայաստանի պարենավորման մասի լիազորի 1918թ. դեկտեմբերի 5-ի դիվանագիտական ներկայացուցչին հասցեագրված բացատրագրից պարզվում է, որ հայ կոոպերատորները Անդրկովկասի կոոպերատորների միությունից, վերջինիս միջոցով ձեռք են բերել զգալի քանակությամբ սննդամթերք (կաղին, թեյ, լոբի) եւ կաուստիկ սոդա[3]: Բեռներն Սանահինում անօրինական կարգով արգելափակված են եւ լիազորը խնդրում է միջնորդել արգելքը հանելու: Վրաստանի տարածքում գնումներ է կատարել Հայաստանի զորական նախարարության ներկայացուցիչը: 1918թ. հոկտեմբերի 19-ին Վրաստանում Հայաստանի գործերի հավատարմատարը դիմել է Վրաստանի արտաքին գործերի նախարարին հայկական բանակի կարիքների համար 1000 փութ սոխ ու 1000 փութ բազուկ մթերելու խնդրանքով, որը մերժվել է[4]:

Հայաստանը, ինչպես նաեւ Վրաստանը որեւէ ապրանք ձեռք բերելու եւ արտահանելու, ինչպես եւ ներմուծելու համար յուրաքանչյուր դեպքում պետք է դիմեր ու ստանար թույլտվություն եւ որը հաճախ չէր ստանում եւ այդ հանգամանքը դժվարեցնում էր բուն առեւտրի գործը:

1918թ. հոկտեմբերի 5-ի գրությամբ Հայաստանի ֆինանսների նախարարը պատասխանելով ինչ-որ գրության, որը վերաբերում էր Վրաստանի համար հայկական երկաթուղով բեռնափոխադրմանը, հայտնում է, որ քանի դեռ Հայաստանի համար Վրաստանի սահմանը փակ է, փակ կմնա նաեւ հայկականը[5]: Եվ հիրավի, վրացական սահմանը փակ էր եւ երկաթուղին չէր գործում: Այդ մասին է վկայում Հայաստանի արտաքին գործերի նախարարի 1918թ. նոյեմբերի 21-ի դիմումը Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որով առաջարկում է պարզել, թե ինչ պայմաններով վրացական երկաթուղով կարելի է Հյուսիսային Կովկասից ապրանք ներկրել Հայաստան[6]:

Վրաստանի քաղաքացիներ Ա. Զապչակիյան եւ Ս. Մամացեւը 1919թ. մարտի 5-ին դիմում են Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին՝ առաջարկելով մատակարարել հայկական երկաթուղուն անհրաժեշտ փայտակոճեր, մեկ հատի գինը՝ 18 եւ 25 ռ. եւ խնդրում շտապ պատասխանել[7]: Զոր, սղոցած անտառանյութը քարյուղով փոխանակելու առաջարկությամբ Վրաստանի քաղաքացի Զիկովանին 1919թ. հուլիսի 5-ին դիմել է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին[8]:

Ամենախոշոր առեւտրական գործարքը Հայաստանի եւ Վրաստանի միջեւ վերաբերում է Տկվիբուլի քարածխի վաճառքին: Այդ կապակցությամբ 1919թ. նոյեմբերի 7-ին Թիֆլիսում պայմանագիր է ստորագրվում Տկվիբուլի ձեռնարկության վարչության «բացառիկ ներկայացուցիչ» Արշակ Միրզոեւի եւ ՀՀ ներքին գործերի նախարարի միջեւ[9]: Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին Ա.Միրզոեւի դիմումից պարզվում է, որ հայկական կողմը խախտելով պայմանագիրը, ուշացնում է վճարումները: Ներկայացուցիչը Ա.Միրզոեւի գրությունն ստանալով, 1919թ. դեկտեմբերի 12-ին, հատուկ գրություն է հղում Մինիստր-նախագահին երկրին այդքան անհրաժեշտ էներգա-

[1] Նույն տեղում, գ.57, մ.II, թ.68:
[2] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.83, թ.9:
[3] Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.64, թ.13:
[4] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.86, թ.113, գ.64, թ.35:
[5] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.83, թ.22, տես նաեւ ֆ.276, ց.1, գ.91, թ.13:
[6] Նույն տեղում, գ.168, թ.2:
[7] Նույյ տեղում, ֆ.276, ց.1, գ.100, թ.2:
[8] Նույն տեղում, գ.108, թթ.11,12:
[9] Նույն տեղում, թ.179:

կիրների ներմուծումը կարգավորելու նպատակով՝ վճարումները ժամանակին կատարելու պահանջով[1]: Դատելով վիճակագրական տվյալներից 1919թ. երկրորդ կիսամյակում պետական հիմնարկների միջոցով Հայաստան է ներմուծվել 32.070 փութ քարածուխ: Հայաստան-Վրաստան ապրանքափոխանակության տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում Վրաստանի ծխախոտը հայկական բամբակով փոխանակելու գործարքը: Գործարքի մասին առաջարկությունը արվել է 1920թ. փետրվարի 26-ին: Եվ հենց այդ օրն էլ ՀՀ կառավարությունը «հույժ շտապ» մակագրությամբ Ֆինանսների նախարարությունից պահանջել է այդ առաջարկությանը վերաբերող գրագրությունը[2]: Ծխախոտի տերեւը օգտագործվելու էր կառուցվելիք գործարանի կարիքների համար, իսկ գործարանի կառուցմանը կառավարությունը հավանություն էր տվել[3]:

Դեղորայքի հայթայթումը Հայաստանի համար կարեւոր նշանակություն է ունեցել, գրեթե սննդին հավասար: Երկրում մոլեգնում էին վարակիչ հիվանդությունները: Դեղորայքի ձեռքբերման՝ գնման գործարքների մեծ մասը կատարվել է Թիֆլիսում: 1919թ. ապրիլի 30-ին Հայաստանի խնամատարության նախարարությանը ուղղված գրությունից պարզվում է, որ Թիֆլիսում գործող հայկական պաշտոնական մարմինների առաջարկությամբ ստեղծվել է Բժշկական բյուրո, որն ուներ դեղամիջոցների պահեստ: Բյուրոն ունեցել է մասնագետ աշխատակիցներ, գործում էր ինքնուրույն, սակայն Վրաստանում Հայաստանի պարենավորման մթերումների ու մատակարարման կոմիտեի կազմում: Այդ նույն գրությամբ բյուրոյի նախագահը հայտնում է, որ Թիֆլիսում դժվարացել է դեղորայքի ձեռքբերումը, խնդրում է թույլ տալ գնումներ անել այլ վայրերում եւ հրահանգել ինչ եւ ինչքան գնել, հատկապես, ուշադրություն է դարձնում խոլերայի պատվաստի ձեռքբերմանը[4]: Հարկ ենք համարում բերել օրինակներ՝ գաղափար կազմելու համար դեղամիջոցների ներկրման ծավալի մասին: «Տվիֆտ» ընկերությունը 1920թ. հունիսի 11-ին Երեւան է առաքել 30 արկղ (106 փութ 15 ֆունտ) դեղամիջոց, որի միայն առաքման ծախսերը կազմել են 84.544 ռ.[5]: Ոմն Ա.Օգանեզով Երեւանում 1920թ. մարտին Հայաստանի խնամատարության նախարարությանն է հանձնել 599.020 ռուբլու դեղորայք[6]: Այս վավերագիրն, ի դեպ, հետաքրքրական է նաեւ այն առումով, որ Ա. Օգանեզով քաշքշուկից հոգնած եւ իր ապրանքի արժեքը ստանալու հույսը կորցնելով՝ առաջարկում է համարժեք գումարի՝ 420 փութ բամբակ տրամադրել իրեն: Այս փաստաթղթում Ա. Օգանեզովը նշում է, որ ՀՀ Խնամատարության նախարարությանը հանձնել է նաեւ 200 փութ արճիճ (անագ):

Վրաստանի եւ Հայաստանի առեւտրական հարաբերությունները առավելապես բնութագրում են տրանզիտային բեռնափոխադրումները: Այս ասպարեզում նշանակալից է երկու գործոնների՝ վրացական կողմի «օրինական» պահանջների եւ համատարած բնույթ կրող թալանի դերը:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը 1919 թ. մայիսին միջնորդում է, որպեսզի վրացական իշխանությունները թույլ տան «Էնֆիաջյանցի ծխախոտի ֆաբրիկա» փայատիրական ընկերությանը վրացական երկաթուղով Հայաստան տեղափոխելու 30 վագոն տարբեր ապրանքներ. թուղթ, մեքենայի մասեր եւ 1400 փութ ծխախոտատերեւ[7]: Վրացական կողմը համաձայնում է պայմանով, որ թղթի եւ մեքենայի մասերի 50% մնա Վրաստանում[8]: Պահանջ է ներկայացվել նույնիսկ Ամերիկայի կողմից օգնության կարգով Հայաստանին տրամադրվող ալյուրից: 1919թ. հունիսի 24-ին Հայաստանի Արտաքին գործերի նախարարին ուղղված զեկույցում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում է, որ վրացական իշխանությունները տրանզիտը թույլատրելու համար պահանջում են ապրանքի՝ ալյուրի 15%-ը:

[1] Նույն տեղում, թ.177:
[2] Նույն տեղում, ֆ.199, ց.1, գ.157, թ.67:
[3] Նույն տեղում, թ.137 - 138:
[4] Նույն տեղում, ֆ.205, ց.1, գ.462, թ.79:
[5] ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.462, թ.97:
[6] Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.88 եւ շրջ.:
[7] Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.91, թ.74:
[8] Նույն տեղում, ֆ.202, ց.1, գ.38, մաս 2, թ.44:

ելնելով քաղաքական նպատակահարմարությունից, նա խոհեմաբար խորհուրդ է տալիս համաձայնվել, քանի որ ամերիկյան կողմը ընդառաջելու է[1]:

1920թ. հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծվում է Վառելիքը տնօրինող կենտրոնական բյուրո, որը ձեռնարկում է նավթամթերքների կենտրոնացմանը իր ամբարներում: Բաթումի ՀՀ ընդհանուր լիազորը 1920թ. հոկտեմբերի 18-ին հայտնում է Բաթումի Հայաստանի գլխավոր հյուպատոսին, որ վտանգ է սպառնում Հայաստանին պատկանող 14.124 փութ 23 ֆունտ նավթամթերքին և խնդրում միջոցներ ձեռնարկել[2]: Գլխավոր հյուպատոսը նույն օրը դիմում է Բաթումի մարզի արտակարգ կոմիսարին, հաստատում հիշյալ նավթամթերքի Հայաստանի սեփականությունը լինելու օրինականությունը, տեղեկացնում, որ 8.725 փութը ձեռք է բերվել Վրաստանի մատակարարման նախարարության թույլտվությամբ, մնացածը անգլիացիների տիրապետության ժամանակ[3], 1920թ. հունիսի 18-ին[4]: Գլխավոր հյուպատոսը 1920թ. հայտնում է, որ անձամբ դիմել է գեներալ Մդիվանուն, որը խոստացել է նավթամթերքը թողնել Հայաստանի տնօրինության ներքո[5]: Սակայն Նոբելի ներկայացուցիչը հոկտեմբերի 21-ին նորից է ահազանգում վրացական կառավարության պահանջի մասին[6]: Ինչպե՞ս ոտակել վրացական իշխանությունների քայլը: Պարզ չէ նաև գլխավոր հյուպատոսի ջանքերը պսակվեցի՞ն հաջողությամբ: Մինչդեռ Թուրքիան արդեն ներխուժել էր Հայաստան և երկիրը նավթամթերքի խիստ կարիք ուներ:

Պահպանվել են բազմաթիվ վավերագրերը երկաթուղու վագոնների թալանման մասին: Սակայն այդ առումով առավել բնութագրական է եգիպտացորենի թալանման փաստը: Հայաստանի պարենավորման նախարարության գլխավոր լիազորը 1919թ. ապրիլի 14-ին հայտնում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որ Թեհրեքի մարզում Հայաստանի համար մթերած 3610 փութ (665 պարկ) եգիպտացորենը, հասցեագրված Թիֆլիսում գտնվող Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեին, Կազբեգի կայարանի շրջակայքում թալանվել է վրացի գյուղացիների և զինվորների կողմից[7]: Այդ դեպքի մասին դիվանագիտական ներկայացուցիչը 1919թ. ապրիլի 28-ին տեղեկացնում է Վրաստանի Արտաքին գործերի նախարարին, պահանջում բռնագրավել եգիպտացորենն ու վերադարձնել, հետաքննել տեղի ունեցածը[8]: 1919թ. մայիսի 6-ի գրությամբ ՀՀ ընդհանուր լիազորը նորից է դիմում դիվանագիտական ներկայացուցչին՝ ճշտելով թվերն ու պահանջները. 1) թույլ տալ անմիջապես Վրաստանից Հայաստան ներկրել նույն քանակությամբ եգիպտացորեն, Հայաստանի պարենավորման ու մատակարարման կոմիտեի մթերած եգիպտացորենից, 2) գտնել կողոպտված ապրանքի արժեքի հատուցման միջոցները ու եղանակները: Ըստ որում հեղինակը մատնանշում է, որ եգիպտացորենը նախատեսվում էր ցանքի համար, որի ժամանակն անցնում է[9]:

Վրացական երկաթուղու դերը առևտրական հարաբերությունների զարգացման ասպարեզում առանձին քննության խնդիր է: Միայն նշենք, որ արգելքներ ու խոչընդոտներ են հարուցվել ինչպես մինչև տրանզիտի վերաբերյալ պայմանագրի կնքումը, այնպես էլ հետո: Իսկ հայկական երկաթուղու վատ աշխատանքը պայմանավորված էր նաև վառելիքի անկանոն մատակարարմամբ ու անբավարարությամբ:

Վրաստանի և Հայաստանի միջև առևտրական հարաբերություններում որոշակի ներդրում է ունեցել Հայաստանի կոոպերատիվները: Վերը նշվեց առևտրական մի գործարքի մասին: Հայ կոոպերատորները ջանքեր են գործադրել վրաց կոոպերատորների հետ համագործակցելու ուղղությամբ, սակայն անարդյունք: Այդ է վկայում Հայկոոպի ներկայացուցիչների 1920թ. հոկտեմբերի

[1] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.81, թ.422 շրջ.:
[2] Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.157:
[3] Նույն տեղում, գ.19, թ.40:
[4] Նույն տեղում, գ.7, թ.158:
[5] Նույն տեղում, թ.160:
[6] Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.172:
[7] ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.118, թթ.25,26,27, ֆ.368, ց.1, գ.7, թ.74 և այլն:
[8] Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.118, թ.82:
[9] Նույն տեղում, թ.81:

նամակը ՀՀ Արտաքին գործերի նախարարին և կից բացատրագիրը, որն ուղղված է եղել Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին: Հայ կոոպերատորների կարծիքով. «Այդ խնդիրը լիկվիդացիայի չենթարկելով, վրաց պաշտոնական շրջանները ամեն կերպ աշխատելու են շահագործել հարցը հօգուտ իրենց և ամեն քայլափոխում մեր տնտեսական աշխատանքների ընթացքում խոչընդոտներ են առաջ բերելու, պաշտոնական բանակցությունները ձգձգելու իբրև նորմալ պատճառաբանություն իրենց անբարյացկամ վերաբերմունքն արտահայտելու համար»: Եվ ապա նկատի ունենալով այդ հանգամանքը խնդրում են «խնդիրը ամբողջությամբ լուծել»[1]:

Պարզվում է, որ հայ և վրաց կոոպերատորների ու տնտեսական այլ կազմակերպությունների համատեղ քննարկումների ընթացքում առևտրատնտեսական բնականոն հարաբերությունների նախապայմանը վրացական կողմը համարել է Մակվից Վրաստանի համար ցորենի արտահանությունն հայկական երկաթուղով, որի դրական լուծումը կախված էր Հայաստանից:

Ադրբեջանի հետ դիվանագիտական և առևտրատրանզիտային հարաբերությունների հաստատման խնդրում շատ որոշակի ազդեցություն է ունեցել Բաքվում հաստատված համաձայնության երկրների ներկայացուցչությունը[2]: Բանն այն է, որ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իշխանությունները ամեն կերպ ջանում էին խափանել նավթի ու նավթամթերքի արտահանումը Հայաստան և իրենց նպատակին հասնելու համար վկայակոչում «հիմնավոր» պատճառներ. պայմանագրի բացակայությունը, ցիստերնների պակասը, վճարումների ձգձգումն ու ուշացումը: Այս փաստարկներից էականը պայմագրի բացակայությունն էր: Անգլիական օկուպացիոն իշխանությունները քանիցս առաջարկել են Հայաստանի Հանրապետությանը անհապաղ պայմանագիր կնքել Ադրբեջանի հետ: Պայմանագրի նախագիծը հայկական կողմը 1919թ. մարտի 25-ին ներկայացրել է ադրբեջանական կողմին: Վերջապես, որոշ նկատառումներ հաշվի առնելուց հետո, 1919թ. հունիսի 17-ին պայմանագիրը ստորագրվում է: Հայկական կողմը ներկայացնում էր Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը, իսկ ադրբեջանականը՝ Հանրապետության առևտրի, արդյունաբերության և պարենավորման նախարար Ա. Ալիմովը:

Պայմանագիրը բաղկացած էր 17 կետից, որոնց շարքում ամենաուշադրավը 2-րդն էր, ըստ որի. «Ադրբեջանական կառավարությունը թույլատրում է Հայաստան արտահանել նավթ, մազութ, կերոսին, քսուկային յուղեր՝ հայկական երկաթուղու կարիքների համար անհրաժեշտ քանակությամբ, որը սակայն ամբողջ պայմանագրային ժամկետի ընթացքում չպետք է գերազանցի 8 մլն. փթից: Ընդ որում, սույն հոդվածում նշված կարիքների համար անհրաժեշտ քանակությունը որոշվում է երկու կողմերի հավասար թվով ներկայացուցիչներից բաղկացած խառը հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի նստավայրը նշանակվում է Բաքու քաղաքը»[3]: Պայմանագրի ժամկետը սահմանված էր մեկ տարի, սկսած ստորագրելու օրվանից: Սահմանվում է նաև առանց տուրքի, ազատ, տրանզիտային բեռնափոխադրություն:

Ըստ պայմանագրի Ադրբեջանը հնարավորություն է ստանում խառնվելու Հայաստանի ներքին գործերին, հսկողություն սահմանելով ներմուծվող նավթի ու նավթամթերքների վրա, զրկելով նրան նավթի ավելցուկը հացահատիկի հետ փոխանակելու հնարավորությունից և ապա՝ ցանկացած քանակի ու տեսակի ապրանք արտահանել Հայաստանից: Ադրբեջանը 1918թ. դեկտեմբերի 26-ին նույնաբնույթ պայմանագիր էր կնքել Վրաստանի հետ[4]: Սակայն Ադրբեջանից Վրաստան ներմուծվող նավթի, նավթամթերքների համար սահմանվել էր քվոտան ոչ ավելի քան 20 մլն. փութ[5]:

Ադրբեջանի հետ կնքված պայմանագրի կարևորությունը նկատի ունենալով՝ մատնանշենք նրա գործադրմանն առնչվող մի քանի հանգամանքներ: Պայմանագրի առկայությունը չէր խանգարում ադրբեջանական կողմին խափա-

[1] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.560, մ.III, թ.363:
[2] Նույն տեղում, գ.168, թ.25:
[3] ՀԱԱ, ֆ.199, գ.157, թ.257:
[4] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.168, թ.40 - 41:
[5] Նույն տեղում, թ.41:

նելու նավթի արտահանումը Հայաստան: Այսպես, Ադրբեջանում ՀՀ ներկայացուցչի 1920թ. փետրվարի 15-ի թվակիր նամակից պարզվում է, որ այն Ադրբեջանի պառլամենտի կողմից չի հաստատվել[1], թեեւ Մինիստրների Խորհրդի կողմից հաստատվել էր, ինչը խանգարում էր նավթի առաքմանը: Պարզվում է նաեւ, որ 1919թ. նոյեմբերի 19-ից մինչեւ 1920թ. հունվարի 5-ը, Հայաստանը ոչ մի ցիստերն նավթ չի ստացել: Եղել են միայն նավթի եւ կերոսինի պատահական մեկական առաքումներ[2]:

Դրությունը առավել վատթարանում է Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո. «... Բաքուն դադարեց Հայաստանին նավթ մատակարարել եւ ամբողջ չորս ամիս անկանոն գրության մեջ գնելով մեր հաղորդակցությունը. թանգությունն առաջացրեց եւ ծանրացրեց երկրի տնտեսական վիճակը»[3], - գրում է Մ. Արզումյանը իր տեղեկագրում 1920թ. սեպտեմբերին:

Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ առեւտրական հարաբերությունները սահմանափակ բնույթ են կրել: Ըստ էության բացի նավթից ու նավթամթերքներից մնացած բնագավառների վրա չեն տարածվել: Այսպես, 1918թ. նոյեմբերի 28-ին Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին են դիմում երկու ադրբեջանցի (թուրք) վաճառականներ՝ խնդրելով միջնորդել ՀՀ կառավարությանը. որպեսզի թույլատրվի Հայաստանից արտահանելու 57 փութ 30 ֆունտ այծի կաշի, որը նրանք մտադիր էին ներմուծել Ելիզավետպոլ եւ որի համար թույլտվություն էին ստացել թուրքական իշխանություններից: Ապրանքը կալանվել էր Քոլագերանի մաքսատանը[4]: ՀՀ ֆինանսների նախարարությունը 1919թ. փետրվարի 18-ի գրությամբ մերժում է նրանց խնդրանքը, նկատի ունենալով օրենքով նախատեսված Ադրբեջանի հետ տրանզիտի վերաբերյալ պայմանագրի, ապրանքի ծագման մասին տեղեկանքի եւ ֆինանսների նախարարության թույլտվության բացակայությունը[5]:

1919թ. ամռանը ադրբեջանցի գործարար Ներսուլա Աղա-զադեն դիմում է ՀՀ առեւտրի նախարարությանը՝ խնդրելով թույլ տալ ապրանքափոխանակության կարգով Հայաստան ներկրել 8000 փութ կերոսին եւ 800 փութ մեքենայի յուղ, փոխարենը համապատասխան արժեքով 95[0] սպիրտ ստանալու եւ արտահանելու պայմանով: Սակայն, Բոյուք Վեդիի դեպքերի պատճառով հարկադրված է լինում թողնել իր ապրանքի մի մասը եւ վերադառնալ Բաքու[6]:

Ավելի լայն շրջանակներ է ընդգրկել հայկական կողմի առեւտրական գործունեությունը Բաքվում եւ Ադրբեջանում ընդհանրապես: Միանգամայն հասկանալի մի հանգամանք. այն է հայ տարրի ներկայությունը Բաքվում, որը դեռ պահպանել էր երբեմնի իր տնտեսական հզորության մնացորդները:

Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախաձեռնությամբ ձկնարդյունաբերող Պ. Լեւինից ձեռք է բերվում 9 վագոն ձուկ (սելդ), որը «Որբակ» ընկերության միջոցով Հայաստան է առաքվում Վլադիկավկազի երկաթուղով: Տրանզիտի պայմանագրի բացակայության պատճառով վագոնները հասցեագրավում են մինչեւ Նավթլուղ կայարանը: Ազգային խորհուրդը խնդրում է Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին, որ վերջինս ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները ձուկը Երեւան հասցնելու համար[7]:

Թիֆլիսում գտնվող հայկական գյուղատնտեսական ընկերությունը Ադրբեջանի Ուջարի կայարանում Ն. Կաճկաճյանից ՀՀ համար գնում է 4 - 6 վագոն սերմացու հացահատիկ: Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացու-ցիչը 1919թ. մարտի 22-ին դիմում է ադրբեջանական իշխանություններին խնդրելով թույլ տալ սերմացուն արտահանել Ադրբեջանից[8]: Սույն գործարքի ճակատագիրը պարզել չհաջողվեց: Իսկ ահա մի այլ գործարքի ավարտը հայտնի է: ՀՀ Խնամատարության նախարարությունը 1919թ. ապրիլի 26-ի գրությամբ դիմել է Վրաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին 25.000 փութ տարեկան արտահանելու խնդրանքով: Ադրբեջանի Առեւտրի, արդյունաբերության եւ պարենավորման նախարարությունը 1919թ. հուլիսի 3-ին պատասխանել է, թե Ադրբեջանում նշված քանակությամբ տարեկան չկա[1]:

1 Նույն տեղում, գ.341, թ.4:
2 Նույն տեղում, գ.496, թ.13:
3 Նույն տեղում, գ.427, թ.406:
4 Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.5, թ.9:
5 ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.5, թ.5:
6 Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.433, թ.179:
7 Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.118, թ.1:
8 Նույն տեղում, թ.22, 23, 42:

Վիրահայոց Ազգային խորհրդի Ախալքալակցիների օգնության հատուկ կոմիտեի նախագահը եւ ՀՀ պարենավորման նախարարության ներկայացուցիչ Ս. Մելիք-Շահնազարյանը 1919թ. մայիսի 24-ին Թիֆլիսում պայմանագիր են կնքում ոմն Ն. Ղահրամանյանի հետ առ այն, որ վերջինս պարտավորվում է 30.000 փութ կորեկ մթերել Ադրբեջանում եւ Ակստաֆա, Եվլախ, Լյաքի կայարաններում հանձնել Հատուկ կոմիտեի ներկայացուցչին ու Ս. Մելիք-Շահնազարյանին[2]: Հացահատիկը տեղափոխելու նպատակով վրացական իշխանություններին 1919թ. մայիսի 28-ին դիմում է ներկայացվում 5000 պարկ արտահանելու եւ Ադրբեջան ուղարկելու խնդրանքով[3], իսկ հունիսի 26-ի գրությամբ խնդրվում է վրացական իշխանություններից միջնորդել Ադրբեջանի կառավարությանը չխոչընդոտել կորեկի արտահանմանը: Ըստ որում գրության հեղինակները խոստանում են Վրաստանին եւս բաժին հանել[4]: Ժամանակն անցնում է, բայց հացահատիկը տեղ չի հասնում: Հայկական իշխանություններին հայտնի է դառնում, որ Եվլախում ոմն Իսկանդեր Խայաթով այն վաճառում է, որի կապակցությամբ Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը 1919թ. նոյեմբերին իր բողոքն է հայտնում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչին[5]: Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի՝ Բաթումի ՀՀ առեւտրա-արդյունաբերական հանձնաժողովի նախագահին ուղղված մանրամասն նամակից պարզվում է, որ 30.000 փութ կորեկն ու 9.500 պարկերը խոշոր գումարների հետ անհետացել են ոչ առանց հայերի մասնակցության[6]:

Ադրբեջանահայկական առեւտրական կապերի տեսանկյունից ուշագրավ են մի այլ գործարքին վերաբերող վավերագրերը: 1920թ. փետրվարի 12-ին գնդապետ Հասկելը* հայտնում է Մինիստր-նախագահ Ա. Խատիսյանին, որ ադրբեջանական մի հեղինակավոր ֆիրմա պատրաստ է 50.000 փութ սերմացու ցորեն ու կորեկ փոխանակել ալյուրի հետ: Առաջակվում է 100-ի դիմաց 100, ըստ որում 100 սերմացուի 60-ը ցորեն, 40-ը՝ կորեկ, նաեւ 2 փութ բրինձ՝ 1 փութ ալյուրի դիմաց: Հասկելն իր տարակուսանքն ու անհամաձայնությունն է հայտնում նման ոչ-համարժեք փոխանակության կապակցությամբ, խնդրում է շտապ պատասխանել[7]: Նրա գրության համար՝ ալյուրը հավահատիկով փոխանակելու մասին, հիմք է հանդիսացել Բաթումում ՀՀ ֆինանսական ներկայացուցչի տեղեկատվությունը[8]:

Վերը նշեցինք Բաքվի հայության գերի մասին: Այդ կապակցությամբ ուշագրավ է Մայիլյան եղբայրների գործունեությունը, որը կարոտ է հատուկ լուսաբանության: Մեր խնդրո առարկայի տեսանկյունից անհրաժեշտ է շեշտել նրանց հիմնադրած գիտա-տեխնիկական արշավախմբի նպատակաուղղված աշխատանքները, որ կոչված էր նպաստելու հայրենիքի վերաշինությանը: Բացի այդ, որոշ վավերագրեր վկայում են Հայաստանին օգնելու Մայիլյանների որոշ քայլերի մասին: Թիֆլիսի Հայոց գյուղատնտեսական ընկերության համար գյուղատնտեսական մեքենաներ գնելու նպատակով Լ. Մայիլյանը Բրիտանական բանկում պայմանագիր է կնքել, հրաժարվելով որեւէ վարձատրությունից[9]: 1920թ. հունիսի 20-ի գրությունից պարզվում է, որ Լ. Մայիլյանը ՀՀ գլխավոր հյուպատոսին բանավոր համաձայնություն է տվել ու ապառիկ նավթ տրամադրել

1 Նույն տեղում, թ.47:
2 Նույն տեղում, ֆ.205, ց.1, գ.945, թ.3-4:
3 Նույն տեղում, թ.6:
4 Նույն տեղում, թ.7:
5 Նույն տեղում, ֆ.276, ց.1, գ.136, թ.195:
6 ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.946, թթ.3-4:
* Վիլյամ Հասկել՝ Անդրկովկասում Դաշնակիցների գլխավոր կոմիսար:
7 ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.638, թ.107:
8 Նույն տեղում, ֆ.368, ց.1, գ.7, թ.9:
9 Նույն տեղում, թ.39:

Եվպատորիա առաքելու և ՀՀ կարիքների համար անհրաժեշտ գույքի հետ փոխանակելու նպատակով[1]:

Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը քաղաքական գործունեությանը զուգահեռ նշանակալից չափով զբաղվել է առևտրա-տնտեսական խնդիրներով: Որոշակի տվյալներ են պահպանվել ներկայացուցչության իրականացրած գործարքների վերաբերյալ: 1919թ. օգոստոսի 17-ից մինչև 1920թ. փետրվարի 13-ը ընկած ժամանակամիջոցում ներկայացուցչությունը է Հայաստան է ներկրել 10.250 փութ սննդամթերք[2]:

Բերված փաստերն ու վավերագրերը հաստատում են, որ Ադրբեջանի հետ առևտրական հարաբերությունները կրել են գրեթե միակողմանի բնույթ, մի հանգամանք, որ ժամանակին հիրավի գնահատել ու լուսաբանել է Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը ԱԳ նախարարին 1920թ. օգոստոսի 27-ին ուղղված իր զեկուցագրում: «Մեր դիվանագիտական անհաջողությունների Ադրբեջանում բացատրվում են նաև այն տնտեսական հարաբերությամբ, որ կա այդ երկու երկրների միջև, - ասվում է այդ զեկուցագրում, - իսկ այդ հարաբերությունները գոնե մինչև այսօր զուտ միակողմանի են, այսինքն մենք ամբողջապես կախված ենք Ադրբեջանից, իսկ նա մեզնից՝ ոչ: Առանց Բաքվի նավթի և կերոսինի Հայաստանի երկաթուղիները, արհեստանոցները, փռերը, բաղնիքները և այլն և այլն կկանգնեն, ժողովուրդը կմնա անլույս: Մինչդեռ այս վայրկյանիս Հայաստանը չունի մի այնպիսի ապրանք, որը Ադրբեջանի համար նույնքան կարևոր լինի, ինչպես նավթը և կերոսինը Հայաստանի համար»[3]:

Ամփոփելով 1918 - 1920 թթ. Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի առևտրա-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ շարադրանքը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների:

1. Առևտրա-տրանզիտային հարաբերությունները ընթացել են Հայաստանի համար չափազանց դժվարին ու աննպաստ պայմաններում:

2. Այդ հարաբերությունները կարգավորելու հարցում որոշակի դրական դեր են խաղացել Համաձայնության երկրների զինվորական բարձր իշխանությունները, որոնք հաստատվել էին Անդրկովկասում 1918թ. նոյեմբերին:

3. Հարևան երկրները՝ Վրաստանը և Ադրբեջանը օգտագործել ու շահարկել եմ Հայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը:

Վարդան Ցոլակյան

ТОРГОВЫЕ ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АЗЕРБАЙДЖАНОМ И ГРУЗИЕЙ (1918 - 1920гг.)

РЕЗЮМЕ

Правительство Первой Республики Армении с первых дней своего существования, в условиях заблокированности и изолированности страны, ясно осознавало жизненную необходимость установления нормальных отношений с Грузией и Азербайджаном, что удалось осуществить только после ухода с Закавказья турецких войск, благодаря вмешательству представителя Антанты - английской военной миссии в Закавазье.

В течении второго полугодия 1919г. в соседних республиках были учреждены дипломатические представительства, заключены транзитно-торговые договора, предусматривавшие свободные грузоперевозки. Однако торговые отношения с Грузией и Азербайджаном при ограниченном объеме носили частный характер. Торговля на государственном уровне не состоялась. Создавались трудности, препятствующие нормальному процессу грузоперевозок в Армению. Торгово-транзитные отношения с Азербайджаном прекратились с установлением в этой стране советской власти.

Вардан Цолакян

[1] Նույն տեղում, թ.66:
[2] Վիճակագրական բյուլետեն, N 2, էջ 24:
[3] ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.30, թ.30:

ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԽՍՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ (1945 - 1965թթ.)

Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գործում էական նշանակություն ունեցավ գյուղական մտավորականության տեսակարար կշռի և պատմական դերի աճը:

Գյուղական մտավորականությունը բաժանվում էր ներխավային երեք հիմնական խմբերի: Դրանք էին. վարչակառավարչական խումբ (գյուղատնտեսական ձեռնարկությունների ղեկավարներ, բրիգադավարներ ու ֆերմայի վարիչներ, կուսակցական, խորհրդային, կոմերիտական, արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների ղեկավար աշխատողներ), արտադրական խումբ (գյուղատնտեսներ, անասնաբույժներ, ինժեներներ, տեխնիկներ) և ոչ արտադրական խումբ (մանկավարժներ, կուլտուր-լուսավորական, առողջապահության բնագավառների աշխատողներ):

Քննարկվող ժամանակաշրջանում փոփոխություններ են կատարվել գյուղական մտավորականության վարչակառավարչական խմբում: Մտավորականության այս խումբը ամբողջովին կազմավորել էր խորհրդային պետության վարչահրամայական (բյուրոկրատական) համակարգը՝ բավականին արագ տեմպերով ձևավորելով սոցիալիստական վերնախավային շերտը: Այն իր արտահայտությունն էր գտել նաև գյուղատնտեսության բնագավառում: Այսպես՝ արդեն 1946թ. գյուղատնտեսական ձեռնարկությունների վարչահրամայական անձնակազմի ուռճացման հետևանքով նրանց պահպանման համար նախատեսված ծախսերը 8%-ից աճեցին մինչև 11.2%-ի[1]: Ուստի նույն թվականին կատարվեցին

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.26, գ. 43, թ.17-18:

կոլտնտեսությունների վարչակառավարչական անձնակազմի ավելորդ հաստիքների կրճատումներ:

Մինչեւ 1946թ. նոյեմբերի 20-ը ՀԽՍՀ կոլտնտեսություններում կրճատվեցին 4378 ավելորդ եւ կոլտնտեսությունների հետ առնչություն չունեցող, բայց աշխօրով վարձատրվող՝ 350 հաստիքներ: Արդյունքում, հաջողվեց տնտեսել 923215 աշխօր:[1]

Ավելորդ հաստիքների կրճատման գործընթացը շարունակվեց նաեւ հետագա տարիներին: Սակայն, հարկ է նշել, որ այն ակնկալվող արդյունքը չապահովեց: Այսպես, եթե 1948թ. հունվարի 1-ի դրությամբ կոլտնտեսություններում վարչակառավարչական անձնակազմը կազմում էր 8104, մեկ տարի անց՝ 8386, ապա 1950թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 8252 միավոր: Այդ նվազումը հետեւանք էր ոչ թե ավելորդ հաստիքների կրճատման, այլ՝ 33 կոլտնտեսությունների խոշորացման.[2]

1950-ական թվականների երկրորդ կեսին կատարվող բարեփոխումները վարչահրամայական համակարգի թուլացման միտումներ ցուցաբերեցին: Սակայն, ներկուսակցական եւ հասարակական կյանքի ժողովրդավարացումն ուղեկցվում էր կյանքում կոմկուսի դերի ամրապնդմամբ: Տնտեսության էքստենսիվ զարգացման զուգակցումը ուռճացած վարչահրամայական համակարգի հետ կրկին իր արտացոլումը գտավ վարչակառավարչական անձնակազմի արտոնությունների ընդլայնման մեջ: Արդեն 1965թ. խորհրդահայ գյուղում վարչակառավարչական աշխատողների տեսակարար կշիռը կազմում էր ամբողջ զբաղված բնակչության շուրջ 17%-ը:[3]

Գյուղական մտավորականության վարչակառավարչական խմբի կարեւորագույն ենթախումբ էին գյուղատնտեսական ձեռնարկությունների ղեկավարները (կոլտնտեսությունների նախագահներ, խորհտնտեսությունների եւ օժանդակ գյուղատնտեսական ձեռնարկությունների տնօրեններ), բրիգադավարներն ու ֆերմայի վարիչները: Մասնագիտական այս խմբերի ներկայացուցիչները, անմիջականորեն ներգրավված լինելով գյուղատնտեսական արտադրության մեջ, հանդիսանում էին վերջինիս կազմակերպման եւ ղեկավարման վերին եւ միջին օղակները: Նրանք անմիջական պատասխանատվություն էին կրում գյուղատնտեսական արտադրության հաջող կազմակերպման ու ղեկավարման համար, սակայն, միաժամանակ, հանդիսանում էին նաեւ հանրապետական եւ շրջանային կուսակցական կազմակերպությունների նոմենկլատուրայի անդամներ, ուստի պարտավոր էին կյանքի կոչել կուսակցության որոշումներն ու հրահանգները:

Վերը նշված խմբերին ճիշտ է դասել վարչակառավարչական խմբի մեջ, քանի որ իրենց գործունեության համար առաջին հերթին անմիջականորեն պատասխանատվություն էին կրում կուսակցության առջեւ: Խորհտնտեսությունների եւ գյուղատնտեսական օժանդակ այլ ձեռնարկությունների վերին ու միջին օղակների ղեկավար աշխատողները օրենսդրորեն նշանակվում էին ՀԿԿ Կենտկոմի կադրերի բաժնի թույլտվությամբ: Իսկ կոլտնտեսություններում, կառավարման բոլոր մարմիններում պաշտոնատար անձինք՝ «ընտրովի» էին: Սակայն, դեռեւս 1933թ.-ից, կոլտնտեսությունների նախագահները հանդիսանում էին ՀԿԿ Կենտկոմի նոմենկլատուրայի, իսկ բրիգադավարներն ու ֆերմայի վարիչները՝ կուսակցության շրջանային կոմիտեների նոմենկլատուրայի անդամներ: Ելնելով դրանից՝ կոլտնտեսությունների նախագահներին աշխատանքի ընդունելը, աշխատանքից ազատելը կամ այլ աշխատանքի փոխադրելը կատարվում էր ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության նախնական հրամանի եւ ՀԿԿ Կենտկոմի կադրերի բաժնի թույլտվությունից հետո միայն[4]:

Հետեւաբար, կոլտնտեսության նախագահները կատարված աշխատանքի համար պատասխանատու էին ոչ այնքան կոլտնտեսության ընդհանուր ժողովի, որքան գյուղատնտեսության նախարարության եւ ՀԿԿ Կենտկոմի համապատասխան բաժինների առջեւ:

---

[1] Նույն տեղում, ց.27, գ.47, թ. 7:
[2] Նույն տեղում, ց.30, գ.233, թ.26:
[3] ՀՍՍՌ գյուղատնտեսության տեգաբաշխումը եւ մասնագիտացումը, Երեւան, 1960,էջ 184:
[4] Հայրապետյան Ա. Պ., Սոցիալիզմի կառուցումը եւ կադրերի պատրաստումը Հայաստանում, Երեւան, 1974, էջ 13:

Կադրերի ընտրության եւ տեղաբաշխման՝ վերը նշված ոչ ճիշտ քաղաքականության հետեւանքով, նշված ենթախմբերում տեսակարար մեծ կշիռ էին կազմում պրակտիկ (նրանք, ովքեր չունեին համապատասխան բարձրագույն կրթություն, սակայն, փոխարենը, ունեին գործնական աշխատանքի մեծ փորձ) աշխատողները: Այսպես, եթե 1950թ. ՀԽՍՀ 661 կոլտնտեսությունների նախագահներից բարձրագույն կրթություն ունեին միայն 36-ը, միջնակարգ մասնագիտական կրթություն՝ 336-ը, ապա ավելի քան 275 կոլտնտեսությունների նախագահներ տարրական կրթությամբ պրակտիկներ էին:[1]

Այդ վիճակը բնորոշ էր նաեւ հետագա տարիներին: Այսպես՝ 1955թ. 846 կոլտնտեսությունների նախագահների կրթական աստիճանը համապատասխանաբար կազմում էր 71, 191 եւ 584 մարդ:[2]

Այն բարձրացավ հատկապես 1960-ական թվականներից սկսած. 1965թ. 536 կոլտնտեսությունների նախագահներից 204-ն ուներ բարձրագույն, 117-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Սակայն, դեռեւս 215 կոլտնտեսությունների նախագահներ շարունակում էին մնալ պրակտիկներ: Համեմատաբար բարձր էր խորհտնտեսությունների տնօրենների կրթական աստիճանը: Այսպես, 1965թ. դրությամբ ՀԽՍՀ 204 խորհտնտեսությունների տնօրեններից 157-ն ուներ բարձրագույն, 24-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Նրանցից միայն 21-ն էր պրակտիկ:[3]

Առավել քան վատ էր գյուղատնտեսական ձեռնարկությունների միջին օղակի ղեկավարների կրթական վիճակը. 1958թ. հանրապետության կոլտնտեսությունների 2931 բրիգադավարներից եւ 1782 ֆերմայի վարիչներից միայն 814-ն ունեին բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն[4], 1960թ.՝ 879-ը[5], իսկ 1965թ. 2970 բրիգադավարներից գյուղատնտեսության մասնագետներ էին 457-ը, եւ 1033 ֆերմայի վարիչներից՝ միայն 382-ը:[6]

Այս հանգամանքը պայմանավորված էր նաեւ հանրապետության բուհական համակարգի անկատարությամբ եւ կադրերի տեղաբաշխման բնագավառում տեղ գտած այլ թերություններով: Քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում գյուղատնտեսական բուհերի շրջանավարտների գերակշիռ մասը քաղաքաբնակներ էին, հետեւաբար, խուսափում էին գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավվելուց, իսկ իշխանություններն այդ ուղղությամբ լուրջ քայլեր չէին ձեռնարկում:

Գյուղական մտավորականության վարչակառավարչական խմբում առաջնակարգ տեղ էին գրավում նաեւ սկզբնական կուսակցական կազմակերպությունների քարտուղարները: Նրանք գյուղում իրավամբ կենտրոնական դեմք էին համարվում: Կուսկազմակերպության քարտուղարը վերահսկում էր ոչ միայն հասարակական կյանքը, այլ նաեւ՝ արտադրական բոլոր գործընթացները: Եվ պատահական չէ, որ ՀԽՍՀ գյուղատնտեսական բոլոր ձեռնարկություններում գործում էին կուսակցական սկզբնական կազմակերպություններ:

Պետական կառավարման գործում որոշակի իրավասություններ ուներ նաեւ տեղական խորհուրդների ղեկավար աշխատողների ենթախումբը: Օրենսդրորեն, խորհուրդները համարվում էին իշխանության գերագույն մարմիններ, սակայն, քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում պարզություն չմտցվեց տեղական խորհուրդների եւ նրանց տարածքում գործող գյուղական արտադրական վարչությունների փոխհարաբերություններում: Ուստի անորոշ էին մնում գյուղատնտեսության ղեկավարման գործում խորհուրդների ղեկավար աշխատողների իրավասության սահմանները: Մինչդեռ նրանք, լինելով իշխանության տեղական մարմինների ներկայացուցիչներ, պատասխանատու էին լինեին իրենց տարածքում գտնվող բոլոր ձեռնարկությունների գործունեության համար: Սակայն, տնտեսական հարցերի լուծման ասպարեզում խորհուրդների

---

[1] ՀԱԱ, Ֆ. 1, ց. 31, գ. 54, թ. 84:
[2] Նույն տեղում, ց 35, գ. 45, թթ. 70-74:
[3] Խաչատրյան Գ. Մ., Հայաստանի սոցիալիստական ինտելիգենցիայի կազմավորումն ու զարգացումը, Երեւան, 1968, էջ 185:
[4] Գեղամյան Գ.Մ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում (1946-1958թթ.), Երեւան, 1968, էջեր 134-137:
[5] Հայաստանի գյուղատնտեսությունը 40 տարում, Երեւան, 1960, էջեր 174-175:
[6] Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 186:

ղեկավար աշխատողները ստվերում էին մնացել: Միանշանակ էր, որ խորհուրդները չէին կարողանում ամբողջովին օգտագործել ԽՍՀՄ սահմանադրությամբ իրենց ընձեռնված իրավունքները:

1962թ. նոյեմբերին, չհիմնավորված կերպով և շտապողականության մթնոլորտում, խորհրդային մարմինները վերակառուցվեցին արտադրական սկզբունքով: Արդյունքում՝ ՀԽՍՀ շրջանային խորհուրդների փոխարեն (որոնցում ներգրավված էին 1501 աշխատող) կազմակերպվեցին 19 գյուղական շրջանային խորհուրդներ (927 աշխատողով): Միաժամանակ, 761 գյուղական խորհուրդների փոխարեն (որոնցում ներգրավված էին 1861 աշխատող) կազմակերպվեցին 432 գյուղական խորհուրդներ (1173 աշխատողով):[1]

Սակայն, ԽՄԿԿ Կենտկոմի 1964թ. նոյեմբերյան պլենումի որոշմամբ տարածքային սկզբունքով գործող խորհրդային մարմինները, կրկին վերակառուցվեցին, ինչպես նաև՝ ընդլայնվեցին նրանց իրավասությունները: Վերջիններս իրավունք ստացան՝ մասնակցել գյուղատնտեսական աշխատանքային ծրագրերի կազմմանը և վերահսկել գյուղատնտեսական մթերքների գնման պետական առաջադրանքների ժամանակին կատարումը:

Օժտված լինելով կառավարչական որոշակի իրավասություններով՝ վարչահրամայական համակարգի մաս էին կազմում նաև կոմիտետական, արհմիութենական, հասարակական այլ կազմակերպությունների ղեկավար աշխատողների ենթախմբերը: Նրանք գյուղատնտեսական արտադրության մեջ անմիջականորեն չէին ներգրավված: Քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում, նրանք քանակական առումով որոշակի կայունություն են պահպանել:

Գյուղական մտավորականության մյուս ինքնուրույն խումբն արտադրական մտավորականությունն էր (գյուղատնտեսներ, անասնաբույժներ, անասնաբույծներ, ինժեներներ, տեխնիկներ): Այս խումբը, անմիջականորեն ներգրավված լինելով գյուղատնտեսական արտադրության մեջ, հանդիսանում էր նրա կազմակերպման ու ղեկավարման ստորին օղակը: Ուստի պատասխանատվություն էր կրում արտադրական գործընթացների հաջող կազմակերպման ու ղեկավարման համար: Արտադրական մտավորականության կազմում կատարված քանակական ու որակական փոփոխությունները պայմանավորված էին ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

Օբյեկտիվ գործոններից ամենակարևորը գիտատեխնիկական առաջընթացն էր, սակայն, ի տարբերություն ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի, գյուղատնտեսության մեջ այն համեմատաբար դանդաղ էր արմատավորվում, ուստի այս ենթախմբին ներկայացվող պահանջներն այնքան էլ մեծ չէին: Սուբյեկտիվ բնույթի գործոններից կարևորվում էին մասնագիտական կադրերի պատրաստման և տեղաբաշխման ասպարեզում տեղ գտած մի շարք սխալներն ու թերությունները:

Դրանց հետևանքով քննարկվող ամբողջ ժամանակաշրջանում գյուղատնտեսական արտադրության մեջ զգացվում էր մասնագետների խիստ կարիք: Արդյունքում՝ արտադրական մտավորականության կազմում մեծ էր պրակտիկ աշխատողների տեսակարար կշիռը: Գյուղատնտեսության մասնագետներն անմիջական գյուղատնտեսական արտադրության մեջ ներգրավվելու փոխարեն, տարիներ ի վեր կենտրոնացված էին շրջգործկոմներում, ՄՏԿ-ներում (մեքենատրակտորային կայան) և վերադաս այլ մարմիններում, ինչի հետևանքով՝ նրանցից յուրաքանչյուրը որևէ գյուղատնտեսական ձեռնարկության համար կոնկրետ պատասխանատվություն չէր կրում: Հարկ է նշել, որ անգամ այդ հաստիքներն ապահովված չէին մասնագետներով: Այսպես, 1948թ. շրջգործկոմների գյուղբաժիններում 270 գյուղատնտեսության մասնագետների հաստիքներից զբաղված էին 236-ը կամ 87.4%-ը, որոնցից միայն 131-ը կամ 41.5%-ն ունեին բարձրագույն մասնագիտական կրթություն:[2] Գրեթե նույնն էր պատկերը նաև հետագա տարիներին:

Բուն գյուղատնտեսության մեջ համապատասխանաբան մասնագետների հագեցվածության հարցն առավել վատ վիճակում էր: Այսպես, եթե 1952թ.-ին՝

[1] ՀԱԱ, ֆ.1, ց.42, գ.58, թ.80:
[2] ՀԱԱ, ֆ.1, ց.28, գ.215, թ.104:

1940թ.-ի համեմատությամբ, հանրապետությունում շուրջ 3 անգամ ավելացել էր գյուղատնտեսության մասնագետների թիվը, ապա, նույն թվականին գյուղացիական արտադրության մեջ աշխատում էին 629 գյուղատնտես, 194 անասնաբույծ, 270 անասնաբույժ, 643 ագրոտեխնիկ:[1] 1952թ. հանրապետության բարձրագույն կրթությամբ 480 գյուղատնտեսից միայն 124-ը, 125 զոոտեխնիկից՝ 38-ը, 145 անասնաբույժից՝ 37-ն էին աշխատում կոլտնտեսություններում:[2]

1955թ. կոլտնտեսություններին սպասարկող 905՝ գյուղատնտեսներ ու զոոտեխնիկներ ՄՏԿ-ներից փոխադրվեցին կոլտնտեսություններ: Միջոցառման արդյունքում այդ մասնագետների թիվը 315-ից հասավ 1270 մարդու:[3] Սակայն, նրանց գերակշիռ մասը, բնակկենցաղային մի շարք դժվարությունների հետևանքով կարճ ժամանակ անց թողեց աշխատանքը: Արդեն 1956թ. հունվարին ՀԽՍՀ կոլտնտեսություններում աշխատում էին ընդամենը 559 գյուղատնտես և զոոտեխնիկ:[4]

Չնայած 1946-1958թթ. Երևանի գյուղատնտեսական և անասնաբուժաանասնաբուժական ինստիտուտները գյուղատնտեսության նախարարությանը տրամադրել էին շուրջ 3.3 հազար շրջանավարտ, սակայն 1958թ. ՀԽՍՀ կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում աշխատող 3088 մասնագետներից բարձրագույն կրթություն ունեին ընդամենը 1205-ը:[5]

Այս վիճակը պահպանվեց նաև հետագա տարիներին: 1961թ. հանրապետությունում գյուղատնտեսական բարձրագույն կրթությամբ 4886 մասնագետներից անմիջականորեն գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատում էին 1183-ը՝ այն դեպքում, երբ 760 կոլտնտեսություններից 214-ը՝ գյուղատնտես, 346-ը՝ անասնաբույժ, 409-ը՝ անասնաբույծ չունեին: Ինժեներ-մեխանիկ ուներ միայն 5 կոլտնտեսություն, 58 կոլտնտեսություն առհասարակ մասնագետներ չունեին[6], իսկ 1963թ., բարձրագույն և միջնակարգ գյուղատնտեսական կրթությամբ 5807 մասնագետների առկայության պայմաններում, 141 կոլտնտեսություն՝ գյուղատնտես, 152-ը՝ անասնաբույժ, 425-ը՝ ինժեներ-մեխանիկ չունեին:[7]

Բավական է նշել, որ 1965թ. ՀԽՍՀ յուրաքանչյուր կոլտնտեսությանը միջին հաշվով ընկնում էր 2,5 մասնագետ, այդ թվում՝ ինժեներների և տեխնիկների յուրաքանչյուր մասնագետը ընկնում էր միջինը 3 կոլտնտեսության:[8]

Եվ սա՝ այն դեպքում, երբ հանրապետությունում հաշվվում էր 4555 գյուղատնտեսության գծով մասնագետ: Նման պայմաններում արտադրական մտավորականության տեսակարար կշիռը գյուղական զբաղված բնակչության մեջ կազմում էր մոտ 2%:

Փոփոխություններ կատարվեցին նաև գյուղական մտավորականության մյուս խոշոր խմբի՝ ոչ արտադրական մտավորականության կազմում: Համեմատաբար բարձր էր նրա դերը գյուղի սոցիալական վերափոխման գործընթացում: Ի տարբերություն արտադրական մտավորականության՝ ոչ արտադրական մտավորականության կառուցվածքը աչքի էր ընկնում որոշակի կայունությամբ: Ուստի մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կանդրադառնանք նրա քանակական փոփոխություններին:

Ոչ արտադրական մտավորականության միջուկը հանդիսանում էին ուսուցիչները: Հետպատերազմյան շրջանում ժողովրդական կրթության զարգացման հիմքի վրա աճեց գյուղական մանկավարժների թիվը, ինչպես նաև բարելավվեց նրանց մասնագիտական կազմը: Այսպես, եթե 1939թ. ժողովրդական կրթության գյուղական հատվածում ներգրավված էր 6110 ուսուցիչ, 1959թ.՝

[1] Խաչատրյան Ի.Ղ., ՍՄԿԿ պայքարը գյուղատնտեսության զարգացման համար, (1945-1965թթ.), Երևան, 1980, էջ 44:
[2] Գեղամյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 55:
[3] Ջաուկյան Թ.Ա., Սոցիալիստական էկոնոմիկայի և ֆինանսական սիստեմի ստեղծումն ու զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1984, էջ 190:
[4] ՀԱԱ, ֆ.1, ց.36, գ.81, թ.123:
[5] Խաչատրյան Ի. Ղ., նշվ. աշխ., էջ 115, Գեղամյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 134-135:
[6] Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 185:
[7] Ուլթմազյան Հ. Մ., Հայաստանի կոմկուսը կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համար մղվող պայքարում, Երևան, 1974, էջ 384:
[8] Խաչատրյան Գ. Մ., նշվ. աշխ., էջ 185:

11459[1], ապա 1965թ նրանց թիվը հասավ 13470-ի: Եթե 1939թ. նրանց՝ միայն 21.6 %-ն ուներ թերի կամ բարձրագույն կրթություն, ապա 1965թ. այն կազմեց 66.8 %:

Ակնհայտ է, որ ուսումնասիրվող ամբողջ ժամանակաշրջանում մտավորականության այս խումբն ունեցել է քանակական ու որակական մեծ աճ: Նույնը չէր կարելի ասել նախադպրոցական հիմնարկների դաստիարակչական աշխատողների թվի աճի վերաբերյալ: Եթե 1946թ. ՀԽՍՀ գյուղերում գործող նախապրոցական հիմնարկներում աշխատում էին 221 դաստիարակներ, ապա 1960թ. նրանց թիվը հասավ 369-ի:[2] Եվ պատահական չէ, որ այդ ցանցի ընդգրկման նեղ շրջանակների հետեւանքով գյուղաբնակ երեխաների 96%-ը ներգրավված չէր մսուր-մանկապարտեզներում:

Քանակական աճի բարձր տեմպեր ապահովվեց նաեւ բուժաշխատողների ենթախմբում: Այն հատկապես վերաբերում էր 1960-ական թվականներին: Այսպես, եթե 1955թ. խորհրդահայ գյուղում աշխատում էր 379 բժիշկ, 1963թ.՝ 510, ապա կադրերի տեղաբաշխման ճիշտ քաղաքականության արդյունքում, 1965թ. գյուղերում աշխատող բժիշկների թիվը կազմեց 632:[3]

Ի տարբերություն բժիշկների՝ համեմատաբար դանդաղ աճեց միջին բուժաշխատողների թիվը. 1953թ. 2719-ի դիմաց 1965թ. նրանց թիվը կազմում էր 3018 մարդ:[4]

Աճի նշանակալից ցուցանիշներ արձանագրվեցին նաեւ կուլտուր-լուսավորչական հիմնարկների աշխատողների թվակազմում: Այսպես, եթե 1941թ. այդ ոլորտի գյուղական հատվածում ընդգրկված էր 3.2 հազ. մարդ, ապա 1965թ. նոյեմբերի դրությամբ, նրանց թիվը կազմեց 23.8 հազ. կամ աճեց ավելի քան 7.4

անգամ:[5]

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում գյուղական ամբողջ բնակչության կազմում կայուն կերպով բարձրացավ ոչ արտադրական մտավորականության տեսակարար կշիռը: Այն քանակական զգալի գերակշռություն ուներ վարչակառավարչական ու արտադրական մտավորականության նկատմամբ: Դա հիմնականում պայմանավորված էր արտադրական ոլորտների զարգացման համեմատ ոչ արտադրական ոլորտների զարգացման բարձր տեմպերով:

Արամայիս Կոխլիկյան

КАЧЕСТВЕННЫЕ И КОЛИЧЕСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ В СОСТАВЕ СЕЛЬСКОЙ ИНТЕЛИГЕНЦИИ АРМЯНСКОЙ ССР (1945-1965ГГ.)

Резюме

В Армянской ССР в изучаемый период одним из изменений классового состава сельского населения являлся рост удельного веса интеллигенции, а

[1] Շահինյան Ա. Խ., Վերածնված ժողովրդի կուլտուրան, Երեւան, 1959, էջ 95:

[2] Փարսադանյան Ռ. Ս., Հայաստանի առողջապահության պատմություն (1828-1965թթ.), Երեւան, 1973, էջ 406:

[3] Նույն տեղում, էջ 443:

[4]Состояние здоровья и медицинского обслуживания населения Арм. ССР, Статистический сборник, Ереван, 1965, с.31-32.

[5]Օհանջանյան Բ., Հայաստանի բանվոր դասակարգի եւ գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Երեւան, 1970, էջ 212-213:

также ее историческая роль в деле обеспечения социально-хозяйственного и культурного развития. Вследствие преодоления различий между физическим и умственным трудом выдвинулась тенденция сближения интеллигенции и других классов.

Осуществляемые социальные сдвиги в обществе предлагали характеристику требования, уточнения критерий интеллигенции, как самостоятельного социального слоя. В целом освещая критерии различия интеллигенции и ее занимаемую роль в социально-классовом строе, представили характеристику внутриклассового строя сельской интеллигенции и ее количественные и качественные изменения.

Особенно в отношении сравнения развития производственных сфер во всем составе сельского населения, обусловленное высокими темпами развития непроизводственных сфер, превосходство непроиз-водственной интеллигенции над административно-управленческой интеллигенцией.

Арамаис Кохликян

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Գիտության եւ տեխնիկայի զարգացման արդի պայմաններում գրադարանային ցանցն այն ոլորտն է, որն այդ զարգացմանը պետք է առաջինը արձագանքեր թե՛ իր ֆոնդային բովանդակությամբ, թե՛ նոր սարքավորումների կիրառմամբ: Այսօր արդեն ոչ մեկի համար նորություն չէ, որ ժամանակակից գրադարանային հավաքածուն՝ իր գրացուցակային եւ քարտարանային ամբողջ համակարգով, պետք է արտացոլվի համակարգչային տեղեկատվության մեջ, այլապես գրադարանային գործն առանց համակարգչի գանգաղընթաց զարգացում կունենա:

Ժամանակակից հասարակությունը պահանջում է ժամանակակից տեղեկատվություն: Չի կարող լինել գիտության, արդյունաբերության, տնտեսության, մշակույթի եւ արվեստի զարգացում առանց գիտական տեղեկատվության:

Տեղեկատվության արդիական մասշտաբները ահռելի են, եւ դրա համակարգումը, տեսակավորումը եւ ճշգրտումը լայնածավալ մի գործընթաց է, որն ի սկզբանե գրադարանային ոլորտին վերաբերող աշխատանք է: Բազմազան են ոչ միայն տեղեկատվության աղբյուրները, այլեւ ձեւերը:

«Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ էլեկտրոնային համակարգով տեղեկատվության «բովանդակային» փոխանցումը, բացի օպերատիվությունից, արմատական փոփոխություն առաջ չի բերում, քան տեխնոլոգիական ձեւերի ներմուծում եւ կատարելագործում: Իրականում մենք գործ ունենք տարաբնույթ բայց մեկը մյուսի «օրգանական» մասը կազմող տեղեկատվական օբյեկտների հետ...»:[1]

Նախկինում գրադարանային հավաքածուն ընդգրկում էր գրքեր, պարբերական մամուլ, նոտա-երաժշտական, քարտեզագրական նյութեր, ինչպես

[1] Սուքիասյան Գ.: Մատենագիտության զարգացման կոնցեպցիայի համատեքստում: Գիտ. աշխ. ժող., II հատոր: -Մանկավարժ:- Երեւան, 2002., էջ 215:

նաեւ որոշ քանակությամբ այլ բնույթի նյութեր: Այսօր, սակայն, այդպես կոչված «այլ բնույթի նյութերը» հսկայական ծավալ են կազմում:

Ժամանակակից հասարակության առջեւ ծառացել է մի լուրջ եւ արմատական գերխնդիր: Դա բազմաբնույթ, բազմաոճ, բազմաձեւ եւ բազում աղբյուրներից տեղացող տեղեկատվական հոսքն է:

Արդյունքում հասարակության յուրաքանչյուր անդամ կանգնում է տրամաբանական որոշման առջեւ. նա պետք է ընտրություն կատարի: Արդյոք հնարավոր է որոշել եւ գտնել իրոք ճշգրիտ տեղեկատվություն, որը եթե չի նույնանում փիլիսոփայական տեսանկյունով բացարձակ ճշմարտության հասկացության հետ, ապա հարում է նրան, մոտենում է այդ ճշմարտությանը:

Եթե ժամանակակից մարդուն չի հետաքրքրում տեղեկատվության տեսակը (գիրք, մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, թվային-էլեկտրոնային կրիչներ...), ապա, կարծում ենք, սկզբունքային նշանակությամբ նրան շատ կհետաքրքրի տեղեկատվության աղբյուրը, որակը, ճշմարտացիությունը եւ, իհարկե, թույլատրելիությունը:

«Իսկական դեմոկրատական հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ապահովված լինի գործնական հնարավորությամբ օգտվել տեղական հանրային գրադարանից, ձեռք բերել իրեն անհրաժեշտ նյութը կամ ստանալ տեղեկատվություն ՄԳԱ-ով».[2]

Հասկանալի է, որ տեղեկատվական հասարակության դեպքում անհրաժեշտ են նաեւ համապատասխան օրենքներ, որոնց համար նախապայման են հանդիսանում տեղեկատվության տեսակավորումը, դասակարգումը:

Տեղեկատվությունը կարելի է դասակարգել տարբեր հայեցակարգերով: Գիտական տեղեկատվության նկատմամբ հետաքրքրությունը բոլոր ժամանակներում եղել է ամենաորոշիչ տեղում եւ առաջնային նշանակություն է ունեցել մարդկային գործունեության բոլոր բնագավառներում:

Միաժամանակ հսկայական ծավալ է ստացել կեղծ տեղեկատվությունը՝ այսպես կոչված «դեղին մամուլը», ինչպես նաեւ այդ տեղեկատվության տարածումը հեռուստատեսության, էլեկտրոնային բազմաբնույթ միջոցներով եւ այլն:

Ինչպես հայտնի է, այսօր հրատարակչական դործը լուրջ վերահսկողություն չունի, ինչի արդյունքում հրատարակվում է ամեն ինչ եւ ամենուր, իսկ հրատարակված նյութերը վաճառվում են առանց թույլտվության եւ տարիքային սահմանափակման:

Տեղեկատվության որակական հատկանիշը որոշիչ է բոլոր տիպի եւ տեսակի գրադարանների համար: Սակայն դա լրջմիտ վերաբերմունք է պահանջում, եթե խոսքը գնում է հատկապես մանկական գրադարանների առաջարկած տեղեկատվության մասին: Իսկ մանկական ինքնատիպ գրադարանային ֆոնդերը մշտապես ողջախոհ ուսումնասիրություններ են պահանջում, որոնց արդյունքում մանուկ ընթերցողի, դեռահասի գրասեղանին պետք է դրվեն բարձրորակ նյութեր: Այս ընթերցողական կազմը պետք է սպասարկվի լավագույն տեղեկատվությամբ:

Երեխային չի կարելի սպասարկել դիրք, որը թե բովանդակությամբ, թե հրատարակչական տվյալներով ցածրորակ է, թույլ գունավորմամբ, փոքր տառատեսակով: Սա խիստ կարեւոր է այն առումով, որ մեծահասակը կարող է ընտրել լավի եւ վատի միջեւ, իսկ մանուկ ընթերցողը գուցե սխալ ընտրություն կատարի:

«...Իմ մտածմունքի առարկան եղել է այն, որ երեխայի ձեռքը չընկնի ոչ մի վատ դիրք, որ երեխաներն ապրեն հետաքրքիր ստեղծագործությունների աշխարհում, որոնք մտել են ազգային եւ համամարդկային կուլտուրայի ոսկե ֆոնդի մեջ»,- գրում է վաստակաշատ մանկավարժ Վ.Ա.Սուխոմլինսկին:[3]

Գիտական գրադարանների հավաքածուների տեղեկատվությունը պետք է լինի նորագույնը, արտահայտի գիտության առաջընթացի վերջին քայլերը, այլապես դրադարանավարը ստիպված կլինի վիրաբույժին առաջարկել դիրք, որում

² Айрапетян Н. Общество, библиотека, информация. Libraries − access to information. Conference Proceedings.-Tbilisi, Georgia, 3-5 june.-1998. − c.26.

³ Սուխոմլինսկի Վ.Ա.: Սիրտս նվիրում եմ երեխաներին: -Երեւան, 1977, էջ 224:

խորհուրդ է տրվում վիրահատություն կատարել հին մեթոդներով, այնինչ նորագույն գիտությունը հայտնաբերել է առավել արդյունավետ ձեւեր:

Այս երեւույթն իհարկե ավելի հեշտ կլուծվի, եթե գրադարաններն ապահովվեն նորագույն նյութերով, տեղեկատվության բազմազան կրիչներով:

Մեր հասարակական գիտակցության մեջ, իհարկե, գրադարանային հավաքածուն մեծամասամբ դեռ կազմված է գրքերից եւ մամուլից, սակայն գիտության առաջընթացը ժամանակակից սարքավորումներով փոխում է մարդու գիտակցության, կենցաղի, հոգեբանության գործոնները:

Այս արմատական փոփոխությունները տեղի են ունենում նաեւ գրադարանային ոլորտի, ողջ համակարգի, գրադարանային ֆոնդերի, սպասարկման եւ մատենագիտական տեղեկատվության բնագավառներում:

«Ժամանակակից տեխնիկական միջոցները, նորագույն սարքավորումները, տեղեկատվության կրիչները ոչ միայն հզոր եւ արդյունավետ միջոցներ են գրադարանների տեղեկատվության «զինուժում», այլեւ իրական սարքավորումներ, որոնք թույլ են տալիս խնայել ինչպես ընթերցողների, այնպես էլ գրադարանավարների ժամանակը».[4]

Ամենեւին պետք չէ տարվել էլեկտրոնային տեղեկատվության հրապույրներով, պետք չէ կարծել, թե գրադարանը կարող է թվայնացվել ամբողջովին, եւ կարելի է վերացնել մեր ավանդական գրադարանները: Սա թյուր կարծիք է. հակառակ դեպքում ինչ պետք է լինի մարդկության ստեղծած այդ հսկայական հարստությունը՝ թղթային տեղեկատվությունը, որը թե հոգեւոր, թե նյութական, թե ֆինանսական մեծ արժեք է ներկայացնում: Միեւնույն է, այն պետք է պահպանվի. ուրեմն, ավանդական գրադարանները բոլոր ժամանակներում գոյություն են ունենալու: Թերեւս փոխվեն գրադարանային աշխատանքային մեթոդները, սկզբունքները, բայց նպատակը միշտ լինելու է նույնը:

Հարց է առաջանում. ինչ անհրաժեշտություն կա գրադարանային ֆոնդերը ամբողջովին թվայնացնել: Իսկ ինչ կլինի, եթե աստված մի արասցե, գրադարանը հոսանքազրկվի որեւէ վթարի, աղետի, արտակարգ իրավիճակի պատճառով: Դա կնշանակի գրադարանների կործանում:

Գրադարանային բոլոր աշխատանքային պրոցեսները կանգ կառնեն առանց էլեկտրոնային չտեմարանների՝ տեղեկատու-մատենագիտական ապարատի: Սակայն բոլորիս էլ քաջ հայտնի է, որ 1990-ական թվականների սկզբներին առաջացած սոցիալ-տնտեսական, հասարակա-քաղաքական ծանր ճգնաժամի տարիներին գրադարանները գործել են առանց հոսանքի եւ առանց ջեռուցման:

Այսպիսով, անմտություն է գրադարանի լիարժեք թվայնացումը: Պարզապես անհրաժեշտ է ճիշտ եւ ռացիոնալ որոշում ընդունել. ժամանակակից էլեկտրոնային սարքավորումները պետք է լինեն ոչ թե գրադարանի գոյության հիմքը՝ գրադարանային հավաքածուն, այլ պետք է դառնան այն օժանդակ, լրացուցիչ միջոցը, որը հնարավորություն կընձեռի ընթերցողին եւ գրադարանավարին ժամանակ խնայելու, լրացուցիչ, առավել որակյալ տեղեկատվություն ձեռք բերելու համար:

Այդ ուղղությամբ իր կարծիքն է հայտնում Գ. Սուքիասյանը. «Գրադարանների գոյության կամ չգոյության բանավեճը, որ գալիս է անցյալ դարի 80-ական թվականներից կդադարի այն ժամանակ, երբ ստեղծվի այնպիսի համակարգիչ, որը կկարողանա փոխարինել ավանդական գրադարանների ամբողջ գործունեությանը եւ կպատասխանի պահանջողների տեղեկատվական բոլոր հետաքրքրություններին»:

Հետեւաբար, գրադարանային հավաքածուն միշտ առաջնային նշանակություն ունի, իսկ էլեկտրոնային սարքավորումները չեն կարող գերիշխող դառնալ գրադարանային աշխատանքում, քանի որ առկա գրադարանային ֆոնդերը չեն վերածվի էլեկտրոնային տեղեկատվության:

⁴ Айрапетян Н. Общество, библиотека, информация. Libraries − access to information. Conference Proceedings.-Tbilisi, Georgia, 3-5 june.-1998. − c.26.

Այս խնդիրն արծարծվել է նաեւ 1996թ. Սանկտ-Պետերբուրգում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում, որի ժամանակ նշվել է. «...չնայած ստեղծված նոր տեխնոլոգիաներին՝ գրադարանի հիմնական առաքելությունը կայանում է փաստաթղթերի՝ բնագրի տեսքով պահպանելու մեջ»:

Մենք եկանք այն եզրակացության, որ յուրաքանչյուր գրադարան՝ անկախ տեսակից եւ աշխատանքային նպատակաուղղվածությունից, պետք է օգտագործի գիտական առաջընթացի ցանկացած նորույթ, որն արդասաբեր է գրադարանային հավաքածուի զարգացման, սպասարկման, պահպանման, մատենագիտական տեղեկատվության եւ համալրման առումով:

Պետք է ինչպես հարկն է գնահատել էլեկտրոնային տեղեկատվության արժանիքները: Այն հնարավորությունները, որ ընձեռում է գրադարանի թվայնացված ֆոնդը բազմազան է եւ բարունակ, քանի որ կան տեղեկատվության տեսակներ, նյութեր, փաստաթղթեր, որոնց պահպանումը, սպասարկումը առավել նպատակահարմար է թվայնացման սկզբունքով:

Օրինակ՝ շատ նյութեր հեշտ է փնտրել էլեկտրոնային շտեմարաններով, դրանց բազմացումը կատարվում է շատ արագ, բացի այդ, հրատարակվող թղթային կրիչ-նյութերը շատ ավելի մեծ տեղ են պահանջում. դրանից էլ պատճառահետեւանքային կապով բխում է գրադարանների ֆինանսական հնարավորությունների նվազումը: Թղթային կրիչները երբեմն ավելի թանկ են լինում, դրանց վերականգնողական-կոնսերվացիոն աշխատանքները շատ թանկ են:

Բացի այդ շատ է կարեւորվում գրադարանային բազմաբնագավառ տեղեկատու համակարգում կողմնորոշվելը, այն՝ որպես մեկ միասնական, ընդհանրացված կառույց օգտագործելը:

Մեծ նշանակություն է ստանում տվյալների բազայի ստեղծումը ընթերցողական սպասարկումը բարձրորակ կազմակերպելու նպատակով:

Համակարգչայնացումը հնարավորություն է տալիս նաեւ միջգրադարանային տեղեկատվական հարաբերություններ ստեղծելիս:

Թվայնացման համար պահանջվում են բարձրակարգ մասնագետներ, որոնք պետք է ունենան թե ինֆորմատիկայի, թե բուն մասնագիտության որակավորում: Սա կնպաստի նաեւ մասնագիտական որակի կտրուկ բարձրացմանը:

Ի վերջո, էլեկտրոնային տեղեկատվությունը հիանալի ասպարեզ է բացում հեռադարձ համալրման արդյունավետության համար: Ոչ միայն մեր հանրապետությունում, այլեւ ողջ աշխարհում լիարժեք գրադարանային հավաքածու ստեղծելու հնարավորությունը վերացել է ընդմիշտ եւ իսպառ՝ կապված տեղեկատվության լայնամասշտաբ ծավալների հետ:

Անգամ այնպիսի զարգացած երկրում, ինչպիսին Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունն է, հնարավոր չէ ձեռք բերել համաշխարհային գրականության համեմատաբար լիարժեք ֆոնդ: Գրականության այն մասը, որ մենք կարող ենք գնել, նվազում է տարեցտարի: Ապագայում, հավանաբար, այս միտումը կպահպանվի: Ճնշումը մեր բյուջեի գնողունակության վրա լինում է ինչպես ազգային շրջանակներում, այնպես էլ արտերկրում:

Պետք է նաեւ խուսափել տարբեր տեղերում նմանատիպ ֆոնդեր ստեղծելուց: Դրա համար պետք է օգտագործել էլեկտրոնային սարքավորումների առավելությունները՝ կրճատելով ֆոնդերի կրկնությունը եւ բարելավելով ընթերցողներին անհրաժեշտ նյութերի նկատմամբ հասանելիությունը միջազգային չափանիշներով:

Այս հարցում հաջողություններ ունենալու համար պետք է ընդարձակ համագործակցություն զարգացնել: Հնարավոր չէ պահպանել ամեն ինչ յուրաքանչյուր գրադարանում: Անհրաժեշտ է կազմակերպել գիտական մակարդակով գրադարանային հավաքածուների կոորդինացում, որը կհեղաշրջի տեղեկատվության պահպանման, առաքման, տեղում սպասարկման, համալրման մասին մեր ավանդական պատկերացումները:

Գրադարանագիտության մեջ գոյություն ունեն համալրման հետեւյալ սկզբունքները՝ գաղափարայնություն, պրոֆիլավորում եւ կոորդինացում, համակարգվածություն, պլանավորում:

Առավելագույն արդյունավետություն է բերում գրադարանային ֆոնդերի համալրման գործում պրոֆիլավորման համակցումը կոորդինացման հետ: Որքան

գրադարանային հավաքածուն խորացնում է իր պրոֆիլավորումը, այնքան այն հեռանում է բազմաբնագավառ տեղեկատվությունից: Դրանից ելնելով՝ անհրաժեշտություն է ծագում կոորդինացնել համալրումը՝ համակարգի մյուս գրադարանների հետ համապատասխանեցնելով: Կոորդինացումը ենթադրում է հաշվի առնել նաեւ համակարգի մյուս գրադարանների ուղղվածությունը: Համալրման կոորդինացումն այն աշխատանքն է, որն իրականացվում է գրադարանների առանձին համալրման եւ համալրված ֆոնդերը միասնական եղանակով օգտագործելու նպատակով: Կոորդինացված համալրման ժամանակ յուրաքանչյուր գրադարանային հավաքածու դիտվում է որպես առանձին, ինքնուրույն համալրման օբյեկտ եւ որպես այդ ամբողջի մի մաս:

Պետք է նշել նաեւ, որ յուրաքանչյուր կոորդինացում հարաբերական է, քանի որ գրադարանային համալրման ուղղությամբ չկա հստակ սահմանափակում: Քանի որ հայագիտական գրականություն կարող է ձեռք բերել թե Ազգային գրադարանը, թե Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, թե ԳԱ հիմնարար գրադարանը եւ թե Երեւանի պետական համալսարանի գրադարանը: Նույնը կարելի է ասել գիտատեխնիկական, մանկավարժական, բժշկական գրականության եւ համապատասխան գրադարանների վերաբերյալ:

Կոորդինացումն իրականացվում է տարածքային եւ գերատեսչական հատկանիշի համաձայն, թեեւ գործնականորեն գրադարանի ներսում ֆոնդերը կոորդինացվում են ըստ հրատարակության տեսակների:

Կոորդինացումը տարածքային հատկանիշի համաձայն կարելի է կազմակերպել հանրապետության, մարզի, քաղաքի, տարածաշրջանի մասշտաբով: Կոորդինացման հարուստ փորձ է կուտակված արտասահմանում, քանի որ կոորդինացումը ծագել է այնտեղ: Սկանդինավյան երկրներում (Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա) գործում է Սկանդիապլանը. դա կոորդինացման մի եղանակ է, ըստ որի մասնակից երկրներից յուրաքանչյուրը կոորդինացնում է որոշակի բնագավառների գրականություն, որն օգտագործվում է բոլոր երկրների կողմից: ԱՄՆ-ում գործում է MEDLINC-ը բժշկական գրականության: Այս համակարգն ընդգրկում է ավելի քան 70 երկիր: ՀՀ Գիտաբժշկական գրադարանն ունի իր էլեկտրոնային էջը MEDLINC համակարգչային ցանցում: Կոորդինացման նպատակը ֆինանսական միջոցների խնայումն է, միաժամանակ ցանկացած գրականության օգտագործման հնարավորություն:

Կոորդինացումն իրականացվում է նաեւ գերատեսչական, միջգերատեսչական հատկանիշի համաձայն: Այն հիմնարկությունը, որն ունի գրադարան, շահագրգռված է կոորդինացնել համալրվող գրականությունը: Հիմնարկությունները համաձայնության են գալիս՝ կոորդինացված գրականությունը համատեղ օգտագործելու եւ ձեռք բերելու մասին: Կոորդինացվում են ոչ միայն նյութական միջոցները, այլեւ ղեկավարությունը, որը նյութական միջոցները ծախսում է համապատասխանաբար յուրաքանչյուր գրադարանի համար: Յուրաքանչյուր գրադարանի ինքնատիպությունը ապահովելու համար պետք է նախօրոք ունենալ համահավաք թեմատիկ-տիպաբանական պլան (ԹՏՊ): ԹՏՊ-ի կազմման հարուստ փորձ է կուտակել խորհրդային գրադարանագիտությունը: Նմանատիպ պլանավորումը մեծ հաջողություն ունեցավ հատկապես 1980-ական թվականներից, երբ հանրապետությունում վերջնականապես ավարտվեց գրադարանային ցանցի կենտրոնացումը: «ԹՏՊ կազմելը ժամանակ պահանջող, աշխատատար գործընթաց է: Պլան կազմելուն մասնակցում են համակարգի բոլոր աշխատողները: Սակայն ծանրությունն ընկնում է կենտրոնական համալրման բաժնի վրա»:

ԹՏՊ-ը նախատեսված էր առաջիկա հինգ կամ հինգից ավելի տարիների համար: ԹՏՊ-ի կազմմանը մասնակցում էին բոլոր մասնաճյուղ-գրադարանները, որպեսզի ստեղծվեր համահավաք, միասնական ֆոնդ: Համակարգի աշխատողները քաջատեղյակ պետք է լինեն սպասարկվող տեղանքին, նրա առանձին բնակավայրերին, սոցիալ-տնտեսական հեռանկարներին ու տենդենցներին, որպեսզի միասնական ֆոնդն ապահովվի համապատասխան մասնագիտական գրականությամբ:

Ֆոնդի ձեռքբերումից հետո սպասարկումն իրականացվում է ՄԳԱ-ով: Այսպիսով, կարծում ենք, որ հին, ավանդական մեթոդների վերագործարկումը շատ

տեղին կլինի մեր ժամանակների գրադարանների լիարժեք կոորդինացված համալրման համար: Գրադարանային ֆոնդերի կոորդինացիան մեր օրերում միակ հնարավոր միջոցն է, որի շնորհիվ կիրագործվի բոլոր ժամանակների համար գերխնդիր հանդիսացող հասանելի և մատչելի տեղեկատվության սպասարկումը: Հոդվածում խոսվում է նաև մեկ այլ կարևոր խնդրի մասին՝ հաշվի առնելով մեր ազգային ինքնատիպությունը: Հայտնի է, որ պատմական տարբեր ժամանակահատվածներում հայրենիքից հեռացած հայությունը ամենուր ստեղծել է իր մշակութային, ազգային կոլորիտը ներկայացնող օջախներ՝ դպրոցներ, ուսումնակրթական կենտրոններ, գրադարաններ, մատենադարաններ, ինչպես նաև բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ևս համազգային նշանակություն ունեցող տեղեկատվության լուրջ աղբյուրներ են:

«Միջազգային նշանակությամբ կենտրոնի անհրաժեշտությունը պատճառաբանվում է նաև աշխարհասփյուռ հայության հետ մատենագիտական փոխադարձ կապերի զարգացման առումով. Հայկական գաղթօջախները այսօր զրկված են ազգային մտավոր մշակույթից օգտվելու հնարավորությունից»:[5]

Ժամանակակից հասարակության տեղեկատվական պահանջները լիովին բավարարելու նպատակով ճիշտ ուղի է կանխագծում ազգային տեղեկատվական կենտրոնի ստեղծումը: Այդ հնարավորությունը ստեղծված է ժամանակակից սարքավորումների տրամադրած տեղեկատվությամբ: Տեղեկատվության աղբյուրների համակենտրոնացումն ու ինտեգրումը ոչ միայն գիտական, այլև ազգային-պետական խնդիր է, որի լուծումը հրատապ է 21-րդ դարում տեղեկատվական հաղորդակցական համակարգերի զարգացման չափանիշներով:

Արդյունքում ստացվում է, որ այժմեականությունն ապահովող ոչ մի գրադարան չի կարող գոյություն ունենալ տեղեկատվության զարգացման նման աճի դեպքում, և հետաքրքրականն այն է, որ տեղեկատվության աճի միտում է նկատվում՝ դրանով իսկ բացառելով տեղեկատվության վերահսկողությունը, դասակարգումը:

Ժամանակակից գրադարանը պետք է կարողանա համակենտրոնացնել ոչ միայն տեղեկատվությունը, այլև համակենտրոնացնել տեղեկատվության աղբյուրները: Տեղեկատվության հսկելիության և հասարակության վերընթացը 21-րդ դարում ապահովելու նպատակով՝ չափազանց կարևոր են տեղեկատվական գործընթացների և տեխնոլոգիաների, գրադարանային և արխիվային գործի, մատենագիտության և փաստաթղթագիտության, հաղորդակցության զանգվածային միջոցների և այլ ճյուղերի ուսումնասիրումը և նորի ներդրումը:

Հավաքածուն գրադարանային գործունեության հիմքն է, առանց որի գրադարան՝ որպես գործող համակարգ, գոյություն ունենալ չի կարող: Գրադարանային ֆոնդը տեղեկատվական պահանջների բավարարման գլխավոր աղբյուր է ինչպես ողջ հասարակության, այնպես էլ նրա առանձին անհատի համար: Գրադարանային հավաքածուն» բարդ հասկացություն է:Գրադարանային հավաքածուն հասկացությունն անցել է էվոլյուցիոն զարգացման ճանապարհ: «Գրադարան» ռուսերեն բառն ունի հունական ծագում և բառացի նշանակում է գրապահոց: Դեռևս 1904թ. Լյ.Խավկինան գտնում էր, որ գրադարանը շատ կամ քիչ գրքերի ամբողջություն է: Հայացքների այս նույն համակարգի կողմնակիցներ էին հանդիսանում այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք էին Ի.Շումախերը, Վ.Տատիշչևը, Ն.Ռուբակինը, Ա.Պոկրովսկին և ուրիշներ:

Սակայն պետք է նշել, որ մեր օրերում գրադարանը շատ է հեռացել այդ պարզունակ բնորոշումից, և գրադարանը պատկերացնել զուտ որպես գրքերի հավաքածու, նշանակում է գրադարանի, նրա անսպառ հնարավորությունների, ընձեռած ասպարեզների մասին պատկերացում չունենալ: Այժմեական գրադարանը ոչ միայն տարբերվում է իր բովանդակությամբ, ֆոնդային ընդգրկմամբ, այլև գործունեության ծավալով, աշխատանքի որակով և հնարավորություններով:

Ժամանակակից գրադարանը, հատկապես թվային գրադարանը, հսկայական հորիզոններ է բացում զարգացած մարդու առջև, միայն թե այդ մարդը

[5] Սուքիասյան Գ.: Անհրաժեշտ է տեղեկատվական մատենագիտական միջազգային կենտրոն://ՀՀ,1999.-13 հունվարի.-թիվ 5.-էջ 5:

երբևէ չպետք է մոռանա գրադարան տանող ճանապարհը: ԱՄՆ-ը, լինելով «թվային գրադարան» գաղափարի ստեղծողը, հսկայական փորձ է կուտակել այդ ասպարեզում: Այնտեղ արդեն գործում են բազմաթիվ թվային գրադարաններ. նյութերը պահվում են համակարգիչներում և օգտվողին մատչելի են միայն համակարգչի առկայությամբ, այն էլ դրա՝ համաշխարհային սարդոստայնի հանգույցներից մեկին միացած լինելու պարտադիր պայմանով: Այսինքն, թվային գրադարանը այսօր օրինաչափ իրողություն է, և վերոհիշյալ կոնցեպցիան արդեն վաղուց սպառել է իրեն: Խոսելով նշանավոր գիտնականների՝ նշված կոնցեպցիայի մասին՝ կարելի է պնդել, որ ֆոնդը գրադարանի գոյության հիմքն է, սակայն չի կարելի հավասարման նշան դնել գրադարանի և գրադարանային հավաքածուի միջև: Սա գերագնահատում է գրադարանային հավաքածուի նշանակությունը, միաժամանակ նսեմացնում գրադարանի՝ որպես ինքնուրույն հիմնարկության դերը: Փաստորեն ստացվում է, որ գրադարանային հավաքածուն այն հիմնական զինուժն է, որով իրականացվում է գրադարանային աշխատանքը՝ իր բոլոր ընդգավառներով:

Գրադարանային հավաքածուն «գրադարան» հասկացության գոյն է, որի հետ փոխկապակցված են գրադարանի՝ որպես հավաքական հիմնարկության, բոլոր ենթաճյուղերն ու ենթակառույցները: Միայն քսանական թվականներին «ֆոնդ» բառն օգտագործվեց խորհրդային գրադարանագիտության մեջ՝ որպես առանձին տերմին: Երեսունական թվականներին օգտագործվեց «ֆոնդեր» բառը, քառասունական թվականներին գիտնականները եկան այն եզրակացությանը, որ ֆոնդ և ֆոնդեր բառերն ունեն ինքնուրույն և տարբեր իմաստներ, և որ ֆոնդը գրադարանի բաղադրիչ մասն է: Ներկայումս ընդունված է ֆոնդերը փոխարինել հավաքածու բառով:

Յուրաքանչյուր գործող գրադարան ունի իր գրադարանային հավաքածուն: Այդ պատճառով.

1. Առանձին գործող յուրաքանչյուր գրադարանի համար՝ որպես ամբողջական, լիագումար հավաքածու, պետք է կիրառել «գրադարանային հավաքածուներ» գիտաբառը՝ անպայման հոգնակի թվով: Օրինակ՝ Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հավաքածուները 2002 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել են 451399 միավոր:

Երբ խոսքը գնում է առանձին գրադարանի մասին (մասնաճյուղ-գրադարան), նույնպես պետք է օգտագործել «գրադարանային հավաքածուներ» գիտաբառը: Օրինակ՝ Գյումրու քաղաքապետարանի ԳԿՀ-ի տարածքային կենտրոնական գրադարանի հավաքածուները 2002թ.հունվարի 1-ի դրությամբ կազմել են 4445 միավոր:

2. Որևէ գրադարանի ներսում գործող մի ենթաբաժնի ֆոնդի մասին խոսելիս պետք է օգտագործել «գրադարանային ֆոնդ» գիտաբառը՝ անպայման եզակի թվով: Օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Արխիվային կամ դիվանական վավերագրերի բաժնի ֆոնդը կազմում է շուրջ 300000 միավոր:

Միաժամանակ պետք է նշել, որ գրադարանային գործնական և տեսական աշխատանքում հանդիպում են ենթաբաժին-ֆոնդեր, որոնք բովանդակությամբ և տարատեսակներով միատարր չեն, և յուրաքանչյուրն իր ներսում ունի իր ենթաֆոնդերը: Այդպիսի օրինակները բազմաթիվ են (Մատենադարանի Արխիվային բաժնի ֆոնդը, Խնկո-Ապոր անվան ԱՄԳ-ի օտար լեզուների գրականության ֆոնդը և այլն):

Երբ խոսքը գնում է գրադարանային ֆոնդ լայն, ընդարձակ հասկացության մասին՝ գիտական բնութագրմամբ, կարելի է օգտագործել «գրադարանային հավաքածու» գիտաբառը: Օրինակ՝ գրադարանային հավաքածուն անցել է աստիճանական զարգացման ճանապարհ:

Այսպիսով, գրադարանային ֆոնդ և ֆոնդեր հասկացությունները սահմանազատված են միմյանցից բովանդակային, քանակական, ընդգրկման հատկանիշներով: Այս գիտաբառերի կիրառությունը պետք է ճշգրիտ լինի, քանի որ դրանք ամբողջովին տարբերվում են քերականապես և իմաստով:

Գրադարանի մյուս բաղադրիչ մասերն են գրադարանի անձնակազմը, նյութատեխնիկական բազան, աբոնեմենտի կազմը, որոնցից յուրաքանչյուրը փոխադարձ կապով պայմանավորված է մյուսի հետ: Յոթանասունական թվա-

կաններին այս կոնցեպցիան ձեւակերպեց Յ. Վ. Գրիգորեւը, որը զարգացվեց հետագա ուսումնասիրողների կողմից:

Գրադարանային ֆոնդերի կապը մյուս ենթահամակարգերի հետ:

ԳՖ-գրադարանային ֆոնդ, ԱԿ-աբոնեմենտի կազմ, ՆՏԲ-նյութատեխնիկական բազա, ԳԱ-գրադարանի անձնակազմը, ՏՄԱ-տեղեկատու մատենագիտական ապարատ:Ըստ այդ կոնցեպցիայի՝ գրադարանի յուրաքանչյուր ենթահամակարգ իրականացնում է սեփական աշխատանքը եւ, միեւնույն ժամանակ, մասնակցում է ողջ համակարգի ֆունկցիաների իրականացմանը: Հենց դրանով էլ պայմանավորված է գրադարանի աշխատանքի ամբողջականությունը: Այս ենթակառույցներից յուրաքանչյուրի աշխատանքի խափանման դեպքում կասեցվում է գրադարանային ողջ աշխատանքը: Սա նման է մի շղթայական ռեակցիայի, որի յուրաքանչյուր օղակ իր ինքնատիպ եւ անփոխարինելի գործունեությունն ունի: Առանց գրադարանային աշխատակազմի կդադարի գրադարանային աշխատանքը, առանց ՏՄԱ-ի հնարավոր չէ հայտնաբերել նյութը ֆոնդերում: Առանց ՆՏԲ-ի, հատկապես մեր օրերում, կդանդաղի, գրեթե կանգ կառնի աշխատանքը: ԵՎ, ի վերջո, ինչ իմաստ կունենա գրադարանը, եթե չլինեն գրադարանային ֆոնդերը եւ գրադարանի ընթերցողական կազմը:

Աբոնեմենտի կազմը դիմում է գրադարանի անձնակազմին, որը, օգտագործելով նյութատեխնիկական բազայի եւ տեղեկատու-մատենագիտական ապարատի հնարավորությունները, գրադարանային ֆոնդում հայտնաբերում է անհրաժեշտ տեղեկատվությունը եւ սպասարկում ընթերցողին:

Ժամանակակից տեղեկատու-մատենագիտական ապարատը համակցում է եւ թղթային գրացուցակների ու քարտարանների համակարգը, եւ էլեկտրոնային շտեմարանները: Այս երկուսի առկայությունը գրադարանում պարտադիր է տարբեր պատճառներով: Էլեկտրոնային գրացուցակները արագ են հայտնաբերում անհրաժեշտ նյութը, իսկ թղթային գրացուցակները ապահով տեղեկատու-մատենագիտական միջոց են էլեկտրոնային շտեմարանների վնասվածքի, վիրուսների տարածման, գրադարանի հոսանքազրկման պարագայում:

Աբոնեմենտի կազմը գրադարանի անձնակազմին կարող է դիմել եւ հեռակա (միջնորդված), եւ անմիջական սկզբունքով: Այսինքն, եթե գրադարանը միացված է էլեկտրոնային որեւէ ցանցի, ապա դիմումը, տեղեկատվության պահանջը կարելի է ձեւակերպել էլեկտրոնային սարքավորումների միջոցով (հեռակա, միջնորդված դիմում): Եթե գրադարանը միացված չէ էլեկտրոնային որեւէ ցանցի, դիմումը պետք է լինի անմիջական՝ ընթերցողի գրադարան այցելելու պարտադիր պայմանով (անմիջական դիմում):

Գրադարանի անձնակազմը անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու համար պետք է փնտրում կատարի՝ տեղեկատու-մատենագիտական ապարատով, ապա այն սպասարկի ընթերցողին. անհրաժեշտության դեպքում ընթերցողին պետք է տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն, որը հարում է իր հարցմանը, քանի որ ընթերցողը կարող է չիմանալ տվյալ նյութի գոյության մասին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գրադարանային գործունեության հիմքը՝կարեւորագույն իմաստը, գրադարանային հավաքածուն է՝ տեղեկատվության բոլոր հնարավոր միջոցներով.

1.առանց հավաքածուի չկա գրադարան

2.հավաքածուի շնորհիվ գրադարանին հաջողվում է իրականացնել իր՝ որպես սոցիալական ինստիտուտի գործառույթները:

3.գրադարանային հավաքածուները չափազանց կարեւոր դեր են խաղում ժամանակակից տեղեկատվական դաշտում:

Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց՝ աճում է գրադարանային հավաքածուներում անհրաժեշտ նյութերի վերարտադրման ձեւով համալրման արդյունավետությունը: Սա կիրառվում է այն դեպքերում, երբ խոսքը գնում է հատուկ արժեք ունեցող նյութերի մասին (ձեռագիր, խանձարուրային շրջանի հրատարակություններ, արխիվային փաստաթղթեր), որոնց ձեռքբերումը հնարավոր չէ կամ շատ դժվար է հեռավորության, հասանելիության, լեզվական մատչելիության պատճառով, կամ էլ այդ նյութերը պետք է փրկել մաշվածությունից, ավերող տեղափոխություններից, քանի որ դրանց լիարժեք վերականգնումը գործնականորեն հնարավոր չէ: Օրինակ՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Արխի-

վային կամ դիվանական վավերագրերի բաժնի հավաքածուն նախատեսել է ստեղծել յուրաքանչյուր փաստաթղթի համար առանձին անձնագիր, որը կլինի ուսումնասիրության առարկա, եւ միայն խիստ անհրաժեշտության դեպքում կօգտագործվի բնագիրը: Այդ նպատակով գործում են վերարտադրման բազմաթիվ միջոցներ: Դրանցով են զբաղվում խոշոր գիտական գրադարանները, տեղեկատվական ինստիտուտները (օրինակ՝ Ռուսաստանի ազգային գրադարանը՝ նախկինում՝ Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանը): Այն գրադարանները, որոնք ունեն հնարավորություն, իրենք են վերարտադրում, պատճենահանում անհրաժեշտ նյութերը, որոնք ստացվել են ՄԳԱ-ով:

Շատ տարածված է միկրոժապավենների, այսօր արդեն տեսաժապավենների, ձայներիզների, տարբեր բնույթի սկավառակների կիրառությունը: Այդպիսի ֆոնդ ունեն Ազգային գրադարանը, Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանը, Ավ. Իսահակյանի անվան ԳԿՀ-ի ԿԳ-ը, Գիտաբժշկական գրադարանը եւ շատ այլ գրադարաններ:

Գիտական գրադարաններն ունենում են նաեւ հազվագյուտ հրատարակությունների լուսանկարներ, լուսատիպեր, տեսաժապավեններ, պատճեններ:

Վերարտադրման միջոցով գրականության համալրումը հնարավորություն է տալիս ոչ միայն ապահովել գրադարանն անհրաժեշտ գրականությամբ, այլեւ ստեղծել ապահովագրական ֆոնդ, կատարել վնասված նյութերի լրացում՝ նոր էջերով:

Այսպիսով, ժամանակակից գիտատեխնիկական միջոցները նպաստում են գրադարանային-մատենագիտական համակարգը զարգացնելու, ընթերցողական պահանջները սպասարկելու, գրադարանային հավաքածուները կենտրոնացնելու, օգտագործելու, գրքափոխանակությունը կազմակերպելու ուղղությամբ:

Այս բոլոր դրույթները հաշվի առնելով՝ կարելի է եզրափակել.

1. մեր օրերում տեղեկատվության զարգացումը հասել է հսկայական չափսերի եւ նրա սրընթաց աճի միտում է նկատվում:

2. ազգային մշակույթի տեսանկյունից հրատապ է դարձել տեղեկատվության կոորդինացման հարցի լուծումը:

3. ազգային տեղեկատվության հասանելիությունը եւ մատչելիությունը ապահովելու համար պետք է ստեղծել ազգային տեղեկատվական կենտրոն՝ միջազգային նշանակությամբ:

4. գրադարանային հավաքածուների հետագա զարգացման համար պետք է կազմակերպել գրադարանային հավաքածուների կոորդիանացում:

5. գրադարանային հավաքածուների համալրման գերխնդիրը պետք է լուծել տարբեր բնագավառների տեղեկատվության կոորդինացված համալրմամբ:

6.գրադարանային հավաքածուների միասնական փոխօգտագործումը պետք է կազմակերպել ՄԳԱ-ով, որը լայն տարածում է ունեցել ԽՍՀՄ-ում, եւ որն այժմ շարունակվում է զարգացած բազմաթիվ երկրներում:

7. պետք է ստեղծել գրադարանային հավաքածուների համապետական ղեկավարման ցանցեր, որոնց գործունեությունը կիրականացվի համակարգի սկզբունքով:

Նելլի Թադեւոսյան

БИБЛИОТЕЧНЫЕ ФОНДЫ В СОВРЕМЕННОЙ ИНФОРМАЦИОННОЙ СИСТЕМЕ

РЕЗЮМЕ

Развитие современной науки и техники предполагает внедревние новых современных технологий в системе библиотек. Сегодня происходят коренные преобразования в области библиотек, всей его системы, библиотечных фондов, обслуживания, библиографического информирова-ния. Отнащение

библиотек новейшими технологиями, оборудованием и аппаратурой будет способствовать рациональному распределению чита-тельского времени и эффективности поиска информации.

Нелли Тадевосян

Հաղորդումներ

АРМЯНСКАЯ ПЕДАГОГИЧЕСКАЯ ПРЕССА ГРУЗИИ

Тифлис-цитадель армянской культуры, стал местом, где зародилась армянская педагогическая пресса, призванная направить деятельность армянской школы, определить ход ее развития.

Вопросы представляющее интерес для школы и педагогической мысли, безусловно, в той или иной степени освещались на страницах всех наших периодических изданий. К вопросам воспитания и обучения, де1тельности школы обращались "Мегу Айастани" Ст.Мананияна, "Крунк айоц аэшари" М.Агабекяна, "Мшак" Г.Арцруни и другие издания представлявшие различные общественно- политические течения. На страницах этих и других армянских периодических изданий встречаем имена Х.Степане, М.Минасарян, С. Паповяна, М.Мамуряна, А.Багатряна и других. Эти периодических педагогов в переводе на армянских язык и статьи армянских авторов, отражающих школьную жизнь России и европы, оживили межнациональные педагогические связи, которые являются неотъемлимым условием развития каждой из национальных школ.

Но этого уже было недостаточно. Развивающаяся армянская школа настоятельно требовала создания специальной педагогической прессы, без которой немыслимо было представить дальнейший ее подъем и прогресс.
Это настоятельное требование времени не могло и не осталось без ответа.
В 1864 году Хорен Степане в Тифлисе начинает издание педагогического журнала "Айкакан ашхар" и тем самым закладывает основу армянской педагогической прессы не только Грузии, но и армянства в целом.

Программа армянского журнала "Армянский мир"

... 4. статьи педагогического содержания

... 6. Корреспонденция о состоянии армянского духовенства и духовных школ...[1]

Своими теоретико-методическими статьями журнал оказывал существенную и действенную помощь армянским учителям, поднимал вопросы женского образования и необходимости иметь образованное духовенство и т.д.

Необычно сложилась судьба журнала. Как и подобает настоящему пионеру, он стойко переносил и перерывы, и скипания, явившиеся результатом жизни его издателя-редактора, полной гонений и преследований с другой. Где только не издавался журнал: в Тифлисе, Шуше, Гандзаке, Баку, Ереване.

В своих программных статьях Х.Степане пишет, что журнал должен преследовать цель воспитания армянского народа, распространения просвещения.

Будучи духовным лицом Х.Степане считал церковь и школу важнейшей основой существования нации. Он писал, что журнал должен стоять выше всяких партий, способствовать развитию идеи национальной принадлежности и, если он должен иметь какую-либо исходную позицию, то ею должны быть церковь и григорианская религия.

Журнал боролся за самобытность воспитания. Он отверг полезность заимствования каких-либо педагогических систем. В опубликованной в N 1-2 от 1876 года замечательной статье "Немецкая школа вовсе не может служить примерой идеей для других наций" журнал находит, что педагогика каждого народа должна соответствовать его духовному укладу, обычаям и традициям.

Важно отметить, что в журнале сотрудничали передовые учителя того времени, в том числе известный писатель и педагог Перч Прошян.

В 1877 году "Айкакан ашхар", благодаря стараниям реакции, фактически стал бесплодным, лишившись малейших возможностей издания. Словно в ответ на злободневное требование времени, в Тифлисе начал издаваться журнал "Манкаваржакан тетр" под редакцией Акопа Тер-Ованесяна (1878-1880гг).

Сравнение программы данного журнала[2] *с программой "Айкакан ашхар" показывает, что "Манкаваржакан тетр" имел более выраженную педагогичесйую направленность.*

Важнейшая из задач "Манкаваржакан тетр", как заявлялось в программной статье первого номера, состояла в налаживании связей между европейски образованными педагогами с одной стороны и армянскими педагогами "азиатами" с другой.

Пусть "европейски образованный армянский педагог посредством нашего журнала протянет руку своему брату – "азиату", пусть он расскажет последнему, что есть в просвещенной Европе, что творится в области педагогики, пусть объяснит основы обучения и воспитания и т.д. и т.п., а последний, в свою очередь, пусть расскажет о своем опыте, об особенностях национальной школы, о том, как ту или иную педагогическую идею можно реализировать в национальной школе, исходя из условий ее существования[3]*".*

Одновременно он призвал перенимать западную педагогика не механически, а приспособливать ее к местным условиям.

---

[1] ЦГИА Грузии, ф.480, оп.1, ед. Х. 171, л. 2.
[2] ЦГИА Грузии, ф. 480, оп. 1, ед. Х. 296, л. 3.
[3] "Манкваржакан тетр" (на арм. яз.) Тифлис, 1878, N 1, с. 1.

Несмотря на то, что журнал “Манкаваржакан тетр” просуществовал всего год, он сумел в основном решить постановленные перед ним задачи. И это благодаря сотрудничеству с журналом таких известных педагогов, как С.Мандинян, А.Багатрян, Софья Бабаян, О.Гукасян.

В 1882-84гг. в Тифлисе под редакцией Н.Хосровяна издавался журнал “Варжаран”[4].

Журнал в своих статьях освещал вопросы школьной жизни восточных армян, поднимал вопросы умственного, нравственного и физического воспитания. С особой заботой раскрываются вопросы начального обучения.

Несмотря на то, что по причине материальных условий он просуществовал недолго, но благодаря своим сотрудникам (в нем сотрудничали почти все передовые и видные педагоги), имея широкий круг интересов, журнал сумел проделать большую работу в ознакомлении армянских учителей с прогрессивными направлениями в армянской, русской и европейской педагогике прошлого и настоящего. Одно только перечисление статей: “Какая программа нужна нашим приходским школам” С.Мандиняна; “Педагогические идеи Сленсера” Ф.Варданяна; “Программа и способы преподавания географии и естественной науки в народных начальных школах” С.Бекназаряна; “Детские игры и их назначение” в переводе Хабудагяна показывает широту охвата журнала. На страницах именно этого журнала возникла бурная дискуссия между Г.Агаяном и “органическом” методах обучения грамоте. Среди других интересных статей, опубликованных в журнале “Варжаран”, своей основательностью выделяется статья видного армянского педагога С.Мандиняна “Наследственность в сравнении с воспитанием”[5]*, где кри-тикуя и переоценку, и недооценку роли воспитания, приходит к позитивному решению этой задачи.*

Следуя и хронологическому принципу изложения материала, мы должны отметить, что в 1883 году в Тифлисе Тигран Назарян начал издавать иллюстрированный журнал “Ахпюр”, который просуществовал до 1918 года. Хотя это был фактически детский журнал, но в специальном разделе рассматривались и педагогические вопросы: о детском чтении (март 1884), сравнительный анализ дела образования у восточных западных армян (декабрь 1886), о физическом воспитании (сентябрь 1898), типы темперамента детей (июнь-декабрь 1988г.) и т.д.

Активно сотрудничал с журналом “Ахпюр” выдающийся армян-ский педагог и детский писатель Г.Агаян.

В 1884 году Кавказский Цензурный Комитет разрешил Хорену Степане переименовать журнал “Айкакан ашхар” в “Манкаваржаноц”[6].

Х.Степане, уже получивший европейское образование, на сей раз поднимал более значимые, существенные вопросы школьной жизни и педагогики. Но и в этом журнале, к сожалению, превалировал абстрактноменторский подход, большинство стстей писалось или пере-водилось самим редактором, который не терпел чужих педагогических мнений и воззрений в своем журнале. Ввиду этого Х.Степане не сумел сплотить вокруг себя видных педагогов своего времени и это второй журнал не достиг такого уровня, чтобы вызвать интерес у педагогической общественности, и поэтому прекратил свое существование.

В 1908 году в Тифлисе начал издаваться новый педагогический журнал “Нор дпроц”, который просуществовал до 1914 года. Издателем и

[4] ЦГИА Грузии, ф. 480, оп. 1, ед. X. 496, л. 6.
[5] “Варжаран” (на арм. яз.) Тифлис, 1884, N 4-5, с. 154-173.
[6] ЦГИА Грузии, ф.480, оп.1, д.458, л. 11.

ответственным редактором этого издания, в полном его объеме утвержден кандидат педагогики Иенского университета И.Л.Арутюнян[7].

Журнал проповедовал и пропагандировал в прогрессивные педагогические идеи, содействовал созданию и становлению новой народной школы.

Журнал считал объязанностью учителей исходить из принципов научной педагогики, перестраивать воспитательное дело в соответствии с современными требованиями. Сотрудниками журнал “Нор дпроц” были известны педагоги Г.Агаян, Ст.Лисициан, Т.Рашмаджан др.

Вызванная к жизни развитием армянской национальной школы армянская педагогическая пресса сама во многом способствовала развитию армянской школы и педагогической мысли, немало сделав и для ознакомления и приобщения армян к прогрессивным педагогическим идеям других народов.

[7] Там же, оп.2, д.253, л.2.

Паркев Геворгян
кандидат педагогических наук

ԱՌԱՋԻՆ «ԽՈՐՀՐԴԱՀԱՅ» ԹԱՏՐՈՆԻ ԼԵԳԵՆԴԸ (1918թ.)

1918թ. հուլիսի 5-ին Օվի Սեւումյանի նախաձեռնությամբ եւ Վերգինե Մամուլյանի ու Գրիգոր Մեգնիկյանի մասնակցությամբ, աշխատավորների պատգամավորների Պյատիգորսկի (քաղաք Ռուսաստանի Հյուսիսային Կովկաս տարածաշրջանում) քաղաքային խորհրդին կից գործող ազգությունների կոմիտեն կազմակերպում է Հայկական պետական դրաման (թատրոն): Թատերախմբում ընդգրկվել են Սեւումյան ամուսինները, Մեգնիկյան ամուսինները, Շահլամյան ամուսինները, Աղասի ու Ռիմա Օղաբաշյանները, Աննա ու Մարիամ Ջոհրաբյան քույրերը, Արման Կոթիկյանը եւ այլք: Այսպես կոչված «խաղաշրջանը» բացվել է հուլիսի 30-ին՝ «Պատվի համար» ներկայացմամբ, որին ներկա են եղել Վ.Տերյանը, Պ.Մակինցյանը, Ս.Խաչատրյանը, Գ.Աթաբեկյանը, Հ.Հակոբյանը, Հովհ. Հովհաննիսյանը եւ Ռ.Մելիքյանը: Այնուհետեւ, խաղացվել են եւս հինգ ներկա-յացում՝ «Չար ոգի», «Թագավոր», «Հին աստվածներ», «Արցունքի հովիտ», «Մարվող ճրագներ», որից հետո այս «թատերախումբը» աղբյուրներում այլեւս չի հիշատակվել:

Գոյություն ունի, սակայն, նույն իրադարձության մասին Ա.Կոթիկյանի հուշագրությունը, որտեղ պատմվում է, թե ինչպես ինքը, որպես փախստական գտնվելով Էսենտուկիում, «մի խաղաղ երեկո» հանդիպելով Սեւումյանին ու նրա տիկնոջը, հետաքրքրվել է, թե արդյո՞ք նա խումբ կազմելու մտադրություն չունի եւ լսել պատասխան, ըստ որի՝ վերջինս անտեղյակ է եղել «թե ինչ դերասանական ուժեր են հավաքված ամառանոցում»: Մի քանի օր անց, սակայն, նա Սեւումյանի բնակարանում հանդիպել է վերոհիշյալ անձանց: Կազմվել է թատերախումբ եւ տրվել են ներկայացումներ՝ Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ եւ Պյատիգորսկ քաղաքներում: Հետո, երբ «կարմիր բանակայինները՝ ջախջախելով դենիկինյան հրոսակներին, մտան Հյուսիսային Կովկաս, Պյատիգորսկում արդեն հաստատվել էր կառավարական կազմը եւ հեղկոմը», ու «մի օր էլ Սեւումյանը հավաքեց մեզ եւ հայտարարեց, որ հեղկոմի կարգադրությամբ ինքը նշանակված է արվեստի կոմիսար...այդ օրվանից խումբը կոչվեց «Հյուսիսային Կովկասի շրջիկ թատերախումբ»[1]*:*

Ի՞նչ հանգամանքներում, ինչպե՞ս եւ ինչո՞ւ Սեւումյանը՝ հայ առաջին պրոֆեսիոնալ ռեժիսորը, հեռու Պյատիգորսկում, որտեղ երբեւէ չի եղել հայ թատերական միջավայր, պետք է կազմակերպեր սիրողական թատերախումբ: Ամուսնական եւ ազգակից զույգերի առատությունը, մյուսների պատահական

[1] «Սովետական արվեստ», 1956, թիվ 11, էջ 45-47:

մասնակցությունը, խաղաշրջանի ոչ պատեհ պահը եւ տեղի ընտրությունը, հիմք են տալիս ենթադրելու, որ «թատերախումբը» կազմվել է հապճեպ, ակնհայտորեն ինչ-որ ուժի թելադրմամբ, որը իրավունք է տալիս կասկածել Սեւումյանի «նախաձեռնության» հնարավորությանը, ուստի եւ՝ հայտնի փաստերի համադրմամբ, փորձելու վերհանել իրողությունը:

***

«...Թյուրքական բանակի Կովկաս ներխուժելու օրերին...անցա Հյուսիսային Կովկաս եւ այսպես ընկա Էսենտուկի»,- գրել է Ա.Կոթիկյանը:

Թուրքական բանակի ներխուժումը Անդրկովկաս սկսվել էր փետրվարի 12-ին: Ապրիլի 22-ին հռչակված Անդրկովկասյան ֆեդերատիվ հանրապետությունը մայիսի 15-ին, Ալեքսանդրապոլի անկումից հետո, քայքայվում է: Մայիսի 26-28-ը հռչակվում են նոր հանրապետություններ՝ Վրաստանը, Ադրբեջանն ու Հայաստանը, իսկ հունիսի 4-ին Բաթումիի պայմանագրով, հաստատվում է «խաղաղություն», եւ թուրքական զորքերը Բաթում-Թիֆլիս-Գանձակ երկաթուղով նպատակաուղղվում են դեպի Բաքու: Բավական երկար ժամանակ, թուրքական ուժերը սպառնալիք չեն ներկայացրել Վրաստանի համար: Մինչդեռ Սեւումյանի վերջին ներկայացումը 1917-1918թթ. խաղաշրջանում կայացել է հունիսի 16-ին, այսինքն՝ նա Հյուսիսային Կովկաս է մեկնել Բաթումի պայմանագրի ստորագրումից հետո, երբ Թիֆլիսը հուսալիորեն պաշտպանվում էր գերմանական 5 հազարանոց զորքի կողմից: Ուրեմն մնում է միայն պարզել, թե ո՞ւր է մեկնել «հանգստանալու» Սեւումյանը:

1918թ. մարտից հետո Պյատիգորսկում կայացած Թերեքի շրջանի ժողովուրդների 2-րդ համագումարն այդ տարածքը, որտեղ գտնվում էին հայտնի հանգստավայրերը, հռչակում է Թերեքի Խորհրդային Հանրապետություն[1]: Հուլիսի սկզբին, Պյատիգորսկ է ժամանել՝ 1918թ. ապրիլից Հարավային շրջանի ժամանակավոր արտակարգ կոմիսար եւ Հյուսիսային Կովկասի պաշտպանության խորհրդի նախագահ Ս.Օրջոնիկիձեն, որի հրահանգով՝ կատարվել է իշխանությունների վերակազմավորում: Հուլիսի 10-ին, քաղաքային թատրոնի շենքում կայացած Շրջանային խորհրդի նիստում, Օրջոնիկիձեն հանդես է եկել զեկուցմամբ[2]:

Թատերախմբի առաջին ներկայացման ժամանակ, դահլիճում ներկա էին՝ Վ.Տերյանը (Ազգությունների գործերի ժողկոմիսարիատի հայկական գործերի կոմիսարը), Պ.Մակինցյանը (կոմիսարի տեղակալը), Ս.Խաչատրյանը (ՌՍՖՍՀ Լուսավորության կոմիսարիատի ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահը) ու Գ.Աթաբեկյանը (Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի հատուկ բաժնի պետի պաշտոնի թեկնածու): Այս անձինք Օրջոնիկիձեի հետ Մոսկվայից ժամանել էին պաշտոնական առաջադրանքով :

Այսպիսով, հուլիսի 5-ից հետո կազմակերպված թատերախումբը, որն անվանվել է ոչ այն է հայկական պետական դրամա, ոչ այն է՝ «Հյուսիսային Կովկասի շրջիկ թատերախումբ» (առաջինը նշանակում է Հայաստանի Հանրապետության պետական դրամայի ստեղծումը Հյուսիսային Կովկասում, իսկ երկրորդ անվանումը չի բացատրում, թե ինչու Հյուսիսային Կովկասի թատերախումբը պետք է լինի հայկական, եւ երկու դեպքում էլ բացակայում է խորհրդային բառը) քաղաքական որոշման արդյունք էր, որտեղ գործող անձանցից մեկը՝ կամա թե ակամա, դարձել էր Օ.Սեւումյանը: Սրանով է բացատրվում միմյանց հետ առնչություն չունեցող, պատահական, սիրողական, շատ դեպքերում մեկ—երկու անգամ բեմ տեսած «դերասաններից» մեկ թատերախումբ կազմելու հանգամանքը:

Ի՞նչն էր դրդել, Սեւումյանին, հունիսի կեսից լքել առավել ապահով Թիֆլիսը, եւ մեկնել Հյուսիսային Կովկաս՝ քաղաքացիական պատերազմի թատերաբեմ: Ինչպե՞ս բացատրել Օրջոնիկիձեի հետ հայ բոլշեւիկների ժամանումը եւ ինչո՞ւ էր ուշադրության առարկա էր դարձել հատկապես հայկական ազգաբնակչությունը:

Հայ գործիչների այս շարքում կար եւս մեկը, որի անունը թեեւ չի տրվել, բայց որն իր տեղն ունի այս պատմության մեջ: Լյուսի Սեւումյանը հուշերում գրել է, թե ինչպես,

[1] А. Князев ,, Город на ,,скалистом архипелаге,, ,, , Ставрополь, 1962, стр. 52.
[2] Նույնը, էջ 109, 117:

Սեւումյանի վաղեմի ծանոթ Ասքանազ Մռավյանը, «գործերով եկել էր Պյատիգորսկ...օգնում էր ինչով կարող էր»:

Ի՞նչ գործերով կարող էր զբաղված լինել Ա.Մռավյանը Պյատիգորսկում: Բանն այն է, որ «երբ 1918թ. Բաքուն կռվում էր թուրքերի դեմ եւ Հյուսիսային Կովկասում Բաքվի համար կամավորներ հավաքագրելու նպատակով ստեղծվում էին դաշնակցական կոմիտեներ, ինքը՝ Ա.Մռավյանը Ստ.Շահումյանից հրահանգ է ստացել աջակցել դաշնակցական կազմակերպություններին՝ նրանց Բաքվի պաշտպանության գործում օգտագործելու համար»[1]:

Խոսքը վերաբերում է հայ ազգային կազմակերպությունների, մասնավորապես՝ դաշնակցականների եւ Ռուսաստանում իշխող բոլշեւիկների միջեւ Թուրքիայի դեմ միասնական ճակատ կազմելու համար սկսված գաղտնի բանակցությունների եւ համագործակցման խնդրին, որի առանցքում Բաքվի պաշտպանության հարցն էր: Այս հանգամանքն էլ պայմանավորել է վերոհիշյալ բանակցությունների ինչպես տեւողությունը, այնպես էլ բնույթը եւ առնչվում էր, շրջիկ թատերախմբի ճակատագրին:

Այսպես, դեռեւս 1917թ. «Թուրքահայաստանի մասին» հայտնի դեկրետի նախապատրաստման աշխատանքներին մասնակցել են հայտնի դաշնակցականներ Ռոստոմը (Ս.Զորյան), բժիշկ Զավրիյանը (Զավրիեւ), բոլշեւիկների կողմից՝ Ստ.Շահումյանն ու Վ.Տերյանը: 1918թ. միմյանց հետ բանակցել են ՀՅԴ բյուրոյի անդամներ՝ Զավրիյանը, Շահխաթունին եւ Ռուբենն ու հայ բոլշեւիկներ Շահումյանը, Շահվերդյանը եւ Կասյանը, Երեւանում՝ Արամ Մանուկյանը եւ Պ.Մակինցյանը, որն ավարտվել է համագործակցման մասին որոշումով[2]:

Դաշնակցությունն իրավունք է ստանում ունենալ իր հատուկ ներկայացուցիչները Ռուսաստանի հայաբնակ վայրերում, իսկ Հյուսիսային Կովկասը ռազմավարական բացառիկ կարեւոր դիրք էր գրավում, եւ պատահական չէր Զավրիյանի ներկայությունը Թերեքի Հանրապետությունում ու հանդիպումը նախագահի եւ զինված ուժերի գլխավոր հրամանատարի հետ[3]: Խորհրդային իշխանության կողմից հայկական գործոնին մեծ նշանակություն է տրվել: Անդրկովկասյան ֆեդերացիայի հռչակումից հետո, դաշնակցական մարմինների գործունեությունը Ռուսաստանում արգելող հրամանագրի հրապարակումից հետո, մեկ այլ, ներքին կարգադրությամբ այդ հրամանը փաստորեն, նույնիսկ չի կիրառվել, ընդհուպ՝ մինչեւ Բաքվի անկումը: Այդ պահից հետո բոլշեւիկների համար հայկական գործոնն այլեւս ստացավ հակադարձ նշանակություն, եւ հայկական կոմիսարիատը, որ «պիտի միջնորդի դեր խաղար կենտրոնական իշխանության եւ հայոց ազգային կազմակերպությունների միջեւ... Բաքվի տապալումից հետո... անողոք պայքար մղեց ազգային հակահեղափոխական կազմակերպությունների դեմ»[4]:

Ահա թե ինչու սեպտեմբերից, այլեւս անպետք դարձած «շրջիկ» թատերախումբը, փաստորեն, դադարեցնում է իր գոյությունը եւ Վ.Տերյանն այլեւս անելիք չունենալով, սեպտեմբերի երկրորդ կեսին մեկնում է Մոսկվա: Մոսկվայում էր նաեւ Ս.Խաչատրյանը, որի մի նամակն, այս դեպքում, հետաքրքրություն է ներկայացնում:

«Այստեղ ես մի գործ դասավորեցի. Վահան Տերյանը՝ մեր պոետն ու կենտրոնական կառավարության հայկական գործերի կոմիսարը, ամենայն հավանականությամբ ինձ կնշանակի Մոսկվայում հայկական ստուդիայի կազմակերպիչ...Նկատի ունեցեք մի բան. այդ մասին չգիտի Սեւումյանը: Նա ամբողջ ժամանակ գտնվում էր Էսենտուկիում եւ լսեց իմ խոսակցությունը Տերյանի հետ: Տերյանը նրան հայհոյում է: Հետո ես ու Սեւումյանը խոսեցինք այդ գործի մասին, եւ նա նույնպես ուզում է միանալ մեզ...Դա ձեզ բոլորիդ կզարմացնի, բայց մի հուզվեք: Նա մեզ համար սարսափելի չի լինի, եթե մենք համախմբվենք»[5] :

[1] Լ.Խուրշուդյան «Սովետական Ռուսաստանը եւ հայկական հարցը», Երեւան,1977, էջ 128:
[2] Լ.Խուրշուդյան «Սովետական Ռուսաստանը եւ հայկական հարցը», Երեւան,1977, էջ 57-58:
[3] Նույնը, էջ 109,117:
[4] Նույնը, էջ 184:
[5] Б. Арутюнян ,, Сурен Хачатурян,, , М., 1969, стр. 142.

Այնուհետեւ, տրվում է մեզ արդեն հայտնի գնահատականը Սեւումյանի համոզմունքներին, եւ հասցեատիրոջը հանձնարարվում է Թիֆլիսում հետեւել նրան :

Ուշագրավ է երկու հանգամանք. նախ, պարզվում է Վ.Տերյանի բացասական վերաբերմունքը Սեւումյանի հանդեպ, երկրորդ, Ս.Խաչատրյանի նույնանման վերաբերմունքը, ինչպես նաեւ, որ ինչպես մեկ, այնպես էլ մյուս դեպքում՝ նման վերաբերմունքը գաղափարական տարաձայնությունների ար-դյունք էր: Վ.Տերյանի քաղաքական եւ գաղափարական համոզմունքները միանշանակ էին. նա բոլշեւիկ էր: Իր հոդվածներում նա հայ մտավորականների աշխարհայացքում գերիշխող իդեալը՝«ազգային գոյության եւ ազգային անկախության գաղափարը» համարել է ռոմանտիզմ, եւ «անտարակույս սխալ է այդ ռոմանտիկ մտածողությունը»[1]: «... Մեր հայրենիքը Ռուսիան է...» - գրել է նա դեռեւս 1914թ..[2]

Վ.Տերյանի համախոհն էր նաեւ Ս.Խաչատրյանը, որը համոզված էր, թե ժամանակն է՝ հանուն «համաշխարհային հերոսա-ռոմանտիկական խաղացանկի», հրաժարվել ազգային դրամատուրգիայից: Նա, 1921թ. օգոստոսի 4-ին, ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ Ա.Հովհաննիսյանին ուղղված դիմումում առաջարկում է՝ իբր Երեւանում անհնար լինելու պատճառով, հայ պետական թատրոնը կազմակերպել Մոսկվայում, : Վերջին առաջարկն հիշեցնում է Հայկական պետական դրաման Հյուսիսային Կովկասում հիմնելու գաղափարը:

Այսպիսով, Հայկական պետական դրամայի՝ առաջին «խորհրդահայ» թատերախմբի ստեղծման գործում Սեւումյանի նախաձեռնության մասին պատմությունը լեգենդ է, որի ստեղծման հեղինակներին անհրաժեշտ էր Սեւումյան արտիստի անունը՝ քողարկելու համար պատահական անձանցից հապճեպ թատերախումբ կազմելու քաղաքական միջոցառումը: Ըստ երեւույթին, ժամանակին սա գաղտնիք չի եղել, քանի որ հեռավոր Պոլսում, «Շանթ» գրական—գեղարվեստական հանդեսի 1919թ. հունվարի 25—ի 12—րդ համարում «Հայ հորիզոնեն» լուրերի շարքում տպվել է հետեւյալ հեգնախառն հաղորդագրությունը. «Տեր եւ Տիկին Սեւումյան կգտնվին Հյուսիսային Կովկասի հանքային ջերմուկները: Պոլշեւիկներուն ձեռքն են (ընդգծումը մերն է- Ս.Է.), բայց պոլշեւիկները այնքան կգնահատեն դերասանները, որ անոնց ճերմակ հաց կուտան: Ասիկա ամենամեծ պատիվն է զոր կրնեն իրենց համակրությունը շահողներուն հանդեպ...»:

Սամվել Էվոյան

[1] Վ. Տերյան «Երկեր», Երեւան,1989, էջ 295:
[2] Նույնը, էջ 334:

ՊՇԵՐԻԿՑԻ ՔՐԴԱԽՈՍ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳԱՂԹԸ ԴԷՊԻ ՍԻՐԻԱ

Պշերիկն ու պշերիկցիները հայ ազգագրության ու բանագիտության կողմից, դժբախտաբար, անհրաժեշտ չափով ուսումնասիրության առարկա չեն դարձել, ո՛չ նախաեղեռնյան շրջանին, ո՛չ էլ հետո՝ Սիրիայում եւ Հայաստանում: Նրանց նիստն ու կացը, կենցաղը, ընտանիքը եւ այլն, մեծ չափով անծանոթ մնացած, մոռացված եւ ուսումնասիրության առարկա չեն դարձել: Նույնպես անծանօթ է մնացել նրանց հեռավոր անցյալը:

Սույն աշխատությունն առաջին փորձն է ներկայացնելու պշերիկցիներին պատմա-ազգագրական որոշ շրջագիծից ներս: Պետք է ասել, որ բավական քիչ են Սիրիա նրանց զանգվածային գաղթից առաջ եղած գրավոր՝ տպագիր ու անտիպ նյութերը: Այս ուսումնասիրությունում մեջբերումներ ենք կատարել մեր դաշտային աշխատանքների վերաբերյալ՝ ըստ տվյալ պահին կատարված դիտումների:

Աշխարհագրական ծանոթություն

Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը հնարավորություն չտվեց զարգացնելու արդեն իսկ ձևավորված ռազմական կրթության համակարգը։ Հայաստանի Հանրապետությունը ճզմվեց քեմալաբոլշևիկյան համագործակցության արդյունքում և 1920թ.-ի դեկտեմբերի 2-ից դադարեց գոյություն ունենալ։

[1] ՀԱԱ, Ֆ.199, ց.1, գ.190, թ.25-26։
[2] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.190, թ.229։
[3] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.9, թ.28։

Հայաստանի երկրորդ Հանրապետության (Խորհրդային Հայաստան) բանակը հիմնականում կազմավորվեց և համալրվեց առաջին Հանրապետության բանակի նախկին սպաներով: Այսպես, կարմիր բանակի շարքերն անցան շուրջ 1600-ից ավելի նախկին սպաներ,որոնց թվում՝ 6 գեներալ, 19 գնդապետ, 21 փոխգնդապետ:1921թ-ի հունվարի 24-ին հայ սպների հանդեպ իրականացված բռնություններից հետո անգամ 100 սպա կրկին շարունակեց ծառայությունը հայկական կարմիր զորամասերում[1]:

Բնականաբար հասկանալի էր դառնում, որ այդ փոքրաթիվ ուժերը չէին կարող ապահովել բանակի առջև դրված խնդիրների կատարումը, ուստի հրամանատարական կադրեր պատրաստելու նպատակով 1921թ. հուլիսի 19-ին ՀՍԽՀ ռազմահեղափոխական խորհրդի հրամանով Երևանում հիմնադրվում է կարմիր բանակի հրամանատարական դասընթացը, որը 1923թ. հուլիսի 8-ից վերակազմավորվում է որպես հայկական միացյալ ռազմական դպրոց: Հրամանը ստորագրել էր ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ, ՀՍԽՀ ռազմգործժողկոմ և ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Ա.Մյասնիկյանը: Միացյալ ռազմական դպրոցն անմիջապես ենթարկվում է ՀՍԽՀ ռազմգործժողկոմին: Դպրոցն ուներ հետևակային, գնդացրային, հեծելազորային, հրետանային և սակրավորական բաժիններ: Դպրոցում սաների ուսուցումը կազմակերպվում էր սկզբում Ա. Ֆ. Մյասնիկյանի, հետո՝ Գայի (Հայկ Բժշկյան) ղեկավարությամբ: Դպրոցի պետը Գաբրիել Տեր-Օհանյանն էր, զինվորական կոմիսարը՝ Արշալույս Շահազիզյանը, ապա՝ Արշակ Գրիգորյանը:Ալեքսանդր Մյասնիկյանի մահից հետո, ՀՍԽՀ Կենտգործկոմի 1925թ. մարտի 23-ի որոշմամբ, հայկական միացյալ ռազմական դպրոցն անվանակոչվում է նրա անունով[2]:

Ա.Մյասնիկայնի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը գոյատևեց մինչև 1927թ., որից հետո Կովկասյան կարմրադրոշ բանակի հեղափոխական ռազմական խորհրդի որոշմամբ այն միավորվեց վրացական և ադրբեջանական ռազմական դպրոցների հետ, և Թիֆլիսում ստեղծվեց Անդրկովկասյան միացյալ ռազմաքաղաքական դպրոց[3]:

Գոյության տարիներին Ա.Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը տվեց մոտ հազար շրջանավարտ: Նրանց թվում էին ապագա նշանավոր զորահրամանատարներ՝ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Հ.Բաբաջանյանը, գեներալ-լեյտենանտներ Բագրատ Առուշանյանը, Գևորգ Տեր-Գասպարյանը, գեներալ- մայորներ Անդրանիկ Ղազարյանը, Նվեր Սաֆարյանը և շատ ուրիշներ:

Ա.Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցը հիմնականում պատրաստում էր միջին հրամանատարական կազմ: Կրտսեր հրամանատարական կազմը (ջոկի հրամանատարից մինչև ավագ) իր պատրաստությունը ստանում էր զորամասերին կից դնգային դպրոցներում:

Ավագ և բարձր հրամանատարական կադրերը պատրաստվում էին բանվորագյուղացիական կարմիր բանակի զինվորական դասընթացներում, ուսումնարաններում և ակադեմիաներում: Այսպես՝ 1924-25թթ. Լենինգրադի հեծելազորային հրամկազմի կատարելագործման բարձրագույն դասընթացներ էր գործուղվել հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդի հրամանատար Հ.Բաղրամյանը: Նրա հետ այդ դասընթացներում էին սովորում նաև ապագա մարշալներ Գ.Ժուկովը, Կ.Ռոկոսովսկին և Ա.Երյոմենկոն:

Խորհրդային Հայաստանի ռազմական համակարգի ստեղծման ճանապարհին կարևոր դեր խաղաց ԽՍՀՄ ռազմահեղափոխական խորհրդի 1928թ. սեպտեմբերի 19-ի որոշմամբ տեխնիկումներում և բուհերի վերջին երկու կուրսերում զինվորական հատուկ դասընթացների կազմակերպումը, որոնց շրջանավարտները ստանում են պահեստի կրտսեր հրամանատարի կոչում[4]: Բուհերում,

[1] Կ.Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ, Երևան, 2002, էջ130:

[2] Կ.Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ, Երևան, 2002, էջ133:

[3] Նույն տեղում:

[4] ՀԱԱ, ֆ.216, ց.4, գ.368, թ32:

տեխնիկումներում և դպրոցներում ռազմաուսումնական գործը ղեկա-վարելու նպատակով, մտցվում են զինղեկների պաշտոններ, որոնք հիմնականում ստանձնում են նախկին զինվորական մասնագետները: Համակարգը բարեփոխման և կատարելագործման ենթարկվեց հետխրուշչովյան տարիներին՝ 1960-70-ական թվ., երբ Հանրապետության առաջատար բուհերում կազմակերպվեցին ռազմական ամբիոններ, որտեղ պատրաստվում էին տարբեր մասնագիտությունների գծով պահեստի սպաներ:

Այսպես՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռազմական ամբիոնը, որը կազմավորվել էր 1963թ., պահեստի սպաներ էր պատրաստում ինժեներատեխնիկական բազմաթիվ մասնագիտությունների գծով[1]:

Ռազմական ամբիոնները կարևոր դեր խաղացին երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության և պահեստի սպաների պատրաստման գործում: Հետագայում նրանցից շատերն աչքի ընկան Արցախյան ազատամարտի տարիներին:

Հայաստանի նորանկախ (1991թ.) Հանրապետության իշխանությունները ռազմական ամբիոններին զուգահեռ նոր ռազմական կառույցներ ստեղծելու փոխարեն, չգիտես ինչու, լուծարեց այդ ամբիոնները: Բայց, նորանկախ Հանրապետության համար ևս կենսական անհրաժեշտություն էր կազմավորվող բանակի համար սպայական հրամանատարական կադրերի պատրաստումը:

1993թ. ապրիլի 1-ին ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով ստեղծ-վեց Հանրապետության ռազմական հաստատությունների առաջնեկը՝ ավիացիոն ուսումնական կենտրոնը, որը առաջին ընդունելությունը կազմակերպեց 1993թ. սեպտեմբերին[2]:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1994թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ ավիացիոն ուսումնական կենտրոնի բազայի վրա ստեղծվեց ՀՀ ՊՆ ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանը, որը 1995թ. տվեց իր առաջին շրջանավարտները՝ 4 մասնագիտությունների գծով:

Վերը նշվածից բացի, ուսումնարանը պատրաստել է նաև ինքնաթիռի, ուղղաթիռի օդաչուներ, ղեկապետեր և ավիասպառազինության տեխնիկներ: 2001թ. ուսումնարանի հիմքի վրա ստեղծվեց ՀՀ ՊՆ ռազմաավիացիոն ինստիտուտը, որտեղ պատրաստվում էին միջին ավիացիոն մասնագիտական կրթությամբ սպաներ[3]:

1994թ. հիմնադրվեց ՀՀ լուսավորության նախարարության ռազմամարզական գիշերօթիկ վարժարան-ուսումնարանը, որը 1997թ. անցավ ՊՆ ենթակայությանը: Մոնթե Մելքոնյանի անունը կրող այս վարժարանը, ինչպես նաև 1995թ. մայիսից գործող Արմավիրի «Տիգրան Մեծ» և 2001թ. բացված գեներալ-լեյտենանտ Ք.Իվանյանի անվան ռազմավարժական վարժարանները նպատակ են հետապնդում սաներին նախապատրաստել կրթությունը շարունակել բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում:

Վարժարանի սաներից շատերը, անցնելով երկամյա ուսումնական գործընթացը, ցանկության դեպքում ուսումը շարունակում են Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտերկրի ռազմական բուհերում:

ՀՀ զինված ուժերում սպաների և ծառայությունների պետերի որակավորման բարձրացման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի 1996թ. հունիսի 26-ի հրամանով ստեղծվում են ՀՀ ՊՆ բարձրագույն սպայական դասընթացներ: 2004թ. այն միացվում է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտին:

Հնգամսյա տևողությամբ դասընթացները կազմակերպվում են տեսական և գործնական պարապմունքների նախապես հաստատված ծրագրերով: Դասընթացները բարեհաջող ավարտողները ստանում են համապատասխան վկայականներ: 1996-2002թթ.-ին վերոհիշյալ դասընթացներում վերապատրաստում է անցել ՀՀ զինված ուժերի շուրջ 2000 սպա[4]:

[1] Նույն տեղում, ֆ.768, ց.6, գ.838, թ14:

[2] Հայ զինվոր, 5-12 ապրիլի 2003թ.:

[3] ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչություն, Օրացույց 2003թ, սեպտեմբեր:

[4] Նույն տեղում, հոկտեմբեր:

Արցախյան ազատամարտը խիստ հրամայական դարձրեց Հանրապետության բանակը որակյալ ռազմական բժիշկներով ապահովելու խնդիրը: ՀՀ կառավարության 1994թ. մայիսի 19-ի որոշմամբ Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում բացվեց ռազմաբժշկական ֆակուլտետը, որը պատրաստում է բուժծառայության սպաներ (բուժական դործը ցամաքային զորքերում և ատամնաբուժություն՝ զինված ուժերում): 1997թ. ռազմաբժշկական ֆակուլտետը տվեց իր առաջին շրջանավարտները: Այսօր ՀՀ զինված ուժերում ծառայում են Մ.Հերացու անվան ռազմաբժշկական ֆակուլտետի 140 շրջանավարտ[1]:

Նորանկախ Հանրապետության ռազմական ուսումնական համակարգում առանցքային դեր է խաղում Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: ՀՀ կառավարության 1994թ. հունիսի 24-ի թիվ 279 որոշմամբ ստեղծվեց ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարան: ՀՀ կառավարության 1998թ. հունվարի 16-ի թիվ 24 որոշմամբ ՀՀ ՊՆ ԲԶՀՈՒ-ն վերակազմավորվեց ռազմական ինստիտուտի, որը 2000թվ. ստացավ Վ.Սարգսյանի անունը[2]: Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը 1995թ. մեկամյա կրթությամբ տվեց իր առաջին շրջանավարտները՝ մոտորաձիգ մասնագիտությամբ, իսկ 1998թ.-ին՝ քառամյա կրթությամբ:

2000թ. Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը թևակոխեց որակական առաջընթացի նոր փուլ, երբ, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության ռազմական համանման հաստատությունների փորձի ուսումնասիրման հիման վրա, արմատապես վերանայվեցին ուսումնական ծրագրերն ու պլանները:

1995-2004թթ. Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը Հանրապետության բանակին տվել է շուրջ 1800 սպա, այդ թվում՝ մոտոհրաձիգներ, հրետանավորներ, կապավորներ, տանկիստներ, ինժեներ-սակրավորներ, ռադիոհետախույզներ, ռազմական իրավաբաններ, ԴԱ գծով հրամանատարներ և հակաօդային պաշտպանության սպաներ: Այսօր ինստիտուտը մասնագիտացել է մոտոհրաձիգներ և հրետանավորներ մասնագիտությունների գծով սպաների պատրաստմամբ[3]:

ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հիմնադրման, կայացման ու կատարելագործման գործում իրենց ավանդն են ներդրել ինստիտուտի պետեր՝ գեներալ-մայոր Սերգեյ Սահակի Մարտիրոսյանը (առաջին պետ), գեներալ-լեյտենանտ Ստեփան Վահանի Միրզոյանը (ներկայիս պետ) և ուրիշներ:

Գագիկ Հովակիմյան
պատմական գիտությունների
թեկնածու

[1] Նույն տեղում, սեպտեմբեր:
[2] ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի ընթացիկ արխիվ:
[3] ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի ընթացիկ արխիվ:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ֆրանսիայի պետական արխիվային ծառայությունը, որի կազմի մեջ մտնում են կենտրոնական՝ Ազգային արխիվը և տարածքային արխիվները, այն է՝ 95 դեպարտամենտի, 22 ռեգիոնի (պրեֆեկտուրաներ և սուպրեֆեկտուրաներ), 300 համայնքի արխիվային ծառայությունները և պետական հաստատությունների արխիվները, գտնվում է մշակույթի և հաղորդակցության նախարարության վարույթում:

Ազգային արխիվն իր պատմական փաստաթղթերի փարիզյան համալիրով և պահպանության 4 ապակենտրոնացված կենտրոններով՝ նորագույն արխիվային փաստաթղթերով Ֆոնտեբլոյում, ֆրանսիական գաղութային վարչակազմի նյութերով՝ Էքս-ան-Պրովանսում, միկրոֆիլմերով՝ Էսպեյրանում և աշխատանքային ոլորտի արխիվներով՝ Ռուբեյում, աշխարհի՝ ավելի քան երկդարյա ավանդույթներով խոշորագույն արխիվներից մեկն է: Այնտեղ պահվող փաստաթղթերի ծավալը կազմում է դարակաշարերի ավելի քան 600 հազար գծամետր: Մոտ 100 տարի պետական արխիվային ծառայությունը կրել է կենտրոնացված բնույթ և միայն 1982 թվին՝ Միտերանի գլխավորությամբ սոցիալիստական կուսակցության իշխանության գալուց հետո, երբ բարեփոխումներ իրականացրեց պետական կառավարման համակարգում, արխիվները ազգայնացվեցին և ապակենտրոնացվեցին: Դեպարտամենտների և տեղական ինքնավարության մարմինների արխիվները ստացան ինքնուրույնություն և արխիվների ֆինանսավորման աղբյուրները փոխանցվեցին իշխանությունների համապատասխան տեղական մարմիններին:

«Համայնքների, դեպարտամենտների, ռեգիոնների և պետության միջև իրավասության բաշխման» մասին 1983թ. հուլիսի 22-ի թիվ 83-663 օրենքն անվանում են ապակենտրոնացման մասին օրենք: Հիշյալ օրենքի 65-րդ հոդվածը դեպարտամենտներն ու համայնքները հայտարարում է իրենց արխիվների սեփականատերեր:

Դրան համապատասխան, նրանք, գործող արխիվային օրենսդրության շրջանակներում, պետության գիտական և տեխնիկական հսկողության ներքո ապահովում են դրանց պահպանությունը և օգտագործումը:

Դեպարտամենտի արխիվային ծառայության հաստիքների ծախսերի 30 տոկոսը իր վրա է վերցնում պետությունը, մնացած գումարը՝ տեղական իշխանությունները:

67-րդ հոդվածը ռեգիոններին իրավունք է ընձեռում լինելու իրենց արխիվների սեփականատերը և իրականացնել դրանց պահպանությունը կամ էլ դրանք պահպանության հանձնել դեպարտամենտի արխիվային ծառայությանը:

Տարածքայինի կարգավիճակ ձեռք բերած դեպարտամենտների արխիվային ծառայություններն ընդունում և պահպանում են պրեֆեկտուրաների և

սուպրեֆեկտուրաների, պետական ապակենտրոնացված ծառայությունների և նոտարիատների, ինչպես նաև այդ դեպարտամենտների տարածքում գտնվող համայնքների արխիվները:

«Ապակենտրոնացման մասին օրենք»-ին համապատասխան, Ֆրանսիայի արխիվների տնօրինությունը, որը նախկինում բոլոր պետական արխիվները ղեկավարող միակ իրավասու ինստիտուտն էր, այժմ ղեկավարում է միայն Ազգային արխիվը և գիտա-տեխնիկական հսկողություն իրականացնում տարածքային արխիվներ նկատմամբ:

Ֆրանսիայի արխիվների տնօրինության իրավունքներն ու պարտականությունններն ամրագրված են 1979թ. հոկտեմբերի 23-ի դեկրետով (1988թ. նրանում կատարվել են որոշակի ուղղումներ):

14 հոգանոց տնօրինությունը ղեկավարվում է տնօրենի և նրա՝ գիտական գծով տեղակալի կողմից:

Այն բաղկացած է հետևյալ ստորաբաժանումներից՝

- գլխավոր տեսչություն (3 տեսուչ)

- ընդհանուր, կադրային, ֆինանսական, իրավաբանական և մասնագիտական հարցերով զբաղվող վարչական ծառայությունների ենթատնօրինություն

- տեխնիկական բաժին

- արտաքին կապերի բաժին:

Տնօրինության կազմի մեջ մտնում են նաև 2 պաշտոնատար անձինք, ովքեր պատասխանատու են մշակութային գործունեության համար:

Տեխնիկական բաժինը լուծում է դեպարտամենտների, ռեգիոնների ու համայնքների արխիվների գիտական և տեխնիկական հարցերը, մասնավորապես՝ քննարկում է արխիվապահոցների շինարարության նախագծերը ու դրանք սարքավորումներով հագեցնելու խնդիրները, փաստաթղթերի համալրման, փորձագիտական արժեքավորման, դասակարգման և քարտացուցակագրման չափորոշիչների մշակման խնդիրները: Դեպարտամենտների, համայնքների և գերատեսչությունների գործունեության գիտա-տեխնիկական հսկողությունը, հիմնականում ստուգումների, գրավոր հաշվետվությունների կազմման, ինչպես նաև սեմինարների և որակավորման բարձրացման դասընթացների միջոցով ապահովում են Ֆրանսիայի Ազգային արխիվի տնօրենը, գլխավոր տեսուչները և դեպարտամենտների արխիվների տնօրենները: Վարչա-տարածքային միավորումները և գերատեսչություններն ամեն տարի կազմում են իրենց արխիվային ծառայությունների վիճակի ու գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, որով Ազգային արխիվին հաղորդում են եղած ռեսուրսների (ֆինանսներ, հաստիքներ, սարքավորումներ), արխիվների համալրման, փաստաթղթերի ոչնչացման, գործերի կազմման, արխիվային տեղեկատուների հրատարակման, կազմապատման, վերանորոգման, վերականգնման աշխատանքների, միկրոֆիլմավորման, փաստաթղթերի օգտագործման, արխիվներում կատարվող հիմնական ուսումնասիրությունների, մշակութային և ուսումնա-լուսավորական գործունեության, տվյալների ավտոմատացված մշակման պրակտիկայի և միջոցների մասին: Այդ տվյալները թույլ են տալիս Ֆրանսիայի բոլոր պետական արխիվների գործունեության մասին կազմել տարեկան հաշվետվությունը:

Ընթացիկ գործավարության արխիվների և ապակենտրոնացած պետական ծառայություններում ժամանակավոր պահպանության փաստաթղթերի, դեպարտամենտի մակարդակով գիտա-տեխնիկական հսկողությունը ստուգողական այցելությունների, սեմինարների և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման, արխիվային ֆոնդի շրջանակներում փաստաթղթերի սիստեմավորման և դասակարգման ծրագրերի, փորձագիտական արժեվորման աղյուսակի կազմման, փաստաթղթերի ոչնչացման թույլտվության ձեռք բերման և երբեմն էլ փաստաթղթերը դեպարտամենտների արխիվային ծառայություններին պահպանության հանձնելու, ժամանակավոր արխիվների ղեկավարումը կազմակերպելու միջոցով իրականացվում է դեպարտամենտի արխիվային ծառայության տնօրենը:

Ֆրանսիայի արխիվների տնօրինությանն առընթեր խորհրդատվական մարմինը Բարձրագույն արխիվային խորհուրդն է (նախկինում՝ հանձնաժողով), որը հաստատվել է 1988թ. հունվարի 21-ի հրամանով, ուր 1990թ. հունվարի 17-ին կատարվել են փոփոխություններ:

Խորհուրդը լսում և ուսումնասիրում է Ֆրանսիայի արխիվների տնօրինության ամենամյա հաշվետվությունը և, համաձայն 1979 թվի հունվարի 3-ի՝ արխիվների վերաբերյալ օրենքի, քննարկում պատմական փաստաթղթերի դասակարգման վերաբերյալ առաջարկությունները: Խորհուրդը քննարկում է գիտա-տեխնիկական հրապարակումների հրատարակչական ծրագիրը: Մշակույթի նախարարի կամ վերադաս ատյանների պահանջով, Խորհուրդը՝ արխիվային ծառայությունների գիտական և մշակութային գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ տալիս է եզրակացություն:

Արխիվային Բարձրագույն խորհրդի կազմի մեջ, 3 տարի ժամկետով, մտնում են Ֆրանսիայի արխիվների տնօրինության, երկրի քաղաքական, գիտական ակադեմիական շրջանակների ներկայացուցիչները՝ թվով 36 մարդ՝:

Վարդիթեր Մանդասարյան

Ի ՇԱՀ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԶՈՐԱՑՄԱՆ

Հայրենիքի պաշտպանության ապահովման զինված ուժերում մարտունակ և գործիմաց կադրեր ունենալու խնդիրներն իրականացնելու նպատակով 20-ական թվականների սկզբներից ՀՍԽՀ Կենտգործկոմին կից գործել են մի շարք կամավոր ընկերություններ:

Դրանից առաջինը Օդային նավատորմի բարեկամների ընկերությունն էր, որ ձևավորվել էր 1923թ. և լուրջ աշխատանքներ էր տանում Հայաստանում օդագնացության համար դեռևս տարրական պայմաններ ստեղծելու ուղղությամբ: 1923թ. օգոստոսի 11-ին ընկերության նախագահության նիստում ընդունվեց որոշում, որով վավերացվեց ԽԱՀՄ-ի նույնանուն կազմակերպության մեջ նրա ընդգրկելու փաստը (ֆ. 155, ց. 1, գ. 3):

Ընկերությունը արդեն 1924թ. ջանքեր էր գործադրել Երևանում, Լենինականում (այժմ՝ Գյումրի), Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) թռիչքուղիներ կառուցելու, Թբիլիսիի և Երևան քաղաքների միջև օդային կապ հաստատելու ուղղությամբ:

ԽՍՀՄ օդային նավատորմի բարեկամների ընկերության որոշմամբ հուլիսի 14-ը հայտարարվեց օդային նավատորմի բարեկամների ընկերության օր, որը նշվեց նաև Հայաստանում: Տոնակատարությունը ուղեկցվեց նաև կամավոր հանգանակությամբ՝ «Յունկերս» մակնիշի մեկ ինքնաթիռ ձեռք բերելու օգտին (ֆ. 155, ց. 1, գգ. 1, 3):

Ընկերությունը գործում էր Կենտգործկոմի նախագահ Ս.Համբարձումյանի անմիջական ղեկավարությամբ և արդեն 1924թ. ուներ և' իր կանոնադրությունը, և' զանազան հրահանգներ գործունեության տարբեր ոլորտների համար: Մի քանի տարվա ընթացքում օդային նավատորմի բարեկամների ընկերության բջիջներ և բաժանմունքներ բացվեցին Հայաստանի գավառներում, ստեղծվում էին ավիամոդելիստների խմբակներ, կազմակերպվում էին ստեղծված մոդելների մրցույթներ և այլն (ֆ. 155, ց. 1, գգ. 8, 10):

1925թ. հունվարի դրությամբ Հայաստանի օդային նավատորմի բարեկամների ընկերությունը 10 գավառակներում ուներ մասնաճյուղեր, լավ վիճակում էին Երևանի օդակայանը և Լենինականի թռիչքուղին: Հանրապետությունը Մոսկվայից ստանում էր «Ինքնաթիռ», «Օդագնացություն», «Բանբեր օդային տորմիղի» պարբերականները, որոնք թարգմանվում էին և մասսայականացվում բնակչության շրջանում (ֆ. 155, ց. 1, գգ. 16, 17):

Ընկերության բաժանմունքների և սկզբնական կազմակերպությունների անդամների ցուցակներն ու ֆինանսական գործունեության մասին տեղեկագրերը

վկայում են, որ տարեցտարի աճել են թե՛ մեկը, թե՛ մյուսը (ֆ. 155, ց. 1, գգ. 20, 23):

1924թ. դեկտեմբերի 17-ին կազմակերպվեց ընկերության երեւանյան բաժանմունքների համաժողով, իսկ 1925թ. Անդրֆեդերացիայից ժամանած հատուկ հանձնաժողովը, ուսումնասիրելով ընկերության երկամյա գործունեությունը, արձանագրեց, որ. «Երեւանի օդանավակայանը լավ վիճակում է եւ հանդիսանում է Անդրֆեդերացիայի լավագույն օդանավակայանը թե՛ իր հնարավորություններով, թե՛ իր տարածքով» (ֆ. 155, ց. 1, գ. 1):

Օդային նավատորմի բարեկամների ընկերությանը զուգահեռ գործել են նաեւ Քիմիական պաշտպանության ընկերությունը (1924թ.), Ավիաքիմիական ընկերությունը (1925թ.) Պաշրավիաքիմը (1927թ.), որոնց մասին եւս հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել: Այսպես՝ Հայաստանի ավիաքիմի աշխատակիցների ցուցակները, նրանց տրված մանդատներն ու վկայականները հավաստում են, որ կազմակերպությունը կապեր էր հաստատել Մոսկվայի եւ Լենինգրադի ռազմաօդային ուժերի դպրոցների հետ, իսկ 1925թ. Հայաստանից ընտրված 10 երիտասարդներ մեկնել են Ռուսաստան՝ կրթությունը շարունակելու նպատակով (ֆ. 155, ց. 1, գգ. 33, 35):

Խիստ ուշագրավ է Ավիաքիմի 1925թ. հոկտեմբերի 14-ի նիստի արձանագրությունը: Նիստը քննարկել է «Խորհրդային Հայաստան» ինքնաթիռի հանդիսավոր ընդունման արարողակարգը, որը նախատեսում էր այն կատարյալ տոնախմբության վերածել: (ֆ. 155, ց. 1, գ. 6):

1927թ. Կենտգործկոմի կառուցվածքում սկսեց գործել Պաշրավիաքիմի խորհուրդը (Պաշտպանության եւ ավիաքիմիական շինարարությանն աջակցող ընկերություն), որի գործունեությունը դարձյալ ուղղված էր երկրի պաշտպանության ուժեղացմանը, ապագա զինվորներին զինվորական ծառայության նախապատրաստելը: Այս առումով հանրապետության գյուղերում եւ քաղաքներում հաճախակի կազմակերպվում էին դասախոսությունների միամսյակներ, որոնց ընթացքում ընթերցված զեկուցումները նպաստում էին երիտասարդների ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը:

Կենտգործկոմի նախագահությունը 20-30-ական թվականներին ընդունել է բազմաթիվ որոշումներ, որով կանոնակարգել է խորհրդի գործունեությունը: Այսպես՝ պարբերաբար ընդունվել են որոշումներ քաղաքային վայրերում կինոների, թատրոնների, օպերայի, կրկեսի տոմսերի, հասարակական սննդի կետերի եւ զվարճատեղերի, զբոսավայրերի, խմիչքների գների մեկամսյա տոկոսային հավելումներ կատարելու մասին, որպեսզի հավաքված լրացուցիչ գումարը տրամադրվի Պաշրավիաքիմին՝ երկրի պաշտպանության ֆոնդը ուժեղացնելու նպատակով: Այս գումարներով Ղարաքիլիսայում ամռան ամիսներին կազմակերպվել են ճամբարներ, որտեղ ռազմական պատրաստություն են ստացել հանրապետության տարբեր շրջաններից հավաքված պատանիներ, պարտադիր մինչզորակոչային ուսուցում է կազմակերպվել շրջանների զորակոչիկների համար (ֆ. 112, ց. 4, գգ. 808, 809):

Դնահատելի է հատկապես այն աշխատանքը, որ կատարել է Պաշրա-վիաքիմը Հայաստանի քաղաքացիական ավիացիայի եւ ավիագնացության համար բարենպաստ նախադրյալներ ստեղծելու ուղղությամբ: Կազմվել են հեռանկարային ծրագրեր ու պլաններ, դրանք կոորդինացվել են համամիութենական համապատասխան կազմակերպությունների գործունեության հետ: Հետաքրքիր տեղեկություններ կան միության առաջին դիրիժաբլի կառուցման ֆոնդին Հայաստանից արված հատկացումների մասին (ֆ. 112, ց. 4, գ. 810):

Աշխատավորության ռազմական դաստիարակության նպատակով Պաշրավիաքիմի առաջարկով եւ օգնությամբ խոշոր գործարաններում, կազմակերպություններում աշխատում էին ռազմական հրահանգիչներ, որոնք զգալի աշխատանք էին կատարում մասսաներին հակաօդային պաշտպանության գիտելիքներ հաղորդելու ուղղությամբ:

1932թ. Պաշրավիաքիմի առաջարկով Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 12-րդ տարեդարձի առիթով ՀՍԽՀ Կենտգործկոմը իր դեկտեմբերի 13-ի որոշմամբ թույլատրում է Հայաստանի սահմաններում վաճառել 100.000 ռուբլու

հատուկ դրոշմանիշեր՝ հանրապետության համար նոր ինքնաթիռ ձեռք բերելու համար (ֆ. 112, ց. 4, գ. 811):

Երկրորդ աշխարհամարտի տարիներին եւ հետպատերազմյան մի քանի տարիների ընթացքում վերոհիշյալ հասարակական կազմակերպությունների աշխատանքը շարունակեցին նմանատիպ մի քանի ընկերություններ, որոնցից հատկապես հիշատակության արժանի է ԴՕՍԱՐՄ-ը (բանակին աջակցողներին կամավոր ընկերություն):

Վերջինիս 1949-1950թթ. հաշվետվության մեջ ասվում է, որ Հայաստանում գործում է ԴՕՍԱՐՄ-ի 2783 սկզբնական կազմակերպություններ, որոնցում ընդգրկված էին 130.046 անդամ:

Թե՛ պատերազմի, թե՛ հետպատերազմյան տարիներին այդ ընկերության գործունեությունը հիմնականում գնացել է բանակի համար ռազմական նախնական գիտելիքներ ունեցող կադրերի պատրաստման, երկրի պաշտպանության ապահովման ուղղությամբ:

Հետաքրքիր է մի փաստ. 1949թ. հանրապետության ԴՕՍԱՐՄ-ի խմբակներում տարբեր տիպի հրազենից կրակել սովորած 27.885 սաներից 2204-ը եղել են կանայք, որոնց մի մասը նաեւ վարպետության կարգ է լրացրել (ֆ. 317, ց. 2, գգ. 7, 11):

Պարբերաբար թարմացվել եւ կատարելագործվել է նաեւ հրահանգիչների, դասախոսների կազմը: Բազմաթիվ ռուսերեն ձեռնարկներ թարգմանվել են հայերեն եւ մասսայականացվել նրանց մեջ, կազմակերպվել են մեթոդական պարապմունքներ եւ այլն:

1951թ. այս ընկերությունները միացան եւ ստեղծվեց Բանակին, ավիացիային, նավատորմին աջակցող կամավոր ընկերությունը՝ ԴՕՍԱԱՖ-ը, որին տրվեց կոմիտեի կարգավիճակ:

ԴՕՍԱԱՖ-ի շուրջ 40 տարվա պատմությունը արտացոլված է ազգային արխիվում պահվող նրա հարուստ արխիվային ֆոնդում,* որի փաստաթղթերը վեր են հանում այն հայրենանվեր ու բեղմնավոր գործունեությունը, որ իրականացրել է ընկերությունը հայրենիքի պաշտպանունակության հզորացման, ռազմական կադրերի պատրաստման, մարզատեխնիկական եւ ավիասպորտի տարբեր ձեւերի զարգացման ուղղությամբ: ԴՕՍԱԱՖ-ի ամենամյա հրամաններն ու նախագահության նիստերի արձանագրությունները (ց.2, գգ. 2, 3,8,10,20,44,45, ց.1 դդ.2-5,9-13,26-31, ց.3, գգ. 10-13,27-31..., ց. 5, գ. 5, ց.6, գգ. 14-20, 24-33, ց.8, դդ.1-49, ց.9, գգ.8-17,26-33 եւ այլն), ինչպես նաեւ գործունեության վերաբերյալ կոմիտեի եւ նրա շրջանային մասնաճյուղերի տարեկան հաշվետվություններն ու տեղեկանքները (ց.2, դդ.5,6,17,60,77,126,127, ց.5, դդ.1,2,7,10,14,16, ց.8, գգ.308-311, ց.9, գգ.1-6, 63,66,149,151 եւ այլն) դրա խոսուն վկաներն են:

Կոմիտեն միշտ եղել է կառավարության հոգածության տեսադաշտում, այդ իսկ պատճառով էլ Հայաստանի Նախարարների խորհրդի, ՀԿԿ-ի, Դերագույն խորհրդի որոշումներն ու կարգադրությունները, հրամանագրերը ուղղորդել են ԴՕՍԱԱՖ-ի գործունեությունը (ց.1, դդ.25,32,41,58,64,65,85,86, ց.3, գգ.18,37,50, ց.4, դ.2,33,64, ց.5, գ.4, ց.7, դդ.1,3,4,49, ց.8, դդ.54,55,65,90):

ԴՕՍԱԱՖ-ի միութենական եւ հանրապետական համագումարների եւ կոնֆերանսների նյութերը ամփոփված են հետեւյալ գործերում (ց.1, գգ.1,6, ց.3, գ.1, ց.6, գ.22, ց.7, գգ.20,22,30,48,52, ց.9, գգ.3,69):

Հետաքրքիր տեղեկություններ են պարունակում այն գործերը, որոնք պատմում են ԽՍՀՄ-ի ԴՕՍԱԱՖ-ի կազմակերպած սպորտի ռազմատեխնիկական մարզաձեւերի մրցույթներին Հայաստանի ներկայացուցիչների մասնակցության (ց.1, գ.75, ց.6, գ. 23, ց.9, դդ.114,122,128), Հայաստանում կազմակերպված սպարտակիադաներին ԴՕՍԱԱՖ-ի մարզադպրոցների եւ առանձին անդամների մասնակցության (ց.1, դդ.230-233, ց.3, գ.3, ց.6, գ.9, ց.9, գ.գ.119,133), ռադիոսիրողնախագծողների կազմակերպած ցուցահանդեսի (ց.8, դ.184), ԴՕՍԱԱՖ-ի միջազգային կապերի եւ միջազգային եւ միութենական մրցաշարեր կազմակերպելու, դրանց մասնակցելու (ց.1, դ.254, ց.7, դդ.132,137,144, ց.8, դդ.163,172,195, ց.9, գ.60) մասին:

* ԴՕՍԱԱՖ-ի ֆոնդը կրում է 317 համարանիշը, ունի 9 ցուցակ: Այսուհետ հղումների ժամանակ ֆոնդի համարանիշը չի նշվի, կնշվեն միայն ցուցակների եւ գործերի համարները:

1975թ. տարեկան հաշվետվության մեջ (ց.4, գ.7) ասվում է, որ Հաղթանակի 30-ամյակի առիթով կազմակերպված միամսյակին մասնակցել է 1 միլիոն 200.000 մարդ, որոնց համար կազմակերպվել են դասախոսություններ, զրույցներ, արշավներ, հանդիպումներ Հայրենական պատերազմի մասնակիցների հետ և այլն:

Լուրջ առաջընթաց էր ապրել նաև զինված ուժերի համար կադրերի նախապատրաստման գործը: 5-ամսյա դասընթացներ էին կազմակերպվել պարաշյուտիստների, ռազմական տեխնիկայի մեխանիկների, ռադիոհեռագրողների, վարորդների համար, որոնցից շատերը Հայաստանի ԴՕՍԱԱՖ-ի հավաքականի կազմում մասնակցել էին ԽՍՀՄ ժողովուրդների 6-րդ սպարտակիադային և նվաճել բազմաթիվ մրցանակային տեղեր:

Հայաստանի ԴՕՍԱԱՖ-ի բեղմնավոր գործունեության մասին են պատմում բնակչության հակաօդային պաշտպանության, օդագնացության զար-գացման, շրջաններում ստեղծված օդակայանների և թռիչքուղիների բացման (ց.2, գգ.27,144,168, ց.4, գգ.9,79, ց.8, գ.104), պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության, ավագ և միջին հրամանատարական կազմի, հրահանգիչների, մարզիչների և ռազմատեխնիկական կադրերի, պարաշյուտիստների պատրաստման (ց.9, գ.50, ց.2, գգ.18,103,115, ց.3, գգ.112-115, ց.4, գգ.8,10,11,15-20,24,41, ց.5, գ.8, ց.7, գգ.23,25,178, ց.8, գգ.213-215, 219,224, ց.9, գ.95) ուղղությամբ տարված աշխատանքների հաշվետվությունները, զեկուցագրերն ու տեղեկագրերը: Հետաքրքիր տեղեկություններ կան նաև Սևանի ռազմածովային ակումբի գործունեության վերաբերյալ (ց.2, գգ.16,19, ց.7, գ.185, ց.9, գգ.129,134,135):

Տարիների ընթացքում ԴՕՍԱԱՖ-ի կենտրոնական կոմիտեն ծավալել է նաև շինարարական աշխատանք, կյանքի են կոչվել բազմաթիվ բարեկարգ և նորակառույց մարզադպրոցներ, սպորտային տարբեր կառույցներ, վարչական շենքեր և մարզահրապարակներ (ց.1, գգ.225-229, ց.3, գ.139-156, ց.7, գգ.73,264-267, ց.8, գգ.67,179,241-271):

Պահպանվում են ռազմաուսումնական դպրոցների, ակումբների անձնագրեր, կանոնադրություններ, հրահանգներ, ցուցակներ (ց.1, գգ.236, 238,240,268, ց.2, գգ.14-16,31,40,50, ց.3, գգ.122-129, ց.9, գգ.104-111,116), հաստիքա-ցուցակներ և տեղեկագրեր ԴՕՍԱԱՖ-ի կենտրոնական վարչության, քաղաքային կոմիտեների անձնակազմի վերաբերյալ (ց.2, գգ.29,30, ց.1, գգ.116-119,121-134,142-175,184-188, ց.3, գգ.75-75,84-85,100-111,ց.6, գգ.6,7,10-13, ց.7, գգ.223,231,241, ց.8, գգ.312, 318,326, ց.9, գ.152,160,169,175), ինչպես նաև փաստաթղթեր նրա կազմակերպությունների և առանձին անդամների պարգևատրումների, պատվավոր կոչումներ ստանալու մասին (ց.3, գ.15,ց.5, գ.6, ց.7, գգ.41,54, ց.8, գգ.82,88,194, ց.9, գ.38):

1991թ. նոյեմբերի 20-ին ԴՕՍԱԱՖ-ի արտահերթ համագումարը որոշում ընդունեց ընկերության անվանափոխության վերաբերյալ, այն վերանվանվեց ՀՀ պաշտպանական մարզատեխնիկական ընկերության: ՀՀ ՊՄՏԸ-ն ԴՕՍԱԱՖ-ի իրավահաջորդն է, որի գլխավոր խնդիրը ՀՀ պաշտպանության գործին աջակցելն է: Այն զբաղվում է քաղաքացիների ռազմահայրենասիրական, երիտասարդության մարզատեխնիկական, ֆիզիկական և բարոյական դաստիարակությամբ, իրականացնում է պատանիների նախնական զինվորական ուսուցման գործը, որակյալ կադրեր է պատրաստում ազգային բանակի համար:

ՀՀ ՊՄՏԸ-ն համագործակցում է ԱՊՀ երկրների նույնանուն կազմակերպությունների հետ, ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքած պայմանագրի համաձայն Հայաստանի զինված ուժերի համար պատրաստում է որակյալ մասնագետներ, որոնցից շատերը իրենց անմահության փառքով պսակեցին Արցախյան հերոսամարտում (ց.9, գգ.50,60,61,68,97): 2001 թվականի դեկտեմբերից ընկերության նախագահն է Արցախյան ազատամարտի փորձառու հրամանատար, գեներալ-մայոր Արկադի Թադևոսյանը:

Էմմա Հովսեփյան
ՀԱԱ տնօրենի տեղակալ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԲԱԽՏՈՒՐԻՆԱ. «ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԾԱՅՐԱՄԱՍԵՐԸ. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1917ԹԹ.)»

Մենագրության հեղինակը՝ պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդրա Բախտուրինան քննարկում է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ 1914-1917թթ. ցարական կառավարության ազգային քաղաքականությունը կայսրության ազգային ծայրամասերում և ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում: Առավել հետաքրքրական է աշխատության այն մասը, ուր ռուսաստանցի հեղինակը ներկայացնում է ռուսական ժամանակավոր զինվորական գեներալ-նահանգապետության գործունեությունը Օսմանյան Թուրքիայից նվաճված Արևմտյան Հայաստանում (էջ 208-222):

Ա.Բախտուրինան մինչև բուն նյութին՝ «Ժամանակավոր զինվորական գեներալ-նահանգապետությունը Թուրքահայաստանում և Ռուսաստանի հայկական քաղաքականությունը», քննարկում է մինչև պատերազմը ցարական իշխանությունների՝ Կովկասում հայերի նկատմամբ վարած ազգային քաղաքականությունը: Հեղինակի կարծիքով, երկրամասում ռուսահպատակ հայերի նկատմամբ վերաբերմունքը փոխվեց 1905թ. մարտից, երբ Կովկասի փոխարքա է նշանակվում կոմս Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը: Ի տարբերություն իր նախորդների, որոնք աշխատում էին թուլացնել երկրամասի հայ բնակչության հասարակական-քաղաքական ակտիվությունը, նորանշանակ փոխարքան գտնում էր, որ Կովկասի ռուսական գաղութացմանը կարելի է հասնել վարչական համակարգում ներգրավելով տեղաբնակներին: Ա.Բախտուրինայի կարծիքով, Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը նախապատվությունը տալիս էր հայերին: Ի. հաստատումն իր կարծիքի, հեղինակը վկայակոչում է 1912թ. հոկտեմբերի 12-ի փոխարքայի նամակը կայսր Նիկոլայ 2-րդին: Նա գրում է. «Հովանավորելով հայերին, մենք ձեռք ենք բերում հավատարիմ դաշնակիցների, որոնք մշտապես մեզ ծառայություններ են մատուցել»: Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի համոզմամբ, Ռուսաստանի դաշնակիցը Փոքր Ասիայում կարող են լինել միայն հայերը:[1]

---

[1] Бахтурина А.Ю., Окрины российской империи: Государственное управление и национальная политика в годы Первой мировой войны (1914-1917гг.), Москва, 2004, с.209.

Այս հարցում փոխարքայի հետ համամիտ էին ռուս դիվանագետները: Նման դիրքորոշումը, սակայն, չէին կիսում մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ եւ նախարարներ: Ի հաստատումը վերը նշվածի, Ա.Բախտուրինան վկայակոչում է 1911թ. վերջին ցարական իշխանությունների կողմից հորինված «Դաշնակցության գործը»:

Ապա հեղինակը ներկայացնում է 1912-1913թթ. հայկական բարենորոգումների խնդիրը, որտեղ առավել գործուն մասնակցություն է ունենում Ռուսաստանը:

Առաջին համաշխարհային պատերազմը հարկադրում է ցարական իշխանություններին վարել ազգային փոքրամասնություններին, այդ թվում հայերին, սիրաշահելու քաղաքականություն: Ռուսական կառավարության թույլտվությամբ կազմվում են հայկական կամավորական ջոկատներ: Օսմանյան Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո, կրկին օրակարգի հարց դարձավ Արեւմտյան Հայաստանի ապագայի հիմնախնդիրը: Ճիշտ է, Նիկոլայ 2-րդի եւ պաշտոնատար բարձրաստիճան անձանց կողմից տրվեցին մշուշապատ եւ անորոշ, ոչինչ չարժեցող խոստումներ՝ Արեւմտյան Հայաստանի ինքնավարության մասին, սակայն գործը դրանից այն կողմ չանցավ:

Ա.Բախտուրինան իր ուսումնասիրություններում բացահայտում է Ռուսաստանի նախարարների խորհրդում եւ Պետական դումայում որդեգրած հակահայ դիրքորոշումը: Ռուսական գործադիր եւ օրենսդիր մարմինների բուռն քննարկմանն են արժանանում Կովկասյան բանակի հաջող մարտական գործողությունները ռուս-թուրքական ռազմաճակատում: Այսպես, 1915թ. հուլիսի 30-ի նախարարների խորհրդի նիստում, մասնակիցների մեծ մասն իր անհանգստությունն ու տագնապն է հայտնում, որ ռուսական Կովկասյան բանակի հարձակման ուղղությունները ընտրվում են ելնելով ոչ թե ռազմական, այլ քաղաքական նպատակահարմարությունից: Կառավարության անդամների համոզմամբ, դա պայմանավորված էր փոխարքայի՝ հայերի նկատմամբ ունեցած համակրանքով: Հատկապես նշանակալի է Պետական խորհրդի անդամ Պ.Ա.Խարիտոնովի դիտողությունն այդ առիթով. «Քարտեզին (մարտական գործողությունների ՌՍ.) նույնիսկ հպանցիկ հայացք նետելով, երեւում է, որ զորքերի (ռուսական ՌՍ.) շարժումն ուղղված է գլխավորապես հայկական հողերի վրա: Առանց այդ էլ դրությունն ամենուր ծանր է, իսկ մենք դեռ այստեղ (Արեւմտյան Հայաստանում ՌՍ.) պետք է վտանգվենք հանուն Հայաստանի վերաստեղծման».[2]

Պետական դումայում, ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունները քննարկելիս, առավել արմատական դիրքորոշմամբ հանդես է գալիս պատգամավոր Ն.Ա.Ջխեիձեն: Նա ուղղակիորեն մեղադրում է փոխարքային՝ հայերին համակողմանի օժանդակություն ցույց տալու համար:

Ա.Բախտուրինան վկայակոչում է Ռուսաստանի նախարարների խորհրդի նախագահ Ի.Լ.Գորեմիկինի այն կարծիքը, թե «Հայաստանի ստեղծումը կարող է հետպատերազմյան շրջանում տարբեր բարդությունների աղբյուր հանդիսանալ»[3]: Միայն արտաքին գործերի նախարար Ս.Գ.Սազոնովը փորձեց փոքր ինչ մեղմել բորբոքված կրքերը: Նա առաջարկեց բարձրաձայն մտքեր չփոխանակել հայկական ինքնավարության վերաբերյալ կառավարության պլանների մասին, քանի որ «արտասահմանում, մեր դաշնակիցների շրջանում, հատկապես Անգլիայում վաղուց մեծ համակրանքով են վերաբերվում հայերի նկատմամբ»[4]: Ս.Գ.Սազոնովի նախազգուշացումը, սակայն, որեւէ արդյունք չունեցավ: Նիստի մասնակիցները որոշեցին այդ ամենի մասին զեկուցել Նիկոլայ 2-րդին:

1915թ. օգոստոսի 4-ին նախարարների խորհուրդը կրկին քննարկում է ռուս-թուրքական ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունները: Պ.Ա.Խարիտոնովի վկայությամբ, Դումայում կրքերը բորբոքվում են: Նա հետեւյալն է հաղորդում. «Ջխեիձեն համարյա ընկնում է հիստերայի մեջ եւ սպառնում անուղղելի դժբախտություններով: Իմ ներկայությամբ, ընդմիջման ժամանակ, նա Դումայում գոռում էր, որ կովկասյան բանակը ղեկավարում է ոչ թե Գերագույն գլխավոր հրամանատարը կամ էլ փոխարքան, այլ հայկական ցանցերում խճճված կոմսուհի Վորոնցովա-Դաշկովան»: «Իրականում, թող թույլ տրվի ասել, ո՞ւր ենք մենք գնում,- հարցնում էր Խարիտոնովը»: «Հայտնի է, թե ուր՝ մեծ Հայաստանի ստեղծմանը,- պատասխանեց Պոլիվանովը (զինվորական նախարար- ՌՍ.)»[5]:

[2] А.Ю.Бахтурина, նշվ. աշխ., էջ 217:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Ինչպես նշում է Ա.Բախտուրինան, Արեւմտյան Հայաստանի ապագայի վերաբերյալ քննարկումներ են տեղի ունենում դաշնակիցների հետ: Ե՛ւ ռուսական, ե՛ւ ֆրանսիական կողմը միասնական էին այն հարցում, որ հայերի զանգվածային ոչնչացումից հետո չի կարելի Արեւմտյան Հայաստանը թողնել Թուրքիայի գերիշխանության ներքո: Բանակցությունները հանգեցնում են նրան, որ 1916թ. գարնանը, դաշնակիցները միմյանց միջեւ բաժանում են օսմանյան կայսրության ասիական տիրույթները:

1916թ. հունիսի 8-ին Նիկոլայ 2-րդը հաստատում է Արեւմտյան Հայաստանի կառավարման ժամանակավոր կանոնադրությունը: Գեներալ-նահանգապետ է նշանակվում գեներալ-լեյտենանտ Պեշկովը:

Արեւմտահայ գաղթականների վերադարձը հայրենի օջախները հանդիպում է զինվորական իշխանությունների կողմից հարուցված զանազան արգելքների: Ավելին, 1915թ. ապրիլի 5-ին, Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն.Ն.Յուդենիչը փոխարքային ուղղված զեկուցագրում առաջարկել է գրավված տարածքներում հայերի փոխարեն բնակեցնել Դոնի եւ Կուբանի կազակներին[6]:

Ա.Բախտուրինան, քննարկելով ցարական կառավարության՝ Արեւմտյան Հայաստանում իրականացրած ազգային քաղաքականությունը, եզրակացնում է, որ դաշնակիցների հետ Ասիական Թուրքիայի բաժանման մասին համաձայնագրի կնքումը «հարկադրեց կառավարությանը (ռուսական - ՌՍ.) վերջնականապես հրաժարվել Հայաստանի միավորմանը աջակցելուց կամ էլ նրան (Արեւմտյան Հայաստանին - ՌՍ.) Ռուսական կայսրության կազմում ինքնավարություն տալով: Սկսվեց նախապատրաստվել Հայաստանի մի մասի միացումը Ռուսաստանին եւ, հնարավոր է անբնակ հողերի բնակեցումը՝ ռուս վերաբնակիչներով: Պատերազմի վերջում հայերի հիասթափությունը ռուսական քաղաքականության նկատմամբ լիակատար էր»[7]:

Ցանկանում ենք նշել Ա.Բախտուրինայի աշխատության մեջ տեղ գտած մի շարք կարեւոր բացթողումներ եւ թերություններ:

Հեղինակը իր ուսումնասիրությունում կրկնել է տարածված այն տեսակետը, թե Կովկասի փոխարքա Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը մշտապես հանդես է եկել հայամետ դիրքորոշմամբ:

Տարբեր աշխատություններից եւ աղբյուրներից արված վկայություններով եւ մեջբերումներով, Ա.Բախտուրինան փորձում է վերահաստատել տարածված թյուր տեսակետը: Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը ցարական փորձառու պաշտոնյա էր եւ Կովկասում իրականացնում էր ռուսական կառավարության գաղութային քաղաքականությունը: Ի տարբերություն մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների, փոխարքան Կովկասի ռուսականացումը կատարում էր շատ ավելի զգույշ, աշխատելով չբորբոքել տեղական ժողովուրդների ազգային զգացմունքները: Իսկ ինչ վերաբերում է այն փաստին, որ Ի.Ի.Վորոնցով-Դաշկովը «բարեհաճ» էր հայերի նկատմամբ, ապա այդ հանգամանքը բացատրվում է նրա ցանկությամբ՝ Օսմանյան Թուրքիայի հետ հնարավոր պատերազմի դեպքում եւ նեղուցներին տիրելու համար ստանալ հայերի աջակցությունը: Չմոռանանք, որ Ի.Ի.Վորոնցով-Դաշկովի օրոք էր, որ բռնկվեց 1905-1906թթ. հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները:

Ա.Բախտուրինան իր հետազոտությունում չի անդրադառնում ռուսական զորքերի կողմից Արեւմտյան Հայաստանում գրավված մի շարք շրջաններում քաղաքացիական իշխանություն ստեղծելու երկու օրինակի:

Այսպես, 1915թ. ապրիլի սկզբներին Կովկասյան IV կորպուսի հրամանատար, գեներալ Օգանովսկու մոտ են գործուղվում Պետական դումայի նախկին անդամ Ս.Տիգրանովը եւ գնդապետ Մահմեդ կամ Մահոմեդ Օմարը:

[5] Նույն տեղում, էջ 217-218:
[6] А.Ю.Бахтурина, նշվ. աշխ., էջ 223:
[7] Նույն տեղում, էջ 224:

Ս.Տիգրանովը գեներալի հրամանով նշանակվում է կորպուսի քաղաքացիական մասի լիազոր ներկայացուցիչ: Նրա պարտականությունն էր՝ փախստականների օգնության աշխատանքերի կազմակերպումը Բայազետի և Գիագինի շրջաններում, քայքայված տնտեսության վերականգնումը և այլն: Գնդապետ Մահմեդ Օմարը գործելու էր տեղի քուրդ բնակչության շրջանում[8]:

Հաջորդ օրինակը՝ Կովկասյան բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկյանի գլխավորությամբ Վանի ժամանակավոր նահանգապետության ստեղծումն էր: Ա.Բախտուրինան չի անդրադառնում ռուսական բանակի կազմում հայ կամավորական ջոկատների լուծարմանը, որը մեկ անգամ ևս վկայում է ցարական իշխանությունների հակահայ դրսևորման մասին: Իրականությանը չի համապատասխանում Ա.Բախտուրինայի կողմից բերված այն փաստը, որ 1915թ. փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Անդրանիկը սպառնացել է ռուսական իշխանություններին, որ եթե չկատարեն իրենց խոստումը Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու մասին, ապա «ինքը պատրաստ է... պայքարել նոր թշնամու դեմ (ռուսների - **Ռ.Ս.**), *եթե նա խոչընդոտ հանդիսանա հայկական ազատության համար»[9]:*

Նշենք, որ հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ Անդրանիկ Օզանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրության հեղինակ՝ ակադեմիկոս Հր.Սիմոնյանի աշխատությունում չկա նման որևէ հիշատակություն[10]:

Ա.Բախտուրինան սխալվում է, երբ Անդրանիկին անվանում է կամավորական ջոկատների ղեկավար[11]:

Հեղինակը սխալվում է, գրելով, որ ռուսները 1915թ. սկզբին գրավել են Էրզրումը, ապա Վանը[12]: Վանը, շնորհիվ քաղաքի հայ բնակչության հերոսական ինքնապաշտպանության, ռուսական բանակի առաջխաղացման նախօրեին, թուրքերից ազատագրվել է 1915թ. մայիսի 4-ին, իսկ Էրզրումը՝ ռուսները գրավել են 1916թ. փետրվարի 3-ին:

Ա.Բախտուրինան թերի է ներկայացրել գեներալ-նահանգապետ, գեներալ Պեշկովի, նրան փոխարինած գեներալներ Գյագինի, Ռոմանովսկի-Ռոմանկոյի գործունեությունը:

Նշենք, որ հեղինակը չի օգտագործել Ռուսաստանում հրատարակված և հիմնախնդիրը լուսաբանող մի շարք աշխատություններ, որոնցից կարելի է առանձնացնել՝ Ֆ.Ելիսեևի հուշերը[13] և Վ.Շամբարովի աշխատությունը[14]:

Կան նաև այլ թերություններ:

Գրքից մեջ բերված հատվածի (էջ 208-224) ծանոթագրությունները (N 250-296) հեղինակինն են: Ա.Բախտուրինան կազմել է նաև անվանական ցանկ (էջ 369-387), որտեղ ծանոթագրել է աշխատությունում նշված գործիչներին (ծանոթագրությունները թարգմանել ենք հայերեն - **Ռ.Ս.**): *Որոշ գործիչների ծանոթագրություններ լրացվել են մեր կողմից: Մեր կողմից կատարված ծանոթագրությունները նշել ենք գրախոսականի տողատակերում:*

Կարծում ենք, որ Ա.Բախտուրինայի աշխատությունը հետաքրքրություն կառաջացնի ոչ միայն պատմաբանների, այլև ընթերցողների լայն շրջանակներում:

Ռուբեն Սահակյան

---

8 Арутюнян А.О., Кавказский фронт 1914-1917гг., Е., 1971, с. 353-354. Նշենք, որ Ա.Բախտուրինան օգտվել է պատմական գիտությունների դոկտոր Ա.Հարությունյանի նշված աշխատությունից, սակայն անուշադրության է մատնել վաստակաշատ պատմաբանի բերած փաստերը -Ս.Ռ.:

9 А. Ю. Бахтурина, նշվ. աշխ., էջ 214-215:

10 Սիմոնյան Հր.Լ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա., Ե., 1996, էջ 424:

11 А.Ю.Бахтурина, նշվ. աշխ., էջ 214:

12 Նույն տեղում, էջ 215:

13 Елисеев Ф.И., Казаки на Кавказском фронте 1914-1917, М., 2001. Տե՛ս Ա.Մելքոնյան, Ուշագրավ աշխատություն. Ֆյոդոր Ելիսեև «Կազակները Կովկասյան ճակատում 1914-1917», «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, 2004, էջ 174-191:

14 Шамбаров Е.А., За веру, царя и Отечество! М., 2003.

պատմական գիտությունների
թեկնածու

АЛЕКСАНДРА ЮРЬЕВА БАХТУРИНА. ОКРАИНЫ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ: ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ И НАЦИОНАЛЬНАЯ ПОЛИТИКА В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1914-1917ГГ.)

ГЛАВА III

4. ВРЕМЕННОЕ ВОЕННОЕ ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРСТВО В ТУРЕЦКОЙ АРМЕНИИ И АРМЯНСКАЯ ПОЛИТИКА РОССИИ

Армянская политика Российской империи в начале XX в. претерпела существенные изменения, что нашло отражение в новых подходах к управлению Кавказским краем после назначения на пост наместника е.и.в. И.И.Воронцова-Дашкова. Его предшественники придерживались курса на ослабления общественно-политической активности армянского населения Кавказа. Воронцов-Дашков, приступив к исполнению обязанностей наместника в марте 1905г., считал, что сближения Кавказа с Империей можно достичь как за счет русской колонизации края, так и за счет поддержки отдельных народов, населяющих Кавказ. Он писал, что “культурное значение колонизации для края является важным и насущным”, в чем “нельзя не усматривать прочный залог дальнейших успехов русского дела на Кавказской окраине”.[250] Одновременно И.И.Воронцов-Дашков большое значение придавал поддержке отделных национальностей, среди которых предпочтение отдавал армянам. В письме Николаю II 10 октября 1912г. он писал: “Покровительствуя армянам, мы приобретали верных союзников, всегда оказывавших нам большие услуги”.[251] Воронцов-Дашков считал, что, если раньше власть поддерживала кавказских мусульман, то современная внешнеполитическая ситуазия требует переориентазии национальной политики на Кавказе. Армяне должны были стсть, по мнению анместника, союзниками России в борьбе за влияние в Малой Азии.

Кавказский наместник был не одинок, занимая позицию поддержки армян. К этому курсу постепенно склонялась российская дипломатия с конца XIXв. Усиление российского экономического, политического и военного влияния в Персии в целом и персидских областях, прилегающих к Турецкой Армении, в частности, заставили обратить внимание на армян как нацию, играющую довольно заметную роль во внутренней жизни Персии и Турции. Усиление позиций Германии в этом регионе, особенно после греко-турецкой войны и получения концессии на строительство Багдадской железной дороги, беспокоило Россию. Особую проблему для Российской империи представляло развитие железнодорожного строительства в Османской империи поблизости от русских границ. В 1893г. Россия заставила Германию отказаться от первоначального проекта вести Багдадскую дорогу в северном направлении к Эрзеруму вдоль армянских областей. Стремясь к безопасности кавказской границы государства, в 1900г. Россия добилась заключения соглашения с Турцией, запрещавшего строительство железных дорог в граничащих с Россией северных и северо-западных вилайетах.[252]

Армянофильская политика российской дипломатии была обусловлена текущими задачами обеспечения безопасности кавказской границы Империи, а также перспективой укрепления влияния Российской империи на Ближнем Востоке в целом. Взгляды российской дипломатии и кавказского наместника

далеко не всегда совпадали с позицией различных министерств, что проявлялось, в первую очередь, в политике в отношении армян на Кавказе.

В конце 1911 г. в Петербурге состоялся суд над лидерами партии "Дашнакцутюн".[253] К суду Особого присутствия Сената были привлечены около 160 человек по обвинению в принадлежности к нелегальному революционному обществу и в совершении террористических актов. Воронцов-Дашков считал, что этого делать не следует, чтобы не раздражать население.[254] Но в целом в Петербурге придерживались курса на максимальную русификацию управления Кавказом. В 1910г. в Тифлис прибыл министр юстиции И.Г.Шегловитов, который проверил состав судебных учреждений и потребовал удаления всех чиновников нерусской национальности. Одновременно был удален председатель тифлисской судебной палаты Кочубей за то, что при нем в судебных учреждениях на средние и низшие должности занимали представители местного населения.[255] Осособое внимание Шегловитов обратил не только на национальный, но и вероисповедный состав служаших по судебному ведомству на Кавказе. По его мнению, нельзя было допускать мусульман в состав присяжных поверенных поскольку "нравственные начала нехристианских исповеданий противоположны в своих главных основаниях христианской морали".

Наместник и его окружение не считали, что в кавказской администрации должны быть только русские. Более того, они признавали, что "туземцы в составе администрации, особенно на низших должностях не только полезны, но безусловно необходимы: знание условий края, бытовой стороны и местного языка делают их назначение неизбежным".[256] Суть вопроса, по мнению месных властей, заключалась в том, чтобы вести отбор и контроль за лицами, допущенными к административной деятельности, найти оптимальное соотношение в кавказской администрации русских и представителей местного населения. Это соотношение должно быть таково, чтобы не было преобладания коренного населения, чтобы его представители не допускались к высшим должностям. Но, как было сказано выше, такая зрения не встречала одобрения в Петербурге. Требовалась полная русификация аппарата. На этой почве накануне войны возникала масса трений между кавказской администрацией и высшими государственными учреждениями.

В 1909г. в Государственную Думу поступил запрос от правых националистов по поводу управления Кавказом. В.М.Пуришкевич, Марков 2-й обвиняли кавказского наместника и его администрацию в бездеятельности, попустительстве армянам. Авторы запроса добивались призрения деятельности наместника неудовлетворительной и предлагали подчинить управление Кавказом Совету министров. Запрос не был принят, и система управления Кавказом осталась прежней.

С конца XIXв. В Российской империи начинают обращать пристальное внимание на положение армян Западной Армении. Вопрос о положении Турецкой Армении был рассмотрен Россией, Англией, Францией, Германией зимой 1912-1913г. по инициативе России. Российская сторона настаивала на образовании единой армянской провинции из 6 вилайетов во главе с генерал-губернатором, который назначался султаном с согласия великих держав. Предусматривалось равное представительство от мусульман и немусульман в выборных органах, полиции и жандармерии и ряд других изменений. Российский проект подвергся критике германской стороны. Германский вариант ограничивал права армянского населения и возможности контроля европейских государств. В итоге был разработан компромиссный вариант проекта, который предусматривал деление Западной Армении на 2 сектора, каждый из которых управлялся генеральным инспектором. Инспектора назначались Турцией по рекомендации великих держав, Акт о

реформах в Западной Армении был подписан 8 февраля 1914г. С началом войны вопрос о реформах в турецкой Армении был снят. Дальнейшая ее судьба оказалась в прямой зависимости от исхода войны и послевоенного положения османской империи в случае победы Антанты.

С началом военных действий в Европе и до вступления в войну Турции в октябре 1914г. армянская общественность стремилась инициировать обсуждение армянского вопроса в Российской империи на правительственном уровне.

18 июля 1914г. католикос всех армян Кеворк V обратился к наместнику е.и.в. на Кавказе, в котором указывал, что проведение реформы на основании соглашения 8 февраля 1914г. не может удовлетворить армян, которые хотели бы, чтобы после войны административные реформы в Турции проводились по первоначальной российской программе под исключительным контрилем России.[257] Общее настроение армянского населения летом 1914г. было таково, что Воронцов-Дашков сообщал Горемыкину, что "армянское население прямо жаждет войны с Турцией".[258] Наместник е.и.в. на Кавказе считал, что России необходимо, с одной стороны, уверить армян при помоши правительственного заявления в том, что по окончании войны Россия проведет свою программу в Западной Армении. С другой, воинственные настроения армян, по мнению наместника, возможно было использовать в случае вступления в войну Турции, поддержав их оружием. 10 августа 1914г. Воронцов-Дашков обратился к военному министру Сухомлинову с просьбой выделить в распоряжение кавказского военного округа 25 тыс. винтовок и 12 млн. патронов для вооружения антитурецкого элемента в Турции.[259]

Предложения наместника не были одобрены Советом министров. Публикация правительственного заявления была одобраны Советом министров. Публиказия правительственного заявления была признана преждевременной. Раздались мнения также по вопросу о вооружении армян. Сама перспектива снабдить армян оружием возражения не вызвала, но некоторые министры были обеспокоены фактом активного участия в создании армянских отрядов на границе с Турцией партии Дашнакцутюн. Особую осторожность проявлял С.Д.Сазанов, который считал, что "в случае войны курды, армяне и айсоры модут нам, конечно, быть очень полезными", но "им, однако, ничего не предпринимать без нашего указания. Если бы они подняли восстание и затем не были бы нами поддержаны, то нашему престижу был бы нанесен непоправимый удар".[260] В итоге Совет министров не принял накакого определенного решения по предложениям Воронцова-Дашкова,[261] и осенью 1914г. наместник писал католикосу всех армян: "Требования армянской нации я передал председателю Совета министров Горемыкину, который сообщил, что русское правительство не сделает никаких уступок по армянскому вопросу в том смысле, что реформы в армянских губерниях в Турции должны быть введены по первоначальной программе и исключительно под контролем России. Считаю необходимым сообщить, что действия армян в нашей стране и по ту сторону границы в данной момент буть строго согласованы с нашими указаниями".[262]

С первых дней войны в печати началось обсуждение проектов восстановления армянской государственности. В первое время преобладало мнение о создании из 6 вилайетов Турецкой Армении и Киликии независимого армянского государства под суверенитетом Турции и протекторатом России. Эту позицию активно отстаивали дашнакские газеты "Оризон", "Арев", известный общественный деятель и публицист А.Дживилегов. В этом проявлялось недоверие к России армянских общественно-политических кругов. Высказываясь за суверенитет Турции, они подразумевали установление в

Անձնական ծագման փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման հերթական փուլում կատարվում է ըստ հիմնական խմբերի փաստաթղթերի համակարգում եւ դրանց նախնական (սկզբնական) վերլուծություն: Տիպային կամ օրինակելի ուրվագծի բաժիններին համապատասխան կատարվում է փաստաթղթերի խմբավորում, ապա դրանց շրջանակում՝ փաստաթղթերի համակարգում: Այսպես, խորհուրդ է տրվում ստեղծագործական փաստաթղթերն ու նյութերը (վեպերի, վիպակների, ակնարկների, չափածո երկերի եւ այլ ձեռագրերը) համակարգել ըստ հիմնական ստեղծագործությունների, իսկ եթե դրանք շատ են՝ ըստ ժանրերի, գիտական ուղղության եւ այլ հատկանիշների:

Հուշագրությունները համակարգվում են ըստ դրանց հիմնական (ավանդական) տեսակների (օրագրեր, հուշեր, գրառումների ծոցատետրեր եւ այլն):

Ծառայական ու հասարակական գործունեությանը վերաբերող փաստաթղթերը եւ նյութերը համակարգվում են ըստ այն կազմակերպությունների, որտեղ գործունեություն է ծավալել ֆոնդառաջացնողը:

Գրագրությունը համակարգվում է ըստ նամակների ու հասցեատերերի՝ երկու առանձին ենթախմբերով՝ ֆոնդառաջացնողի նամակները եւ նրան հասցեագրված նամակներ:

Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերը համակարգվում են ըստ փաստաթղթերի տեսակների, դրանց տիրակալության ու այլ հատկանիշների:

Անձնական ծագման փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման աշխատանքի հաջորդ փուլում կատարվում է փաստաթղթերի խմբավորում եւ դրանցից գործերի ձեւավորում: Դրա համար անհրաժեշտ է պարզել յուրաքանչյուր փաստաթղթի հեղինակին (կազմողի, իսկ նամակների առնչությամբ՝ նաեւ դրանց հասցեատիրոջ ինքնությունը), տարատեսակը, վերնագիրը (համառոտ բովանդակությունը), իսկությունը (բնագիր կամ պատճեն), վերարտադրման եղանակը (ձեռագիր, մեքենագիր, տպագիր, էլեկտրոնային եւ այլն), լրիվ կամ ամբողջական լինելը, հավելվածների առկայությունը եւ համանման այլ հարցեր:

Ձեւավորված գործերը նկարագրվում, նշագրվում եւ համակարգվում են հաստատված ուրվագծին համապատասխան: Այնուհետեւ աշխատանք է տարվում ֆոնդի հաշվառման-տեղեկատվական հիմնական ու օժանդակ փաստաթղթերի կազմման համար:

Անձնական ծագման արխիվային ֆոնդի հաշվառման-տեղեկատվական հիմնական փաստաթուղթը ֆոնդի գործերի ցուցակն է: Բացի այդ, որպես այդպիսիք կարող են կազմվել համակարգչային քարտեր (տվյալների ընդհանուր շտեմարանում գետեղման համար), ֆոնդի բնութագիր, տեսություն, պատմական տեղեկանք, ցուցակի նախաբան եւ այլն:

Փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման աշխատանքների ավարտից հետո կազմվում է գիտատեխնիկական մշակման ակտ, որը վավերացվում է արխիվի տնօրենի կողմից:

Մշակմամբ ավարտված արխիվային ֆոնդը (գործեր և կից տեղեկատուորոնողական ու հաշվառման փաստաթղթեր) սահմանված կարգով հանձնվում է արխիվապահոց՝ մշտական պահպանության: Ֆոնդի (գործերի) արխիվապահոց ընդունում-հանձնումը ձևակերպվում է սահմանված ձևի ակտով, որը ստորագրվում է հանձնող-ընդունողների կողմից և հաստատվում արխիվի տնօրենի կողմից:

4. Անձնական ծագման փաստաթղթերի համակարգումը ֆոնդի շրջանակներում՝ ըստ հիմնական խմբերի

Անձնական ծագման փաստաթղթերի համակարգման ուրվագիծը որոշվում է՝

- ֆոնդի տեսակով (անձնական, ընտանեկան, տոհմային)
- ֆոնդառաջացնողի գործունեության (զբաղմունքի) տեսակով
- ֆոնդի փաստաթղթերի տեսակով, դրանց գիտագործնական արժեվորությամբ ու լրիվությամբ:

Անձնական ծագման փաստաթղթերի համակարգման տիպային ուրվագիծը կարող է կազմվել հետևյալ բաժիններից՝

1. ֆոնդառաջացնողի կենսագրական փաստաթղթեր (նյութեր)
2. ծառայական և հասարակական գործունեության նյութեր
3. ստեղծագործական նյութեր
4. ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր
5. գրագրություն (թղթակցություն)
6. գույքային-տնտեսական նյութեր
7. փաստաթղթեր ֆոնդառաջացնողի մասին
8. կերպարվեստի նյութեր
9. ֆոնդառաջացնողի ընտանիքի անդամների (կին, երեխաներ, ծնողներ, քույրեր, եղբայրներ) մասին նյութեր
10. ֆոնդում այլ անձանց վերաբերյալ առկա նյութեր (ձեռագրեր, նամակներ, այլ փաստաթղթեր)
11. հավաքածուներ:

Ուրվագծի բաժինների անվանումները և հաջորդականությունը սահմանվում է, ելնելով ֆոնդառաջացնողի հիմնական գործունեության (զբաղմունքի) բնույթից և ֆոնդի փաստաթղթերի կազմից (հավելված   ):

4.1.«Կենսագրական փաստաթղթեր» բաժնի մեջ մտնում են փաստաթղթերի հետևյալ տեսակները՝ փաստաթղթեր (վկայականներ) ծննդյան, ամուսնության, մահվան, կրթության, գիտական աստիճաններ ու կոչումներ ստանալու մասին, ծառայական վկայական, պատգամավորական, անդամության, ընթերցողի տոմսեր, շքանշանների գրքույկներ, անկետա (անձնական թերթիկ), ինքնակենսագրություն, գործնական բնույթի գրառումների գրքույկներ և այլ փաստաթղթեր: Փաստաթղթերի այս խմբում կարող են ընդգրկվել նաև ֆոնդառաջացնողի աշակերտական տետրերը, ուսանողական մշակումները (կոնսպեկտներ) և այս կարգի այլ գրառումներ:

Տարբեր տեսակի ծառայական վկայականները, մանդատները, ընկերություններին, կազմակերպություններին ֆոնդառաջացնողի անդամակցելը փաստող վկայականները և այլն ներառվում են ծառայական և հասարակական գործունեության մասին փաստաթղթերի խմբում այն դեպքում, երբ այդ գործունեության վերաբերյալ ֆոնդում առկա են այլ փաստաթղթեր ևս:

Օրագրությունները, հուշերը, գրառումների գրքույկները, կախված դրանց բովանդակությունից, կարող են զետեղվել ինչպես կենսագրական, այնպես էլ ստեղծագործական նյութերի լրակազմերում: Իսկ եթե նշված բնույթի նյութերը բավական ծավալ են կազմում, ապա դրանք կարելի է միավորել առանձին ենթախմբում կամ պարզապես համակարգել կենսագրական կամ ստեղծագործական բնույթի փաստաթղթերից հետո:

4.2.«Ծառայական և հասարակական գործունեության փաստաթղթեր» բաժնին են վերաբերում զանազան կազմակերպություններում (ձեռնարկություններում, հիմնարկներում), ընտրովի պաշտոններում աշխատելու, հասարակական կազմակերպություններին ֆոնդառաջացնողի մասնակցության հետ կապված

փաստաթղթերը (զեկուցագրերի, հաշվետվությունների սևագրեր, հրամանների, արձանագրությունների պատճեններ, կանոնակարգեր, ծրագրեր, տարբեր անձանց խնդրագրեր, դիմումներ՝ հասցեագրված ֆոնդառաջացնողին և այդ կարգի այլ փաստաթղթեր ու նյութեր):

4.3.«Ստեղծագործական նյութեր» բաժնին են պատկանում նրա աշխատությունների (հասարակական-քաղաքական, գիտական, գրական, երաժշտական և այլն) ձեռագրերը՝ աշխատանքի տարբեր փուլերում (ծրագրեր, ուրվագծեր, սևագրեր, մաքրագրեր, հոդվածների արտատպումներ, շարվածասյուներ և այլն):

Գիտության և տեխնիկայի գործիչների, ժողովրդական տնտեսության, մշակույթի ոլորտների նշանավոր անձանց ֆոնդերում ստեղծագործական նյութերի շարքին են դասվում նաև քարտեզները, գծագրերը, ճարտարապետական նախագծերը, էտյուդները, էսքիզները, ուրվագծերը և այլն:

Ստեղծագործական նյութերի խմբին կարող են դասվել նաև ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութերը՝ բնօրինակ ու պատճեն փաստաթղթերը, այլ հեղինակների աշխատանքներից արտատպումները, քաղվածքները, մատենագիտական ցանկերը, թերթերից, ամսագրերից կտրածոները, գեղանկարչական նյութեր և այլն:

Համեմատաբար մեծ ծավալի դեպքում այդ փաստաթղթերն ու նյութերը կարող են կազմել առանձին խումբ:

Եթե ֆոնդառաջացնողի կողմից հավաքված նյութերի լրակազմում առկա են արտատպումներ, քաղվածքներ, կտրածոներ, գեղանկարչական բնույթի այլևայլ նյութեր, որոնք անմիջականորեն և (կամ) թեմատիկայով կապված չեն նրա աշխատանքների հետ, ապա դրանք առանձնացվում ու մեկտեղվում են հավաքված նյութերի խմբում:

4.4.«Գրագրություն»(թղթակցություն) շարքին են դասվում ֆոնդառաջացնողին հասցեագրված տարբեր անձանց նամակները, ինչպես նաև ֆոնդառաջացնողի նամակների սևագրությունները, հասցեատերերի կողմից ֆոնդառաջացնողին վերադարձված նամակները և այլն:

Այն դեպքում, երբ ֆոնդառաջացնողի ծառայական հարցերով գրագրությունը հստակորեն տարբերանշվում է մնացած անձնական գրագրությունից, նպատակահարմար է դրանք տեղադրել ֆոնդառաջացնողի ծառայական և հասարակական գործունեությանը վերաբերող նյութերի ու փաստաթղթերի խմբում:

Ֆոնդատիրոջը հասցեագրված ընծայագրերը (գրքերի շապիկի, տիտղոսաթերթի վրա) տեղադրվում են գրագրությունից անմիջապես հետո, կազմելով հատուկ խումբ կամ ենթախումբ:

4.5.«Գույքային-տնտեսական նյութեր» խմբի կազմում ի մի են հավաքվում ֆոնդառաջացնողի տնտեսական վիճակն ու նրա կյանքի նյութական պայմաններն արտացոլող փաստաթղթերը (գույքի առքուվաճառքի ակտեր, նվիրատվության, վարձակալության, ժառանգորդման ու դրանց տնօրինման վերաբերյալ փաստաթղթեր):

4.6. «Ֆոնդառաջացնողի մասին փաստաթղթեր» շարքին են դասվում նրա աշխատությունների վերաբերյալ գրախոսությունները և կարծիքները, դրանց քննարկումների արձանագրությունները և սղագրությունները, նրա մասին հուշագրություններն ու հոդված-հաղորդումները, ֆոնդառաջացնողի վերաբերյալ այլ հեղինակների գեղարվեստական ստեղծագործությունները և նրան նվիրված հոբելյանական ու այլ հավաք-հանդիսությունների (հուշ-երեկոներ, ցերեկույթներ, շնորհանդեսներ և այլն) կազմակերպման և անցկացման հետ կապված փաստաթղթերը, ֆոնդառաջացնողի հիշատակի հավերժացումը փաստող նյութերը, նրա ստեղծագործությունների հետմահու հրատարակության իրականացման առնչությամբ գրագրությունը, ֆոնդառաջացնողի մասին ու նրա ստեղծագործությունների մատենագիտությունը և համանման այլ նյութեր:

4.7. «Կերպարվեստի նյութեր» բաժնին են պատկանում լուսանկարները, նկարները, փորագրանկարները, բացիկները, ալբոմները և այլ նյութեր, որոնք հանդիսանում են ֆոնդի մյուս խմբերի կազմի մեջ մտնող փաստաթղթերի առդիրհավելվածներ (օրինակ՝ զեկուցագրի կամ ձեռագիր հոդվածի հավելվածներ, նամակների ներդիրներ և այլն):

4.8.«Ֆոնդառաջացնողի ընտանիքի անդամների վերաբերյալ փաստաթղթերը» տեղագրվում են հիմնական ֆոնդառաջացնողի փաստաթղթերի ու նյութերի ամբողջական լրակազմից հետո: Դրանք կարող են համակարգվել այն նույն խմբերով, ինչն ընդունվում է ֆոնդառաջացնողի փաստաթղթերի համակարգման համար:

4.9.«Ֆոնդում այլ անձանց վերաբերյալ առկա նյութեր» խմբի մեջ մտնում են տարբեր մարդկանց ձեռագրեր, նամակներ եւ այլ փաստաթղթեր, որոնք իրենց կազմով չեն կարող դասվել ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութերի շարքին: Կախված խմբի փաստաթղթերի կազմից, դրանք կարող են համակարգվել հեղինակային, թեմատիկ, ժամանակագրական եւ այլ հատկանիշներով:

4.10. «Հավաքածուներ» ընդունված է կոչել անձնական ծագման ֆոնդերի փաստաթղթային լրակազմի բաղկացուցիչ մաս կազմող ֆոնդառաջացնողի կողմից իրեն հետաքրքրող թեմաների ու հարցերի վերաբերյալ հավաքված փաստաթղթերի ու նյութերի ամբողջությունը: Անձնական ծագման ֆոնդերի լրակազմում առկա կարող են լինել տարատեսակ պատմական սկզբնաղբյուրներից, կերպարվեստի նյութերից ու այլեւայլ անձանց փաստաթղթերից գոյացած հավաքածու նյութեր, որոնց մեծ ծավալի դեպքում նպատակահարմար է կազմել առանձին ցուցակ:

Պետական եւ հասարակական գործիչների, նաեւ տնտեսության ոլորտի գործիչների ֆոնդերում արժեքավոր են հատկապես նրանց ծառայական եւ հասարակական գործունեությունն արտացոլող փաստաթղթերը: Ուստի այդպիսի անձնական արխիվային ֆոնդերում փաստաթղթերի նշված ենթահամալիրը գրվում է սկզբում:

Գիտության ու մշակույթի գործիչների ֆոնդերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանց ֆոնդառաջացնողները իրենց գործունեության առումով առավելապես ստեղծագործական աշխատողներ են: Վերջիններիս ֆոնդերում փաստաթղթային կազմում ստեղծագործական նյութերը հատուկ կարեւորություն ու արժեք են ներկայացնում եւ ուսումնասիրողների կողմից ինքնուրույն հետազոտության առարկա (խնդիր) են հանդիսանում:

Ստեղծագործական նյութերը, սովորաբար գրվում են մյուս բոլոր փաստաթղթային խմբերից առաջ:

Գիտության եւ մշակույթի գործիչների ֆոնդի համակարգման ուրվագիծը կարող է կազմվել հետեւյալ բաժիններից՝

- ստեղծագործական նյութեր, հուշագրություններ, օրագրություններ, գրառումների գրքույկներ
- գիտական, գրական-գեղարվեստական գործունեության փաստաթղթեր ծառայական եւ հասարակական գործունեության փաստաթղթեր
- կենսագրական փաստաթղթեր
- գրագրություն (նամականի)
- գույքային-տնտեսական փաստաթղթեր
- փաստաթղթեր ու նյութեր ֆոնդառաջացնողի մասին
- ազգականների փաստաթղթեր
- կերպարվեստի փաստաթղթեր ու նյութեր
- հավաքածուներ:

Փաստաթղթերի համակարգման ուրվագծի բաժինների անունները ու հաջորդականությունը սահմանվում է ելնելով կոնկրետ ֆոնդի փաստաթղթային կազմից (տես հավելված):

Ճարտարագետների, կոնստրուկտորների, ճարտարապետների եւ նման կարգի այլ անձնական ֆոնդերի կազմում առկա կերպարվեստի փաստաթղթերի խմբին դասվում են միայն ֆոնդառաջացնողների ստեղծագործության հետ առնչություն չունեցող փաստաթղթերն ու նյութերը (անձնական ու ընտանեկան լուսանկարներ, այլ անձանց բացիկներ, նկարներ, գծագրեր եւ այլն):

5. Ընտանեկան եւ տոհմի ֆոնդերի փաստաթղթերի համակարգումը

Ընտանեկան եւ տոհմի ֆոնդերի կազմում ներառված փաստաթղթերը, որոնցով բնութագրվում է ընտանիքի (տոհմի) յուրաքանչյուր ներկայացուցչի գործունեությունը, համակարգվում են ըստ անձերի (տես հավելված 10):

Ընտանեկան ֆոնդերում սկզբում գրվում են հիմնական (գլխավոր) ֆոնդառաջացնողի փաստաթղթերը, ապա ըստ ազգակցական կապի հաջորդականության տեղաբաշխվում են ընտանիքի անդամների փաստաթղթերը:

Ընտանիքի կամ տոհմի անդամների փաստաթղթերը համակարգվում են տարբերակված ուրվագծերով, ելնելով նրանցից յուրաքանչյուրի փաստաթղթերի կազմից ու բովանդակությունից:

Տոհմի ֆոնդում փաստաթղթերը համակարգվում են ընտանիքների ծագումնաբանական հաջորդականությամբ: Ամբողջ տոհմին վերաբերվող փաս-տաթղթերը (ծագումնաբանական աղյուսակներ, տոհմածառ եւ այլն) տեղագրվում են ֆոնդի սկզբում:

Անձնական գրագրությունը համակարգվում է ըստ հասցեատերերի եւ կցվում յուրաքանչյուր անդամի մնացած փաստաթղթերին: Այն դեպքում, երբ ընտանեկան գրագրությունը հնարավոր չէ տարանջատել ըստ հասցեատերերի, կամ էլ այն հասցեագրված է ընտանիքի մի քանի անդամներին միաժամանակ, գրագրությունը ներառվում է ազգակցական կապի առումով ավագ անձի նամականու շարքում, իսկ եթե այդպիսիք մեծ քանակ են կազմում՝ տրվում են առանձին խմբով:

Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերը ընտանեկան ու տոհմի ֆոնդերում կազմում են մեկ առանձին միասնական խումբ, եթե հնարավոր չէ դրանք տարանջատել ըստ անձերի:

Ընտանեկան կամ տոհմի ֆոնդի փաստաթղթերի համակարգման տիպային (օրինակելի) ուրվագիծը կարող է կազմվել հետեւյալ բաժիններից՝

- տոհմի (ընտանիքի) պատմության վերաբերյալ փաստաթղթեր
-ընտանիքի (տոհմի) անդամների անձնական ֆոնդեր (անձանց ժամանակագրական հաջորդականությամբ)
- ամբողջ ֆոնդի համար ընդհանրական փաստաթղթեր՝ ընտանեկան գրագրություն, կերպարվեստի նյութեր, հավաքածուներ եւ այլն:

6. Գործերի ձեւավորումը եւ տեխնիկական ձեւակերպումն ըստ փաստաթղթերի հիմնական խմբերի (բաժինների)

Ինչպես ընդհանուր, այնպես էլ անձնական ծագման ֆոնդերում նկարագրման ու հաշվառման հիմնական միավոր է հանդիսանում ֆիզիկապես զատված գործը, որը կարող է ձեւավորվել՝

- մեկ առանձին փաստաթղթից
- հեղինակային, թղթակցային, աշխարհագրական կամ այլ հատկանիշով միավորված փաստաթղթերի (նյութերի) խմբից: Վերոնշյալ հատկանիշներից յուրաքանչյուրը գործերի ձեւավորման հիմքում կարող է դրվել ինքնուրույնաբար, կամ համապատասխան այլ հատկանիշների հետ զուգակցված:

Այս կամ այն խմբի (բաժնի) շրջանակներում ֆոնդի փաստաթղթերից գործերի ձեւավորումը նպատակ ունի ապահովելու դրանց պահպանությունը եւ օգտագործման հարմարավետությունը:

Որոշակի հիմունքով համակարգված փաստաթղթերից ու նյութերից գործեր ձեւավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել ֆոնդառաջացնողի հանրածանոթ լինելը եւ, որ շատ ավելի կարեւոր է, փաստաթղթերի արժեքավորության հանգամանքը: Այսպես, պետական, հասարակական, գիտության, մշակույթի եւ որոշ այլ ոլորտների գործիչների անձնական ծագման արխիվային ֆոնդերում գործերը ձեւավորվում են նաեւ քիչ քանակությամբ փաստաթղթերից: Գործերի ծավալը չպետք է գերազանցի 100 թերթից, իսկ առանձնապես արժեքավոր ձեռագրերից ձեւավորված մեկ միավորինը՝ 40-50 թերթից, բնօրինակ գծագրերից, նկարներից եւ նման այլ փաստաթղթերից կազմվող գործերինը՝ 10-15 թերթից: Եթե գործերի փաստաթղթերի թերթերի քանակը գերազանցում է վերոհիշյալ թերթերը, դրանք բաժանվում են երկու կամ ավելի գործերի՝ թեմատիկ կամ ժամանակագրական հաջորդականության կարգով:

6.1.Գիտության եւ մշակույթի բնագավառի գործիչների ստեղծագործական նյութերից գործերը ձեւավորվում են տարբերակված մոտեցմամբ՝ նկատի ունենալով ֆոնդառաջացնողի գործունեության բնույթը (ոլորտը) եւ արդյունքում

առաջացած փաստաթղթերի ժանրային ու տեսակային պատկանելությունը: Օրինակ՝ փոքր ժանրի յուրաքանչյուր ստեղծագործություն կարող է առանձին (ինքնուրույն) գործ դառնալ կամ թեմատիկ, ժամանակագրական սկզբունքով միավորվել մեկ գործի կազմում:

Օրինակ՝ 1. Ս.Խանզադյանի «Գիրքը և մարդը» հոդվածը կամ «Իմ գրքի հերոսը» հոդվածը
2. Ս.Խանզադյանի հոդվածները՝ նվիրված Գուսան Աշոտին
3.Զ.Կիրակոսյանի «Միքայել Նալբանդյան» հեռուստատեսային գիտահանրամատչելի ֆիլմի սցենարը:

Մեծածավալ ստեղծագործությունները ինքնուրույն գործ են դառնում: Թերթերի քանակը, սահմանվածից ավելին (150-200 թերթ) լինելու դեպքում դրանք բաժանվում են մասերի (հատորների), յուրաքանչյուրը կազմելով առանձին գործ:

Օրինակ՝ 1. Ա.Քալանթարյան՝ «Մարաթոն», վեպ
2. Ա.Սահինյան՝ «Խաչուղիներ», վեպ, առաջին մաս
3. Նույնը՝ երկրորդ մաս:

Նույն անվամբ տարբեր ժանրի ստեղծագործություններից ձևավորվում են առանձին գործեր:

Օրինակ ՝ 1. Ս.Խանզադյան «Մխիթար Սպարապետ», վեպ
2. «Մխիթար Սպարապետ» կինոսցենար

Տարբեր գրողների (հեղինակների) ստեղծագործություններից կատարված թարգմանություններից գործերը ձևավորվում են ըստ հեղինակների: Այս առումով բացառություն են կազմում մեկ ժողովածուի համար կատարված թարգմանությունները:

Օրինակ՝ 1. Մ.Գրիգորյան. Ալ.Պուշկինի «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» ստեղծագործության թարգմանությունը (ռուսերենից)
2.Գ.Բորյան.թարգմանություններ Վ.Զվյագինցևայի «Ձմեռային աստղեր» բանաստեղծությունների ժողովածուից
3.Կ.Սիմոնովի «Բարեկամներ և թշնամիներ» ժողովածուից (ռուսերեն) Գ.Բորյանի կողմից թարգմանված բանաստեղծությունների հավաքածու:

Ֆոնդառաջացնողի ստեղծագործություններից թերթերի կտրածոները ամփոփվում են մեկ գործում՝ըստ ժանրերի կամ ժամանակագրական կարգով:

Օրինակ՝ 1.Զ.Բալայան. «Երկնագույն ճանապարհ» ուղեգրությունից հատվածներ, թերթային կտրածոներ
2.Գ.Մեղնիկյան. Հոդվածներ նյարդային հիվանդությունների բուժման մասին: Կտրածոներ «Կավկազսկայա զդրավնիցա» թերթի 1971-1978թթ. համարներից:

Հեղինակի որևէ ստեղծագործության ձեռագիրը (աշխատանքի տարբեր փուլերում ստեղծված տարբերակներով, խմբագրություններով հանդերձ) կազմում է մեկ գործ:

Յուրաքանչյուր տարվա գրառումների 3 գրքույկից (ծոցատետր) կազմվում է մեկ գործ.

Օրինակ՝ Ա.Սարոյան, գրառումների գրքույկներ, 1976թ.: Քաղվածքներից, սևագիր գրառումներից գործերը ձևավորվում են ըստ թեմատիկայի կամ ստեղծագործությունների և փաստաթղթերի տեսակների:

Օրինակ՝ 1.Պատմության և մշակույթի հուշարձանների լուսանկարներ
2.Հավաքած նյութեր (քաղվածքներ թերթերից, ամսագրերից, գրառումներ և այլն) «Հայրենապատում» գրքի համար:

Ֆոնդառաջացնողին հետաքրքրած և իր աշխատանքների համար օգտագործված տպագիր նյութերը (գրքեր, ամսագրեր, թերթեր և այլն) կարելի է

զետեղել ֆոնդի փաստաթղթերի համապատասխան «ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր» բաժնում:

6.2. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթերից ու նյութերից գործերը ձևավորվում են առավելապես թեմատիկ կամ ժամանա-կագրական սկզբունքով: Գործնականում կիրառելի է նաև անվանական հատկա-նիշի հիման վրա գործերի ձևավորումը: Եթե ֆոնդառաջացնողի կենսագրու-թյանն առնչվող փաստաթղթերը մեծ ծավալ չեն կազմում, ապա կարելի է դրանք միավորել մեկ գործի մեջ:

6.3. Ծառայական և հասարակական գործունեությունն արտացոլող փաստաթղթերից գործերը ձևավորվում են առավելապես թեմատիկ սկզբունքով: Սակայն գործնականում չի բացառվում նաև այդ շարքի փաստաթղթերից գործերի ձևավորման համար հեղինակային, անվանական, աշխարհագրական, ժամանա-կագրական և այլ հատկանիշների առանձին-առանձին կամ դրանց զուգակցման սկզբունքի կիրառումը:

Օրինակ՝ 1. ՀՀ կառավարությանն առընթեր գլխավոր արխիվային վարչության պետ Ա.Հարությունյանի զեկուցումը Հոբելյանական գիտաժողովին՝ Հանրապետությունում արխիվային գործի արդի վիճակի և նրա զարգացման հիմնական ուղղությունների մասին
2. Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա.Վիրաբյանի զեկուցումը ՀՀ արխիվային գործի 2003թ. ծրագրերի կատարման արդյունքների և 2004թ. առանցքային խնդիրների մասին:

Մեկ կազմակերպությունում (հիմնարկում) ֆոնդառաջացնողի գործունեությունն արտացոլող փաստաթղթերի ոչ մեծ ծավալի դեպքում դրանք կարող են խմբավորվել մեկ գործի մեջ:

Օրինակ՝ փաստաթղթեր (զեկուցագրեր, հաղորդումների, ելույթների տեքստեր, ծրագրեր և այլն) ՀԽՍՀ պատմական պետական կենտրոնական արխիվում Ա.Սարգսյանի (բաժնի վարիչ) գործունեության մասին:

6.4. Ֆոնդառաջացնողի թղթակցության (գրագրության) գործերը ձևավորվում են ըստ թղթակիցների: Ֆոնդառաջացնողի նամակները (տարբեր թղթակիցների կողմից, որոնք կարող են լինել հասցեատերերին չուղարկված, ետ վերադարձված, սևագիր նամակներ) և ֆոնդառաջացնողին թղթակիցների հասցեագրած նամակներից ձևավորվում են առանձին գործեր: Նամակների մեծ թվի դեպքում դրանք խմբավորվում են ժամանակագրական կարգով՝կազմելով մասեր:

Օրինակ՝ 1. Ա.Քալանթարյանի նամակները (սևագրեր, պատճեններ, ձեռագիր, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն) 1963-1970թթ.
2. Նույնը՝ 1971-1978թթ. (ձեռագիր, հայերեն, հունարեն):

Մեկ գործի մեջ կարելի է զետեղել ֆոնդառաջացնողի և իր թղթակիցներից ստացած նամակները:

Օրինակ՝ Նամակագրություն (գրագրություն) Ն.Տեր-Միքայելյանի և իր հարազատների միջև 1972թ.:

Տարբեր թղթակիցների՝ նույն հարցի մասին նամակներից գործերը ձևավորվում են թեմատիկ սկզբունքով:

Օրինակ՝ Ընթերցողների նամակներ Զ.Կիրակոսյանին՝ նրա «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» աշխատության մասին

Նամակներին առդիր փաստաթղթերը (լուսանկարներ, բացիկներ, ծրագրեր և այլն) հիմնական փաստաթղթերից չեն առանձնացվում և վերջիններիս հետ կազմում են մեկ գործ: Հավելվածների առկայությունը և դրանց կազմն ու բովանդակությունը համառոտակի ծանոթագրվում են գործի վերնագրում:

Օրինակ՝ 1. Ստ. Զորյանի նամակը Նար-Դոսին (1928թ.) Առկա է Նար-Դոսի մեկ թղթակցության լրագրային կտրածոն:
2. Կ.Սմբատյանի նամակը Կ.Սիմոնյանին (1987թ.)

Կա նաև ընծայագրով մեկ ճեպանկար:

Անձը չճշտված թղթակիցներին ֆոնդառաջացնողի նամակները միավորվում են մեկ գործի մեջ, կատարելով «Անձը ճշտված չէ» կամ «Անձը հայտնի չէ» նշումները:

Օրինակ՝ 1. Ս.Հարությունյանի նամակները (թղթակցի (կամ թղթակիցների) անձը ճշտված չէ)
2. Պ.Սևակի նամակը Վահեին (անձը հայտնի չէ):

Այցեքարտերը միացվում են նամակներին (եթե ֆոնդում առկա են տվյալ թղթակցի նամակներից) կամ (եթե թղթակիցը ֆոնդում նամակ չունի) այբբենական կարգով խմբավորվում են մեկ գործի մեջ:

Նամակներից գործեր ձևավորելիս դրանց ծրարները առանձնացվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ թղթակցի անունն ու ազգանունը և (կամ) հասցեն, փոստային առաքման թվագրումը և այլն կարելի է պարզել միայն ծրարի վրա կատարված նշումներից: Նման դեպքերում ծրարը (կամ դրա համապատասխան հատվածը) կցվում է նամակին: Այցեքարտերից ձևավորված գործերը դրվում են «Նամակներ» խմբի վերջում:

6.5. Անձնական ծագման ֆոնդերում որոշակի ծավալ են կազմում նաև ընծայագրերը: Սովորաբար ընծայագրվում են գրքերը, նոտաները, բրոշյուրները, ազդագրերը, լուսանկարները, համացանկերը (կատալոգ), բուկլետները և այլն:

Գործերի անհարկի մանրացման դեպքերը բացառելու համար թույլատրվում է տարբեր մարդկանց ընծայագրերից ձևավորել մեկ գործ՝ դրա համար ներքին ցուցակ կազմելու պայմանով: Ներքին ցուցակը կազմվում է ընծա-յագրողների ազգանունների այբբենական կարգով:

Օրինակ՝ Մշակույթի ընագավառի գործիչների ընծայագրով բուկլետներ
09.12.59
12.03.73
Տե՛ս ներքին ցուցակը 24 թերթ

Ընծայագրերով գրքերի տիտղոսաթերթերից կամ դրանց պատճեններից կազմված գործերը (եթե ուրվագծով դրա համար հատուկ բաժին չի նախորոշված) դրվում են գրագրության (նամակների) բաժնի վերջում:

6.6. Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերն ու նյութերը գործե-րի մեջ խմբավորվում են անվանական կամ թեմատիկ հատկանիշով: Փաս-տաթղթերի քիչ ծավալի դեպքում նման բնույթի փաստաթղթերը միանում են «Կենսագրական բնույթի փաստաթղթեր» խմբին: Ձևավորված գործերը համակարգվում են ժամանակագրական կարգով:

6.7 «Փաստաթղթեր ֆոնդառաջացնողի մասին» խմբի նյութերից գործերը ձևավորվում են անվանական, թեմատիկ կամ հեղինակային հատկանիշով:

Օրինակ՝ 1.Գրախոսություններ, կարծիքներ Յու.Լալայանի «Գործավարության հիմունքները» ուսումնական ձեռնարկի մասին:
2.Փաստաթղթեր (նամակներ, ողագրություններ, հրավիրատոմսեր,հեռագրեր և այլն) գիտության վաստակավոր գործիչ Ա.Հարությունյանի հիշատակի հավերժացման ու մեծարման մասին:
3. Ա.Գրիգորյանի նամակը Ա.Քալանթարյանի այրուն՝ ամուսնու մահվան տարելիցի կապակցությամբ

6.8. «Կերպարվեստի նյութեր» շարքի փաստաթղթերից գործերը ձևավորվում են անվանական (ըստ փաստաթղթերի տեսակների), թեմատիկ սկզբունքով՝ ֆոնդառաջացնողի դիմանկարներ, մշակույթի ոլորտի գործիչների խմբանկարներ, ընկերական շարժեր (կատականկարներ) և այլն:

Ֆոնդառաջացնողի անհատական լուսանկարներով գործի մեջ ժամանակագրական սկզբունքով ընդգրկվում են ոչ ավելի, քան 20 լուսանկար: Մեկ գործի մեջ ընդգրկվող (ցանկացած սկզբունքով) խմբանկարների թվաքանակը չպետք է անցնի 10-ից, իսկ հարազատների, ծանոթ-բարեկամների լուսանկարների քանակն առանց ընծայագրերի՝ 30-ից, ընծայագրերովը՝ 5-ից:

Նշանավոր գործիչների գործերը ձևավորվում են ոչ մեծ թվով լուսանկարների մեկտեղումով (մեկ գործում՝ 5-6 լուսանկար): Միանշանակ է, որ գործի կազմում ներառված լուսանկարների քանակով պայմանավորված է վերնագրի լիարժեքությունը:

Օրինակ՝ 1. Ա.Քալանթարյանի անհատական լուսանկարները
1965-1989թթ., 18 հատ
2. Ա.Քալանթարյանը Մ.Կալատոզովի, Խ.Աբրահամյանի, Հ.Սահյանի և այլոց հետ խմբանկարներում:
1960-1990, 10 հատ:
3.Ա.Քալանթարյանին ներկայացնող կատականկարներ՝ նկարված Գ.Յարալյանի և ուրիշների կողմից
1965-1970թթ., 12 հատ:

Խմբի շրջանակներում գործերի համակարգումը կատարվում է առավելապես ժամանակագրական կարգով:

Անհայտ (չճշտված) անձանցով լուսանկարները սովորաբար միավորվում են մեկ գործի մեջ և տեղադրվում բաժնի վերջում:

6.9. «Հավաքածուներ» խմբում գետեղված փաստաթղթերից և նյութերից գործերը (կախված դրանց կազմից ու բովանդակությունից) ձևավորվում են հեղինակային, ժամանակագրական, աշխարհագրական, թեմատիկ և այլ սկզբունքներով: Ինքնագրերից գործերի կազմումը կատարվում է ըստ հեղինակների, կոչերից ու թռուցիկներից՝ դրանք արձակող կազմակերպությունների: Հավաքածուի կազմում առկա կերպարվեստի նյութերից գործերը ձևավորվում են ըստ դրանց թեմատիկայի, հեղինակների, ժանրերի, օբյեկտների, տարածքների և այլ հիմունքներով: Նման գործերի նվազ քանակության դեպքում հատուկ բաժին չի ստեղծվում, այդ գործերը տեղադրվում են բնույթով մոտիկ՝ «ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր» բաժնում:

7. Փաստաթղթերի համակարգումը գործերի ներսում

Գործերի ներսում փաստաթղթերը համակարգվում են, հաշվի առնելով դրանց բովանդակային (թեմատիկ) առումով փոխկապվածությունն ու ժամանակագրական հաջորդականությունը:

Ֆոնդի պարունակությունը կազմող կենսագրական, ծառայական և հասարակական գործունեության վերաբերյալ, ինչպես նաև գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերից ձևավորված գործերի ներսում փաստաթղթերը համակարգվում են ժամանակագրական կարգով:

Գիտության, մշակույթի գործիչների աշխատանքների (ստեղծագործությունների) ձեռագրերը և դրանց սևագրերն ու հեղինակային և խմբագրական տարբերակները գործի մեջ զետեղվում են հեղինակի համապատասխան աշխատության (ստեղծագործության) ժամանակագրական հաջորդականության կարգով:

Տարբեր հեղինակների ստեղծագործությունների (աշխատությունների) ձեռագրերի միատեղմամբ ձևավորված գործերի ներսում փաստաթղթերը համակարգվում են դրանց հեղինակների ազգանունների այբբենական կարգով, իսկ ազգանունների բացակայության դեպքում ձեռագրերի համակարգումը կատարվում է ժամանակագրական կարգով կամ ձեռագրերի (երկ, հոդված և այլն) անունների այբբենական հերթականությամբ:

Նույն հեղինակի մի քանի աշխատանքների (ստեղծագործությունների) ձեռագրերից կազմված գործի փաստաթղթերը համակարգվում են ժամանակագրական կարգով:

Նամակներից ձևավորված գործերի շրջանակներում փաստաթղթերը համակարգվում են ժամանակագրական կարգով: Անթվակիր նամակները (նամակներ, որոնց թվագրումը բացակայում է և հնարավոր չէ ստույգ կերպով պարզել) զետեղվում են թվագրումով գրագրությունից հետո:

Չբացահայտված անձանց նամակների գործի ներսում համակարգումը կատարվում է ըստ դրանց ձեռագրային նմանության: Նույն ձեռագրով նամակները դասավորվում են ժամանակագրական հերթականությամբ:

Կերպարվեստի խմբի նյութերից կազմված միավորների ներսում փաստաթղթերը համակարգվում են ժամանակագրական կարգով, իսկ անթվակիր լինելու դեպքում՝ ըստ անունների այբբենական հերթականության:

Գործերի փաստաթղթերի համակարգումն ամրապնդելու եւ դրանց պահպանությունն ապահովելու նպատակով, թերթերը համարակալվում են աճող հերթականությամբ: Թերթերի հաջորդական համարները դրվում են փաստաթղթերի վերին աջ անկյունում, իսկ լուսանկարներինը, կերպարվեստի այլ տեսակի նյութերինը՝ դրանց շրջերեսի վերին ձախ անկյունում:

8. Գործերի նկարագրումը

Անձնական ծագման ֆոնդերի գործերի նկարագրման համար վերհանվում են հետեւյալ տվյալները՝ փաստաթղթի հեղինակը կամ սեփականատերը, փաստաթղթերի տեսակները (ստեղծագործության ժանրը), վերնագիրը կամ համառոտ բովանդակությունը, տեքստի իսկությունը (բնօրինակ կամ պատճեն), լրիվ կամ թերի լինելը, լեզուն, վերարտադրման եղանակը (ձեռագիր, մեքենագիր, տպագիր), փաստաթղթի հրապարակվածությունը, կից հավելվածների առկայությունը, գործի մեջ ամփոփված թերթերի քանակը, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ փաստաթղթերի քանակը: Բացի այդ, առանձնակի կարեւոր փաստաթղթերը կարող են նաեւ ծանոթագրվել:

Փաստաթղթերի բովանդակության նկարագրումը կատարվում է ՀՀ պետական լեզվով: Միաժամանակ անհրաժեշտ է փաստաթղթերի նկարագրումը կատարել արդի ուղղագրությամբ, պահպանել նկարագրման եղանակների (ոճաձեւերի) միասնականությունը, խուսափել հնաոճ արտահայտություններից, տրաֆարետային ձեւակերպումներից:

Բառերը, որպես կանոն, գրվում են լրիվ, բացառությամբ համընդհանուր ճանաչում ստացած հապավումներից («թ.»՝ թվական, «ֆ.»՝ ֆոնդ, «ց.»՝ ցուցակ եւ այլն):

Գործի հիմնական տարրերն են՝

- գործը կազմող փաստաթղթերի տեսակի նշումը,
- փաստաթղթի հեղինակի (անձ, կազմակերպություն) կամ սեփականա-տիրոջ ազգանունը, անունը, հայրանունը (կամ՝ անվան, հայրանվան սկզբնա-տառերը),
- այն անձի ազգանունը եւ անվան ու հայրանվան սկզբնատառերը կամ հիմնարկի, կազմակերպության անունը, ում (որին) ուղղված է փաստաթուղթը,
- փաստաթղթի բովանդակության (հարց, թեմա, ստեղծագործություն եւ այլն) շարադրումը:

Վերնագրի բաղադրատարրերի դասավորության հաջորդականությունը կարող է փոփոխվել՝ կախված նկարագրվող փաստաթղթ(եր)ի (նյութ(եր)ի) բնույթից, տեսակից եւ այլն:

Այսպես, բովանդակության ընդհանրության հատկանիշով միավորված տարատեսակ փաստաթղթերից բաղկացած գործի վերնագիրը ձեւակերպելիս կարելի է վերնագրի սկզբում օգտագործել «փաստաթղթեր» բառը, ապա փակագծում թվարկել դրանց մի քանի կարեւոր տարատեսակները, այնուհետեւ թույլ տալ դրանց ընդհանրական հարցը, բովանդակությունը:

Հեղինակի, խմբագրի կողմից փաստաթղթին տրված վերնագիրը, որպես կանոն, տեղափոխվում է որպես գործի վերնագիր: Այն դեպքում, երբ հեղինակային վերնագրի տեքստը հստակ չէ ու լիարժեքորեն չի արտացոլում գործի մեջ ամփոփված փաստաթղթի բովանդակությունը, այն պետք է լրացվի, ճշգրտվի ու հստակեցվի:

Օրինակ՝ Ս.Սուրենյանին Մովսես Խորենացու անվան հուշամեդալով պարգեւատրման ներկայացնելու մասին:

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի միջնորդագիրը ՀՀ վարչապետին՝ գրականագետ Ս.Սուրենյանին Մովսես Խորենացու անվան հուշամեդալով պարգեւատրման ներկայացնելու մասին:

Եթե փաստաթղթի հեղինակը առանձին ֆիզիկական (ոչ պաշտոնատար) անձ է, ապա վերնագրում հարկ է նշել նրա եւ թղթակցի ազգանունը եւ անունը, առանձին դեպքերում (ըստ անհրաժեշտի) նաեւ պաշտոնը:

Օրինակ՝ Հակոբ Քոչարյանի նամակները Համո Օհանջանյանին Պոլսի հայ պատվիրակության գործունեության հետ կապված խնդիրների մասին:

Պոլսի հայ պատվիրակության քարտուղար Հակոբ Քոչարյանի նամակները Բեռլինի հայոց ազգային պատվիրակության նախագահ Համո Օհանջանյանին՝ հայկական հարցի շուրջ ծավալված բանակցությունների եւ ձեռքբերված նախնական պայմանավորվածությունների մասին:

Մի քանի ազգանվամբ անձանց փաստաթղթ(եր)ի նկարագրման ժամանակ, որպես կանոն, տրվում է փաստաթղթ(եր)ի տակ եղած կամ տվյալ անձի հիմնական ազգանունը: Իսկ եթե գործում ամփոփված են տվյալ անձի տարբեր ազգանուններով փաստաթղթեր, ապա նկարագրական տեքստում նշվում է վերջին ազգանունը,իսկ դրա շարունակությունում, փակագծի մեջ տրվում է դրան նախորդողը: Օրինակ՝ Ղարիբյան (ծննդյամբ՝ Սարգսյան) Տիգրանուհի Վարդանի:

Կեղծանվամբ ստորագրված փաստաթղթերից կազմված գործի վերնագրում սկզբից նշվում է կեղծանունը, ապա դրանից անմիջապես հետո փակագծերում՝ տվյալ անձի իսկական ազգանուն, անուն, հայրանունը:

Օրինակ՝ Նար-Դոսի (Հովհաննիսյան Միքայել Զաքարի) «Նեղ օրերից մեկը» պատմվածքի սեւագրերը:

Հավասու (Մարկոսյան Արմենակ Պարսամի) գուսանական երգերից պատառիկների հավաքածու:

Օտարալեզու թերթերի, հրապարակումների, կազմակերպությունների եւ այլնի անունները տրվում են հայերեն տառադարձությամբ, իսկ կողքը բնագրային լեզվով նշվում է դրանց անունը

Փաստաթղթ(եր)ում չնշված եւ նկարագրողի կողմից կատարված նպատակային ուսումնասիրության արդյունքում բացահայտված տվյալներն ու տեղեկությունները (թվագրում, թղթակից, հասցեատեր եւ այլն) վերնագրում ներառվում են քառակուսի փակագծերի մեջ:

Օրինակ՝ Միացյալ Հայաստանի պատվիրակության ներկայացուցչի [Միհրան Տամատյան] զեկուցագրերը Կիլիկիայի [1920թ. սկզբներ] ներքաղաքական դրության մասին:

Սույն կանոնը չի կիրառվում, երբ պահանջվող տվյալները չնայած փաստաթղթում բացակայում են, սակայն ակնհայտ ու հանրահայտ են (օրինակ, հեղինակի պարագայով՝ Ակսել Բակունցի «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի ձեռագիրը):

Գասախոսություններ, ելույթներ, զեկուցումներ եւ լրացնող (ուղեկցող) նյութեր բովանդակող գործերի վերնագրերում նշվում է դրանց անունը (ելույթ, զեկուցում, եւ այլն), անցկացման վայրը (տեղը), եթե դա որոշակիորեն հայտնի է: Եթե ելույթի, զեկուցման անունը բացակայում է, ապա բացահայտվում է դրանց բովանդակությունը:

Օրինակ՝ Հուշեր՝ ՀՀ արխիվային գործի մեծ երախտավոր, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Հարությունյանի մասին, պատմագիտության դոկտոր Կլիմենտ Հարությունյանի ելույթը Ա.Հարությունյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հայ արխիվագետների հավաք - հանդիսությունում:

Հուշագրությունների, օրագրերի, նոթերի վերնագրերը կազմվում են, նշելով դրանց ժանրը (տեսակը), բովանդակության համառոտ ծանոթագրությունը եւ ժամանակագրական շրջանակները (ընդգրկված ժամանակաշրջանը):

Եթե հուշագրություններն ունենում են հեղինակային վերնագիր, ապա դրանց նկարագրումը կատարվում է նույն կանոններով, ինչ ընդունված է գեղարվեստական ստեղծագործությունների համար:

Գրառումների ծոցատետրերի նկարագրման ժամանակ կազմվող վերնագրում փաստաթղթի տեսակը մատնանշելուց զատ պետք է զետեղվեն տեղեկություններ դրանց բովանդակության վերաբերյալ (ինչի՞ մասին է):

Օրինակ՝ Արշակ Վարդանյանի ծոցատետրերը՝ Կարսի նահանգում շրջագայության ընթացքում իր տպավորությունների մասին գրառումներով:

Աշխատանքային նյութեր (քաղվածքներ, նշումներ եւ այլն) նկարագրելիս նշվում է այն աշխատանքը կամ թեման, որին վերաբերում են այդ նյութերը, եւ թվարկվում են հավաքված փաստաթղթերի տեսակները:

Օրինակ՝ Ն.Մառ՝ հնագիտական պեղումներ Զվարթնոցում. գրառումներ, քաղվածքներ, լուսանկարներ:

Ֆոնդառաջացնողի հետ կամ նրա մասին անցկացված հարցազրույցներ բովանդակող գործերի վերնագրերում անհրաժեշտ է նշել, թե ում հետ եւ ով է անցկացրել հարցազրույցը ու ինչ հարցերի շուրջ է ծավալվել զրուցակցությունը:

Օրինակ՝ Լրագրող Ռ.Բաբայանի հարցազրույցը ՀՀ արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանի հետ՝ Արցախյան հիմնախնդրի լուծումների գերխնդրում օտարերկրյա դիվանագետների մոտեցումների մասին:

Գրագրություն, նամակներ, հեռագրեր նկարագրելիս պարտադիր նշվում են փաստաթղթի տեսակը, թղթակիցների ու հասցեատերերի ազգանունները եւ նրանց անուն հայրանունների սկզբնատառերը: Նամակների նկարագրման համար կիրառելի է նաեւ վերնագրի տարրերի այսպիսի հաջորդականություն՝ նշվում է նախ՝ փաստաթղթի տեսակը (եթե դա ֆոնդառաջացնողինն է) կամ թղթակցի ազգանունը, (սեռական հոլովով) անվան, հայրանվան սկզբնատառերը (եթե թղթակիցը մեկ ուրիշ անձ է), ապա՝ հասցեատիրոջ ազգանունը (տրական հոլովով), անվան ու հայրանվան սկզբնատառերը:

Այն դեպքում, երբ գրագրության թղթակիցը ֆոնդառաջացնողն է, ապա ցույց է տրվում միայն նրա ազգանունը եւ անվան ու հայրանվան սկզբնատառերը, իսկ եթե մեկ ուրիշն է, ապա պետք է նշվի նաեւ վերջինիս զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը (զբաղմունքը) եւ մատնանշվի գրագրություն վարելու պահին նրա ունեցած ծառայական դիրքի մասին:

Օրինակ՝ 1.Սերո Խանզադյանի ցավակցական հեռագրերը Բաղդասար Գրիգորյանին, Վարդուհի Սարաֆյան-Գրիգորյանին եւ Կարեն ու Լեւոն Գրիգորյաններին՝որդու, ամուսնու, հոր՝ Աշոտ Գրաշու մահվան կապակցությամբ.
2.Համո Սահյանի նամակը Վահագն Գավթյանին՝ Ռազմիկ Գավոյանի նոր գրքույկի հրատարակման առնչությամբ իր նկատառումների մասին.
3.Նամակներ, հեռագրեր, բացիկներ Ա.Ն.Խանզադյանին՝ ամանորի շնորհավորանքներով ու բարեմաղթություններով:

Անստորագիր կամ չվերծանվող ստորագրություններով (միայն անվան, ազգանվան սկզբնատառերով եւ այլն) նամակներից (որոնց հեղինակները (թղթակիցները) պարզված չեն ու պարզել հնարավոր չէ), կազմված գործերի նկարագրման ժամանակ վերոհիշյալ նախանշանները (սկզբնատառեր, կեղծանուն եւ այլն) արտացոլվում են վերնագրում: Այն դեպքում, երբ վերծանված է միայն թղթակցի ազգանվան (ըստ ստորագրության) մի մասը՝ որոշակի տառերը, ապա վերնագրում նշվում են դրանք եւ դրվում է բազմակետ: Ցանկալի է, որ նման նամակները ծանոթագրվեն:

Հեղինակների խմբի նամակներից կազմված գործերը նկարագրելիս անհրաժեշտ է վերնագրում նշել առավել հանրաճանաչ (նշանավոր) մի քանի անձանց եւ (կամ) ստորագրող թղթակիցների ազգանունները: Այդպիսի նամակների հեղինակներին կարելի է մատնանշել նաեւ որեւէ հատկանիշով նրանց միավորող ընդհանրական անվամբ (օրինակ՝լրագրողներ, գյուղացիներ, բանվորներ եւ այլն):

Օրինակ՝ 1. Ա.Արշակյանի, Մ.Շահգելդյանի, Ա.Ստդոյանի, Մ.Գասպարյանի բաց նամակը ՀՀ նախագահին՝ հանրապետության բուժհիմնարկների օպտիմալացման գործում թույլ տրված բացթողումների, չտապողականության մասին:
2.ՀՀ ԱԺ մի խումբ պատգամավորների նամակը ՀՀ նախագահին՝ արցախյան հարցում իրենց դիրքորոշման մասին:
3.ՀՀ նախարարների զեկույց-նամակը ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանին՝ մարզեր կատարած իրենց այցերի եւ բնակիչների հետ ունեցած հանդիպումների արդյունքների մասին:

Ընծայագրերով գրքեր եւ այլ նյութեր նկարագրելիս վերնագրում նշվում է ընծայագրի հեղինակը, ում է հասցեագրված եւ որ փաստաթղթի վրա է արված ընծայագրառումը:

Օրինակ՝ Երեւանի Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի վարակային հիվանդությունների ամբիոնի վարիչ Լ.Մխիթարյանի ընծայագիրը ամբիոնի ասպիրանտ Վ.Սարգսյանին՝ իր «Վարակային հիվանդություններ» գրքույկի տիտղոսաթերթի վրա:

Անձնական (կենսագրական) բնույթի եւ ծառայական ու հասարակական գործունեությանը վերաբերող փաստաթղթերից ձեւավորված գործերի վերնագրերում նշվում են փաստաթղթերի տեսակները, կազմակերպությունների անունները, անձանց անվան ու հայրանվան սկզբնատառերը (կամ՝ անունները, հայրանունները) եւ ազգանունները, ինչպես նաեւ այն անձանց ազգանունները, որոնց տրված կամ հասցեագրված են փաստաթղթերը: Վերնագրում համառոտակի տրվում է նաեւ փաստաթղթերի բովանդակությունը:

Օրինակ՝ 1. Տեխնիկական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ Ս.Մ.Սերոբյանի պայմանագրերը «Հայաստան» հրատարակչության հետ՝ իր գիտական աշխատությունների երկհատորյակի տպագրությունն իրականացնելու մասին:
2.Արխիվային գործի վարչության պետ Հ.Ֆելեքյանի՝ Արխիվների միջազգային խորհրդի աշխատանքներին մասնակցության հրավիրատոմսերը, գործուղման ու հյուրընկալության փաստաթղթերը (ուղեւորության տոմսեր, հյուրանոցային վարձավճարների կտրոններ, ձեռք բերված գրականության համար վճարումների հաշիվներ եւ այլն):

Պաշտոնական գրությունների, շրջաբերական նամակների նկարագրման դեպքում դրանք ստորագրող պաշտոնատար ու հանրածանոթ (նշանավոր) անձանց ստորագրությունները վերնագրում ծանոթագրվում են:

Օրինակ՝ 1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար Հ.Աբրահամյանի շրջաբերական նամակները՝ ՀՀ մարզերում արխիվային գործի կազմակերպումը բարելավելու մասին:
2.«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Վիրաբյանի շրջաբերական նամակը ՀԱԱ-ի մարզային մասնաճյուղերի վարիչներին՝ իրականացված ձեռնարկատիրական գործունեության եւ արդյունքում գոյացած գումարների չափերի մասին ամենամսյա հաշվետվություններ ներկայացնելու մասին:

Պաշտոնական հաշվետվությունների, զեկուցումների, այլ նախագծերի հեղինակային վերնագրերը համապատասխան գործի վերնագրի տեքստում վերարտադրվում են չակերտների մեջ:

Օրինակ՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 20.02.2004թ. որոշումը «ՀՀ արխիվային գործի ոլորտի 2003 թվականի գործունեության արդյունքների եւ 2004 թվականի հիմնական խնդիրների» մասին:

Գույքային-տնտեսական բնույթի փաստաթղթերից ու նյութերից կազմված գործերի վերնագրերում նշվում են ամփոփված փաստաթղթ(եր)ի տեսակները, ունեցվածքի, գույքի (սեփականության) անունը եւ նրա սեփականատերն ու գտնվելու վայրը (տեղը): Այս շարքի իրավաբանական եւ տնտեսական բնույթի փաստաթղթերը նկարագրելիս, վերոհիշյալ տեղեկություններից զատ տրվում է նաեւ գործարքին մասնակցած կազմակերպության (հիմնարկի) անունը եւ փաստաթղթերի բովանդակությունը:

Օրինակ՝ Նախիջեւանի գավառի Ցղնա գյուղի Սամսոն Տեր-Ղազարյանին պատկանող հայրենակալվածքային հողատիրության գրասենյակի եկամուտների եւ ծախսերի մատյաններ:

Լուսանկարները նկարագրելիս նշվում է դրանցում պատկերված անձանց (անձի) անունները, հայրանունները (կամ՝ դրանց սկզբնատառերը) եւ ազգանունները, ապա՝ նկարագրվող փաստաթղթի (լուսանկարի) տեսակը (տարատեսակը)՝ դիմանկար, խմբանկար եւ այլն:

Եթե ֆոնդառաջացնողը լուսանկարված է այլ անձանց խմբի հետ, տրվում է համառոտ ծանոթագրություն.

Ա.Հակոբջանյան՝ ահ'ս 2-րդ շարքի կենտրոնում,

վերեւից՝ առաջին շարքում ակադեմիկոս Ծ.Աղայան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վ.Պարսամյան

2-րդ շարքում աջից՝ Վահրամ Փափազյան, ձախից՝ Վարդուհի Վարդերեսյան:

Եթե խմբային լուսանկարում պատկերված է ֆոնդառաջացնողը հարազատների շրջանում, ապա վերջիններիս անուններից հետո փակագծերում նշվում է ֆոնդառաջացնողի հետ նրանց ազգակցական կապը (հայրը, մայրը, որդին, կինը, աղջիկը, թոռը եւ այլն):

Ֆոնդառաջացնողին ծանոթների շրջապատում պատկերող նկարագրման ժամանակ, եթե այդ անձինք գիտության, մշակույթի եւ այլ բնագավառների անվանի գործիչներ չեն, վերնագրում կարելի է նշել դրանցից լոկ մի քանիսի ազգանունները եւ անվան ու հայրանվան սկզբնատառերը, մնացածներին չմատնանշելով վերնագրի տեքստում: Կարելի է նաեւ վերնագրում այդ անձանց հիշատակել ընդհանրացված հասկացությամբ:

Օրինակ՝ ՀԽՍՀ ժողովրդական դերասանուհի Վ.Վարդերեսյանը Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի 1986-87թ. ուս.տարվա շրջանավարտների հետ հանդիպման ժամանակ:

Բնակավայրեր, բնապատկերներ եւ այլն ներկայացնող լուսանկարների նկարագրական տեքստում (վերնագրում) նշվում է, թե ինչ բնակավայրեր, տեսարաններ են պատկերված նկարագրվող լուսանկարում:

Օրինակ՝ 1. Տեսարան ք.Երեւանի «Կոնդ» թաղամասի բնակելի հատվածից:
2.Երեւանի օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքի արտաքին տեսքը՝ Սայաթ-Նովա փողոցի կողմից:
3.Բնապատկերներ Նորավանքի մերձակա տարածքից:

Ոչ ամբողջականորեն պահպանված փաստաթղթերը նկարագրելիս նշվում է դրանց լրիվության աստիճանը (հատված, անջատ-անջատ (պակասավոր) թերթեր, ոչ լրիվ տեքստ, անսկիզբ, առանց վերջի, բացակայում են.... թերթերը եւ այլն): Որպես կանոն լրիվ տեքստը չի ծանոթագրվում:

Փաստաթղթի վերարտադրման եղանակը կամ գրելաձեւը նկարագրական տեքստում տրվում է այն բոլոր դեպքերում, երբ այն որոշակի նշանակություն ունի փաստաթղթի բնութագրման համար: Իսկ փաստաթղթի լեզուն նշվում է, եթե այն գրված է ոչ այն լեզվով, որով կատարվում է նկարագրումը, այսինքն՝ փաստաթուղթը գրված է մեկ, իսկ դրա նկարագրումը՝ այլ լեզվով:

Փաստաթղթի ստեղծման վայրը նշվում է միայն այն դեպքում, երբ նկարագրվում են նշանավոր, հանրաճանաչ գործիչների նյութերը, պայմանով, եթե փաստաթղթում դա ամրագրված է:

Նկարագրման ժամանակ խորհուրդ է տրվում է մատնանշել գործի կազ-մում ընդգրկված փաստաթղթերի արտաքին այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են, օրինակ, շապիկի (կազմի) հատուկ նյութից պատրաստված լինելը, զարդերի, յուրահատուկ կնիքների առկայությունը, գրելանյութի առանձնահատկությունը, ձեռագրա(տպա)տառը եւ այլն:

Փաստաթղթերի հրապարակման մասին տեղեկությունները պետք է տրվեն առավել կատարյալ ժողովածուների վերաբերյալ եւ, ըստ հնարավորին, նշել դրանց առաջին անգամ հրապարակվելու թվագրումն ու աղբյուրը (հանդես, ժողովածու, աշխատություն եւ այլն):

Օրինակ՝ 1. Ա.Սյունի «Հայկական զորամասը բուլղարա-թուրքական պատերազմում», Սոֆիա, 1927թ.
2.«Սասունում ֆիդայինների մարտական գործողությունների նկարագրումը» - հրապարակ. ա) «Դրոշակ» (Ժնեւ), 1904թ., հոկտեմբեր, N 10, բ) «Անդրանիկ Օզանյան. Փաստաթղթեր եւ նյութեր», ժողովածու, 1991թ., թթ. 61-70:

Գործի ծայրային տարեթվերն են.

- մեկ փաստաթղթից կազմված գործի համար՝ հենց այդ փաստաթղթի թվագրումը,

- շատ թվով փաստաթղթերից կազմված գործի համար՝ ամենից վաղ ու ամենից ուշ ստեղծված փաստաթղթերի թվագրումները:

Եթե փաստաթղթի վրա թվագրումը բացակայում է, ապա այն պարզվում է բովանդակության, ձեռագրի, գրելանյութի (թուղթ, մագաղաթ եւ այլն), առկա տեղեկատուների եւ այլնի հիման վրա: Փաստաթուղթը նկարագրողի կողմից սահմանված թվագրումը առնվում է քառակուսի փակագծերի մեջ, իսկ եթե այն սահմանվել է մոտավոր կամ որոշակի աստիճանի հավանականությամբ, ապա փակագծերի ներսում, տարեթվի կողքին դրվում է հարցական նշան ([1904թ. ?]), կամ՝ [19-րդ դարի սկիզբ (1826 թվականից ոչ ուշ)] եւ այլն:

Փաստաթղթերի գիտատեխնիկական մշակման հերթական փուլում կատարվում է գործերի կազմում ներառված փաստաթղթերի թերթերի համարակալում եւ կազմերի ձեւավորում: Գործի կազմի (շապիկի) վրա նշվում են թերթերի (առանձին դեպքերում՝ նաեւ փաստաթղթերի) քանակը, փաստաթղթերի պահպանվածության հետ կապված թերությունները:

Գործի կազմի (շապիկի) վերեւի ձախ (շուռտիպ) եւ ներքեւի աջ անկյուններում դրվում է դրոշմակնիք՝ արխիվապահոցի անվան (համարի), ֆոնդի, ցուցակի, գործի համարների նշումով: Ֆոնդի անունը, որպես կանոն, գրվում է յուրաքանչյուր գործի վերեւի հատվածում:

Գործերի ցուցակը կազմվում է գիտատեխնիկական մշակման ենթարկված ամեն մի ֆոնդի համար՝ սահմանված ձեւաթղթի վրա: Ֆոնդի բոլոր փաստաթղթերն ու նյութերը մշակումից հետո ներառվում են մեկ ցուցակում: Սակայն եթե ֆոնդի գործերի քանակը նկատելիորեն մեծ է եւ հասնում է վեցանիշ թվի, ապա ցուցակները կարելի է կազմել ըստ բաժինների, որոշակի տարիների, գործունեության առանձին ուղղությունների եւ այլն:

Ցուցակը կազմված է նկարագրական հոդվածներից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է հետեւյալ բաղադրատարրերը. գործի հերթական համարը, վերնագիրը, ծայրային տարեթվերը, թերթերի քանակը, «ծանոթություն» սյունակը՝ հավելվածների առկայության, գործերի տեղաշարժի (դուրս գրում, մեկ այլ իրավաբանական եւ (կամ) ֆիզիկական անձի հանձնում եւ այլն) մասին նշումների համար:

Ցուցակում գետեղված վերջին նկարագրական հոդվածից հետո, նոր տողից գրվում է ցուցակի ամփոփագիրը, որտեղ թվերով ու տառերով (փակագծերի մեջ) ցույց է տրվում ներառված գործերի ընդհանուր քանակը:

Այնուհետեւ նշվում է ցուցակի կազմման թվագրումը, կազմողի պաշտոնը, ազգանունը եւ անվան սկզբնատառը: Ցուցակից գործեր դուրս գրելիս եւ (կամ) նորերն ավելացնելիս կազմվում է նոր ամփոփագիր, իսկ հնի վրա քաշվում են խաչվող գծեր:

Ցուցակը պետք է հագեցված լինի նախաբանով, տիտղոսաթերթով, գլխացանկով, ցուցիչներով և տեղեկատու-որոնողական անհրաժեշտ այլ միջոցներով:

Նույն ֆոնդի համար մի քանի ցուցակ կազմվելու դեպքում առաջաբանը կցվում է առաջին ցուցակին, իսկ մյուս ցուցակներին կարելի է կցել համառոտ տեղեկանքներ՝ դրանցում ամփոփված գործերի կազմի ու համակարգման վերաբերյալ տեղեկություններով:

Ծավալուն և բարդ ցուցակներից օգտվելը դյուրին ու արագ դարձնելու համար նպատակահարմար է կազմել ամփոփված փաստաթղթերում տեղ գտած անունների (անվանական), աշխարհագրական, առարկայական, կազմակերպությունների և այլ ցուցիչներ, որոնցում հղում է արվում ցուցակում ընդգրկված գործերի հերթական համարների վրա:

Եթե ցուցակի կազմումից հետո ֆոնդը համալրվում է փաստաթղթերի ու նյութերի նոր լրակազմերով, ապա այդ մուտքագրումները՝ կախված դրանց բնույթից և հատկապես ծավալներից, ֆոնդում կարող են գետեղվել՝

ա) դրանց տարանիշով համարների ամրագրմամբ ցուցակում մտցնելու,

բ) ունեցած ցուցակի վերջում դրանք ավելացնելու,

գ) դրանց համար առանձին (ինքնուրույն) ցուցակ կազմելու,

դ) ամբողջ ֆոնդի միավորները մեկտեղելու համար նոր միասնական ցուցակ կազմելու միջոցով:

Առավել կարևոր և առանձնապես արժեքավոր գործերի համար կարելի է կազմել ներքին ցուցակ, որտեղ մտցվում են տվյալ գործի բոլոր փաստաթղթերը՝ գործի մեջ դրանց համակարգման հաջորդականությանը համապատասխան: Ցուցակում համապատասխան նկարագրական հոդվածի դիմաց, «ծանոթություն» սյունակում, նշվում է ներքին ցուցակի առկայության մասին: Ներքին ցուցակի մեկ օրինակը գետեղվում է տվյալ գործի սկզբում, իսկ մյուս օրինակը կցվում է ֆոնդի ցուցակին՝ ցուցիչներից առաջ կամ համապատասխան գործի նկարագրումից անմիջապես հետո:

9. Արվեստի գործիչների (նկարիչներ, ճարտարապետներ, երգահաններ, կինոռեժիսորներ և այլն) ստեղծագործական նյութերի մշակման առանձնահատկությունները

9.1. Նկարիչների, ճարտարապետների, քանդակագործների ֆոնդերին բնորոշ են նկարները (կտավների, քանդակների ֆոտոպատճենները, վերարտադրությունները՝ ամսագրերում, թերթերում) և գծագրերը, որոնց նկարագրումն ու համակարգումը ուրույն մոտեցում է պահանջում:

Նկարիչների և քանդակագործների ֆոնդերում առաջին՝ «Ստեղծագործական նյութեր» բաժնում տեղ են գրավում ֆոնդառաջացնողի ստեղծագործությունները՝ նկարներ, էտյուդներ, ճեպանկարներ: Որպես արդեն ընդունված կարգ, ձեռագրերը (ուսումնասիրություններ, հոդվածներ, դրախոսություններ, հուշեր, օրագրեր) ընդգրկվում են 2-րդ՝ «Ֆոնդառաջացնողի ձեռագրեր» բաժնում:

Առաջին բաժնում գործերը համակարգվում են ըստ ժանրերի, կատարման տեխնիկայի, ժամանակագրության նաև այբբենական կարգով, եթե թվագրում չկա, սակայն կան հեղինակային անվանումներ:

Ծաղրանկարները, պաստառները, կատականկարները կարելի է բաժանել ըստ թեմատիկայի, իսկ ծաղրանկարչի ֆոնդում դրանք բաժանվում են ըստ այն թերթերի ու ամսագրերի, որոնց համար արված են:

Ֆոնդառաջացնողի կողմից հավաքած նկարների և վերարտադրությունների բնագրեր ընդգրկող գործերը համակարգվում են ըստ հեղինակների ազգանունների հերթականության, ժամանակագական կարգով կամ այլ սկզբունքներով, ելնելով նյութի քանակից:

-Տուշով, թանաքով, ջրաներկով արված նկարները, ինչպես նաև փորագրանկարները գործերում չպետք է անցնեն 25 թերթից: Նշանավոր նկարչի յուրաքանչյուր ստեղծագործություն (գուաշ, գունամատիտ, ածուխ) առանձին գործ է:

-Նկարների կոմպոզիցիաների էսքիզները, դրանց էտյուդները և ուրվանկարները միավորվում են մեկ գործի մեջ (ոչ ավելի 10 թերթից): Գիմանկարները՝ բնանկարները, նատյուրմորտները գործ են դառնում ըստ

ժանրերի, իսկ ներսում համակարգվում՝ ըստ կատարման տեխնիկայի (ոչ ավելի 10 թերթից):

-Դեկորացիաների, զգեստների, դիմահարդարանքի էսքիզներից գործ է ձևավորվում ըստ ներկայացումների և ֆիլմերի, իսկ դրանց մեծ ծավալի դեպքում՝ ըստ տեսակների (զգեստների, դիմահարդարանքի, դեկորացիաների էսքիզներ):

Նկարազարդումներից գործ է ձևավորվում ըստ այն դրական ստեղծագործությունների, որոնց համար դրանք արված են:

-Պաստառներից գործեր են ստեղծվում ըստ թեմատիկայի, տեքստերի, հեղինակների և չափսի:

- Յուրաքանչյուր ալբոմ կազմում է մեկ առանձին գործ:

- Վերարտադրությունից գործեր են ստեղծվում հեղինակային, թեմատիկ կամ ժամանակագրական սկզբունքներով:

- Կերպարվեստի ստեղծագործություններ ընդգրկող գործի վերնագրում նշվում են հեղինակը, ստեղծագործության անվանումը, ժանրը, ավարտված կամ անավարտ լինելը, չափը (եզակի ստեղծագործությունների համար), այն դեմքը, որից կատարված է ուրվանկարը կամ էտյուդը, հեղինակի ստորագրությունը և նշումները, կատարման տեխնիկան, տարեթիվը (եթե հնարավոր է):

Հեղինակը նշելիս պետք է նշվի ոչ միայն ազգանունը, այլև անվան ու հայրանվան սկզբնատառերը, եթե հեղինակը հայտնի չէ, կատարվում է «անհայտ նկարիչ» նշումը, հնարավորության դեպքում նշվում է տարեթիվը, ինչպես նաև գեղանկարչական այն դպրոցը, որին կարող էր հարել նա:

Օրինակ՝ 1. Հ.Հակոբյան՝ «Ծաղիկներ և գոգնոց»

2.Ակադեմիական դպրոցի անհայտ նկարիչ՝ «Վարդեր»:

Փորագրություն նկարագրելիս նշվում է փորագրողի ազգանունը, անվան ու հայրանվան սկզբնատառերը, ստեղծագործության անունը և կատարման տեխնիկան:

Օրինակ՝ 1. Ա.Մամաջանյան՝ «Աղջկա դիմանկար». քերում մոմապատ թղթի վրա

2.Ա.Մամաջանյան՝ «Հռիփսիմեի տաճարը». գունավոր օֆորտ

3.Ա.Մամաջանյան՝ «Բակ Աշտարակում» .փորագրություն ցելյուլոիդի վրա:

Եթե գործը կազմված է նկարի կամ քանդակի ուրվանկարներից, նկարների շարքից, ապա վերնագրում ցույց է տրվում հեղինակը, շարքի, նկարի, քանդակի անվանումը: Եզակի ստեղծագործությունների համար թվարկվում են բոլոր նկարներն ու ուրվանկարները կամ կազմվում է ներքին ցուցակ.

Օրինակ՝ 1.Վ.Էլիբեկյան՝ «Սայաթ-Նովա» նկարաշարի ճեպանկարներ, 1977-1987

2.Կ.Սմբատյան՝ «Արքայապատում», «Երվանդունիների գահասրահում» նկարաշարի ճեպանկարներ, 1996

Եթե գործն ընդգրկում է ներկայացման դեկորացիաների, զգեստների, դիմահարդարանքի էսքիզներ, ապա վերնագրում նշվում է նկարիչը, ռեժիսորը, ներկայացման և էսքիզների անվանումները:

Օրինակ՝ 1. Գ.Ասատրյան

Տ.Բիտյուցկայա-Էլիբեկյանի «Մեղադրական եզրակացություն» հեռուստաներկայացման դեկորացիաների էսքիզներ

2.Գ.Ասատրյան

Հ.Աշուղյանի «Աշնան արև» ներկայացման գյուղական բակի և գործող անձանց զգեստների էսքիզներ

3.Հ.Ալավերդյան

Պարի համույթի մենակատարի զգեստի էսքիզ

Ֆիլմի համար տրված զգեստների, դեկորացիաների, դիմահարդարանքի էսքիզները նկարագրելիս նշվում է նկարիչը, ֆիլմի անվանումը, ռեժիսորը և փաստաթղթի տեսակը.

Օրինակ՝ 1. Լ.Գևորգյան

Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմի դեկորացիաների, դիմահարդարանքի և զգեստների էսքիզներ

Նկարազարդումների նկարագրման ժամանակ նշվում է նկարիչը, ստեղծագործության հեղինակը, ժանրը, անվանումը:

Օրինակ՝ 1. Ֆ.Աֆրիկյան
Մ.Հակոբյանի «Բաբախող սրտեր» վավերագրական ակնարկների նկարազարդումները
2.Վլ.Աբրահամյան
«Ֆրանսիական ժողովրդական հեքիաթներ» գրքի նկարազարդումներ
3.Ա.Մամաջանյան
«Սասունցի Դավիթ» էպոսի նկարազարդումներից

Շարժեր և ծաղրանկարներ ընդգրկող գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, ստեղծագործության անվանումը, ժանրը և մատնանշվում այն թերթերը կամ ամսագրերը, որոնց համար դրանք արվել են:

Օրինակ՝ 1.Գ.Բալայան
«Գինեմոլը», ծաղրանկար «Ոզնի» երգիծաթերթի համար.

Եթե ծաղրանկար(ներ)ը անուն չունի(են) ուղղակի նշվում է՝ ծաղրանկար(ներ).

Օրինակ՝ 1.Ֆ.Գարրինյան
Ծաղրանկարներ «Ոզնի» երգիծաթերթի համար

Պաստառներից և տախտանկարներից (սցոՏՍ) ձևավորված գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, ստեղծագործության անվանումը, տեքստը, հեղինակը.

Օրինակ՝ Ա.Մամաջանյան
Կապիկը Գեբելսի դիմանկարի մոտ
Տեքստը՝ Ն.Զարյանի

Գեղարվեստական գրքապիտակներից (էքսլիբրիս) ձևավորված գործերի վերնագրերում ցույց են տրվում նկարիչը, գրադարանի տիրոջ ազգանունը և առանձին դեպքերում՝ նկարի բովանդակությունը: Մեծ թվով էքսլիբրիսների առկայության դեպքում կարելի է կազմել ներքին ցուցակ.

Օրինակ՝ 1. Ա.Մամաջանյան
Պրոֆեսոր Խ.Հ.Բարսեղյանի գրքապիտակը: Զանգեր հնչեցնող կին:
2.Ա.Մամաջանյան
Գ.Գալոյանի գրքապիտակը: Զույգ սիրամարգեր և դիրք:

Ալբոմների և համացանկերի նկարագրման ժամանակ նշվում է հեղինակը, անվանումը (եթե ունի) կամ թեմատիկան (եթե անվանում չունի): Ներքին ցուցակ-ներ կազմվում են միայն դասականների և նշանավոր նկարիչների ալբոմների ու համացանկերի համար:

Օրինակ՝ Կ.Միքայելյան
«Մհեր Աբեղյան» գեղանկարչական կտավների ալբոմ:

Եթե ֆոնդառաջացնողի ստեղծագործությունները ոչ թե անհատական, այլ մի քանի նկարիչներ ներկայացնող ալբոմում կամ համացանկում են ամփոփված, ապա տրվում է հղում՝ «տե՛ս էջ...», նախապես նշելով վերնագիրը:

Օրինակ՝ Բ.Զուրաբով
«Հայաստանի պետական պատկերասրահ» ալբոմ.
Մ.Աբեղյանի «Գաշտային ծաղիկներ»-ը տե՛ս էջ 31:

Ճարտարապետական նախագծերի նկարագրման ժամանակ օբյեկտը նշելուց հետո, ցույց է տրվում դրա գտնվելու վայրը (ինչպես փաստաթղթում է նշված) և թվարկվում գործի մեջ ընդգրկված գծագրերը կամ կազմվում է ներքին ցուցակ.

Օրինակ 1. Հ.Զիվանյան
Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան Ազատան գյուղում: Մուտքի և ծածկի դրվագներ, ներքին տեսքը:
2.Ստ.Քյուրքչյան

Կամերային երաժշտության տունը Իսահակյան փողոցի վրա: Ճեմասրահի նախագիծը:

Կերպարվեստի ստեղծագործությունների և գծագրերի նկարագրման ժամանակ ցույց է տրվում նյութը (թուղթ, ստվարաթուղթ և այլն), կատարման տեխնիկան (տուշ, ջրաներկ, գուաշ և այլն), գործիքը (ասեղ, մատիտ, վրձին և այլն): Այս տարրերը վերնագրում նշվում են կրճատ կամ լրիվ ձևով:

Օրինակ՝ 1. Կ.Սմբատյան
Ազատամարտիկի դիմանկար: Ստ. տուշ. ծայր.
2.Կ.Սմբատյան
Առագաստանավեր: Թ.գրիչ
3.Տեսարաններ Մարտիրոս և Հովհանավանք գյուղերից, ջրաներկ, տուշ, 1970.:

Նկարները երբեմն արվում են երկու երեսից, այս դեպքում հիմնական նկարից հետո նշվում է նաև մյուս՝ հակառակ երեսի նկարը: Եթե գործն ընդգրկում է նման բնույթի շատ թերթեր, հակառակ երեսները նկարագրվում են ներքին ցուցակում:

Օրինակ՝ Կ.Սմբատյան
Տեսարան ծովից, հակառակ երեսին՝ նավաստիները նավի տախտակամածին:

Ֆոնդառաջացնողի ստեղծագործությունների վերարտադրությունները նկարագրվում են բնագրի նման.

Օրինակ՝ 1. Վ.Էլիբեկյան
«Ձմեռը թեյարանի մուտքի մոտ» նկարի գունավոր ֆոտոպատճեն
2.Կ.Սմբատյան
Խաժակ Գյուլնազարյանի դիմանկարը
Ֆոտոպատճեն:

Վերարտադրությունների մեծ թվի դեպքում նույնպես կատարվում է գործի ձևավորում ըստ ժանրերի (նատյուրմորտ, դիմանկար, բնանկար), կազմվում է ներքին ցուցակ:

9.2. Երգահանների (կոմպոզիտորների) անձնական ծագման արխիվային ֆոնդերում փաստաթղթերի գիտատեխնիկական մշակումն ու համակարգումը կատարվում է ելնելով դրանց առանձնահատկություններից:

ֆոնդում առաջնայինը «Նոտաների ձեռագրեր» կամ «Ստեղծագործական նյութեր» բաժինն է, որն ընդգրկում է ֆոնդառաջացնողի երաժշտական ստեղծագործությունները, նոտաների գրառումների տետրերը, ստեղծագործու-թյունների ցանկերը, հրատարակված ստեղծագործությունների համացանկերը: Այս բաժնում պահպանման միավորները համակարգվում են հետևյալ հերթակա-նությամբ (եթե դրանք շատ են և տարբեր ժանրերի).

-Բեմական ստեղծագործություններ՝ օպերաների, բալետների, ներկայացում-ների, նաև կինոնկարների համար գրված երաժշտություն:

-Գործիքային ստեղծագործություններ՝ սիմֆոնիկ կամ այլ նվագախմբերի համար, նվագախմբի հետ գործիքային մենանվագի կոնցերտներ, կամերային-գործիքային անսամբլներ (տրիո, կվարտետներ և այլն), առանձին գործիքների համար գրված ստեղծագործություններ (դաշնամուրի, ջութակի և այլն):

-Վոկալ ստեղծագործություններ՝ կանտատներ, օրատորիաներ, երգչախմբեր, վոկալ համույթներ, ռոմանսներ (ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ):

-Ժողովրդական երգերի մշակումներ և այլ հեղինակների ստեղծագործու-թյուններ:

-Այլ երգահանների կողմից տվյալ հեղինակի երաժշտական ստեղծագործու-թյան մշակում (սիմֆոնիկ ստեղծագործության հարմարեցում դաշնամուրին, գործիքավորում և այլն), ստեղծագործությունների ցանկեր և հրատարակված ստեղծագործությունների համացանկեր:

Ենթաբաժինների հերթականությունը կարելի է փոփոխել հաշվի առնելով այն հանգամանքը, թե որ ժանրն է բնորոշ տվյալ երգահանին (կոմպոզիտորին):

Յուրաքանչյուր ենթաբաժնում նյութերը, մեծ քանակության դեպքում, կարելի է համակարգել ըստ ժանրերի (սիմֆոնիաներ, սյուիտաներ, ուվերտյուրաներ), դրանք էլ իրենց հերթին ըստ ժամանակագրության, իսկ եթե ստեղծագործության նոտաները թվագրված չեն, նպատակահարմար է վերնագրերը համակարգել այբբենական կարգով:

Հեղինակային ձեռագիրը իր բոլոր տարբերակներով, խմբավորումներով և սևագրություններով միավորվում է մեկ գործի մեջ: Մեծ ծավալի դեպքում այն կարելի է բաժանել մասերի՝ ըստ փուլերի կամ ըստ ձեռագրի տեսակների (մեքենագիր, սևագիր, պարտիտուրա, առաջին տարբերակ, երկրորդ տարբերակ և այլն):

Հեղինակի կողմից մեկ համարի (Օպուս) տակ միավորված ոչ մեծ ստեղծագործությունները կազմում են մեկ գործ: Նշանավոր երգահանի (կոմպոզիտորի) յուրաքանչյուր ոչ մեծ ստեղծագործություն, որը որոշակի օպուսի մեջ չի մտել, կազմում է առանձին գործ:

Ավելի քիչ հայտնի երգահանի (կոմպոզիտորի) ոչ մեծ ծավալի ստեղծագործությունները, որոնք օպուսի որոշակի համար չունեն, միավորվում են մեկ գործի մեջ՝ ըստ ժանրի:

Նոտաների ձեռագրերի նկարագրման ժամանակ նշվում են երգահանի (կոմպոզիտորի) ազգանունը, անվան ու հայրանվան սկզբնատառերը, ստեղծագործության անվանումը, ժանրը, խմբագրումը, սյուժեի կամ խոսքերի հեղինակը, օպուսի համարը, տոնայնությունը, մասերի թիվը, շարադրման ձևը, ու՞մ է ընծայված, վերարտադրման եղանակը, թվագրումը:

Այս տարրերի տեղաբաշխումը փոփոխվում է ստեղծագործության տարբեր խմբերի պատկանելությամբ: Օպուսի համարը գրվում է կրճատ ձևով:

Ստեղծագործության համար չունենալու դեպքում, նշվում է «առանց երկի համարի»:

Տոնայնությունը նշվում է իտալերեն լեզվով, ընդունված տերմիններով, սևագրերի ժամանակ չի նշվում: Ձայնային բարդ կառուցվածքով ժամանակակից ստեղծագործությունների նկարագրման ժամանակ տոնայնությունը նշվում է միայն հեղինակի կողմից:

Նոտաների ձեռագրերը նկարագրելիս ցույց է տրվում հեղինակը, ում ստեղծագործության սյուժեի հիման վրա է գրվել երաժշտական ստեղծագործությունը:

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Շիրակ» երաժշտական կոմեդիա՝ ըստ Մ.Արմենի համանուն ստեղծագործության:

Եթե ստեղծագործությունը նվիրված է որևէ մեկին (ընծայագրված է), ապա անպայման նշվում է վերնագրի շարադրանքի վերջում:

Օրինակ Ա.Այվազյան՝
«Իմ մանկանը», երգ, խոսք Գ.Սարյանի, նվիրվում է Գ.Գասպարյանին
ձեռագիր, 26.10.1965

Օպերաների, օպերետների և բալետների ձեռագրեր ամփոփող գործերը վերնագրելիս նշվում է դրանց անվանումը, ժանրը, արարների և պատկերների թիվը, երկի համարը (եթե նշված է), լիբրետոյի և սյուժեի հեղինակը, լեզուն (եթե լիբրետոյի տեքստը այլ լեզվով է), ամբողջականությունը (եթե ձեռագիրը լրիվ չէ), շարադրանքը:

Օրինակ՝ Ա.Այվազյան՝ «Մեծապատիվ մուրացկաններ», 3 գործողությամբ երաժշտական կատակերգություն: Լիբրետոն Ա.Այվազյանի, ըստ Հ.Պարոնյանի համանուն գործի: Նախերգանք: Կլավիր գործիքավորման նշումներով: Մեք., ռուս., 1954;

Եթե գործը կազմված է ոչ լրիվ ստեղծագործությունից, ապա վերնագրում կամ ներքին ցուցակում (մեծ թվով համարների դեպքում) թվարկվում են եղած հատվածները, մասերը.

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Սոս և Վարդիթեր», Օպերա ըստ Պ.Պռոշյանի համանուն վեպի, պարտիտուրա, հատվածներ,

N 10 Վարդիթերի մեներգը, N 11 Սոսի մեներգը, N 13 Մանուշի մեներգը:

Օպերայի կամ օպերետի կլավիրը նկարագրելիս նշվում է տեսակը՝ կլավիր երգեցողությամբ, ավելացված տեքստով.

Ներկայացման կամ ֆիլմի երաժշտություն նկարագրելիս նշվում է դրանց անվանումը, թատրոնը, որտեղ կայացել է ներկայացումը: Ֆիլմի համար նշվում է նաև ռեժիսորը:

Օրինակ՝ 1. Վ.Տիգրանյան՝ «Սոս և Վարդիթեր», Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի ներկայացման երաժշտությունը: Կլավիր:
2.Տ.Մանսուրյան՝ «Ձերմակ անուրջներ», Ս.Իսրայելյանի ֆիլմի երաժշտությունը, վերջաբան: Կլավիր:

Գործիքային ստեղծագործությունների ձեռագրեր ընդգրկող գործերի վերնագրերը կազմվում են անվանումից, ժանրից (այն ստեղծագործության համար, որի անվանումը ժանրն է՝ պրելյուդ, էտյուդ, սոնատ, սիմֆոնիա) նվագախմբի կազմից կամ գործիքի անվանումից, սյուժեի հեղինակից, երկի համարից, մասերի թվից, շարադրման տեսակից:

Օրինակ՝ Ա.Այվազյան՝
Կոնցերտ թավջութակի համար նվագախմբի նվագակցությամբ: Օր. N2, 2 մասից: Պարտիտուրա:

Սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների նկարագրման ժամանակ նշվում է, թե որ գործիքի կամ նվագախմբի համար են դրանք գրված (դաշնամուրի, գործիքային համույթների, սիմֆոնիկ, փողային, ժողովրդական գործիքների նվագախմբերի և այլն), անսամբլների նկարագրման ժամանակ նշվում է գործիքների կազմը (կվարտետ, ջութակի և թավջութակի, 2 ջութակների համար և այլն):

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝
1.Սոնատ ջութակի և դաշնամուրի համար
2.«Զուգերգ», պիես դաշնամուրի և կլարնետի համար:

Փոխադրումների նկարագրման ժամանակ (նվագախմբային ստեղծագործության փոխադրումը դաշնամուրի և այլն) նշվում է ստեղծագործության հեղինակը, եթե նա ֆոնդառաջացնողը չէ, ստեղծագործության անվանումը, որ գործիքի համար է արված փոխադրումը, իսկ եթե և՛ ստեղծագործությունը, և՛ փոխադրումը ֆոնդառաջացնողինն է, ապա վերնագիրը և գործիքը.

Օրինակ՝ 1. Տղամարդկանց պարը Ալ.Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից, փոխադրումը դաշնամուրի համար՝ Ն.Մկրտչյանի
2.«Հին Թիֆլիսի պատկերներ», սիմֆոնիկ սյուիտ 4 մասից, փոխադրումը ջութակի համար հեղինակային է:

Դաշնամուրային պիեսների ժողովածուների նկարագրման ժամանակ ցույց է տրվում դրա, այնուհետև յուրաքանչյուր համարի անվանումը

Օրինակ՝ 1. Վ.Տիգրանյան՝ «Լիրիկական մեղեդի», դաշնամուրային պիեսներ: «Ուրախ հովիվը», «Էքսպրոմտ», «Սկերցինո», «Լորիկ»:
2.Վ.Տիգրանյան՝ «Մանկական պիեսներ դաշնամուրի համար»: «Խորոտիկ», «Մարալիկ», «Լիրիկ մեղեդի»:

Կանտատների, օրատորիաների և երգչախմբային ստեղծագործու-թյունների ձեռագրեր ընդգրկող գործերի վերնագրերում անհրաժեշտ է նշել հեղինակը, ստեղծագործության վերնագիրը, ժանրը, երգչախմբի ու մենակատար-ների կազմը, նվագակցությունը, բառերի հեղինակը (եթե նշված է), երկի համարը, մասերի թիվը և շարադրման տեսակը.

Օրինակ՝ Վ.Տիգրանյան՝ «Հայրենական», կանտատ դրամատիկ սոպրանոյի և երգչախմբի համար:
Խոսք Գ.Սարյանի, օր.94, պարտիտուրա:

Երգչախմբային ստեղծագործությունների նկարագրման ժամանակ նշվում է երգչախմբի կազմը (խառը, տղամարդկանց, կանանց, մանկական) և ձայների թիվը (մեկ ձայն, երկձայն և այլն):

Վոկալ համույթների ստեղծագործությունները նկարագրելիս ցույց է տրվում համույթի կազմը (դուետ, տրիո, կվարտետ) և թե որ ձայների համար է գրված ստեղծագործությունը.

1.«Սայաթ-Նովա», կանտատ մենակատարների, երկձայն երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար: Օր 64, պարտիտուրա, մաս 1-ին, 2-րդ

Վոկալ մեներգերի ձեռագրեր ընդգրկող գործերը վերնագրելիս պետք է նշել ստեղծագործության անվանումը, ժանրը, ձայնի տեսակը (բարձր, միջին, ցածր) նվագակցությունը, բառերի հեղինակը, երկի համարը, ցիկլի համարը, շարադրման տեսակը (եթե ստեղծագործությունը գրված է ձայնի համար՝ նվագախմբի նվագակցությամբ):

Ժողովրդական երգերի մշակումների ժամանակ նշվում են դրանց հեղինակները, ստեղծագործության անվանումը և ինչ մշակման է ենթարկվել.

Օրինակ՝ Ն.Մկրտչյան «Արագ», ժողովրդական երգ, մշակում երկձայն երգչախմբի համար:

9.3. Թատրոնների դերասանների և ռեժիսորների ֆոնդերն ընդգրկում են ոչ միայն դերասանի կամ ռեժիսորի, այլև այն անձանց փաստաթղթերը, ովքեր անմիջական կապ ունեն ներկայացման հետ:

Այս բնագավառը ներկայացնող փաստաթղթերի նկարագրումն ու համակարգումը նույնպես կատարվում է ուրույն ձևով: Ինչպես մյուս ֆոնդերում, այստեղ ևս ստեղծվում է օպերետները, պիեսների ռեժիսորական օրինակները, պարզաբանական տեքստերը, նշումները, մշակումները, միզանսցենները, ներկայացումների մոնտաժումները, ֆոնդառաջացնողի կողմից խաղացած դերերի տեքստերն իր նշումներով, խաղացանկը, դերերի և համերգային ելույթների ցանկը, հյուրախաղերի ընթացքում գրված օրագրերը, զգեստների, դեկորացիաների, դիմահարդարանքի էսքիզները (գծագրված նախօրինակ, ուրվագիծ) ֆոնդառաջացնողի դերակատարումների լուսանկարները և իր մասնակցությամբ կամ ներկայացրած բեմադրությունների պատկերները:

Գործերն ըստ կայացած և չկայացած ներկայացումների «Ստեղծագործական նյութեր» բաժնում տեղաբաշխվում են ընդհանուր ժամանակագրական կարգով:

Յուրաքանչյուր ներկայացման նյութեր համակարգվում են ըստ հետևյալ ենթաբաժինների.

-Պիեսի ռեժիսորական օրինակը, ռեժիսորական նշումներ, ներկայացման ռեժիսորական պլան (էքսպլիկացիաներ), միզանսցենների մշակումներ, ներկայացման մոնտաժում, դերաբաշխում և այլն:

-Ներկայացման կերպարվեստային նյութեր՝ ներկայացման պատկերների և գործող անձանց լուսանկարներ, դեկորների, զգեստների և գրիմի էսքիզներ, եթե դրանք ֆոնդառաջացնողն է արել:

Եթե ռեժիսորի ֆոնդում փաստաթղթերը շատ են և բազմաբնույթ, ապա համակարգումը կատարվում է ըստ թատրոնների, որտեղ նա աշխատել է, այնուհետև ըստ ներկայացումների:

Ռեժիսորի ստեղծագործական նյութերի ոչ մեծ ծավալի դեպքում դրանց համակարգումը կատարվում է առանց ենթաբաժինների:

«Ստեղծագործական նյութեր» բաժնին հաջորդում է երկրորդ՝ «Ձեռագրեր» բաժինը (դերերի և ներկայացման աշխատանքների հետ կապ չունեցող ուսումնասիրություններ, հոդվածներ, գրախոսություններ, հուշեր, օրագրեր և այլն): Այնուհետև ըստ ընդունված կարգի, տեղաբաշխվում են ֆոնդառաջացնողի և նրան ուղղված նամակները:

«Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող նյութեր» բաժնում ընդգրկվում են թատրոնում նրա աշխատանքային գործունեությանն առնչվող նյութերը (հրամաններ, արձանագրություններ, գրագրություններ հիմնարկությունների հետ, ֆինանսական փաստաթղթեր, ազդագրեր, ծրագրեր և այլն):

Ֆոնդառաջացնողի ներկայացումների, խաղացած դերերի մասին հոդվածները, գրախոսությունները, նշումները տեղաբաշխվում են «Նյութեր ֆոնդառաջացնողի մասին» բաժնում:

Դերասանների ֆոնդերում ստեղծագործական նյութերը համակարգվում են հետևյալ ուրվագծով.

- Ֆոնդառաջացնողի կողմից խաղացած դերերի տեքստը՝ նրա նշումներով և նրա համերգային խաղացանկը.

- Դերերի ցուցակները, հյուրախաղերի ժամանակագրական ցանկերը և այլն տեղադրվում են այդ ենթաբաժնի վերջում.

-Ֆոնդառաջացնողի լուսանկարները դերերում և տեսարաններ իր մասնակցությամբ ներկայացումներից:

Ենթաբաժիններում գործերը համակարգվում են ժամանակագրական կարգով: Եթե «Դերեր» և «Պիեսների ռեժիսորական օրինակներ» ենթաբաժիններում հնարավոր չէ ճշտել ժամանակագրությունը, ապա դրանք համակարգվում են պիեսների վերնագրերի այբբենական հերթականությամբ:

Դերասանների և ռեժիսորների ֆոնդերում կերպարվեստի նյութերը տեղադրվում են երկու բաժիններում՝ դերասանական և ռեժիսորական գործունեությունն արտացոլող նյութերն առաջինում,[1] մնացածը (լուսանկարներ կյանքում, հարազատների, ծանոթների, ուրիշ դերասանների շրջապատում)՝ «Կերպարվեստի նյութեր» բաժնում:

Դերերի տեքստերից, պիեսների ռեժիսորական օրինակներից ու մշակումներից գործեր են ձևավորվում հեղինակային և անվանական սկզբունքով:

Ֆոնդառաջացնողի կողմից հեռուստատեսությամբ, ռադիոյով, էստրադայից կարդացած բանաստեղծությունները, պատմվածքները, պիեսների հատվածները նույնպես գործ են դառնում ժամանակագրական սկզբունքով (եթե տարեթվեր չկան՝ այբբենական սկզբունքով):

Եթե գործը ձևավորվում է լուսանկարներից, ապա յուրաքանչյուր գործում 3 դերից ավելի (մինչև 10 փաստաթուղթ) չպետք է լինի՝ վերնագիրը հանգամանալից կազմելու համար: Նշանավոր դերասանների յուրաքանչյուր դերակատարման լուսանկարն առանձին գործ է դառնում:

Ազդագրերի և ծրագրերի մեծ քանակների դեպքում գործերը ձևավորվում են ըստ թատրոնների, ներսում համակարգումը կատարվում է ժամանակագրությամբ: Հյուրախաղերի ազդագրերն ու ծրագրերը դառնում են առանձին գործեր :

Պիեսների ռեժիսորական մշակումները նկարագրելիս վերնագրում նշվում է ռեժիսորի ազգանունը, հեղինակը, պիեսի վերնագիրը, թատրոնը (որտեղ ներկայացումը կայացել է), վերարտադրման եղանակը: Թվագրումը կատարվում է ըստ ռեժիսորի կատարած աշխատանքի ժամանակի:

Օրինակ՝ Խ.Աբրահամյան
Դ.Սունդուկյանի «Պեպո» պիեսի ռեժիսորական օրինակը, Դ.Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոն, ինքնագիր. 1985թ.:

Ֆոնդառաջացնողի խաղացած դերերը նկարագրելիս ցույց է տրվում կերպարը, հեղինակը և պիեսի վերնագիրը, ով է խաղացել դերը, վերարտադրման եղանակը, նշանավոր դերասանների խաղացած դերի դեպքում՝ նաև թատրոնը, տարեթիվը.

Օրինակ՝ 1. Ուստա Մկրտչի դերակատարման տեքստը Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» պիեսում Դ.Ամիրբեկյանի կատարմամբ. Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան թատրոն, 1974թ., ձեռագիր, մեքենագիր:

Ֆոնդառաջացնողի, կինոյում խաղացած դերերի նկարագրման ժամանակ ցույց է տրվում կերպարը, ռեժիսորը և ֆիլմի անվանումը, դերակատարի անունը և վերարտադրման եղանակը.

Օրինակ՝ Փոստատարի դերը Ա.Մկրտչյանի «Հին օրերի երգը» ֆիլմում՝ Մ.Մկրտչյանի կատարմամբ. մեքենագիր, իր նշումներով:

Դերասանի էստրադային, հեռուստատեսությամբ, ռադիոյով ունեցած ելույթների թեմա հանդիսացող ստեղծագործությունները նկարագրելիս գործի վերնագրում ցույց է տրվում ժանրը, հեղինակը, իսկ փակագծերում՝ օգտագործման ձևը և վերարտադրման եղանակը.

[1] Խոսքը «Ստեղծագործական նյութեր» բաժնի մասին է:

Օրինակ՝ 1. Բանաստեղծություններ և պատմվածքներ Վ.Տերյանից, Ե.Չարենցից, Ա.Բակունցից, Ա.Իսահակյանից, Վ.Աբաջյանի կատարմամբ (ռադիոյով) տպագիր, մեքենագիր, ինքնագիր
2.Հատվածներ Գ.Նարեկացու «Մատյան ողբերգությունից» Ս.Գաբրիելյանի կատարմամբ (հեռուստատեսությամբ), մեքենագիր:

Դերասանի ելույթների ցուցակներն ընդգրկող գործերի վերնագրերը կազմելիս նշվում է ֆոնդառաջացնողի ազգանունը, փաստաթղթի տեսակը և բովանդակությունը, վերարտադրման եղանակը, ծայրային տարեթվերը:

Օրինակ՝ 1. Ս.Սարգսյան
Ներկայացումներում[1] խաղացած դերերի և հեռուստաելույթների ցուցակ, ինքնագիր 1968-1986:
2.Ալ.Ադամյան, Հյուրախաղերի ընթացքում ունեցած ելույթների ցուցակ, ինքնագիր 1958-1978:

Դերերում դերասանների լուսանկարները նկարագրելիս ցույց է տրվում, թե որ դերերում է լուսանկարված դերասանը: Խմբանկարների համար նշվում են խաղընկերների անունները և ազգանունները:

Օրինակ՝ Վ.Փափազյանի լուսանկարները Օթելլոյի դերում («Օթելլո») Գ.Սունդուկյանի անվան թատրոնում, անհատական և Մ.Սիմոնյանի հետ:

Ազդագրեր և ծրագրեր ընդգրկող գործի վերնագիրը կազմելիս (եթե դրանց թիվը մեծ է), կարելի է կազմել ներքին ցուցակ, բովանդակությունը լրիվ բացելու նպատակով.

Օրինակ՝ Ս.Սարգսյանի մասնակցությամբ կայացած ներկայացումների ազդագրեր. տես ներքին ցուցակը:

9.4. Կինոռեժիսորների ֆոնդերն ընդգրկում են ոչ միայն իրենց, այլև կինոֆիլմի ստեղծմանը մասնակիցների փաստաթղթերը:

Կինոռեժիսորների ֆոնդերում ստեղծվում է «Ստեղծագործական նյութեր» բաժինը, որտեղ տեղ են գտնում ֆիլմերի նկարահանումների և սցենարների հեղինակային հայտերը, սցենարների ծրագրերը (պլանները), ուրվագծերը, լիբրետոները, գրական և ռեժիսորական սցենարները (էկրանավորված և չէկրանավորված ֆիլմերի), գործող անձանց բնութագրերը, ռեժիսորական մշակումները, սցենարների և ֆիլմերի նկարահանումների ծրագրերը և օրագրերը, ֆիլմերի մակագրերը (տիտր), մոնտաժային թերթերը, ֆիլմի երաժշտական հնչյունավորման ծրագրերը (պլանները), վավերագրական ֆիլմերի հաղորդավարական տեքստերը, դերասանների դերակատարումների փորձերի լուսանկարները, ֆիլմերի նկարահանումների աշխատանքային պահերի լուսանկարները, կադրերի կոմպոզիցիաների, դիմահարդարանքի, զգեստների, դեկորացիաների էսքիզները[2](եթե դրանք ֆոնդառաջացնողինն են):

Ֆիլմի նկարահանման հետ կապված փաստաթղթերը (հրամաններ, գրագրություն, նկարահանումների աշխատանքային գրաֆիկներ, հանձնաժողովի եզրակացություններ, ազդագրեր և ծրագրեր) տեղադրվում են «Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող նյութեր» բաժնում:

-Ֆիլմերի մասին բոլոր հոդվածները, կարծիքները, գրախոսություններն ընդգրկվում են «Նյութեր ֆոնդառաջացնողի մասին» բաժնում:

- Հանդիսատեսների նամակները տեղ են գրավում «Նամակներ» բաժնի վերջում:

-Ֆոնդառաջացնողի բոլոր ձեռագրերը (ուսումնասիրություններ, հոդվածներ, գրախոսություններ, հուշեր, օրագրեր, որոնք անմիջապես կապ չունեն նկարահանվող ֆիլմի և սցենարի հետ, ընդգրկվում են «Ֆոնդառաջացնողի ձեռագրերը» բաժնում:

[1] Ներկայացումները չեշտել, եթե դերասանը նաև կինոյում է խաղում:
[2] ֆիլմի դեկորացիաների, դիմահարդարանքի և զգեստների էսքիզները (եթե ֆոնդառաջացնողինը չեն), մտնում են « կերպարվեստի նյութեր » բաժնի մեջ:

Առաջին՝ «Ստեղծագործական նյութեր» բաժնում, գործերը համակարգվում են ընդհանուր ժամանակագրական սկզբունքով՝ ըստ էկրանավորված և չէկրանավորված ֆիլմերի:

Յուրաքանչյուր ֆիլմի փաստաթղթերը բաժանվում են հետևյալ խմբերի.
- գրական սցենարներ և դրանց առնչվող փաստաթղթեր
- ռեժիսորական սցենարներ և դրանց առնչվող փաստաթղթեր
- ֆիլմին առնչվող կերպարվեստի նյութեր (կադրերի և նկարահանման աշխատանքային պահերի, դերասանների դերակատարման փորձերի և դերակատարումների լուսանկարներ):

Կինոռեժիսորի ստեղծագործական ոչ մեծ ծավալի նյութերից առաջացած գործերը կարելի է համակարգել հետևյալ սկզբունքներով.
- սցենարներ, ռեժիսորական նշումներ, մոնտաժային թերթեր և այլն
- կադրերի լուսանկարներ ֆիլմերից, դերասանների լուսանկարներ (դերերում) և այլն:

Ֆիլմերի սցենարներից գործերը ձևավորվում են ըստ հեղինակների և սցենարների տեսակի:

Ֆիլմերի գրական և ռեժիսորական սցենարներից ձևավորվում են տարբեր գործեր:

- Ռեժիսորական մշակումները, սցենարների պլանները, նշումները կազմում են ինքնուրույն գործեր:

- Ֆիլմի նկարահանման և սցենարի համար ռեժիսորական նշումներից կազմված գործի ներսում համակարգումը կատարվում է ըստ ֆիլմի էպիզոդների կամ ժամանակագրությամբ:

-Ֆիլմի նկարահանման աշխատանքային պահերի և կադրերի լուսանկարներից գործեր են ձևավորվում ըստ ֆիլմերի անունների, իսկ գործերի ներսում համակարգումը կատարվում է էպիզոդներով:

- Դերակատարումների փորձերի լուսանկարներից գործերը ձևավորվում են ըստ ֆիլմերի, իսկ դրանց ներսում՝ համակարգվում կամ դերասանների ազգանուններով, կամ գործող անձանց անուններով: Էսքիզներից (դեկորացիաներ, զգեստներ, դիմահարդարանք և կադրերի կոմպոզիցիաներ) գործեր ձևավորվում են ըստ աշխատանքների հեղինակների և ֆիլմերի անունների:

- Սցենարների հեղինակային հայտերի նկարագրման ժամանակ գործի վերնագրում նշվում է հեղինակը, ապագա սցենարի անվանումը, փաստաթղթի տեսակը, վերարտադրման եղանակը:

Օրինակ՝ Գ.Մարգարյան, Է.Պայազատյան՝ «Դժբախտ պատահար», սցենարի հայտ, ինքնագիր:

Երկու կամ ավելի սերիաների դեպքում գործի ներսում համակարգումը կատարվում է սերիաներով, էպիզոդներով կամ գործող անձանցով:

Գրական սցենարի բնագրի նկարագրման ժամանակ գործի վերնագրում նշվում է հեղինակը, սցենարի անվանումը, դրա տարատեսակը և վերարտադրման եղանակը.

Օրինակ՝ Ա.Այվազյան՝ «Եռանկյունին», գրական սցենար, հեղինակագորված, մեքենագիր :

Եթե սցենարը գրված է ուրիշ հեղինակի ստեղծագործության մոտիվներով, ապա վերնագրում սցենարի տարատեսակից հետո ցույց է տրվում այդ ստեղծագործության հեղինակը, անվանումը և ժանրը.

Օրինակ՝ 1. Ստ.Ալաջաջյան՝(հեղինակակից Հ.Մալյան)
«Ճերմակ անուրջներ», գրական սցենար ըստ Վ.Թոթովենցի «Աղավնիներ» պատմվածքի, ինքնագիր:
2. Ա.Աղաբաբով, Ֆ.Գովլաթյան՝ «Մենավոր ընկուզենին», ռեժիսորական սցենար ըստ Վ.Պետրոսյանի համանուն վեպի, մեքենագիր:
3.Ստ.Անդրանիկյան՝ «Երեք հեքիաթ» մուլտֆիլմի ռեժիսորական սցենար, ըստ Ավ.Իսահակյանի հեքիաթի:

Ռեժիսորական սցենարներից կազմված գործերի վերնագրերում, նշվում է սցենարի հեղինակը, անվանումը, տարատեսակը և վերարտադրման եղանակը, եթե

այն գրված է այլ հեղինակի գրական սցենարի հիման վրա, ապա վերնագրում նշվում է հեղինակը եւ սցենարի անվանումը.

Օրինակ՝ *1. Ա.Մարտիրոսյան՝ «Սասունցի Դավիթ», ռեժիսորական սցենար, մեքենագիր, ուղղումներով*
2.Ա.Երնջակյան՝ «Ժամկետը յոթ օր է», ռեժիսորական սցենար, ինքնագիր:
3.Ա.Մարտիրոսյան՝ «Սեւանի ձկնորսները», ռեժիսորական սցենար ըստ Ա.Շայբոնի համանուն գրական սցենարի, հեղինակագրված, մեքենագիր:
4. Ա.Մարտիրոսյան՝ «Անահիտ», ռեժիսորական սցենար ըստ Վ.Շվեյցերի համանուն գրական սցենարի, մեքենագիր:

Եթե կինոռեժիսորի ստեղծագործական նյութերն արտացոլում են նրա աշխատանքը կինոյի տարբեր ժանրերում, ապա վերնագրում նշվում է ֆիլմի ժանրը:

Օրինակ՝ *1. Ա.Այվազյան՝ «Վառած լապտեր», ռեժիսորական սցենար, մեքենագիր:*
2. Ա.Այվազյան՝ «Վաղարշակ Էլիբեկյան», վավերագրական ֆիլմի սցենար, ինքնագիր:

Մոնտաժային թերթեր ընդգրկող գործերի վերնագրերում ցույց է տրվում ռեժիսորը, ֆիլմի անվանումը, փաստաթղթի տեսակը, վերարտադրման եղանակը.

Օրինակ՝ *1. Լ.Իսահակյան՝ «Սովորական հերթապահություն» ֆիլմի մոնտաժային թերթեր, մեքենագիր, պատճեն.*
2.Ա.Մարտիրոսյան՝ «Մեքսիկական դիվանագետներ» ֆիլմի մոնտաժային թերթեր, ձեռագիր:

Դեկորացիաների, կոստյումների, դիմահարդարանքի էսքիզների նկարագրման ժամանակ գործի վերնագրում նշվում է հեղինակը, ռեժիսորը, ֆիլմի վերնագիրը, փակագծում էսքիզների բովանդակությունը, կատարման տեխնիկան.

Օրինակ՝ *1. Ե.Սարգսյան՝ Ա.Երնջակյանի «Ժամկետը յոթ օր է» ֆիլմի դեկորացիաների (քաղաքի ավերակները) էսքիզները.*
2. Լ.Գեւորգյան՝ Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմում օգտագործված հագուստների էսքիզներ:

Ֆիլմերի կադրերի լուսանկարներ ընդգրկող գործերի վերնագրերում հարկ է նշել փաստաթղթի տեսակը, կինոռեժիսորի ազգանունը, ֆիլմի անունը, նկարահանման պահը:

Օրինակ՝ *1. Կադրի լուսանկար Ա.Ս.Այվազյանի «Վառած լապտեր» ֆիլմից զանգվածային տեսարան.*
2. Կադրի լուսանկար Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմից, Ս.Սարգսյանը աղավնիների հետ կամ Ս.Սարգսյանը վարսավիրանոցում:

Ֆիլմի նկարահանման աշխատանքային պահերի լուսանկարների վերնագրերում նշվում է ռեժիսորը, ֆիլմի վերնագիրը: Լուսանկարում եղած անձինք ցույց են տրվում վերջում:

Օրինակ՝ *Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմի նկարահանման աշխատանքային պահերի լուսանկարներ (Հ.Մալյան, Հ.Ալավերդյան, Ս.Սարգսյան, Գ.Նովենց եւ ուրիշներ)*

Կամ՝ *Աշխատանքային պահեր Ս.Իսրայելյանի «Ճերմակ անուրջներ» ֆիլմից (Հ.Մալյան, Հ.Ալավերդյան, Ս.Սարգսյան, Գ.Նովենց եւ ուրիշներ):*

Հավելված 1

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՖՈՆԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Կենսագրական փաստաթղթեր
2. Ֆոնդառաջացնողի պետական, հասարակական-քաղաքական գործունեությունը բնութագրող փաստաթղթեր
2.1. Հասարակական-քաղաքական գործունեություն
2.2. Ծառայական գործունեություն
3. Ֆոնդառաջացնողի ստեղծագործական գործունեությունն արտացոլող փաստաթղթեր.
3.1. Ստեղծագործությունների (երկերի) ժողովածու
3.2. Հուշագրությունների ձեռագրեր
4. Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր
4.1. Կենսագրական տեղեկություններ քաղաքական գործիչների մասին
4.2. Հատվածներ քաղաքական գործիչների հուշերից
4.5. Քաղվածքներ արխիվային եւ այլ փաստաթղթերից ու նյութերից
5. Ֆոնդառաջացնողին կարծիքի ուղարկված ձեռագրեր եւ դրանց մասին նրա կարծիք-եզրակացությունները
6. Ֆոնդառաջացնողի անձնական գրագրությունը (թղթակցությունը)
6.1. Ֆոնդառաջացնողի նամակները
6.2. Նամակներ ֆոնդառաջացնողին
7. Գույքային-տնտեսական փաստաթղթեր եւ նյութեր
8. Ֆոնդառաջացնողի ընտանիքի անդամների (կնոջ, զավակների եւ այլն) փաստաթղթեր
9. Փաստաթղթեր եւ նյութեր ֆոնդառաջացնողի մասին
10. Լուսանկարներ
11. Հավաքածուներ

Հավելված 2

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ֆոնդառաջացնողի անձնական եւ կենսագրական փաստաթղթերը
1.1. Ֆոնդառաջացնողի անձնական փաստաթղթերը
1.2. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
2. Ֆոնդառաջացնողի ստեղծագործական գործունեության նյութեր
2.1.Պատմության հարցերին նվիրված աշխատություններ
2.2. Դասախոսությունների, ելույթների, զեկուցումների տեքստեր
2.3. Գրական ստեղծագործություններ
3. Նամակագրություն
3.1. Ֆոնդառաջացնողի նամակները
3.2. Ֆոնդառաջացնողին ուղղված նամակներ
4. Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով
5. Կերպարվեստի նյութեր

Հավելված 3

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՉԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Տեսական բնույթի աշխատանքներ՝ կից փաստաթղթերով
1.1. Գիտական աշխատանքներ
1.2. Գրառումների գրքույկներ, աշխատանքային նշումներով ծոցատետրեր
1.3. Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված փաստաթղթեր եւ նյութեր (գծագրեր, ուրվագծեր, աղյուսակներ, լուսանկարներ եւ այլն)

2. Ֆոնդառաջացնողի ծառայական գործունեության հետ կապված փաստաթղթեր (համակարգումը կատարվում է ըստ կազմակերպությունների, որտեղ գործունեություն է ծավալել ֆոնդառաջացնողը)

3. Գիտամանկավարժական գործունեության փաստաթղթեր (համակարգումն ըստ կազմակերպությունների, գիտաարտադրական միավորումների, ուսումնական հաստատությունների)

4.Փաստաթղթեր գիտատեխնիկական ընկերություններում ֆոնդառաջացնողի գործունեության մասին

5. Օրագրեր եւ օրագրային գրառումներ

6. Գրագրություն

6.1. Ֆոնդառաջացնողի նամակներ

6.2. Նամակներ՝ հասցեագրված ֆոնդառաջացնողին

6.3. Գրագրություն կազմակերպությունների, ընկերությունների եւ այլ իրավաբանական անձանց հետ

7. Կենսագրական փաստաթղթեր եւ նյութեր

7.1. Անձնական փաստաթղթեր

7.2. Փաստաթղթեր գիտական աստիճաններ, պատվավոր կոչումներ շնորհելու մասին

7.3.Փաստաթղթեր ֆոնդառաջացնողի հոբելյանական տոնակատարությունների, այլ հանդիսությունների վերաբերյալ

8. Լուսանկարներ

9. Փաստաթղթեր, նյութեր ֆոնդառաջացնողի մասին

10. Ֆոնդառաջացնողի կողմից հավաքված տպագիր եւ ձեռագիր նյութերի (ակնարկներ, ուրվագծեր, ընծայագրերով գրքեր եւ այլն) ու փաստաթղթերի հավաքածու:

Հավելված 4

ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ստեղծագործական գործունեության նյութեր

1.1. Սցենարներ, ռեժիսորական նշումներ, մոնտաժային թերթեր եւ այլն

1.2. Ֆիլմերից կադրերի լուսանկարներ

2. Ֆոնդառաջացնողի ձեռագրեր

2.1. Հոդվածներ, հուշեր

2.2. Օրագրեր եւ գրառումների գրքույկներ

3. Ֆոնդառաջացնողի գրած նամակները

4. Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքված նյութեր

5. Ֆոնդառաջացնողին ուղղված նամակներ

6. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր

7.Ֆոնդառաջացնողի կողմից իր աշխատանքների համար հավաքած նյութեր

8. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին

9. Կերպարվեստի նյութեր

9.1. Ֆոնդառաջացնողի լուսանկարները

9.2. Տարբեր անձանց (նաեւ ընծայագրով) լուսանկարներ

9.3. Ֆիլմերից կադրերի լուսանկարներ (ուրիշ կինոռեժիսորների)

Հավելված 5

ԿԻՆՈՌԵԺԻՍՈՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ստեղծագործական գործունեության նյութեր (գեղարվեստական, վավերագրական եւ կրկնօրինակված ֆիլմեր)

1.1. Գեղարվեստական ֆիլմեր

1.2. Վավերագրական ֆիլմեր

1.3. Կրկնօրինակված ֆիլմեր

2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը

2.1. Սցենարներ

2.2. Հոդվածներ, ելույթների տեքստեր

2.3. Հուշեր

3. Ֆոնդառաջացնողի գրած եւ ստացած նամակները[1]

4. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր

5. Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների եւ իրեն հետաքրքրած թեմաներով

6. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին

7. Կերպարվեստի նյութեր

Հավելված 6

ՆԿԱՐՉԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ստեղծագործական նյութեր

1.1. Գծանկարներ, կտավների ֆոտոպատճեններ

2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը

2.1. Ակնարկներ, հոդվածներ

2.2. Օրագրեր

3. Նամակներ (գրագրություն)

3.1. Ֆոնդառաջացնողի նամակներ

3.2. Ֆոնդառաջացնողին հասցեագրված նամակներ

4. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր

5.Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների համար եւ իրեն հետաքրքրած թեմաներով

6. Կերպարվեստի նյութեր

7. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին

7.1. Համացանկեր[2]

7.2. Ակնարկներ, տպավորություններ ֆոնդառաջացնողի հեղինակային ցուցահանդեսների մասին

7.3. Նյութեր ցուցահանդեսների բացման մասին

Հավելված 7

ԵՐԳԱՀԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ֆոնդառաջացնողի նոտագրությունները (նոտաների ձեռագրեր)

1.1. Բեմական ստեղծագործություններ

ա) Օպերաներ

բ) բալետներ

գ) ներկայացումների երաժշտություն

դ) կինոնկարների երաժշտություն

1.2. Գործիքային ստեղծագործություններ

ա) սիմֆոնիաներ

բ) սիմֆոնիկ սյուիտներ

[1] Նամակների մեծ թվի դեպքում (գրած եւ ստացած) բաժինը կվերնագրվի հետեւյալ ձեւով 3) նամակներ, 3.1. ֆոնդառաջացնողի գրած նամակները, 3.2. ֆոնդառաջացնողի ստացած նամակները:

[2] Եթե ֆոնդառաջացնողի նկարներինն է, տեղադրվում է առաջին բաժնում, իսկ եթե կան նշումներ իր մասին, տեղադրվում է յոթերորդ բաժնում:

գ) վալսեր և սիմֆոնիկ ստեղծագործություններ
դ) ստեղծագործություններ փողային նվագախմբի համար
ե) ստեղծագործություններ ֆլեյտայի համար
1.3. Վոկալ (երգեցողական) ստեղծագործություններ
ա) կանտատներ, օրատորիաներ բ) ստեղծագործություններ ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ
1.4. Այլ հեղինակների կողմից ֆոնդառաջացնողի ստեղծագործություն-ների փոխադրումները
2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը
3. Ֆոնդառաջացնողի գրած նամակները
4. Ֆոնդառաջացնողի ստացած նամակները
5. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
6. Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների և իրեն հետաքրքրած թեմաներով
7. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին
8. Կերպարվեստի նյութեր

Հավելված 8

ԱՐՏԻՍՏԻ, ԴԵՐԱՍԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ֆոնդառաջացնողի ստեղծագործական նյութեր
1.1. Խաղացած դերերի տեքստեր
1.2. Դերակատարումների լուսանկարներ
2. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը
3. Նամակներ
3.1. Ֆոնդառաջացնողի գրած նամակները
3.2. Ֆոնդառաջացնողի ստացած նամակները
4. Լուսանկարներ
5. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
6. Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների և իրեն հետաքրքրած թեմաներով
7. Նյութեր ֆոնդառաջացնողի մասին
8. Կերպարվեստի նյութեր

Հավելված 9

ԳՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Ֆոնդառաջացնողի ձեռագրերը
1.1. Վիպակներ, պիեսներ, կատակերգություններ
1.2. Հեռուստահաղորդումների տեքստեր և կինոսցենարներ
1.3. Սկեչներ, ինտերմեդիաներ
1.4. Ֆելիետոններ
1.5. Պատմվածքներ
1.6. Ակնարկներ, հուշեր
1.7. Թարգմանություններ
1.8. Գրախոսություններ
1.9. Հայտեր
2. Ֆոնդառաջացնողի գրած նամակները
3. Ֆոնդառաջացնողի ստացած նամակները
4. Ընծայագրեր
5. Ֆոնդառաջացնողի կենսագրությանն առնչվող փաստաթղթեր
6. Ֆոնդառաջացնողի հավաքած նյութերն իր աշխատանքների և իրեն հետաքրքրած թեմաներով

Հավելված 10

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՖՈՆԴԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

1. Փաստաթղթեր՝ կապված գլխավոր (հիմնական) ֆոնդառաջացնողի անվան և կյանքի ու գործունեության հետ
ա) անձնական, կենսագրական բնույթի փաստաթղթեր
բ) փաստաթղթեր ծառայական գործունեության վերաբերյալ (ենթախմբի ներսում փաստաթղթերի համակարգումն՝ ըստ կազմակերպությունների զբաղեցրած պաշտոնների)
գ) Փաստաթղթեր հասարակական (բարեգործական) գործունեության վերաբերյալ
դ) Հիմնական ֆոնդառաջացնողի անվան հետ կապված գրագրություն
- ֆոնդառաջացնողի նամակները
- ֆոնդառաջացնողին հասցեագրված նամակներ
ե) Գույքային անտեսական բնույթի փաստաթղթեր
2. Ֆոնդառաջացնողի ընտանիքի անդամների փաստաթղթերը
2.1. Ֆոնդառաջացնողի կնոջ (ազգանունը, անվան, հայրանվան սկզբնատառերը) փաստաթղթերը
2.2. Ֆոնդառաջացնողի որդու՝ (ազգանունը, անվան, հայրանվան սկզբնատառերը) փաստաթղթերը
- անձնական, կենսագրական փաստաթղթեր
- ծառայական և հասարակական գործունեության փաստաթղթեր
- գրագրություն (նամակներ՝ գրված ֆոնդառաջացնողի որդու կողմից և նամակներ՝ հասցեագրված վերջինիս)
- գույքային անտեսական բնույթի փաստաթղթեր
3. Լուսանկարներ
4. Փաստաթղթեր ֆոնդառաջացնողի, նրա կնոջ, որդու .... մասին
5. Հավաքածու (փաստաթղթեր, նյութեր)

Լրատու

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Արմեն Տիգրանյանի 125-ամյակի առթիվ, 2004թ. հոկտեմբերի 8-ին ՀԱԱ կազմակերպած ցուցահանդեսի հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին անվանի կոմպոզիտորի հորեկյանական կառավարական հանձնաժողովի անդամ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, պրոռեկտոր Արկադի Ավանեսովը, Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Սվետլանա Մուրադյանը, կոմպոզիտորի թոռը՝ Արմեն Տիգրանյանը, հյուրեր, լրագրողներ:

«Անուշ» օպերայի անմահ երաժշտության հնչյունների ներքո, ներկաները ծանոթացան Արմեն Տիգրանյանի կյանքն ու ստեղծագործական ուղին արտացոլող փաստաթղթերին:

Ցուցադրված փաստաթղթերի շարքում տեղ էին գտել Տիգրանյանների գերդաստանին վերաբերվող փաստաթղթեր: Լենինգրադի Լենինի շքանշանակիր Պետական կոնսերվատորիայի ուսանողական տոմսը, Մարքսիզմ-Լենինիզմի համալսարանն ավարտելու վկայականը, նամակներ, գրված որդիներին և կնոջը՝ Աշխենին, ՀՍԽՀ կենտգործկոմի որոշումը Ա. Տիգրանյանին գեղարվեստի վաստակավոր գործչի կոչում շնորհելու մասին, տեսարաններ Մարսելում և Հալեպում կայացած «Անուշի» բեմադրության ներկայացումներից, թերթերում և ամսագրերում տպագրված հոդվածներ Ա.Տիգրանյանի մասին:

Ներկայացված էին նաև բազմաթիվ այլ ուշագրավ լուսանկարներ՝ Ա. Տիգրանյանը «Անուշ»-ի առաջին բեմադրության մասնակիցների, արվեստի գործիչների, հարազատների հետ խմբանկարներում:

Նշենք մի լուսանկար միայն՝ Մարսելում կայացած «Անուշի» բեմադրության կազմկոմիտեի անդամները և հյուրերը, որոնց կենտրոնում Շառլ Ազնավուրն է՝ տիկնոջ հետ:

* *
*

2004 թվականը հոբելյանական էր Հանրապետության արխիվագետների համար: Լրացավ Հայաստանում արխիվային գործի կազմակերպման և Հայաստանի ազգային արխիվի հիմնադրման 80-ամյակը:

Այս առթիվ կազմակերպված, երկու օր շարունակ՝ նոյեմբերի 11-12-ը տևած մի շարք միջոցառումների թվում առանձնակի նշանակություն ունեցավ Հայ արխիվաշինարարությունը ներկայացնող փաստաթղթերի ցուցադրությունը: Հազարավոր վավերագրերից ընտրված փաստաթղթերի միջոցով ներկաները ծանոթացան արխիվագետների մի քանի սերունդների անցած դժվարին ուղու ու միաժամանակ մեծ վերելքի հետ: Հետաքրքրություն էին ներկայացնում պետարխիվի հիմնադիր տնօրեն Խաչիկ Սամվելյանի գրությունները (ինքնագիր), զեկուցագրերն ու հրամանները:

Ուշագրավ էին մշակույթի և այլ բնագավառների հայ անվանի գործիչների՝ Մարտիրոս Սարյանի, Պարույր Սևակի, մարշալ Հովհաննես Բաղրամյանի և ուրիշների պետական արխիվ կատարած այցելությունները պատկերող լուսանկարները, ինքնագրերն ու արխիվագետներին հասցեագրած բարեմաղթանքի խոսքերը:

Ներկայացված էին Սփյուռքի մեր հայրենակից բարերարների լուսանկարներն ու փաստաթղթերը:

ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը, իր բացման խոսքում, ներկայացրեց 80 տարիների ընթացքում հայ արխիվագետների կողմից կատարված վիթխարի աշխատանքը, արխիվային գործի խնդիրներն ու հետագա ծրագրերը:

Մեծ հանդիսավորությամբ բացվեց նաև հուշապատ, ուր ներկայացված են արխիվային գործի վարչության բոլոր տարիների պետերի, ինչպես նաև պետական արխիվների տնօրենների լուսանկարները:

ՀԱԱ ընթերցասրահն անվանակոչվեց արխիվային համակարգում մեծ ներդրում ունեցող Աշոտ Հարությունյանի անվամբ:

Միջոցառումների երկրորդ օրը, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը հյուրընկալել էր կառավարության, գիտության, մշակույթի մի շարք պաշտոնատար այրերի, արտասահմանից, Արցախից և Հանրապետության շրջաններից ժամանած հյուրերի: Ելույթով հանդես եկավ Հայաստանի մշակույթի և երիտասարդության հարցերով նախարար Հ.Հովհյանը: Նա պատվոգրեր հանձնեց մի շարք արխիվագետների: Առանձին ուշադրության և պատվոգրերի արժանացան արխիվի բարերարներ տեր և տիկին Քաջբերունիները, Թերլեմեզյանները. Սասունյանները, Վ. Փարյանը՝ Լոս Անջելոսից և տեր և տիկին Ղազարյանները Բոստոնից:

Հայաստանի արխիվագետներին իր օրհնության խոսքն էր հղել Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, որը ներկայացրեց Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը:

Հանդիսավոր նիստից հետո տեղի ունեցավ դասական երաժշտության համերգ:

* *
*

Լրացավ Գևորգյան հոգևոր ճեմարանի հիմնադրման 130-ամյակը: Այդ առիթով, 2004թ. դեկտեմբերի 3-ին Հայաստանի ազգային արխիվը, Գևորգյան ճեմարանի հետ համատեղ, վերջինիս պատմությանը նվիրված փաստաթղթերի ցուցադրություն էր կազմակերպել: Հրավիրվածների, թվում էին ճեմարանի

այսօրվա տեսուչ Տեր Եղիշեն, ճեմարականներ ու այլ հոգևորականներ: Ներկայացված էին հայ կաթողիկոսների կոնդակներ, ձեռագրեր, վկայագրեր, մասնագիտական ծրագրեր, դասամատյաններ, ներքին կանոններ, ուսանողական խռովությունների մասին վկայող փաստաթղթեր, ինչպես նաև ներկայիս ճեմարանի առօրյան պատկերող լուսանկարներ, պաշտոնական գրություններ: Առանձնակի ուշադրության արժանացան Գևորգյան ճեմարանի անվանի սաների ավարտական դիպլոմները, Կոմիտասի, Գ.Գեմիրճյանի, Ավ. Իսահակյանի ձեռագրերը: Հայ ժողովրդի նշանավոր մտավորականների, գիտնականների՝ Հ.Աճառյանի, Ն.Ադոնցյանի, Հ.Մանանդյանի, Մ.Աբեղյանի, Եկմալյանի, Ա. Խանջյանի և այլոց լուսանկարները: Այցելուների ուշադրությանն արժանացան Գևորգյան ճեմարանի հիմնադրման կոնդակի բնօրինակը և նրա հիմնադիր Գևորգ Գ կաթողիկոսի լուսանկարը: Հետաքրքրական էին ճեմարանի 1917թ. փակման և 1945թ. վերաբացման հրամանները, տեղեկագրեր Սանկտ-Պետերբուրգի Հայոց եկեղեցիների խորհրդի նախագահ Իշխան Աբամելիք Լազարևի գրությունը Գևորգյան ճեմարանի վարչությանը 40 սաների թոշակ նշանակելու մասին: Ցուցափեղկի տակ առանձին տեղ էին գտել խորհրդային տարիների ամենածանր շրջանը ներկայացնող փաստաթղթերը՝ բռնագատված եկեղեցականների անձնական գործերը: Այս շարքում կարելի է հատուկ նշել վեհարանում խեղդամահ արված Գևորգյան ճեմարանի նախկին սան Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսի գործը:

Գևորգյան ճեմարանի պատմության նյութերն ընդհանուր ներկայացրեց ՀԱԱ տնօրեն Ա. Վիրաբյանը, որից հետո Տեր Ասողիկ քահանա Կարապետյանը ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնանքներն ու բարեմաղթանքներն ուղղված կազմակերպիչներին և հյուրերին:

Ցուցադրությանը հաջորդեց գեղարվեստական մասը: Ճեմարանի երգչախումբը հանդես եկավ հոգևոր երգացանկով, իսկ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի չին ուսանողուհի Ու Մեյը գերեց բոլորին հայկական երգերի յուրօրինակ կատարումով:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

«ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆ»
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ՀՈՒՇԵՐ
Երևան, 2003թ., 200 էջ

Կազմողներ՝ Է. Վ. Հովսեփյան, Ա. Ա. Հարությունյան
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ս. Վիրաբյան

Գիրքը նվիրված է Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական ականավոր գործիչ, ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանի կյանքին ու գործունեությանը: Այն տպագրվել է վերջինիս ծննդյան 90-ամյակի կապակցությամբ, ընթերցող լայն շրջանակների համար:

Գիրքն ունի երեք բաժին՝ փաստաթղթեր, նամակներ, հուշեր: Բաժիններից յուրաքանչյուրը հետաքրքիր է յուրովի: Իրար լրացնող, մեկը մյուսից հետաքրքիր ու արժեքավոր վավերագրերի ընտրությունն ինքնանպատակ չէ: Դրանք լուսաբանում են Ա. Քոչինյանի կյանքի ու գործունեության կարևոր էջերը:

Առաջին՝ «Փաստաթղթեր» բաժնում ընդգրկված են Քոչինյանի՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահի և ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնավարության տարիները՝ 1950-60-ական թվականներն արտացոլող վավերագրեր՝ կառավարական որոշումներ, պաշտոնական գրություններ:

Գրքի երկրորդ՝ «Նամակներ» բաժնում հայ և այլազգի մշակույթի ու այլ բնագավառների ականավոր գործիչների նամակներն են: Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Իսակով, Արամ Խաչատրյան, Անաստաս Միկոյան, Ռասուլ Համզատով, Լև Կուլիջանով և ուրիշներ: Նամակագիրների այս անուններն ինքնին խոսուն են:

Գրքի վերջին՝ «Հուշեր»-ի բաժնում Քոչինյանի ժամանակակիցների, նրա գործընկերների, հայ անվանի գրողների, արվեստագետների հուշերն են Քոչինյան մարդու, ղեկավարի, կուսակցական ու պետական գործչի մասին: Ջերմ ու անկեղծ այդ հուշերը մեկ անգամ եւս հավաստում են, որ Ա.Քոչինյանը մեծ ժողովրդականություն վայելող ղեկավար էր, մեծ հայրենասեր, իր հողի ու ժողովրդի նվիրյալ զավակը:

Գրքում զետեղված են նաեւ լուսանկարներ Ա. Քոչինյանը՝ պետական այրերի (Ն.Հարությունյան, Կ.Գեմիրճյան), մտավորականների (ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյան, Պարույր Սեւակ, Սիլվա Կապուտիկյան, Թաթուլ Ալթունյան) հետ՝ Եղեռնի զոհերի հուշահամալիրի բացման օրը, Արփա-Սեւանի թունելագործների, պիոներ-դպրոցականների հետ հանդիպումների ժամանակ խմբանկարներում: Գրքի առաջին էջում Անտոն Քոչինյանի անհատական լուսանկարն է:

«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1912-1920թթ.)»

Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու

Երեւան, 2004թ., 787էջ

Կազմողներ՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Վիրաբյան (պատմ. գիտութ. դոկտոր)

Հայաստանի ազգային արխիվն առաջին անգամ ամբողջական տեսքով հրապարակում է 1912-1920թթ, կայացած համահայկական խորհրդակցությունների (համագումարների) հրավիրման վերաբերյալ փաստաթղթերը եւ դրանց արձանագրությունները, ինչպես նաեւ փաստաթղթեր խորհրդակցություններում ընտրված համազգային գործադիր մարմինների գործունեության մասին:

Ժողովածուում փաստաթղթերը եւ նյութերը զետեղված են բնագրերի լեզվով, արեւելահայ գրական լեզվով փաստաթղթերը տրված են նոր ուղղագրությամբ, արեւմտահայ գրական լեզվով՝ դասական ուղղագրությամբ:

Պահպանվել են բնագրերի առանձնահատկությունները, խմբագրական միջամտություններ չեն կատարվել, բացառությամբ աննշան կետադրական շտկումների ու բացահայտ ուղղագրական սխալների ուղղման: Համարակալվել ու փաստաթղթերը վերնագրվել են մեծ մասամբ կազմողների կողմից, այլ դեպքերում տողատակից նշում է արվել:

Ժողովածուն տպագրվում է վեց բաժնով, որոշ բաժիններ մասերի են բաժանվել:

Յուրաքանչյուր փաստաթղթի վերջում նշված են սկզբնաղբյուրները: Հրապարակվող փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում եւ Ռուսաստանի Դաշնության պետական արխիվում:

Ժողովածուն հրատարակվել է Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ: Հրատարակչական աշխատանքներն իրականացրել է «Армянский вестник» հրատարակչությունը (Մոսկվա):

Ժողովածուն տպագրվել է Վաչագան Պետրոսյանի հովանավորությամբ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾ

ԼՐԱՏՈՒ

С О Д Е Р Ж А Н И Е

ПУБЛИКАЦИЯ ДОКУМЕНТОВ

СТАТЬИ

СООБЩЕНИЯ

РЕЦЕНЗИЯ

АРХИВНОЕ ДЕЛО

ХРОНИКА

Ի գիտություն հեղինակների եւ ընթերցողների

«Բանբեր Հայաստանի արխիվների» գիտագործնական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարեւոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության համար:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող հապավումները:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայ արխիվագետների հասարակական կազմակերպություն»:
Հասցեն՝ Երևան - 33, Հրաչյա Քոչարի - 5, հեռ. 225-355:
Գրանցման վկայականը N 03Ա.055485:
Տրված է 02.08.2002թ.:
Թողարկման պատասխանատու՝ Արմեն Բազալյան:
Ստորագրված է տպագրության 2004 թ. դեկտեմբերի 24-ին:
Տպաքանակը՝ 200: Տարածվում է անվճար:
Չափսը 70x100 1/16:
«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան: Երևան, Վ. Վաղարշյան 12 «Ա»: